



Եվրոպական Միության
օժանդակությամբ

Մարդկային զարգացման
միջազգային կենտրոն



ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ հասնելու ուղին

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌԱՍՑ
ՊԱՐՏՎՈՂՆՆԵՐԻ

ՀԱՐՎԱԴՐ

ԲԱՆԱԿՑԱՅԻՆ

ՍԵԹՈԴԸ

Ողջեր Ֆիշեր, Ուկիսամ Ուրի, Բրյուս Փաթթըն

Համաձայնության հասնելու ուղին

Բանակցություններ առանց
պարտվողների

Ողջեր Ֆիշեր
Ուիլյամ Ուրի
Բրյուս Փաթթըն

Անգլերենից թարգմանեց ՄԶՄԿ
փորձագետների խումբը

Համաձայնության հասնելու ուղին Բանակցություններ առանց պարտվողների

Հեղինակներ՝ Ռոշեր Ֆիշեր, Ուիլյամ Ուրի

Խմբագիր՝ Բրյուս Փաթթըն

Գիրքը բարգմանվել է «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպության փորձագիտական խմբի կողմից:

ՀՀ կրթության և գիտության նախարարության Կրթության ազգային ինստիտուտի կողմից հաստատված է որպես ուսումնաօժանդակ ձեռնարկ բուհերի ուսանողների համար (հրաման № 19, 10/05/2005թ.):

«Համաձայնության հասնելու ուղին» գրքույկն առաջարկում է հակիրճ, քայլ առ քայլ մշակված և փորձված մի ուսումնավարություն, որը հնարավոր է դարձնում ցանկացած տիպի կոնֆլիկտների դեպքում հասնել փոխահավետ համաձայնության: Այն նախատեսված է բուհերի ուսանողների համար, սակայն հավասարապես օգտակար կարող է լինել թե՛ պետական պաշտոնյաների, թե՛ գործարարների և թե՛ պարզապես ցանկացած անհատի համար:

Սույն գիրքը հրատարկվել է Եվրոպական Միության «Ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական նախաձեռնություն» (The European Initiative for Democracy and Human Rights / EIDHR) ծրագրի օժանդակությամբ: «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացված «Դեպի նոր առաջնորդություն» ծրագրի շրջանակներում:

Հրատարակության բովանդակության համար պատասխանատվությունը կրում է միայն «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպությունը: Հրատարակության բովանդակությունը չի կարող մեկնաբանվել որպես Եվրոպական Միության տեսակետների արտացոլում:

*Նվիրում ենք մեր հայրերին՝
Ուղարկող Ֆիշերին և Սելվիին Ուրիին*

Էաëն »ñ³ËïÇùÇ

Այս գորի հեղինակումն սկիզբ առավ «Ո՞րն է գոյություն ունեցող տարածայնությունները հարթելու լավագույն ուղին» հարցից: Օրինակ, ի՞նչ խորհուրդ կարելի է տալ ամուսնալուծվող զույգին, եթե երկուսն էլ ցանկանում են իմանալ, թե ինչպես հասնել արդար և երկուստեք բավարարող համաձայնության՝ առանց գործը նյարդային պայքարի հասցնելու: Ինչ խոսք, շատ ավելի դժվար է որևէ խորհուրդ տալ կողմերից միայն *մեկիմ*, եթե միայն վերջինն է ննան կերպով վարվելու ցանկություն հայտնել: Ամեն օր ընտանիքներ, հարևաններ, զույգեր, ծառայողներ, դեկավարներ, ձեռնարկություններ, գնորդներ, վաճառողներ, իրավաբաններ ու ազգեր կանգնում են նույն երկրնտրանքի առջև՝ ինչպե՞ս հասնել համաձայնության առանց առճակատման: Հենվելով միջազգային իրավունքի և մարդարանության բնագավառում մեր ունեցած համապատասխան գիտելիքների, ինչպես նաև մեր գործընկերների, պրակտիկանտների և ուսանողների հետ ծավալուն համագործակցության վրա՝ մենք մշակել ենք առանց պարտվողների, բարիդրացիական ճանապարհով համաձայնության գալու գործնական մի եղանակ և փորձարկել այն իրավաբանների, գործարարների, պետական պաշտոնյանների, դատավորների, բանտարկին հսկիչների, դիվանագետների, ապահովագրական ընկերությունների ներկայացուցիչների, զինվորական սպաների, ածուխ և նավք արդյունահանողների նկատմամբ: Մենք մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում նրանց, ովքեր արձագանքեցին քննադատությամբ կամ սեփական փորձից քաղված առաջարկներով: Դա մեծ օգնություն էր մեզ համար:

Տարիների ընթացքում տարբեր մարդկանց կողմից այն-

6 Խոսք Երախտիքի

պիսի մեծածավալ օժանդակություն է ցուցաբերվել մեր ուսումնասիրություններին, որ այլևս հնարավոր չէ ճշգրիտ ասել, թե ո՞մ, ինչպե՞ս և ո՞ր գաղափարի համար ենք պարտական: Նրանք, ովքեր առավելագույնս են օժանդակել, գիտեն, որ հղումներն ու ծանոթագրությունները բաց են բողնված ոչ այն պատճառով, որ բոլոր մտքերը համարում ենք մերը, այլ մնալով երախտապարտ շատերին՝ փորձել ենք գիրքը դարձնել դյուրնթեռնելի և մատչելի:

Միևնույն ժամանակ, սակայն, չենք կարող մեր երախտագիտության խոսքը չուղղել Հռվարդ Ռայֆային. նրա սիրալիր և միաժամանակ դիպուկ քննադատությունը մշտապես մոել է մեզ կատարելագործելու մեր մոտեցումները: Իսկ տարածայնություններից համատեղ օգուտ քաղելու և բարդ խնդիրների լուծմանն ստեղծագործարար մոտենալու վերաբերյալ նրա գաղափարներն այնքան ոգևորեցին մեզ, որ մենք այդ թեմաներին առանձին բաժիններ հատկացրեցինք: Լոիզ Սոնը՝ ստեղծագործելու և բանակցություններ վարելու արտասովոր կարողություններով օժտված մի անձնավորություն, մշտապես ոգևորում էր մեզ իր հնարամտությամբ ու հեռատեսությամբ: Նրան պարտական ենք նաև այն բանի համար, որ ծանոթացրեց մեզ եզակի բանակցային տեքստի օգտագործման գաղափարի հետ, ինչը մենք անվանել ենք «Մեկ տեքստի գործընթաց»: Ծնորհակալություն ենք հայտնում նաև Մայր Դոյլին և Դեյվիդ Ծորապուխին «մտքային գրոհներ» վարելու վերաբերյալ նրանց նորարարական գաղափարների համար:

Հետո չէ դիպուկ օրինակներ ու ծիծաղաշարժ պատմություններ գտնել: Մենք հիրավի երախտապարտ ենք Զիմ Սերենիուսին ծովային իրավունքին նվիրված համաժողովը ներկայացնելու, ինչպես նաև մեր մեթոդի կառուցղական քննադատության, թում Գրիֆֆիտին՝ ապահովագրական գործակալի բանակցությունների և վերջապես Մերի Պարկեր Ֆոլլետին՝ գրադարանում վիճող երկու տղամարդկանց պատմության համար:

Յանկանում ենք մեր երախտագիտությունը հայտնել հատկապես նրանց, ովքեր կարդացել են այս գորքի դեռևս նախնական տարրերակները և հնարավորություն տվել մեզ օգտվելու իրենց քննադատությունից, այդ բվում՝ մեր ուսանողներին, ինչպես նաև Ֆրանկ Սանդերին, Զոն Քուփերին և Ուիլյամ Լինքոլնին, որոնք մասնակցեցին և մեզ հետ միասին վարեցին 1980 և 1981 թվականների Հարվարդի իրավունքի դպրոցում կազմակերպված բանակցային գործընթացին նվիրված հունվարյան սեմինարները։ Մենք շնորհակալ ենք նաև Հարվարդի բանակցային սեմինարների այն դեռևս չիշատակված մասնակիցներին, որոնք այդ երկու տարիների ընթացքում լսել են մեզ մեծագույն համբերությամբ և հանդես են եկել օգտակար առաջարկներով։ Զոն Դանլոպ, Զեյմս Հիլի, Դեյվիդ Քուել, Թոմաս Շելինգ, Լորենս Սասքինդ։ Մեր բոլոր գործընկերներին և ընկերներին մենք պարտական ենք ավելի, քան կարող ենք արտահայտել, սակայն, գորքի բովանդակության համար պատասխանատվությունը հեղինակներինն է և, եթե անգամ արդյունքը կատարյալ չէ, ապա պատճառը մեր գործընկերների անբավարար ջանքերը չեն։

Առանց մեր ընտանիքների և ընկերների օժանդակության աշխատանքը կդառնար անտանելի։ Կառուցողական քննադատության և բարոյական աջակցության համար շնորհակալ ենք Քերոլյան Ֆիշերին, Դեյվիդ Լաքսին, Ֆրենսիս Թրընթուլին և Զենիս Ուրիին։ Առանց Ֆրենսիս Ֆիշերի այս գիրքը երբեք չէ գրվի։ Այդ նա էր, որ շուրջ չորս տարի առաջ մեզ երկուսին ծանրապացրեց միմյանց։

Մենք ոչնչի չենք հասնի նաև առանց քարտուղարության անմնացորդ ջանքերի։ Շնորհակալություն ենք հայտնում Դեբորահ Ուեյմելին անվլեավ իրավագելվության, բարոյական աջակցության, կտրուկ, սակայն սիրալիր հիշեցումների համար, ինչպես նաև Դենիս Թրիբուլյային, որ միշտ զվարք էր ու ժրաշան։ Հատուկ շնորհակալություն ենք հայտնում նաև տեքստային օպերատորներին Սինթիա Սմիթի ղեկավարու-

8 Խոսք Երախտիքի

Քյամբ, ովքեր դիմակայեցին անհամար տարբերակներով և գրեթե անիրական ժամկետային սահմանափակումներով պայմանավորված բազմաթիվ փորձությունների:

Չենք կարող մոռանալ մեր խմբագիրներին: Վերափոխելով և կիսով չափ կրճատելով այս գիրքը՝ Մարտի Լինսկին այն դարձրեց դյուրընթեոնելի: Խնայելու համար մեր ընթերցողներին՝ նա չխնայեց մեր հույզերը: Ծնորհակալություն ենք հայտնում նաև Փիբեր Քինդերին, Զուն Քինոշիտային և Բոր Ռոսին: Զունը ջանք չխնայեց՝ լեզուն սեռախտրականությունից զերծ պահելու համար: Իսկ որտեղ մեզ դա չի հաջողվել՝ ներողություն ենք հայցում բոլոր նրանցից, ում հնարավոր է՝ վիրավորել ենք: Ծնորհակալություն ենք հայտնում նաև Անդրեա Ուիլյամսին՝ մեր խորհրդատուին, Զուլիան Բախին՝ մեր գործակալին, Դիք ՄքԱրույին և «Հյութն Սիֆլինի» նրա գործընկերներին, ովքեր այս գրքի հեղինակումը դարձրին հնարավոր և հաճելի:

Վերջապես, շնորհակալություն ենք հայտնում նաև Բրյուս Փաթթընին՝ մեր բարեկամին ու գործընկերոջը, խմբագրին ու միջնորդին: Ոչ ոք նրա չափ չի օժանդակել այս գրքի ստեղծմանը: Մեծ էր նրա օգնությունն աշխատանքների հենց սկզբից, երբ գրքի տրամարանության կառուցման նպատակով «մտքային գրոհներ» էինք անցկացնում: Նա վերափոխեց գրեթե յուրաքանչյուր գլուխ և խմբագրեց յուրաքանչյուր բառ: Եթե գրքերը ֆիլմեր լինեին, ապա այս մեկը լույս կտեսներ «Փաթթըն Փրոդաքշըն» մակագրով:

Ուղեր Ֆիշեր
Ուիլյամ Ուրի

‘ԱՐՅՈՒՇԻՆԻ ԱՆԴԱՌՈՒՄ

Խոսք Երախտիքի	5
Ներածություն	11
I - ՀԻՄՆԱԽՆԴՐԱԾ	15
1. Մի՛ սակարկեք դիրքերի շուրջ	16
II - ՄԵԹՈԴԸ	32
2. Տարանջատեք մարդկանց հիմնախնդրից	33
3. Կենտրոնացեք շահերի, ոչ թե դիրքերի վրա	66
4. Փոխշահավետ տարբերակներ առաջ քաշեք	88
5. Պահանջեք, որպեսզի օբյեկտիվ չափանիշներ կիրառվեն	124
III - ԱՅՈ, ՍԱԿԱՅՆ	146
6. Ինչպե՞ս վարվել, եթե նրանք ավելի ուժեղ են	147
7. Ինչպե՞ս վարվել, եթե նրանք չեն ցանկանում մասնակցել խաղին	162
8. Ի՞նչպես վարվել, երբ նրանք կեղտոտ հնարքներ են բանեցնում	192
IV - ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ	215
V - ՏԱԱ ՀԱՐՑ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ	219

Հարցեր անաշառության և «սկզբունքային» բանակցության մասին

- Հարց 1. Երբեք իմաստ ունի արդյո՞ք սակարկել դիրքերի շուրջ:
- Հարց 2. Ինչպե՞ս վարվել, եթե անաշառ չափորոշիչների շուրջ մյուս կողմի պատկերացումներն այլ են:
- Հարց 3. Պետք է արդյո՞ք անաշառ լինել, եթե չկա դրա անհրաժեշտությունը:

Մարդկանց հետ առնչվելուն վերաբերող հարցեր

- Հարց 4. Ինչպե՞ս վարվել, եթե իհմնախնդիրը հենց մարդիկ են:
- Հարց 5. Պե՞տք է բանակցել անգամ ահաբեկիչների հետ կամ, ասենք, Յիտլերի ննան ինչ-որ մեկի հետ: Ե՞րբ իմաստ ունի չբանակցել:
- Հարց 6. Ինչպե՞ս պետք է հարմարեցնեմ իմ բանակցային մոտեցումը, որպեսզի այն հաշվի առնի մարդկանց անձնական առանձնահատկությունները, սեռերի, մշակութային և այլ բնույթի տարրերությունները:

Մարտավարությանը վերաբերող հարցեր

- Հարց 7. Ինչպե՞ս գտնեն այս հարցերի պատասխանները. որտե՞ղ պետք է հանդիպենք, ո՞վ պետք է անի առաջին առաջարկը, որքա՞ն բարձրից պետք է սկսեն:
- Հարց 8. Ավելի հստակ, տարբերակներ առաջարկելուց ինչպե՞ս անցնեմ պարտավորություններ ստանձնելուն:
- Հարց 9. Ինչպե՞ս փորձարկեն այս գաղափարներն առանց մեծ ռիսկի դիմելու:

Հարցեր իշխանության մասին

- Հարց 10. Կարո՞՞ղ է, արդյոք, բանակցելու իմ եղանակը փոփոխել որևէ բան, եթե մյուս կողմն ավելի ուժեղ է: Ինչպե՞ս մեծացնեն իմ բանակցային ուժը:

Ӯ»՞ԻԱԾԱԱԾՅ

Դուք է զալիս ձեզ, թե ոչ՝ դուք բանակցող եք: Բանակցություններ տեղի են ունենում մեր ողջ կյանքի ընթացքում. դուք քննարկում եք ձեր պաշտոնի բարձրացման հարցը դեկավարության հետ, փորձում եք անծանոթ մեկի հետ համաձայնության գալ տան գնի շուրջ, երկու փաստաբան փորձում են լրիում տալ ավտովքարի հետ կապված դատական վեճին, մի խումբ նավթային ընկերություններ նախատեսում են ստեղծել համատեղ ձեռնարկություն՝ հետազոտելու նավի ծովային պաշարները, քաղաքային իշխանության պաշտոնյաները հանդիպում են արհմիության առաջնորդների հետ՝ կանխելու նախազգուշական գործադրությունը, ԱՄՆ պետքարտուղարը բանակցում է Խորհրդային Սիոնթյան իր պաշտոնակցի հետ՝ համաձայնության եզրեր գտնելու միջուկային գենքի սահմանափակումների շուրջ: Մրանք բոլորը բանակցություններ են:

Յուրաքանչյուրս ամեն օր բանակցում ենք ինչ-որ բանի շուրջ: Ինչպես Մոլյերի պարոն Ժուրդենը (որը իհացել էր՝ տեղեկանալով, որ ողջ կյանքի ընթացքում ինքն արտահայտվել էր չափածո խոսքով), մարդիկ բանակցում են անգամ այն ժամանակ, երբ այդ մասին չեն էլ մտածում: Դուք բանակցում եք ձեր ամուսնու հետ թե որտեղ ճաշել, երեխաների հետ՝ թե երբ են նրանք քննելու: Բանակցություններն այն իհմնական միջոցն են, որով ստանում եք ձեր ուզածն այլ անձանցից: Դրանք երկկողմանի հաղորդակցություն են՝ նախատեսված համաձայնության հասնելու, երբ դուք ու հակառակ կողմն ունեք և՛ ընդհանուր, և՛ հակասող շահեր:

Հետզհետեւ ավելի ու ավելի են շատանում իրավիճակները, որոնց շուրջ անհրաժեշտ է բանակցել. կոնֆիդենտ հարածուն քննությունից: Բոլորն են ցանկանում մասնակցել իրենց առնչվող

12 Ներածություն

որոշումների կայացմանը, և ավելի ու ավելի քչերն են համաձայնվում ընդունել այլոց կողմից պարտադրված որոշումներ: Մարդիկ տարբեր են, իսկ բանակցություններն օգնում են հարթել այդ տարբերությունները: Թե՛ գործարար աշխարհում, թե՛ պետական կառույցներում և թե՛ ընտանիքներում բազմաթիվ որոշումներ ձեռք են բերվում բանակցությունների միջոցով: Անգամ երբ մարդիկ դիմում են դատարան, գրեթե միշտ, հաշտության ակնկալիքով, բանակցում են դատավարությունից առաջ:

Թեպես բանակցություններ տեղի են ունում ամեն օր և ամեն ժամ, հաջող բանակցելն այնքան էլ դյուրիհն չէ: Բանակցություններ վարելու տիպային ռազմավարությունները հաճախ մարդկանց հուսախար են անում, հոգնեցնում կամ վանում, իսկ ավելի հաճախ՝ բոլոր երեքը միաժամանակ:

Մարդիկ հայտնվում են երկրնտրանքի առջև: Նրանք տեսնում են բանակցելու երկու ուղի՝ մեղմ կամ կոշտ: Սեղմ բանակցողը ցանկանում է խոսափել անձնական կոնֆիդենտներից և համաձայնության հասնելու համար պատրաստականորեն զիջումների է գնում: Նա ձգուում է բարիդրացիական լուծման, մինչդեռ վերջում հաճախ իրեն գգում է շահագործված ու դառնացած: Կոշտ բանակցողը ցանկացած իրավիճակ դիտում է որպես կամքի դրսերման ասպարեզ, որտեղ առավել ծայրահեռ դիրք գրավող ու ավելի երկար դիմացող կողմն առավել լավ արդյունքի է հասնում: Նա ցանկանում է հաղթել, այնինչ հաճախ արժանանում է համարժեք կոշտ պատախանի: Արդյունքում սպառվում են սեփական ռեսուլրսներն ու սրվում հարաբերությունները մյուս կողմի հետ:

Գոյություն ունի նաև բանակցելու երրորդ տարբերակ, որը ոչ կոշտ է և ոչ էլ մեղմ, սակայն միևնույն ժամանակ՝ բավականաշափ և՝ կոշտ, և՝ մեղմ: Համաձայն «Հարվարդի բանակցային ծրագրի» շրջանակներում մշակված սկզբունքային բանակցությունների մերորդի՝ խնդիրներն առավելապես պետք է լուծվեն՝ ելնելով դրանց էությունից, փոխանակ շահարկվելու՝

կենտրոնանալով այն բանի վրա, թե կողմերից յուրաքանչյուրն ի՞նչ է պատրաստվում անել կամ չանել: Այն ենթադրում է, որ բոլոր հնարավոր դեպքերում պետք է փնտրել փոխահավետ լուծումներ, իսկ այնտեղ, որտեղ շահերը բախվում են՝ պնդել, որ լուծումները հիմնվեն անաշառ, կողմերի կամքից անկախ չափանիշների վրա: Սկզբունքային բանակցությունների մեթոդը կոչում նույնագումար է ենթադրում խնդրի էության, մեղմ՝ մասնակիցների նկատմամբ: Այստեղ չեն գործածվում զանազան հնարքներ և մարտական կեցվածքի դրսւորումներ: Սկզբունքային բանակցությունները ցույց են տալիս, թե ինչպե՞ս հասնել նրան, ինչի նկատմամբ իրավունք ունեք՝ միևնույն ժամանակ պարկեշտ մնալով: Այն հնարավորություն է ընձեռում ձեզ լինել ազնիվ՝ միևնույն ժամանակ պաշտպանվելով նրանցից, ովքեր կցանկանային օգտվել ձեր ազնվությունից:

Այս գիրքը սկզբունքային բանակցությունների մեթոդի մասին է: Առաջին գլուխը նկարագրում է այն խնդիրները, որոնք ի հայտ են գալիս դիրքային սակարկությունների տիպային ռազմավարություն կիրառելիս: Հաջորդ շորու գլուխները նվիրված են քննարկվող մեթոդի շորու սկզբունքներին: Վերջին երեք գլուխները պատասխանում են վերոհիշյալ մեթոդի վերաբերյալ առավել հաճախ տրվող հարցերին՝ ի՞նչ անել, երբ հակառակ կողմն ավելի ուժեղ է, ի՞նչ անել, երբ նրանք նույն կամոններով չեն խաղում, ի՞նչ անել, երբ օգտագործում են «կեղտու» հնարքներ:

Սկզբունքային բանակցությունները կարող են կիրառվել ԱՄՆ դիվանագետների կողմից՝ Խորհրդային Սիության հետ սպառագինությունների վերահսկման խնդիրների քննարկման ժամանակ, «Ֆորչուն 500» ընկերությունները ներկայացնող «Օլլ Սթրիթ»-ի իրավաբանների կողմից մենաշնորհային խնդիրների շուրջ ծագած վեճերի կարգավորման ժամանակ, ինչպես նաև ամուսնական զույգի կողմից ցանկացած խնդրի շուրջ որոշում կայացնելիս՝ սկսած «Օլ՝ր գնալ հանգստանալու» հարցից մինչև «Ամուսնալուծվելիս ինչպե՞ս կիսել սեփա-

14 Ներածություն

կանությունը»: Բոլորը կարող են կիրառել այս մեթոդը:

Յուրաքանչյուր բանակցություն տարբերվում է մյուսից, սակայն հիմնական տարբերը մնում են անփոփոխ: Ակգրունքային բանակցությունները կարող են կիրառվել, երբ խնդրու առարկան մեկն է կամ մի բանիսը, երբ կողմները երկուսն են կամ ավելի, երբ առկա է սահմանված արարողակարգ՝ ինչպես աշխատանքային վեճերի ժամանակ, կամ շպլանավորված՝ կանոններից դուրս իրավիճակ, օրինակ՝ ահարեկիչների հետ հաղորդակցվելիս:

Մեթոդը կարելի է կիրառել անկախ այն բանից՝ մյուս կողմը առավել թե՝ պակաս փորձառու է, կոչտ սակարկող է կամ էլ՝ մտերիմ մեկը: Ակգրունքային բանակցությունը ուազմավարություն է բոլորի համար, և, ի տարբերություն գրեթե բոլոր այլ ուազմավարությունների, եթե մյուս կողմը նույնպես տիրապետում է դրան, ապա դա չի դժվարացնում վերջինիս կիրառությունը, ավելին՝ դարձնում է ավելի դյուրիհն: Իսկ եթե նրանք կարդացել են այս գիրքը, ապա՝ շատ ավելի լավ:

I - ĐÆØÜ²ÊÜ,ÆðÀ

1. ØÇ° ë³Í³ñÍ»ù 'Çñù»ñÇ ßáðñç

1 ØÇ° ë³Í³ñÍ»ù ¹Çñù»ñC ßáõñç

Անկախ այն բանից՝ բանակցությունները վարվում են ազգերի միջև խաղաղության հաստատման հարցերի, պայմանագրերի, թե ընտանեկան վեճերի շուրջ, մարդիկ, որպես կանոն, դրանց ընթացքում ներքաշվում են դիրքային սակարկությունների մեջ: Յուրաքանչյուր կողմ գրավում է ինչ-որ դիրք, պնդում այն և համաձայնության հասնելու նպատակով զիջումների գնում: Նման «քանակցային մենուետի» դասական օրինակ է օգտագործված իրերի խանութի տիրոջ և գնորդի միջև տեղի ունեցող սակարկությունը:

Գնորդ	Վաճառող
– Ի՞նչ գնով եք վաճառում այս պղնձյա ափսեն:	– Սա մի գեղեցիկ հնաոճ իր է, այդպես չէ՞: Ինձ թվում է՝ ես այն կարող եմ վաճառել 75 դոլարով:
– Օ՛, ինչպե՞ս, այն ծոմոված է: Ես կվճարեմ ընդամենը 15 դոլար:	– Ի՞նչ եք ասում: Ես ակնկալում եի ավելի լուրջ առաջարկ: 15 դոլարը ծիծաղելի գին է:
– Շատ լավ, կարող եմ համաձայնվել 20 դոլարի, բայց ոչ երբեք 75 դոլարի կարգի գնի հետ:	– Ուուր բավական կոշտ եք սակարկում, օրիո՞րդ: 60 դոլար՝ կան

Գնորդ	Վաճառող իսկ և անմիջապես:
– 25 դոլար:	– Ես ավելին եմ վճարել, քան ձեր առաջարկն է: Լուրջ թիվ առաջարկեք:
– 37.50 դոլար: Սա առավելագույնն է, որ ես պատրաստ եմ վճարել:	– Նկարագրումների վրա ուշադրություն դարձրե՞լ եք: Հաջողոր տարի այսօրինակ նմուշները երկու անգամ ավելի քանի կարժենան այսօրվա համեմատ:

Եվ այսպես շարունակ: Գուցե նրանք կհասնեն ինչ-որ համաձայնության, գուցե և՝ ոչ:

Բանակցային ցանկացած մեթոդի կարելի է անաշառ գնահատական տալ՝ ելնելով երեք չափանիշներից. այն պետք է հանգեցնի խոհեմ համաձայնության, եթե համաձայնությունն ընդհանրապես հնարավոր է, այն պետք է արդյունավետ լինի և, ի վերջո, պետք է բարելավի կամ գոնե չվնասի կողմերի միջև առկա հարաբերությունները: (Խոհեմ է այն համաձայնությունը, որը հնարավորինս բավարարում է կողմերի ողջամիտ շահերը, հակասող շահերին տալիս է արդարացի լուծում, հուսալի է և հաշվի է առնում հանրային շահը):

Վերոհիշյալ օրինակում նկարագրված է բանակցություն-ների ամենատարածված ձևերից մեկը, որի ելքը կախված է իրար հետևող «հաղթանակներից» ու «պարտություններից», ասել է թե՝ դիրքերի հաջորդականությունից:

Դիրքեր գրավելը, ինչպես գնորդի և վաճառողի օրինակում էր, բանակցությունների ընթացքում որոշակի օգտակար դերակատարում ունի: Այն հուշում է հակառակ կողմին, թե ի՞նչ եք ցանկանում դուք, անորոշ ու լարված իրավիճակներում

ապավեն է դառնում, երբեմն էլ ի վերջո հանգեցնում է ընդունելի համաձայնության պայմաններին: Այդօրինակ խնդիրները, սակայն, կարող են լուծվել նաև այլ ուղիներով: Իսկ դիրքային սակարկությունները չեն բավարարում արդյունավետ ու բարիդացիական ճանապարհով խոհեմ համաձայնության հասնելու հիմնական չափանիշներին:

Չնա»»նԾ Յածնէ ք”թնլածԱ Ասծ Են»»նՅ ածՈ »»նՅ ածՈ ԵաՆ»»նԾ Ասծ Են»»նՅ ածՈ ԵաՆ»»նԾ

Երբ բանակցողները սակարկում են դիրքերի շուրջ, նրանք սկսում են սահմանափակել իրենց այդ դիրքերով: Որքան ավելի եք հստակեցնում ձեր դիրքն ու պաշտպանում այն հարձակումներից, այնքան կախյալ եք դառնում դրանից: Որքան ավելի եք փորձում համոզել մյուս կողմին ձեր բռնած դիրքի փոփոխության անհնարինությունը, այնքան դժվար է դառնում դա անելը: Ձեր «ես»-ը սկսում է նույնացվել ձեր դիրքի հետ: Այժմ դուք նոր շահ ունեք՝ «պահպանել դեմքը», համաձայնեցնել ապագա քայլերը նախկին դիրքերի հետ: Այսպիսով, դուք ավելի ու ավելի քիչ հավանական եք դարձնում որևէ համաձայնություն, որը ողջամտության սահմաններում կհամաձայնեցնի կողմերի իրական շահերը:

Միջուկային փորձարկումների արգելման շուրջ նախագահ Քենեդու կողմից վարվող բանակցությունների ձախողումը վառ օրինակ է այն բանի, որ դիրքային սակարկությունները կարող են վտանգել բանակցությունների ընթացքը: Խորհրդային Սիության և ԱՄՆ-ի միջև վիճահարույց հարց էր առաջ եկել՝ միմյանց տարածքներում գրանցված կասկածահարույց սեյսմիկ երևույթներն ուսումնասիրելու նպատակով տարեկան քանի⁹ ստուգայց թույլատրել: Խորհրդային Սիությունն ի վերջո համաձայնվել էր երեք, իսկ ԱՄՆ-ը պնդում էր առնվազն տաս ստուգայց թույլատրելու տարրերակը: Բանակցությունները ձախողվեցին հենց այդտեղ՝ դիրքերի շուրջ, չնայած այն բանին, որ կողմերն անգամ չեին ճշտել, թե յուրաքանչյուրն

ի՞նչ է հասկանում «ստուգայց» ասելով. մեկ անձի կողմից մեկ օրվա ընթացքում անցկացրած տեղազննություն, թե՝ 100 հոգուց կազմված հանձնախմբի կողմից մեկ ամսվա ընթացքում անցկացվող մանրազնին փորձաքննություն: Կողմերը չափազանց քիչ ջանքեր բափեցին՝ սահմանելու ստուգայցերի ընթացակարգն, ինչն ի զորու կիմեր բավարարել թե՝ ստուգումներ անցկացնելու հետ կապված ԱՄՆ շահը և թե՝ սեփական խնդիրներին մյուսի կողմից հնարավորին քիչ միջամտելու՝ երկու երկրների ցանկությունը:

Որքան մեծ ուշադրություն է հատկացվում դիրքերին, այնքան քիչ ուշադրության են արժանանում դրանց հիմքում ընկած՝ կողմերին հուզող խնդիրները: Համաձայնությունը դառնում է քիչ հավանական: Յանկացած համաձայնություն ավելի շուտ արտացոլում է վերջնական դիրքերի տարրերության մեխանիկական կեսը, քան պատշաճ կերպով մշակված, կողմերի ողջամիտ շահերը բավարարող որոշում: Արյունքում հաճախ կայացվում է մի համաձայնություն, որն ավելի քիչ է բավարարում կողմերին, քան հնարավոր եր:

. ԾՈՒ»ՆԸ ՅԱԾՈՒ»ԵՎ ՅԱԾՈՒ»ԱԾՅԱ» ։

Բանակցությունների տիպային մեքողները կարող են հանգեցնել համաձայնության, ինչպես պղնձյա ափսեի գնի համաձայնեցման օրինակում, կամ ճախողման, ինչպես ստուգայցերի օրինակում: Երկու դեպքում էլ գործընթացը բավականաշափ ժամանակատար է:

Դիրքերի շուրջ սակարկելը պարարտ հող է ստեղծում ամենատարբեր հնարքների համար, որոնք ի վերջո խոչընդոտում են բուն խնդրի կարգավորմանը: Դիրքային սակարկության ժամանակ դուք ամեն կերպ փորձում եք ավելացնել ձեզ համար բարենպաստ համաձայնություն կորզելու հնարավորությունը՝ սկսելով ծայրահեղ դիրքերից, համառորեն կառչելով դրանցից, ստիպելով հակառակ կողմին հավատալ ձեր տեսակետների ճշմարտացիությանը և գնալով նվազագույն՝

լոկ բանակցությունների շարունակականությունն ապահովելու համար անհրաժեշտ գիջումների: Նույն կերպ է վարդում նաև մյուս կողմը: Նշված գործոններից յուրաքանչյուրը միտված է խոչընդոտելու որոշումների արագ կայացման գործընթացին: Որքան ծայրահեղ են նախնական դիրքերը և նվազ՝ գիջումները, այնքան ավելի շատ ժամանակ ու ջանքեր են պահանջվելու բացահայտելու համար՝ արդյո՞ք հնարավոր է հասնել համաձայնության, թե՞ ոչ:

Տիպային «մենուետը» նաև պահանջում է բազմաթիվ անհատական որոշումների կայացում: Յուրաքանչյուր բանակցողի առջև բազմաթիվ անգամ կանգնում են «Ի՞նչ առաջարկել», «Ի՞նչը մերժել» և «Ի՞նչ չափի գիջումների գնալ» հարցերը: Որոշումների կայացման գործընթացը բարդ կամ, լավագույն դեպքում, ժամանակատար գործընթաց է: Եթե յուրաքանչյուր որոշում ոչ միայն գիջում է պահանջում, այլ նաև ճնշում՝ նոր գիջումներ պարտադրելու նպատակով, ոչինչ չի խթանում բանակցողին արագ քայլերի դիմելու: Բանակցությունները ծգձգելու, դրանցից հրաժարվելու սպառնալիքի, կոշտ դիմակայության կամ նմանօրինակ այլ մարտավարությունները դառնում են սովորական: Դրանք երկարածգում են համաձայնության հասնելու ժամանակահատվածը, մեծացնում ծախքերն ու այլևս որևէ համաձայնության չգալու վտանգի հավանականությունը:

Չնն»նՑ Յաօն՛ց Յ՛ն՛» ԵԱ ԱՌՅ Աօ՛՛ Հ Յ՛ն՛ ՆՌ Ա» ԱնդԱ Աօ՛՛ ԱՌՅ» նԱ

Դիրքային սակարկությունները վերածվում են կամային պայքարի: Յուրաքանչյուր բանակցող հայտարարում է այս, ինչ պատրաստվում է կամ չի պատրաստվում անել: Երկուստեք ընդունելի լուծում գտնելու տենչը միտում ունի վերածվելու ճակատամարտի: Յուրաքանչյուր կողմ փորձում է բացառապես կամքի ուժով պարտադրել մյուս կողմին փոխելու իր դիրքը: «Ես չեմ պատրաստվում նահանջել: Եթե ցանկանում ես

ինձ հետ կին զնալ, ապա կա՞մ դիտելու ենք «Սալթայան բազեն», կա՞մ ոչինչ չենք դիտելու»: Զայրույթն ու դառնությունն են դառնում արդյունքը, երբ մի կողմն իրեն գտնում է մյուս կողմի անդրդվելի կամքին ենթարկվողի դերում, իսկ իրեն հուզող հարցերը՝ անուշադրության մատնված: Այսպիսով, դիրքային սակարկությունները սրում, իսկ երբեմն էլ խորտակում են կողմերի միջև հարաբերությունները. տարիներ շարունակ համագործակցող ձեռնարկությունները խզում են կապերը, հարեանները դադարեցնում են իրենց շփումները: Որեւէ անախորժության հետևանքով առաջացած դառը զգացմունքները չեն մոռացվում ողջ կյանքի ընթացքում:

*.Չնո՞ւ՞ն ԱԿՅ ք՞ի՞լ լած Ա Ա ած Յ Յ » ն Յ ք՞ է՞ ի » Է Յ պ՞ ն Ա ած Յ Յ » ի » Յ
մ Յ հ Ա Օ Ս ս Յ Յ լ օ ծ Ա Ա ած Յ Յ » ն Կ Ա Յ Յ ի*

Անշուշտ, երկու կողմերի միջև (ոդոք և «մյուս կողմը») ընթացող բանակցային գործընթացը քննության առնելն առավել դյուրին է, սակայն իրականում գոեքե միշտ բանակցություններին մասնակցում են երկուսից ավելի կողմեր: Բանակցային սեղանի շուրջ միանգամից կարող է մի քանի մարդ նստել, կամ յուրաքանչյուր կողմի հետևում կարող են լինել, ասենք, ընտրողներ, դեկավարներ, տնօրենների խորհուրդներ կամ հանձնաժողովներ, որոնց հետ նա պարտավոր է հաշվի նստել: Որքան մեծ է բանակցություններում ներգրավված մարդկանց թիվը, այնքան զգալի են դառնում դիրքային սակարկությունների թերությունները:

Օրինակ՝ ՄԱԿ-ի բազմաթիվ նատաշքանների ընթացքում, երբ սեղանի շուրջ մոտ 150 երկրների ներկայացուցիչներ են, դիրքային սակարկությունները դառնում են անհնար: Մեկ «ոչ»-ը կարող է տապալել ողջ գործընթացը, նույնիսկ եթե մնացած բոլորը կողմ են: Դժվար է զնալ փոխզիջումների, երբ հայտնի չէ, թե ո՞ն եք զիջում: Եվ երբեմն անզամ հազարավոր երկկողմ համաձայնություններ կարող են չհանգեցնել մեկ բազմակողմ համաձայնագրի: Նման իրավիճակներում դիր-

քային սակարկությունները կողմերին մղում են դաշինքներ ստեղծելու, երբ նրանց համատեղ շահն ավելի շուտ խորհրդանշական է, քան` առարկայական: ՍԱԿ-ում այդօրինակ դաշինքներով բանակցություններ են տեղի ունենում, օրինակ, «Հյուսիսի» և «Հարավի» կամ «Արևելի» ու «Արևմուտքի» միջև, և, քանի որ նման խմբերը բազմանդամ են, շատ ավելի դժվար է դառնում միասնական դիրքի ձևավորումը: Բարդությունը նրանում է, որ մեծ դժվարությամբ համաձայնություն ձեռք բերելուց հետո, համախմբվելով մեկ դիրքի շուրջ՝ հետագայում շատ ավելի դժվար է դառնում դրանում փոփոխություններ անելը: Դիրքը փոխելը նմանապես դժվարանում է, երբ բանակցությունների մասնակիցները ներկայացնում են բարձրաստիճան պաշտոնյաների, որոնք թեև անմիջականուն չեն նստում բանակցային սեղանի շուրջ, սակայն նրանց համաձայնությունն անհրաժեշտ է լինում:

«՞»Ն³ՍմածՈ՞ և՞մ»՞ԱծՇնԱ »Էն ա;»

Շատերն են ընդունում, որ կոշտ դիրքային սակարկությունները բանկ են նստում հատկապես կողմերի ու նրանց միջև առկա հարաբերությունների վրա: Ուստի դրանից խուսափելու համար կողմերը որդեգրում են բանակցությունների առավել մեղմ ոճ: Հակառակորդի փոխարեն նրանք նախընտրում են դիմացինի մեջ տեսնել ընկերոջ: Փոխանակ ամեն գնով հաղթանակի ձգտելու՝ նրանք ընդգծում են համաձայնության հասնելու անհրաժեշտությունը:

Սեղմ բանակցային խաղի տիպային քայլերն են առաջարկներ և զիջումներ անելը, հակառակ կողմին վստահելը, ընկերական լինելը և ընկրկելը՝ երբ բախումից խուսափելու անհրաժեշտություն կա:

Ներկայացվող աղյուսակում բերված են դիրքային սակարկությունների մեղմ և կոշտ ոճերի օրինակներ: Մարդկանց մեծ մասը բանակցային ուազմավարության այլընտրանքները տեսնում է հենց այդ երկու ոճերի մեջ: Ծանոթանալով ներ-

քոհիշյալ տարբերակներին՝ դուք կարող եք որոշել՝ արդյոք դուք մե՞ղմ, թե՞ կոչտ դիրքային սակարկող եք, կամ գուցե ձեզ առավել հոգեհարազատ է ինչ-որ մի միջանկյա՞լ ռազմավարություն:

Խնդիր

Դիրքային սակարկություններ: Ո՞ր խաղն եք նախընտրում խաղալ

Սեղմ

Մասնակիցներն ընկերներ են:

Նպատակը համաձայնությունն է:
Զիջում եք՝ հարաբերություններ
զարգացնելու նպատակով:

Սեղմ եք մարդկանց և իիմնա-
խնդրի հանդեպ:

Վստահում եք ուրիշներին:

Չեր դիրքը հեշտությամբ եք փո-
խում:

Առաջարկներ եք անում:

Բացահայտում եք հնարավորի
ծեր սահմանը:

Դամաձայնության հասնելու հա-
մար միակողմանի զիջումներ եք
անում:

Փնտրում եք մեկ պատասխան.
այն, որն ընդունելի կլինի նրանց
համար:

Պնդում եք համաձայնության
գալու վրա:

Փորձում եք խուսափել կամային
պայքարից:

Տեղի եք տալիս ճնշումներին:

Կոշտ

Մասնակիցները հակառակորդներ
են:

Նպատակը հաղթանակն է:
Պահանջում եք զիջումներ՝ որպես
հարաբերություններ հաստա-
տելու կարևոր նախապայման:

Կոշտ եք հիմնախնդրի և մարդ-
կանց հանդեպ:

Չեք վստահում ուրիշներին:

Ամուր կանգնած եք ծեր դիրքե-
րում:

Սպառնում եք:

Խեղարյուրված եք ներկայացնում
հնարավորի ծեր սահմանը:

Որպես համաձայնության գին՝
պահանջում եք միակողմանի
օգուտներ:

Փնտրում եք մեկ պատասխան.
այն, որն ընդունելի կլինի ծեզ
համար:

Պնդում եք ծեր դիրքերը պահա-
նելու վրա:

Փորձում եք հաղթանակել կամա-
յին պայքարում:

Դիմում եք ճնշումների:

Սեղմ բանակցային խաղը շեշտը դնում է հարաբերու-
թյունների ստեղծման ու պահպանման կարևորության վրա:
Ընտանիքում և ընկերական շրջապատում բանակցություն-

ների մեծ մասն ընթանում է հենց այս կերպ: Այսօրինակ գործընթացը կարող է արդյունավետ որակվել, առնվազն, արագ արդյունքի հասնելու տեսանկյունից: Կողմերը մրցում են առավել մեծահոգի ու պատրաստակամ լինելու հարցում. արդյունքում համաձայնությունը դառնում է առավել հավանական: Սակայն, այս դեպքում համաձայնությունը կարող է և խոհեմ չլինել: Արդյունքն, իհարկե, չի կարող լինել նոյնքան որերգական, որքան Օ. Հենրիի աղքատ գոյագի մասին պատմվածքում, որտեղ սիրող կինը վաճառում է իր մազերն ամուսնու ժամացույցի համար գեղեցիկ շորա գնելու, իսկ այդ մասին անտեղյակ ամուսինը վաճառում է իր ժամացույցը կնոջ համար իհասքանչ մազակալ ձեռք բերելու նպատակով: Այնուամենայնիվ, ի սկզբանե հարաբերությունները պահպանելու վրա հիմնված ցանկացած բանակցություն պարունակում է ոչ խոհեմ համաձայնություն կայացնելու վտանգ:

Այսպիսով, դիրքային սակարկությունների ժամանակ մեղմ ու ընկերաբար սակարկելը խոցելի է դարձնում ձեզ կոչտ խաղ որդեգրած կողմի հանդեպ: Այս դեպքում կոշտ խաղը գերակայում է մեղմին: Եթե կոշտ բանակցողը սպառնում ու զիջումներ է պարտադրում, իսկ մեղմ բանակցողը վերահաս բախումից խուսափելու նպատակով զիջում է դիրքերն ու համաձայնություն պահանջում, ապա բանակցային խաղը հօգուտ կոշտ խաղացողի է: Ինչ խոսք, գործընթացի արդյունքում համաձայնություն կայացվում է, որը, սակայն, հազիվ թե կարելի է խոհեմ համարել: Այն ակնհայտորեն ավելի բարենպատ կիմի կոշտ բանակցողի համար: Հետևողական ու կոշտ բանակցողի դեմ մեղմ դիրքերից հանդես գալով՝ դուք պարզապես տանուլ կտաք:

ՀԵԱՅԻ՞ՑՅՈՒ Ի՞Չ

Եթե դուք չեք ցանկանում ընտրություն կատարել դիրքային սակարկությունների կոշտ և մեղմ ոճերի միջև, կարող եք փոխել խաղի կանոնները:

Բանակցային խաղն ընթանում է երկու հարքություններում: Դրանցից մեկում բանակցությունն ընթանում է հիմնախնդրի շուրջ, մյուսում այն գոեթե ամրողությամբ (սովորաբար անուղղակիորեն) սևեռվում է այդ բանակցության ընթացակարգի վրա: Առաջին դեպքում բանակցությունը կարող է առնչվել ձեր աշխատավարձին, վարձակալության պայմաններին կամ էլ զնին: Երկրորդ դեպքում բանակցությունը նպատակ ունի պատասխանել «Ինչպե՞ս եք պատրաստվում քննարկել հիմնախնդիրը» հարցին՝ կիրառել մե՞նի դիրքային սակարկություններին բնորոշ կանոններ, գործածել կո՞շտ դիրքային սակարկությունների գործիքներ, թե՞ դիմել մեկ այլ մեթոդի օգնությանը: Այս երկրորդ բանակցությունը, փաստորեն, խաղ է խաղի շուրջ, այսպես կոչված «մետախսաղ»: Ձեր յուրաքանչյուր քայլը բանակցությունների ընթացքում կարող է դիտարկվել ոչ միայն որպես վարձակալության, աշխատավարձի կամ բովանդակային այլ հարցեր հստակեցնելուն ուղղված նախաձեռնություն, այլ նաև որպես խաղի կանոնների սահմանմանն ուղղված օժանդակություն: Քայլերից յուրաքանչյուրը կարող է նպաստել բանակցությունների տվյալ ձևաչափը պահպանելուն կամ էլ դառնալ խաղի կանոնները փոփոխող քայլ:

Այս երկրորդ բանակցությունը սպրդում է ուշադրությունից, քանզի, ենթադրվում է, որ այն ընթանում է առանց գիտակցված որոշումների կայացման: Էապես տարբերվող մշակութային արժեքներ կրող մի օտարերկրացու հետ բանակցելիս է, թերևս, առավել հավաճական, որ անհրաժեշտություն զգացվի հիմնախնդրի շուրջ տարվելիք բանակցությունների համար սահմանել որևէ ընդունելի գործընթաց: Գիտակցելով, թե ոչ, միևնույն է, յուրաքանչյուր ձեր քայլով դուք բանակցում եք ընթացակարգային հարցերի շուրջ, նույնիսկ եթե քվում է, թե այդ քայլերը բացառապես առնչվում են հիմնախնդրին:

«Մե՞նի, թե՞ կոշտ դիրքային սակարկություն վարել» հարցի պատասխանը հստակ է՝ ոչ մեկը: Փոխե՛ք խաղը: «Հար-

Վարդի բանակցային ծրագրի» շրջանակներում մենք մշակել ենք դիրքային սակարկություններին այլընտրանք հանդիսացող մի մեթոդ, որը զերազանցապես ստեղծվել է բարիդրացիական և արդյունավետ եղանակով խոհեմ արդյունքների հասնելու համար: «Ակզրունքային բանակցություն» կամ «բանակցություն խնդրի էության շուրջ» կոչվող այս մեթոդը խարսխվում է չորս հիմնադրույթների վրա: Դրանք ամբողջականանում են իբրև բանակցային հստակ մի մեթոդ, որը կիրառական է գրեթե բոլոր իրավիճակներում: Յուրաքանչյուր դրույթ առնչվում է բանակցության հիմնական տարրերից մեկին և մատնացույց անում, թե ինչպես պետք է վարվել դրանց հետ:

Մարդիկ –	Տարանջատե՛ք մարդկանց հիմնախնդրից:
Չահեր –	Կենատրոնացեք շահերի՝, ոչ թե դիրքերի վրա:
Տարրերակներ –	Նախքան որոշում կայացնելը մշակե՛ք մի շարք այլ հնարավորություններ:
Չափանիշներ –	Պնդե՛ք, որպեսզի արդյունքը հիմնված լինի օրյեկտիվ չափորոշիչների վրա:

Առաջին դրույթը պնդում է, որ մարդ արարածը համակարգիչ չէ: Մենք բազմաթիվ զգացմունքներ ունեցող էակներ ենք և հաճախ միևնույն երևույթը տրամադրութեն հակառակ ենք ընկալում, ինչը դժվարացնում է հաղորդակցվելը: Զգացմունքները հաճախ միահյուսվում են հիմնախնդրի օրյեկտիվ բնութագրի հետ: Դիրքեր գրավելը միայն սրում է խնդիրը, բանզի մարդկային «ես»-ը նույնացվում է բռնած դիրքի հետ: Հետևաբար, նախքան բուն հիմնախնդրի էությանն անցնելը, «մարդկային գործներ» պետք է տարանջատվի և դիտարկվի առանձին: Պատկերավոր, եթե ոչ տառացիորեն ասած՝ մասնակիցները պետք է ընկալեն իրենց որպես գործընկերներ՝ գրութեալով հիմնախնդիրը, այլ ոչ թե միմյանց: Այստեղից էլ հենց

բխում է առաջին պնդումը՝ *տարամջատեք մարդկանց հիմնախնդրից*:

Երկրորդ դրույթը կոչված է հաղթահարելու այն բացասական հետևանքները, որոնք առաջանում են բռնած դիրքերի վրա կենտրոնանալուց, այն դեպքում, եթե բանակցության նպատակը դրանց հիմքում ընկած շահերի բավարարումն է: Բանակցային դիրքը հաճախ քողարկում է այն, ինչ դուք իրականում ցանկանում եք: Փոխադարձարար գիշելով դիրքերը՝ հազիվ թե այնպիսի համաձայնություն ձեռքբերվի, որն արդյունավետորեն կրավարարի դրանք պայմանավորող մարդկային կարիքները: Այսպիսով, ներկայացվող մեթոդի երկրորդ հիմնական բաղադրիչն է՝ *կենտրոնացեք շահերից*, ոչ թե դիրքերի վրա:

Երրորդ դրույթն առնչվում է ճնշման ներքո լավագույն լուծումներ մշակելու դժվարություններին: Որոշում կայացնելիս հակառակորդի ներկայությունը նեղացնում է ձեր տեսահորիզոնը: Մեծ ոխսերը խոչընդոտում են ստեղծագործական ձիրքը: ‘Դա տեղի է ունենում նաև միակ ճշմարիտ որոշման փնտրությի դեպքում: Սակայն դուք ի զորու եք խուսանավել այս սահմանափակումներից, եթե սկսեք մտածել հնարավոր այնպիսի լուծումների շուրջ, որոնք առաջ են մղում ընդհանուր շահը և ստեղծագործարար համաձայնեցնում՝ տարամիտվող շահերը: Այստեղից էլ հենց բխում է երրորդ հիմնական դրույթը՝ *մինչ համաձայնության հասնելու փորձերը մշակեք փոխշահավետ տարրերակները*:

Այնտեղ, որտեղ շահերն ուղղակիորեն հակասում են միմյանց, բանակցողներից որևէ մեկը կարող է անհրաժեշտ արդյունքի հասնել պարզապես իր համառությամբ: Այս մերորդը կարծես խրախուսում է անհողորդ կեցվածքն ու հանգեցնում կամայական արդյունքների: Այնուհանդերձ, նման բանակցողին կարող եք դիմակայել՝ պնդելով, որ իր մերկապարանց հայտարարությունները բավարար չեն, և համաձայնությունը պետք է կայացվի անաշառ, կողմերի բռնացող կամքից ան-

կախ չափորոշիչներով: Միևնույն ժամանակ, դա չի նշանակում, որ համաձայնության պայմանները պետք է հիմնվեն իենց ձեր կողմից ընտրված չափորոշիչների վրա: Այստեղ ճիշտ է հիմնվել անաշառ չափորոշիչների վրա, ինչպիսիք են, ասենք, շուկայական գինը, փորձագետների կարծիքը, սովորույթները կամ օրենքները: Քննարկելով նման չափանիշներ (և ոչ թե կողմերի կամքը կամ դմկամությունը)` կողմերից և ոչ մեկը ստիպված չի լինի ընկրկել մյուսի առջև. Երկուսն էլ կարող են ակնկալել արդարացի լուծում: Այստեղից բխում է չորրորդ հիմնադրույթը՝ պնդեք, որպեսզի կիրառվեն օբյեկտիվ չափամիջներ:

Ներկայացվող աղյուսակում, որտեղ մուգ տառերով նշված են չորս հիմնական դրույթները, սկզբունքային բանակցության մեթոդը հակադրվում է մեղմ և կոշտ դիրքային սակարկություններին:

Խնդիր Դիրքային սակարկություններ. ի՞նչ խաղ խաղը:	Լուծում Փոխել խաղը. բանակցել խմբի էության շուրջ:
Մեղմ Մասնակիցներն ընկեր- կոշտ ներ են: Նպատակը համաձայ- նությունն է:	Սկզբունքային Մասնակիցները հիմնախմբնիր լուծող են: Նպատակը խոհեմ արդյունքն է, որ ձեռք է բերվել արդյունավետ ու բարիդրացիա- կան ճանապար- հով:
Ճիշել՝ հարաբերություններ զարգացնելու նպա- տակով:	Պահանջել զիջումներ՝ որպես հարաբերու- թյուններ հաստատե- լու կարևոր նախա- պայման:

Սեղմ լինել մարդկանց և հիմնախնդրի հանդեպ:	Կոշտ լինել հիմնախնդրի և մարդկանց հանդեպ:	Սեղմ լինել մարդկանց, կոշտ հիմնախնդրի հանդեպ:
Վստահել ուրիշներին:	Չվստահել ուրիշներին:	Գործել վստահությունից անկախ:
Բոնած դիրքը հեշտությամբ փոխել:	Անուր կանգնել դիրքերում:	Կենտրոնամալ շահերի, ոչ թե դիրքերի վրա:
Առաջարկմեր անել:	Սպառնալ:	Ուսումնասիրել շահերը:
Բացահայտել հնարավորի ձեր սահմանը:	Խեղաթյուրված ներկայացնել հնարավորի ձեր սահմանը:	Խուսափել հնարավորի սահման ամրագրելուց:
Համաձայնության հասնելու համար միակողմանի գիշումներ:	Պահանջել միակողմանի օգուտներ՝ որպես համաձայնել:	Փոխահավետ տարբերակներ նորամուծել:
Փնտրել մեկ պատասխան՝ այն, որն ընդունելի կլինի նրանց համար:	Փնտրել մեկ պատասխան՝ այն, որն ընդունելի կլինի ձեզ համար:	Որոշում կայացնելիս ընտրության հնարավորություն ունենալու համար բազմաթիվ տարբերակներ նշակել:
Պնդել, որպեսզի համաձայնություն կայացվի:	Պնդել, որպեսզի պահպանվեն ձեր դիրքերը:	Պնդել, որպեսզի օրյեկտիվ չափանիշներ կիրառվեն:
Փորձել խուսափել կամային պայքարից:	Փորձել հաղթանակել կամային պայքարում:	Փորձել հասնել արյունքի՝ հիմնվելով կամքից անկախ չափորոշիչների վրա:
Զիջել ճնշումներին:	Դիմել ճնշումների:	Փաստարկներ բերել և բաց լինել փաստարկների հանդեպ. զիջել սկզբունքներին, այլ ոչ թե ճնշումներին:

Սկզբունքային բանակցության այս շորս հիմնադրույթները գործում են այն պահից, երբ մտածում եք բանակցություններ սկսելու մասին, մինչև այն պահը, երբ համաձայնություն եք ձեռք բերել կամ որոշում կայացրել վերջ տալ ջանքերին: Այդ ժամանակահատվածը կարելի է բաժանել երեք փուլերի՝ վերլուծություն, պլանավորում և քննարկում:

Վերլուծության փուլում տեղեկատվություն հավաքագրելու, այն համակարգելու և քննության առնելու ճանապարհով դուք պարզապես փորձում եք ախտորոշել իրավիճակը: Ձեզ անհրաժեշտ է խորհել մարդ էակին քննորոշ խնդիրների՝ կողմնակալ ընկալումների, թշնամական հոյզերի և ոչ հատակ հաղորդակցվելու մասին, ինչպես նաև հասկանալ ձեր և մյուս կողմի շահերը: Ձեզ անհրաժեշտ է ծանոթանալ արդեն իսկ սեղանին դրված տարրերակներին և, որպես համաձայնության կայացման հիմք, հասկանալ առաջարկված բոլոր չափանիշները:

Պլանավորման փուլում, թե՛ գաղափարներ հղանալիս և թե՛ անելիքները սահմանելիս, դուք երկրորդ անգամ եք առնչվում նոյն շորս տարրերին: Ինչպես՞ս եք առաջարկում հաղթահարել մարդ էակին ներհատուկ խնդիրները: Որո՞նք են ձեր գերակա շահերը և որո՞նք են իրատեսական նպատակները: Ընտրության հնարավորություն ունենալու համար ձեզ անհրաժեշտ է մշակել լրացուցիչ տարրերակներ ու չափանիշներ:

Քննարկման փուլում ևս, երբ համաձայնության ակնկալիիքով կողմները հաղորդակցվում են, կրկին ամենաճիշտ տարրերակը նոյն շորս տարրերը քննարկելու է: Բարկության և հիմասրափության զգացումները, ընկալման տարրերություններն ու հաղորդակցման դժվարությունները կարող են գիտակցվել ու հաղթահարվել: Ցուրաքանչյուր կողմ պիտի գիտակցի՝ որոնք են մյուս կողմի շահերը: Այնուհետև միասին կարող են մշակել փոխահավետ տարրերակներ և հասնել օբյեկտիվ չափորոշիչների վրա հիմնված, հակադարձ շահերը

համադրող համաձայնության:

Ամփոփելով հարկ է նշել, որ ի հակառապություն դիրքային սակարկությունների, հիմնարար շահերի վրա կենտրոնացող, փոխադարձաբար բավարարող տարրերակների ու անաշառ չափորոշիչների վրա հիմնվող սկզբունքային բանակցությունների մեթոդին բնորոշ արդյունքը խոհեմ համաձայնությունն է: Այս մեթոդը բույլ է տալիս արդյունավետ ճանապարհով հանգել աստիճանական համաձայնության՝ խուսափելով բոլոր այն գործարքային ծախքերից, որոնք կողմերը կրում են դիրքերի մեջ ներքաշվելու, այնուհետև, ստիպված դրանցից դուրս գալու հետևանքով: Ուստի, մարդկանց հիմնախնդրից տարանջատելը բույլ է տալիս ուղղակիորեն շփվել և նրան՝ որպես մարդ արարածի, ըմբռնումով վերաբերվել ու հնարավոր դարձնել բարիդրացիական համաձայնությունը:

Հաջորդ չորս գլուխները համապատասխանաբար զարգացնում են վերոհիշյալ չորս հիմնական դրույթները: Եթե ինչոր պահի ձեզ կպարուի թերահավատության զգացումը, ապա կարող եք արագ աչքի անցկացնել դրանք և անցնել վերջին երեք գլուխներին, որտեղ կգտնեք մեթոդի մասին առավել հաճախ տրվող հարցերի պատասխանները:

II - ØºÀà, À

2. Þñ³Ýç³»ù Ù³ñ!Þ³Ýó ÑÇÙÝ³ËÝ'ñÇó
3. Î»ÝñáÝ³ó»ù ß³Ñ»ñÇ°, áºã Ä» 'Çñù»ñÇ íñ³
4. öáËß³Ñ³í»í Í³ñµ»ñ³ÍÝ»ñ ³é³ç ù³ß»ù
5. ä³Ñ³Ýç»ù, áñå»ë½Ç üµÛ»ííÇí ä³÷³ÝÇßÝ»ñ ÍÇñ³éí»Ý

2 Ի³ Ա³ Ե³ Ա³ Ե³ Ա³ Ո³ Ա¹ Ե³ Ե³ Ա³ Ն Ը Ո Ե Ե Ա Ա Ը Օ

Բոլորիս է հայտնի, թե որքան բարդ է գործ ունենալ որևէ խնդրի հետ և չառնվել թյուրմբոննան, զայրույթի կամ անհանգստության դրսնորումների, իրերի և երևոյթների անհատական ընկալմանը:

Արհմիության նախագահը դիմում է բանվորներին.

– Դե, ո՞վ գործադրուի կոչ արեց:

Զոնսն առաջ է գալիս.

– Ես, և կրկին այն անբան աշխատեկ Քեմբրլի պատճառով: Երկու շաբարվա ընթացքում արդեն հինգերորդ անգամ նա ինձ որպես փոխարինող գործուղում է բրիգադից: Նա, կարծես, վաստ է տրամադրված իմ հանդեպ: Բավական է: Ինչու՝ պետք է ողջ սևագործ աշխատանքը ես կատարեմ:

Ավելի ուշ արհմիության նախագահը դիմում է Քեմբրլին.

– Ինչու՝ եք շարունակ նեղում Զոնսին: Նրա խոսքերով, դուք երկու շաբարվա ընթացքում հինգ անգամ փոխարինելու համար գործուղել եք բրիգադից: Ինչու՝ մն է բանը:

– Ես ընտրում եմ Զոնսին, քանի որ նա լավագույնն է այդ գործում: Ես կարող եմ վստահել նրան, քանի որ նա կարողանում է խումբն իր ձեռքը հավաքել, երբ այն առանց դեկավարի է: Ես նրան գործուղում եմ միայն այն դեպքում, երբ որևէ խմբում բացակայում է դեկավարը, այլ դեպքերում դիմում եմ Սմիթին կամ մեկ ուրիշին: Հարբուխի պատճառով դեկավար աշխատակազմից շատերն են բացակայում աշխատանքից:

Երբեք չեմ մտածել, թե Չոնսը ինչոր առարկություններ ունի: Ինձ թվում էր՝ նրան դուր է գալիս այդ պատասխանատվության զգացումը, - պատասխանում է Քեմբըլը:

Իրական կյանքից վերցված մեկ այլ օրինակ. ապահովագրական ընկերության իրավաբանը դիմում է պետական ապահովագրական գործակալության հանձնակատարին¹.

– Ես գնահատում եմ ձեր ժամանակը, պարոն Թոմսոն, և այն, ինչի մասին կցանկանայի ծեզ հետ խոսել, վերաբերում է «Վնասի փոխհատուցման մասին» կանոնակարգի կանխավարկածի հոդվածին: Մեր կարծիքով, հոդվածի գործող տարրերակը կողմնակալ մոտեցում է սահմանում այն ապահովագրական ընկերությունների հանդեպ, որոնք որդեգրել են ապահովագրական դրույքաշափի փոփոխումը սահմանափակող քաղաքականություն: Ուստի, մենք կցանկանայինք քննարկել այն վերանայելու հնարավորությունը...

– Տիկին Մոնթե՛յրո, մինչև կանոնակարգն ընդունելը ձեր ընկերությանը բազմաթիվ հնարավորություններ էին ընձեռնված առարկություններով հանդես գալու մեր վարչության կողմից կազմակերպված լսումների ընթացքում: Ես ձեռնարկեցի այդ լսումները, ուշադրությամբ լսեցի ներկայացված փաստարկների յուրաքանչյուր բառ և անձամբ մշակեցի կանոնակարգի վերջնական տարրերակը: Ուզում եք ասել՝ ես սիսա՞լ եմ թույլ տվել,-ընդիատում է գործակալության հանձնակատարը:

– Ո՛չ, սակայն...

– Զեր կարծիքով, ես կողմնապահությո՞ւն եմ արել:

– Իհարկե ո՛չ, պարո՞ն, սակայն կարծում եմ, որ կանոնակարգը մի շարք հետևանքներ է ունեցել, որոնք մեզանից ոչ մեկը ժամանակին չէր կանխատեսել և...:

– Լսե՛ք, Մոնթե՛յրո, այս պաշտոնում ընտրվելիս ես հասարակությանը խոստացա վերացնել մարդասպան մազահարդա-

¹ Ասհանգի մակարդակով ընտրվող պաշտոնյա (քարգ.)

բիշներն¹ ու տասը հազար դոլար արժողությամբ մեքենաների տեսքով ռումբերը²: Եվ այս կանոնակարգն իր գործն արեց:

Կանոնակարգով սահմանված քաղաքականության իրագործման արդյունքում ձեր ընկերությունն անցյալ տարի 50 մլն դոլարի եկամուտ ունեցավ: Դուք ինձ հիմարի տե՞ղ եք դրեւ, ի՞նչ է. նման արդյունք արձանագրելուց հետո զայիս եք այստեղ և խոսում «կողմնակալ» կանոնակարգերի ու «անկանխատեսելի հետևանքների» մասին: Ես այս ոչինչ չեմ ցանկանում լսել: Հաջողություն, տիկին Մոնթեյրո:

Եվ ի՞նչ: Պե՞տք է, արդյոք, ապահովագրական ընկերության իրավաբանը շարունակի ճնշել հանձնակատարին՝ բարկացնելով նրան և արդյունքում ոչինչի չհասնելով: Նրա ընկերությունն այս նահանգում բավական լայն գործունեություն է ծավալում, և հանձնակատարի հետ բարիդրացիական հարաբերություններն անշափ կարևոր են ընկերության համար: Պե՞տք է, արդյոք, նա բողնի ամեն ինչ այնպես, ինչպես կա, եթե անգամ առավել քան վստահ է, որ հոդվածը սխալ է, որ դրա երկարաժամկետ ազդեցությունը դեմ է հասարակության շահերին, և որ անգամ փորձագետները չեն կանխատեսել խնդիրը նախնական լսումների ընթացքում:

Ի՞նչ է կատարվում այս օրինակներում:

“ՅՅՈԱՅՈ”»ԱՅՅԷ “ՅՅԸ ԱՅՅԸ ԱՅՅԸ”»

Գոյություն ունի մի պարզ, սակայն կորպորատիվ և միջազգային գործարքների ընթացքում ուշադրությունից հաճախ վրիպող մի իրողություն, որ բանակցությունների շրջանակներում դուք գործ եք ունենում ոչ թե «մյուս կողմի» ինչ-որ վերացական ներկայացուցիչների, այլ մարդկային եակների հետ: Նրանք ունեն զգացմունքներ, ունեն խորը արժեքային համակարգեր, կրթական տարրեր մակարդակներ, տարրեր

¹ մազահարդարիչներ, որոնք չունեն հողանցման համակարգ (քարզ.)

² ավտոմեքենաներ, որոնք, չնայած իրենց բարձր գնին, խիստ վտանգավոր են և կարող են ցանկացած պահին պայթել ինչպես ռումբ (քարզ.)

տեսակետներ և անկանխատեսելի են, ինչպես և դուք:

Մարդկային գործոնը բանակցությունների ընթացքում կարող է լինել ինչպես օժանդակող, այնպես էլ խոչընդոտող հաճգամանք: Համաձայնության հաճգելու գործընթացը կարող է փոխադարձ բավարարող արդյունքի հասնելու հոգեբանական պարտավորություն ձևավորել: Գործնական հարաբերությունները, որ հիմնված են ժամանակի ընթացքում ձևավորվող վստահության, ըմբռնման, հարգանքի և ընկերության վրա, կարող են յուրաքանչյուր նոր բանակցային գործընթաց դարձնել առավել արդյունավետ և սահուն: Սեփական անձից գոր լինելու ցանկությունը, ինչպես նաև մտահոգությունը, թե ինչ կարծիք ունեն մյուսներն իր մասին, շատ հաճախ, մարդկանց դարձնում են առավել զգայուն մյուս կողմից շահերի հանդեսաւ:

Մյուս կողմից, սակայն, մարդիկ ունակ են բարկանալու, վհատվելու, երկյուղելու, թշնամանալու, հիասթավիվելու ու վիրավորվելու: Նրանց «ես»-ն, ըստ էության, չափազանց խոցելի է: Նրանք աշխարհին նայում են անձնական տեսանկյունից և հաճախ սեփական ընկալումները շփորում են իրականության հետ: Հաճախ, ձեր ասածը նրանք մեկնաբանում են ոչ այնպես, ինչպես դուք ի նկատի ունեք, երբեմն էլ իրենք ի նկատի չունեն այն, ինչ դուք ընկալել եք իրենց լսելիս: Թյուրմբոնումը խթանում է կանխակալ կարծիքի ձևավորումը և ուղղորդում քայլերի, որոնք ծնում են հակաքայլեր ու այսպիսով ստեղծում դրանց արատավոր շրջան: Ինարավոր լուծումների բացահայտման արդյունավետ գործընթացը դառնում է անհնարին, և բանակցություններն անհաջողության են մատնիվում: Խաղի նպատակը, փոխանակ երկու կողմերի էական շահերի մասին քննարկումներ ծավալելը, դառնում է միավորներ վաստակելը, բացասական տպավորությունները վերահսատատելը և ձախողման պատասխանատվությունը մի կամ մյուս կողմին վերագրելը:

Դիմացինի՝ որպես մարդ էակի հետ զգայական շփման

պակասը կարող է կործանարար ազդեցություն ունենալ բանակցությունների վրա: Բանակցության յուրաքանչյուր փուլում՝ նախապատրաստականից մինչև գործընթացի ավարտը, ցանկացած քայլի դիմելիս վատ չեր լինի ինքներդ ձեզ ժամանակ առ ժամանակ հարց տայիք. «Արդյոք բավակա՞ն ուշադրություն եմ դարձնում մարդկային գործոնին»:

Սահմանադրության մասին օրենք

Յաջմանական օրենքը բանակցող ցանկանում է հաճգել այնպիսի մի համաձայնության, որը բավարարում է իր էական շահերը: Ահա թե ինչու են ընդհանրապես բանակցում: Բացի դրանից, յուրաքանչյուր բանակցող ունի ևս մեկ շահ, որն է՝ մյուս կողմի հետ հարաբերություններ զարգացնելը: Հնառն իրերի առևտրով զբաղվող գործակալը ցանկանում է ինչպես եկամուտ ունենալ վաճառքից, այնպես էլ ձեռք բերել մշտական հաճախորդ: Յուրաքանչյուր բանակցող ձգտում է պահպանել աշխատանքային հարաբերությունների առնվազն այնպիսի մակարդակ, որը բույլ կտա հանգել ընդունելի համաձայնության, եթե այդպիսին երկու կողմերի շահերի տեսանկյունից ընդհանրապես հնարավոր է: Մինչեռ, սովորաբար սեղանին շատ ավելին է դրվում: Բանակցությունները, հիմնականում, տեղի են ունենում շարունակվող հարաբերությունների համատեքստում, որտեղ շատ կարևոր է յուրաքանչյուր բանակցային փուլն անցկացնել այնպես, որ այն մեծապես օժանդակի, և ոչ թե խոշնդրութիւն ապագա հարաբերությունների զարգացմանն ու բանակցային գործընթացին: Հետևաբար, մշտական հաճախորդների, գոծընկերների, ընտանիքի անդամների, պետական պաշտոնյանների կամ արտասահմանյան երկրների հետ շարունակական հարաբերությունների պահպանումը շատ ավելի կարևոր է, քան որևէ մասնավոր բանակցության ընթացքում ձեռք բերված արդյունքը:

**Ե³Ռ³Մ»ՌԱՌԱՌԱՌ»ՌԱ ՌՉՌՌԻ »Յ ՌՉՌԵՌԵՌ»ԷՌ
ՆՌՈՒՅՌԵՌՌ»Ռ:**

Բանակցության ընթացքում «մարդկային գործոնի» հիմնական հետևանքն այն է, որ կողմերի միջև հարաբերությունները միախառնվում են հիմնախնդրի էության շուրջ ընթացող քննարկումներին: Առաջարկներ ներկայացնելիս և թե ընդունելիս մենք հիմնականում ընդունում ենք մարդկանց և հիմնախնդրի որպես մեկ ամբողջություն: «Խոհանոցը սարսափելի թափրփած է» կամ «մեր բանկային հաշվում քիչ գումար է մնացել» արտահայտությունների նպատակը կարող է ընդամենը ընտանիքի անդամների առջև խնդիրը ներկայացնելու փորձ լինել, սակայն, շատ հավանական է, որ այն ընկալվի որպես գրոհ անձի վրա: Իրավիճակի շուրջ ձևավորված զայրույթը դուք կարող եք արտահայտել որևէ մեկի նկատմամբ, ով, ըստ ձեզ, կապված է տվյալ խնդրի հետ: Մարդկանց «ես»-ը հակված է ներքաշվելու հաստատուն դիրքերի մեջ:

Եական խնդիրները հոգեբանական խնդիրներին միախառնելու մյուս պատճառն այն է, որ մարդիկ խնդրի էության վերաբերյալ դիտողություններից հանգում են անհիմն եզրակացությունների, իսկ այնուհետև, վերաբերվում դրանց որպես փաստերի, որոնք արտահայտում են դիմացինի մտադրությունները և իրենց նկատմամբ վերաբերմունքը: Նկարագրված գործընթացը, քանի դեռ մենք անզգոյշ ենք, զարգանում է գրեթե ինքնարերաբար. մենք հազվադեպ ենք գիտակցում, որ այլոց բացատրությունները կարող են հավասարապես հիմնավորված լինել: Վերիշենք արհմիության օրինակը, որտեղ Զոնսին թվում էր, թե աշխատեկ Քեմբըլը դիտավորությամբ վճառում է իրեն, մինչդեռ Քեմբըլը կարծում էր, թե ինքն այդպիսով իր դրական վերաբերմունքն է արտահայտում Զոնսի նկատմամբ և լավություն է անում՝ տալով նրան պատասխանատու առաջադրանք:

ՀԵ՞ՆՅՈՒՑ Ե՞ՐԻԱԾԱԾՅԱ ԻԱՅՎԵԾԻ Ճ ՇԵ»ՕԻԱԾՈՒ
ՆՅՈՒՄ»ԱԾԱԾՅԱ»ՆԸ Ե՞ՐԻԿ ՃԱԾԱԾՅՈՒՑ:

Բանակցությունը դիրքերի շուրջ կամային պայքարի վերածելը խորացնում է հարաբերությունները և էռությունը միախառնելու գործընթացը: Ձեր դիրքը ես ընկալում եմ որպես հայտարարություն այն մասին, թե ինչպես եք դուք ցանկանում ավարտել բանակցությունները: Ըստ իս, այն ցույց է տալիս, թե որքան քիչ են ձեզ մտահոգում մեր հարաբերությունները: Եթե ես այնպիսի կոշտ դիրք բռնեմ, որը դուք համարեք չպատճառաբանված, ապա դուք կարող եք ենթադրել, թե ես նույնպես համարում եմ այն ծայրահեղ դիրք: Արանից բխում է, թե ես բացարձակապես չեմ գնահատում մեր հարաբերությունները կամ ձեզ:

Դիրքային սակարկությունը կարող է բավարարել բանակցողի ինչպես էական, այնպես էլ պատշաճ հարաբերություններ պահպանելու շահը, սակայն, մեկը մյուսի հաշվին: Եթե ձեր կազմակերպության համար առավել հեռանկարային է ապահովագրական գործակալության հանձնակատարի հետ լավ հարաբերություններ պահպանելը, ապա հավանաբար դուք կզիջեք վերը նկարագրված հարցում: Կամ, եթե դուք առավելապես մտահոգված եք բարենպաստ լուծման, քան մյուս կրողմի հարգանքին կամ համակրանքին արժանանալու խնդրով, դուք կարող եք զոհել հարաբերությունները հանուն խնդրի էռության: «Եթե դուք չեք համաձայնվում ինձ հետ այս հարցի շուրջ, ապա ինքներդ գիտեք: Սա կլինի մեր վերջին հանդիպումը»: Սակայն, նույնիսկ զիջելով էռության շուրջ, հնարավոր է, ոչ մի ընկերական հարաբերություններ էլ ձեռք չբերեք, այլ միայն բույլ տաք մյուս կրողմին համոզվելու նրանում, որ ձեզ կարելի է հեշտությամբ խարել:

Ի՞ն՞ՅԵ՞ՆՆ ՆՅՈՒՄ»ԱԾԱԾՅԱ»ՆՅՈՒՄ»Ե՞ՐԻԿ ՃԱԾԱԾՅՈՒՑԾ. §ՍԵՐԻՅՈՒՑ
·ԱՆԻԱՅԱԼ ՎԱՐԵՐԻ»ՆՅՈՒՄ»ԱԾԱԾՅԱ»Ե՞ՐԻԿ ՃԱԾԱԾՅՈՒՑԾ.

Երբ դուք նպատակ եք դրել կարգավորել էական խնդիր-

ները և միաժամանակ պահպանել պատշաճ աշխատանքային հարաբերություններ, ապա պարտադիր չէ, որ նշված երկու նպատակները հակասեն միմյանց, եթե կողմերը նպատակադրվել և հոգեբանորեն նախապատրաստվել են անդրադառնալու դրանց առանձին-առանձին՝ ըստ յուրաքանչյուրի առանձնահատկությունների: Կառուցեք ձեր հարաբերությունները ճշգրիտ ընկալումների, հստակ հաղորդակցության, համապատասխան հոլյզերի, դեպի ապագան միտված և նպատակային հայացքների վրա: Ուղղակիորեն զբաղվեք մարդկային գործոնով պայմանավորված խնդիրների կարգավորմամբ. մի փորձեք լուծել դրանք էության շուրջ գիշումների հաշվին:

Հոգեբանական խնդիրները կարգավորելու նպատակով կիրառեք հոգեբանական հնարքներ: Այսուղի, որտեղ ընկալումները հստակ չեն, ուղիներ փնտրեք, թե ինչպես կարելի է կրթել: Եթե հոլյզերը հասնում են գագաթնակետին, մտածեք, թե ինչպես կարող եք հանդարտեցնել մասնակիցների կրթերը: Որտեղ գործություն ունի բյուրըմբոնում, կարող եք ջանքեք գործադրել հաղորդակցումը բարելավելու ուղղությամբ:

Մարդկային գործոնով պայմանավորված խնդիրների հորձանուտում ձեր ճանապարհը հարթելու համար օգտակար կլինի հաշվի առնել հետևյալ երեք հիմնական կատեգորիաները. ընկալում, հոլյզ և հաղորդակցություն: Մարդկային գործոնով պայմանավորված խնդիրներից յուրաքանչյուրը հնարավոր է տեղափորել այդ երեք զամբյուղներից որևէ մեկի մեջ:

Բանակցության ընթացքում հաճախ մոռացվում է, որ պետք է կարգավորել ոչ միայն մյուս կողմի մարդկային գործոնով պայմանավորված խնդիրները, այլ նաև՝ ձերը: Ձեզ համակած զայրույթը կամ ապրած հուսախարությունը կարող են խարարել ձեզ համար շահավետ համաձայնության կայացումը: Ձեր ընկալումները հավանաբար միակողմանի կլինին, և դուք ի վիճակի չեք լինի լսել կամ հաղորդակցվել նրանց հետ

պատշաճորեն: Հնարքները, որոնք ներկայացվում են հաջորդ մասերում, հավասարապես կիրառելի են մարդկային գործոնով պայմանավորված ինչպես ձեր, այնպես էլ նրանց խնդիրների նկատմամբ:

ԱՅԻՇԱՅՈՒ

Մյուս կողմի մտածելակերպը հասկանալը լոկ օգտակար, ինքնանպատակ գործողություն չէ, որմ օժանդակելու է ձեզ լուծել հիմնախնդիրը: Նրանց մտածելակերպն ինքնին արդեն իսկ հիմնախնդիր է: Գործարք եք կնքում, թե փորձում վեճը կարգավորել, ցանկացած իրավիճակում առաջացող տարածայնություններն արդյունք են նրանց և ձեր մտածելակերպի միջև առկա տարբերությունների: Երկու հոգի սովորաբար վիճաբանում են ինչ-որ առարկայի շուրջ, ասենք, վիճարկում են ինչ-որ ժամացույցի նկատմամբ իրենց իրավունքները, կամ վիճում են ինչ-որ իրադարձության շուրջ, օրինակ՝ մեղադրում են միմյանց ավտովքարի մեջ: Նույնը վերաբերում է նաև պետություններին: Մարոկկոյի և Ալժիրի միջև վեճի առարկան Արևմտյան Սահարայի հատվածներից մեկն է, Հնդկաստանը ու Պակիստանը վիճում են երկու երկրներում իրականացվող ատոմային ռումբի մշակումների շուրջ: Նման իրավիճակներում մարդիկ հակված են կարծելու, որ իրենց անհրաժեշտ է որքան հնարավոր է շատ բան իմանալ վիճահարույց առարկայի կամ իրադարձության մասին: Նրանք ուսումնասիրում են ժամացույցը, ավտովքարի տեղանքում չափում կտրուկ արգելակման հետևանքով առաջացած անվարտերի հետքերը, ձեռնամուխ են լինում Արևմտյան Սահարայի կամ Հնդկաստանում և Պակիստանում ատոմային գենքի զարգացման պատմության մանրամասների ուսումնասիրությանը:

Վերջին հաշվով, սակայն, հակամարտությունը գոյություն ունի ոչ թե օբյեկտիվ իրականության մեջ, այլ մարդկանց ուղեղներում: Տարածայնությունների հետ առնչվելիս ճշնարտությունը պարզապես լրացնիչ մի փաստարկ է՝ գուցե լավ

կամ վատ: Տարածայնությունները գոյություն ունեն, քանի որ դրանք առկա են հենց մարդկանց մտածելակերպում: Մտավախությունները, գուցե և անհիմն, իրական են և անհրաժեշտ է դրանց նկատմամբ համապատասխան վերաբերմունք ցուցաբերել: Ակնկալիքները, եթե անգամ անիրական են, կարող են պատերազմի պատճառ դառնալ: Փաստերը, եթե անգամ պարզաբանված են, հնարավոր է ոչնչով չնպաստեն հիմնախնդրի լուծմանը: Հնարավոր է, որ երկու կողմերն ել համաձայն են, որ մեկը կորցրել է ժամացույցը, մյուսը՝ գտել, սակայն չեն համաձայնվում, թե ում է պատկանելու այն: Վերջիվերջո կարող է պարզվել, որ ավտովքարը տեղի է ունեցել 45 հազար կիլոմետր վազք կատարած (մաշվածության բույլատրելի սահմանը չգերազանցած) անվաղորդի վճարվելու հետևանքով, այսուհանդերձ, կողմերը կարող են շարունակել վիճել, թե ով պետք է փոխհատուցի պատճառված վնասը: Արևմտյան Սահարայի պատմության ու աշխարհագրության մանրանանությունները, որքան ել մանրակրկիտ ուսումնասիրված և փաստագրված լինեն, չեն կարող այն հենարանը հանդիսանալ, որի օգնությամբ ինչ-որ մեկն ի զորու է լուծելու այդօրինակ տարածքային վեճը: Ոչ մի ուսումնասիրություն, թե ով և ինչպիսի ատոմային սարք է ստեղծել, չի կարող կարգավորել Հնդկաստանի և Պակիստանի միջև հակամարտությունը:

Որքան էլ օգտակար կարող է լինել օրյեկտիվ իրականությունը փորփրելը, վերջին հաշվով իրականությունն այն է, ինչ տեսնում են կողմերը, և հենց սա է ստեղծում հիմնախնդիրը և ճանապարհ բացում դեպի դրա լուծումը:

Մտնել մյուսի դրության մեջ: Աշխարհը ձեզ համար այն-պիսին է, ինչպիսին դուք տեսնում եք այն ձեր արողից: Մարդկի հակված են տեսնել այն, ինչ ցանկանում են տեսնել: Նրանք հակված են հանգամանալից տեղեկությունների հորձանուտից դուրս քաշել և ուշադրությունը սեղու միայն այն փաստերի վրա, որոնք հաստատում են իրենց նախնական ընկալումները և անուշադրության մատնել կամ սխալ մեկնաբա-

Աել այն փաստերը, որոնք հարցականի տակ են դնում դրանք: Բանակցությունների ընթացքում յուրաքանչյուր կողմ տեսնում է իր փաստարկների արժանիքները միայն, մինչդեռ մյուս կողմի փաստարկների՝ բացառապես վրիշպումները:

Իրավիճակն այնպիսին տեսնելու ունակությունը, ինչպիսին այն ներկայանում է մյուս կողմին, որքան էլ որ դա բարդ կարող է լինել, կարևորագույն հմտություններից մեկն է, որ յուրաքանչյուր բանակցող պետք է տիրապետի: Դեռևս բավական չէ գիտակցել, որ մյուս կողմն իրերի դրվածքը տեսնում է այլ կերպ: Եթե ցանկանում եք ներգործել նրանց վրա, անհրաժեշտ է նաև, որ ըմբռնումով մոտենաք նրանց տեսակետի ուժին և զգաք այն հուզական լարվածությունը, որն ստիպում է նրանց հավատալ այդ տեսակետին: Բավական չէ հետազոտել նրանց, ինչպես բգեզներին՝ միկրոսկոպով. ձեզ անհրաժեշտ է իմանալ, թե ինչ է նշանակում լինել բգեզ: Դրա համար դուք պետք է պատրաստ լինեք մի առ ժամանակ խուսափել դատողություններ անելուց, քանի դեռ «փորձարկում եք» նրանց տեսակետների «համապատասխանությունը ձեզ»: Հնարավոր է, որ նրանք վստահ են իրենց տեսակետների ««ճշմարտացիության»» մեջ նույնաչափ, որչափ դուք՝ ձերի: Հնարավոր է, որ դուք սեղանի վրա տեսնում եք սառը ջրով կիսով չափ լցված մի բաժակ, մինչդեռ ձեր ամուսինը տեսնում է կիսով չափ դատարկ և աղտոտված մի բաժակ, որը կարող է հետք բողնել կարմրափայտ կաղնուց պատրաստված ձեր սեղանի երեսին:

Դիտարկեմք բնակարանի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու շուրջ բանակցող տան սեփականատիրոջ և կենվորի հակադիր ընկալումները.

Կենվորի ընկալումները.

Տան վարձավճարն արդեն իսկ չափազանց բարձր է:

Տան սեփականատիրոջ ընկալումները.

Արդեն բավական ժամանակ է, ինչ տան վարձավճարը չի բարձրացվել:

Բնակարանի համար ավելին չեմ
կարող վճարել, եթե մյուս
ապրանքների գները նույնպես
աճում են:

Բնակարանը ներքին հարդարման
կարիք է զգում:

Ես գիտեմ մարդկանց, ովքեր
համանման բնակարանի համար
ավելի քիչ են վճարում:

Ինձ պես երիտասարդները չեն
կարող թույլ տալ իրենց բարձր
գնով բնակարան վարձակալել:

Վարձավճարը պետք է նվազի,
քանի որ թաղամասի վիճակը
գնալով վատթարաննում է:

Ես ցանկալի կենվոր եմ՝ ոչ շուն
եմ պահում, ոչ կատու:

Տանտիրոջ առաջին իսկ
պահանջով ես վճարում եմ
վարձը:

Նա սառն է և խիստ
պաշտոնական, երբեք չի
հետաքրքրվում իմ
որպիսությամբ:

Քանի որ մյուս ապրանքների
գներն աճում են, պետք է
մտածել վարձակալությունից
ավելի մեծ եկամուտ ստանալու
մասին:

Նրա վարձակալության
ընթացքում բնակարանի
մաշվածությունը զգալիորեն
մեծացել է:

Ես գիտեմ մարդկանց, ովքեր
համանման բնակարանի համար
ավելին են վճարում:
Նրա նման երիտասարդները
հիմնականում շատ են աղմկում
և բնակարանի մասին հոգ չեն
տանում:

Մենք՝ տան սեփականատերերս,
պետք է ավելացնենք տան
վարձավճարները, որպեսզի
կարողանանք բարելավել
թաղամասի վիճակը:

Նրա ծայնարկիչն ինձ
հոգեբուժարան կիհասցնի:
Նրա մտքով երբեք չի անցնում
վճարել վարձը, քանի դեռ ես չեմ
պահանջում:
Ես հաշվի եմ առնում դիմացինիս
ցանկությունները և երբեք չեմ
միջանալ կենվորի
անձնական կյանքին:

Հասկանալ նրանց տեսակետը դեռևս չի նշանակում հա-
մաձայնել դրա հետ: Ցիշտ է, նրանց մտածելակերպի խորն
ըմբռնումը հնարավորություն կընձեռի ձեզ վերանայելու իրա-
վիճակի էության շուրջ ձեր սեփական տեսակետները, սակայն
նրանց տեսակետը հասկանալը ոչ թե ծախս է, այլ՝ օգուտ: Այն
հնարավորություն է ընձեռում ձեզ նեղացնել հակամարտութ-
յան շրջանակները և օգնում առաջ քաշել ձեր նոր ի հայտ
եկած անձնական շահերը:

Եզրակացություններ մի արեք նրանց մտադրությունների մասին՝ ելնելով ձեր մտավախություններից: Մարդիկ հակված են կարծելու, որ մյուս կողմը նպատակադրված անում է հենց այն, ինչի շուրջ իրենք մտավախություններ ունեն: Դիտարկենք նյու Յորք Թայմսից վերցված մի պատմություն:

«Նրանք հանդիպեցին գինետանը: Տղան առաջարկեց տուն ուղեկցել աղջկան: Նրանք անցնում էին անձանոր փողոցներով: Տղան ասաց, որ դա տուն հասնելու ամենակարծ ճանապարհն է: Նրանք այնքան արագ հասան տուն, որ աղջիկը հասցրեց անգամ դիտել ժամը 10-ի լուրերը»: Ինչո՞ւ է պատմության ավարտը զարմանալի թվում: Որովհետև մենք ենթադրություններ էինք անում՝ հիմնվելով մեր մտավախությունների վրա:

Զափազանց դյուրիհն է ձեռք բերել մյուս կողմի ասածը կամ արածը ամենավատ տեսանկյունից մեկնարաննելու սովորություն: Կասկածահարույց մեկնարանությունը հաճախ ինչոր մեկի ընկալումների բնական հետևանքն է հանդիսանում: Ավելին, թվում է, թե այդպես գործելն առավել «անվտանգ» է: Այդ կերպ բանակցության ընթացքին հետևողներին ցույց է տրվում նաև, թե որքան վատն է իրականում մյուս կողմը: Այնչդեռ մյուս կողմի որևէ ասածը կամ արածը չափազանց մոռյլ լույսի ներքո մեկնարաննելու ծախըն այն է, որ արհամարհիվուն են համաձայնության կայացմանը միտված քարմ զաղափարները, իսկ դիրքերում կատարված աննկատ փոփոխությունները չեն արժանանում պատշաճ ուշադրության կամ մերժվում են:

Մի մեղադրեք նրանց նրանում, որ հիմնախնդիր ունեք: Սեփական հիմնախնդիրների համար պատասխանատվությունը մյուս կողմի վրա դնելը գայթակղիչ է: «Չեք կազմակերպությունը ամենին վստահություն չի ներշնչում: Ամեն անգամ, երբ դուք մեր գործարանում վերանորոգում եք ոռտորային գեներատորը, շատ վատ եք աշխատում, և այն կրկին շարքից դուրս է գալիս»: Մեղադրանք ներկայացնելն ամենադյուրին

եղանակն է, առավել ևս, եթք զգում եք, որ մյուս կողմն իրոք պատասխանատու է ինչ-որ բանի համար: Այսուհանդերձ, եթե նույնիսկ արդարացիորեն եք մեղադրում, դա սովորաբար բերում է տրամագծորեն հակառակ արդյունքի: Գրոհի արդյունքում մյուս կողմը կսկսի պաշտպանվել և ընդդիմանալ ձեր հնչեցրած ցանկացած մտքի: Նրանք կդադարեն ձեզ լսել, կամ կնախաձեռնեն սեփական հակահարվածը: Մեղադրանք առաջադրելով՝ դուք մարդկանց ամուր կապում եք հիմնախնդրին:

Հիմնախնդրի շուրջ խոսելիս տարանջատեք դրա ախտանիշերն այն անձից, ում հետ զրուցում եք: «Մեր ոռոտորային գեներատորը, որը դուք եք սպասարկում, կրկին շարքից դրւու է եկել: Անցած ամսվա ընթացքում սա արդեն երրորդ դեպքն է: Առաջին անգամ այն խափանվեց և մի ամբողջ շաբաթ չաշխատեց: Այս գործարանին անհրաժեշտ է անխափան աշխատող գեներատոր: Ես ձեր խորհրդի կարիքն եմ զգում՝ ինչպես կարող ենք նվազագույնի հասցնել գեներատորի խափանման վտանգը: Անհրաժեշտություն կա՝, արդյոք, դիմելու սպասարկող այլ կազմակերպության, գուցե դատական գո՞րծ հարուցենք արտադրող ձեռնարկության հանդեպ, կամ ինչ-որ ա՞յլ բան»:

Քննարկեք յուրաքանչյուրիդ ընկալումները: Տարբերվող ընկալումները հաղթահարելու եղանակներից մեկը դրանք քափանցիկ դարձնելն ու մյուս կողմի հետ քննարկելն է: Եթե ձեզ հաջողվում է դա անել անմիջականորեն և անկեղծորեն, առանց մեղադրելու միմյանց սեփական հիմնախնդրի մեջ, ապա այդպիսի քննարկումը կարող է փոխրմբունման մքնուրս ձևավորել, որը բույլ կտա նրանց լրջորեն վերաբերվել ձեր ասածներին և հակառակը:

Բանակցության ընթացքում հաճախ է պատահում, երբ «ոչ կարեոր» են համարվում մյուս կողմի այն մտահոգությունները, որոնք կարծես չեն խանգարում համաձայնության կայացմանը: Մինչդեռ ընդհակառակը, բարձրաձայն ու համոզիչ կերպով արտահայտելով այն, ինչ դուք կկամենայիք ասել, իսկ

Արանք կցանկանային լսել՝ դուք կարող եք բանակցային գործընթացում ունենալ ձեր՝ որպես բանակցողի լավագույն ներդրումը:

Դիտարկենք տեխնոլոգիաների փոխանցման շուրջ բանակցության օրինակը, որը կայացավ Ծովային իրավունքի համաժողովի շրջանակներում: 1974-ից մինչ 1981 թվականները շուրջ 150 ազգերի ներկայացուցիչներ հավաքվել էին Նյու Յորքում և Ժնևում՝ կանոնակարգելու օվկիանոսի շահագործման հարցերը՝ սկսած ձկնորսության իրավունքից մինչև մանգանի ստորգրյա հանքարդյունահանումը: Հնարկումներից մեկի ընթացքում զարգացող երկրների ներկայացուցիչները տեխնոլոգիաների փոխանակման հարցի նկատմամբ մեծ հետաքրքրություն ցուցաբերեցին: Նրանք ցանկանում էին, որ իրենց հնարավորություն տրվի զարգացած արդյունաբերական երկրներից ստանալ առաջավոր տեխնիկական գիտելիքներ և ձեռք բերել ստորգրյա հանքարդյունահանման ժամանակակից սարքավորումներ:

Միացյալ Նահանգներն ու զարգացած մյուս երկրները ոչ մի դժվարություն չին տեսնում այդ ցանկության բավարարման հարցում, ուստի տեխնոլոգիաների փոխանցման խնդիրը համարեցին ոչ կարևոր մի հարց: Ինչ-որ իմաստով այդ հարցն իրոք կարևորություն չէր ներկայացնում նրանց համար, սակայն, խնդիրը ոչ կարևորների շարքին դասելը դարձավ նրանց մեծագույն սխալը: Տեխնոլոգիաների փոխանցման խնդիրի գործնական կարգավորման հարցերին էական ժամանակ տրամադրելով՝ նրանք իրենց առաջարկը զարգացող երկրների համար հավանաբար կդարձնեին շատ ավելի գրավիչ և վստահություն ներշնչող: Մինչդեռ, վերաբերվելով հարցին՝ որպես պակաս կարևորություն ներկայացնողի և հետաձգելով դրա քննարկումները՝ արդյունաբերական երկրները բաց թողեցին նվազ ծախըեր պարունակող իրենց հնարավորությունը՝ զարգացող երկրների համար կարևորագույն մի նվաճում ձեռք բերելու զգացողություն ապահովելու և այլ հար-

ցերում համաձայնություն ստանալու նպատակով իրական մի խթան ստեղծելու տեսանկյուններից:

Փնտրեք նրանց ընկալումներից դուրս գործելու հնարավորություններ: Նրանց ընկալումները փոփոխելու լավագույն ուղին, թերևս, նրանց ակնկալիքներից տարբերվող ազդակ հաղորդելն է: Նման գործելակերպի ակնառու օրինակը 1977 թվականի նոյեմբերին Եզիզտոսի նախագահ Սադաթի Երուսաղեմ կատարած այցն է: Իսլայելցիները Սադաթի և Եզիզտոսի մեջ տեսնում էին իրենց թշնամուն. մի մարդ և մի երկիր, որ անսպասելիորեն հարձակվեցին իրենց երկրի վրա: Այդ ընկալումը վերափոխելու և իսրայելցիներին համոզելու համար, որ ինքը նույնպես խաղաղության կողմնակից է, Սադաթը մեկնեց իր թշնամու մայրաքաղաք, որի շորջ դեռևս շարունակվում էին վեճերը և անգամ Իսրայելի լավագույն քարեկամը՝ Սիացյալ Նահանգները, չին ճանաչում Իսրայելի իրավունքն այդ քաղաքի նկատմամբ: Որպես թշնամի գործելու փոխարեն, Սադաթը հանդես եկավ որպես գործընկեր: Առանց այս ազդեցիկ քայլի դժվար է պատկերացնել Եզիզտա-իսրայելական հաշտության համաձայնագրի ստորագրումը:

Տվեք արդյունքի մեջ իրենց մասնաբաժինն ունենալու հնարավորություն՝ ապահովելով նրանց մասնակցությունը գործընթացին: Եթե մյուս կողմը ներգրավված չի գործընթացում, ապա հազիվ թե հավանություն տա դրա արդյունքներին: Սա միանգամայն ակնհայտ է: Եթու հարցի շորջ երկարատև ուսումնասիրություններից հետո, դրա համար մարտի բռնվելու պատրաստ, դիմում եք պետական ապահովագրական հանձնակատարին, ապա զարմանալի չէ, որ վերջինս ձեր քայլը կընդունի որպես սպառնալիք և կհակադրվի ձեր եզրակացություններին: Եթե թերանում եք հարցնել ձեր աշխատակցին, թե կցանկանար, արդյոք, պատասխանատու առաջդրանք ստանալ, զգարմանար՝ հայտնաբերելով, որ նրան վրորվեցնում են նման հանձնարարությունները: Եթե ցանկանում եք, որ մյուս կողմը համաձայնվի իր համար անընդու-

Աելի եզրակացության հետ, չափազանց կարևոր է, որ ներգրավեք նրանց այդ եզրակացությանը հանգելու գործընթացում:

Ահա հենց սա է, որ մարդիկ զլանում են անել: Եթե ձեր առջև մի բարդ խնդիր է ծառանում, դուք բնազդաբար դրա դմկարին մասը թողնում եք վերջում լուծելու համար: «Եկեք վստահ լինենք, որ նախքան հանձնակատարի մոտ հասնելն արդեն բոլոր հարցերը կարգավորել ենք»: Սինչդեռ հանձնակատարն առավել հակված կլինի համաձայնվել կանոնակարգի վերանայման անհրաժեշտության հետ, եթե զգա, որ ներգրավված է փաստաթղթի նախագծի մշակման աշխատանքներում: Այս կերպ կանոնակարգի վերանայումը ավելի շուտ դառնում է փաստաթղթի մշակման երկարատև գործընթացի ընդամենը մի փոքրիկ հերթական քայլ, (գործընթաց, որի արդյունքում հանձնակատարի կողմից մշակվել էր կանոնակարգի սկզբնական տարրերակը), քան վերջինիս ավարտուն աշխատանքն աղավաղելուն ուղղված ինչ-որ մեկի փորձ:

Հարավային Աֆրիկայում չափավոր քաղաքականության կողմնակից սպիտակամորթները մի պահ պայքար էին ծավալել խտրականություն սահմանող օրենքները վերացնելու ուղղությամբ: Ինչպե՞ս: Առաջարկները քննարկելու նպատակով հանդիպումներ կազմակերպելով քացառապես սպիտակամորթներից կազմված պառամենտական հանձնաժողովում: Որքան էլ արժեքավոր լինեին այդ ծրագրերը, այսուհանդեռձ, դրանք անբավարար էին և ոչ թե իրենց բովանդակության պատճառով, այլ որովհետև դրանց արդյունքը լինելու էր մի գործընթացի արգասիք, որտեղ ներգրավված չէր և ոչ մի սևամորթ: Սևամորթների ընկալմամբ այդ գործընթացը կարող էր ներկայացվել հետևյալ կերպ: «Մենք՝ գերիշխող սպիտակամորթներս, մտադիր ենք խորհել, թե ինչպես կարելի է լուծել ձեր հիմնախնդիրները: Այն ինչպես միշտ ներկայացվելու էր որպես «սպիտակամորթների հոգս», որն արդեն իսկ խնդիր էր:

Նույնիսկ եթե համաձայնագրի կետերը բարեմաստ են թվում, մյուս կողմը կարող է մերժել դրանք պարզապես այն

կասկածների պատճառով, որոնք ծնվել են նախագծի մշակման գործընթացից իրենց դուրս թողնելու հետևանքով։ Համաձայնություն կայացնելն ավելի դյուրին է դառնում, երբ երկու կողմերն ել դրանում ներառված մտքերը համարում են իրենցը։ Բանակցային ողջ գործընթացն ավելի կայուն է դառնում, երբ կողմերն իրենց դրոշմն են թողնում հիմնախնդրի լուծմանն ուղղված փաստարդի նախագծի մշակման յուրաքանչյուր քայլի վրա։ Համաձայնության պայմանների շուրջ արտահայտած ցանկացած քննադատություն, դրան հետևած ցանկացած փոփոխություն և յուրաքանչյուր զիջում բանակցողի անձնական դրոշմն է նախագծի վրա։ Այսպիսով, ի հայտ է գալիս մի նախագիծ, որը բաղկացած է կողմերի ներկայացրած բավականաչափ թվով առաջարկներից, հետևաբար նրանցից յուրաքանչյուրի համար այն դառնում է իրենը։

Մյուս կողմին ներգրավելու համար գործընթացի մեջ ներառեք նրանց հենց սկզբից։ Դիմեք նրանց խորհրդին։ Յուրաքանչյուր հնարավորության դեպքում արժանին մատուցելով նրանց իրենց զաղափարների համար՝ պատասխանատվության զգացում կարքնացնեք նրանց մեջ՝ պաշտպանելու այդ զաղափարներն մյուսների առջև։ Թերևս դժվար կլինի հաղթահարել սեփական անձը գովարանելու զայթակղությունը, սակայն ինքնատիրապետումը առատաձեռնորեն վարձահատուց կլինի ձեզ։ Հիմնախնդրի էռթյան շուրջ բանակցելուց բացի, մյուս ամենանշանակալի գործոնը գործընթացի մասնակիցը լինելու զգացումն է, որով պայմանավորվում է, թե արդյոք բանակցողն ընդունելու է առաջարկը։ Ինչ որ իմաստով այդ գործընթացն արդեն իսկ արդյունք է։

Դեմքը պահպանելը. ձեր առաջարկները համատեղելի դարձրեք նրանց արժեքային համակարգի հետ։ Անզերենում «դեմքը պահպանել» արտահայտությունը նվաստացուցիչ խմաստ ունի։ Երբ ասում են. «Մենք դիմում ենք այդ քայլին՝ միայն որպեսզի հնարավորություն տանք նրանց՝ պահպանելու իրենց դեմքը», մարդիկ ի նկատի ունեն, որ շինծու մի

պատրվակ են ստեղծել, որպեսզի թույլ տան ինչ-որ մեկին առանց իրեն վատ զգալու գործն առաջ տանել: Արտահայտության տոնը քմծիծաղ է ենթադրում:

Սա «գենքը պահպանել» երևոյթի դերի ու կարևորության լուրջ թյուրմբռնում է: «Դեմքը պահպանել ասելով պետք է հասկանալ բանակցության ընթացքում կամ համաձայնության շրջանակներում բռնած դիրքը որդեգրված սկզբունքների և նախկին բառերի ու գործողությունների հետ համաձայնեցնելու անձի կարիքը:

Դատական գործընթացի ընթացքում իրականացվում է իենց վերոհիշյալը: Երբ դատավորը հրապարակում է դատարանի որոշումը, նա պահպանում է ոչ միայն իր և ողջ դատական համակարգի, այլ նաև գործընթացին մասնակից կողմերի դեմքը: Կողմերից մեկին «գործ հաղթեցիք», իսկ մյուսին «գործ պարտվեցիք» ասելու փոխարեն նա ներկայացնում է, թե որքանով է որոշումը համապատասխանում սկզբունքներին, օրենքին և նախադեպին: Նա ցանկանում է ցույց տալ, որ հանդես է գալիս ոչ թե կամայական դիրքից, այլ գործում է ինչպես որ կարգն է (հավոր պատշաճի): Քանակցողի դեպքում էլ խնդիրը նույն է:

Հաճախ բանակցություններում մարդիկ շարունակում են մինչև վերջ իրենցը պնդել ոչ այն պատճառով, որ սեղանին դրված առաջարկն իրականում անընդունելի է, այլ պարզապես, որ չին ցանկանա տպավորություն թողնել կամ զգացում ունենալ՝ կարծես ընկրկում են մյուս կողմի առջև: Եթե հնարավոր լինի նախագծի էռությունը վերածեակերպել կամ վերախմաստավորել այնպես, որ դրա արդյունքը համարվի անաշառ, նրանք այնժամ կիամաձայնեն ընդունել այն: Քաղաքաբետի և քաղաքի իսպանախոս համայնքի միջև զբաղվածության խնդիրների շուրջ վարվող բանակցության դրույթները ընդունվեցին քաղաքաբետի կողմից այնքան ժամանակ, մինչև բնակիչները շիամաձայնվեցին հետ վերցնել իրենց կողմից ներկայացված համաձայնագրի նախագիծը, իսկ քա-

դաքապետին բույլ տրվեց հրապարակել նույն այդ նախագծում նշված դրույթները՝ որպես սեփական նախաձեռնություն և նախընտրական խոստում:

Դեմքը պահպանելը ենթադրում է ձեռք թերված պայմանավորվածությունների համաձայնեցում բանակցողի որդեգրած սկզբունքների և անձնական վարկի հետ: Դրա կարևորությունը չպետք է թերագնահատվի:

Բաջ Ա»»

Բանակցության ընթացքում, հատկապես բուռն վիճաբանության ժամանակ, զգացմունքները կարող են ավելի կարևոր լինել, քան բուն նյութը: Կողմերը թերևս պատրաստ են ավելի շուտ գժուվել, քան համագործակցելով լուծում առաջարկել հիմնախնդրին: Մարդիկ, հաճախ, բանակցել են սկսում վախի զգացումով՝ գիտակցելով, որ այս խաղաղորույթը բարձր է: Մի կողմի հույզերն առաջացնում են հույզեր մյուս կողմում: Վախը կարող է զայրույթ ծնել, իսկ զայրույթը՝ վախ: Հույզերը կարող են բանակցություններն անմիջապես փակուղի մտցնել կամ խարարել:

Նախ՝ ճանաչեք և ընկալեք ձեր և նրանց հույզերը: Բանակցության ընթացքում հետևեք ձեզ: Նյարդայնանու՞մ եք, անհանգստացնում է ստամո՞քը: Բարկացա՞ծ եք մյուս կողմի վրա: Լսեք նրանց և փորձեք ընկալել, թե ինչ հույզեր ունեն նրանք: Կարող է օգտակար լինել, եթե փորձեք գրի առնել այն, ինչ զգում եք այդ պահին. հնարավոր է վախ, անհանգստություն, զայրույթ: Այնուհետև գրի առեք այն, ինչ կցանկանայիք զգալ վստահություն, հանգստություն: Նույնն արեք մյուս կողմի համար:

Եթե գրք եք ունենում բանակցողների հետ, որոնք ներկայացնում են իրենց կազմակերպությունները, գուցե և անզիտակցաբար, սկսում եք վերաբերվել նրանց՝ որպես ընդամենը հույզերից գուրկ բանախոսների: Կարևոր է հիշել, որ ինչպես և դուք, նրանք ևս ունեն անձնական զգացմունքներ, երկյուղ,

հույսեր և երազանքներ: Նրանց աշխատանքային գործունեությունը կարող է վտանգի տակ լինել: Հնարավոր է կան թեմաներ, որոնց նկատմամբ նրանք հատկապես զգայուն են և այլ թեմաներ, որոնցով նրանք հպարտանում են: Հույզերի խնդիրը չի սահմանափակվում միմիայն բանակցությունների անմիջական մասնակիցներով: Բանակցողների վստահորդները նույնպես զգացնուքներ ունեն և, գուցե, նրանց տեսակետն իրավիճակի մասին առավել պարզունակ է և հակադիր:

Հարց տվեք ձեզ. ի՞նչն է հույզերի պատճառը: Ինչո՞ւ եք դուք բարկացած: Ինչո՞ւ են նրանք բարկացած: Գուցե նրանք արձագանքում են նախկին վիրավորանքների՞ն և վլեմի՞ ծարավ են: Փոխանցվու՞ն են հույզերը մի հարցից մյուսին: Գուցե անձնական խնդիրներն են խճճվում աշխատանքայինի հետ: Մերձավոր Արևելքի խաղաղ կարգավորման բանակցությունում ինչպես խրայելցիները, այնպես էլ պաղեստինցիները սպառնալիք զգալով իրենց՝ որպես ազգի, գոյության նկատմամբ, զարգացրել են այնպիսի հզոր հույզեր, որոնք ներգործում են նույնիսկ այնպիսի որոշակի գործնական խնդիրների վրա, ինչպիսին է, օրինակ, Գազայի արևմտյան ափում ջրի բաշխումը: Այդ պատճառով հարցի քննարկումը կամ որոշման կայացումը գրեթե անհնար է դարձել: Նրանց կողմից ցանկացած խնդիր դիտարկվում է ազգի գոյատևման համատերսում, քանի որ երկու ժողովուրդներն էլ զգում են, որ այն վտանգված է:

Սի քողարկեք հույզերը, ընդունեք, որ դրանց գոյությունն արդարացված է: Խոսեք մյուս կողմի հետ իրենց հույզերի մասին: Խոսեք ձեր սեփական հույզերի մասին: Չի վնասի, եթե ասեք. «Գիտեք, մեզ թվում է, որ մեզ հետ անարդար են գտնվել, այդ պատճառով շատ ընկնած ենք: Մենք վախենում ենք, որ համաձայնությունը չի պահպանվի, անգամ եթե այն ձեռք բերվի: Ընդունելի է դա, թե ոչ՝ դա մեր մտահոգությունն է: Անձամբ ես կարծում եմ, որ մեր մտահոգությունն անտեղի է, բայց մյուսները հակառակ կարծիքն ունեն: Խսկ դուք չունե՞ք արդյոք

նման զգացողություն»: Զեր կամ նրանց զգացմունքները բացահայտ քննարկման առարկա դարձնելով՝ ոչ միայն ընդգծում եք հիմնախնդրի լրջությունը, այլև բանակցությունները դարձնում եք պակաս հակագրող և առավել «համագրող»: Թորափելով շատակեցված զգացմունքների բեռք՝ մարդիկ առավել կիամախմբվեն հիմնախնդրին լուծում առաջադրելու շուրջ:

Թոյլ տվեք մյուս կողմին հանդարտովել: Երբեմն, որպես մարդկանց զայրույթը, ընկճվածությունը և այլ բացասական հույզերը հաղթահարելու արդյունավետ ճանապարհ, անհրաժեշտ է օգնել նրանց ձերքազատվելու այդ զգացմունքներից: Մարդիկ հոգու թերթություն են ձեր թերում վիրավորանքների մասին պատմելու պարզ միջոցով: Եթե տուն վերադառնալով ցանկանում եք ձեր ամուսնուն պատմել աշխատավայրում ձեր խնդիրների ու դժվարությունների մասին, ապա ավելի կը նկանակեք, եթե նա ասի. «Մի պատմիր ինձ այդ մասին: Համոզված եմ, որ ծանր օր ես ունեցել: Արի թողնենք դա»: Նոյնը վերաբերում է բանակցողներին: Թոյլ տալով արտահայտել հոյզերը՝ դուք նախադրյալներ եք ստեղծում հետագա արդյունավետ և ողջամիտ գրույցների համար: Ավելին, երբ բանակցողը բարկացած ճառ է ասում և դրանով ցույց տալիս իր վստահորդներին, որ ինքը «մեղմ» չէ, վերջիններս հետագա բանակցությունների ընթացքում կարող են նրան գործողությունների ավելի մեծ ազատություն շնորհել: Այսպիսով, «կոշտ բանակցողի» համբավը բույլ կտա նրան խուսափել քննադատությունից հետագայում, երբ իվերջո համաձայնությունը կայացվի:

Հետևաբար, վիճահարույց ճառերն ընդհատելու կամ հակառակ կողմին ընդդիմանալու փոխարեն, դուք կարող եք աշխատել իմքնատիրապետման վրա. պարզապես նատեք և բույլ տվեք, որ նրանք ձերքազատվեն իրենց վիրավորանքներից: Նման ճառերը հմարավորություն կը նձեռնեն բանակցողների վստահորդներին ևս հաղթահարելու իրենց դժգոհությունները, եթե նրանք ներկս են: Հավանաբար լավագույն ռազմավա-

բությունը, որ պետք է կիրառել, եթե հակառակ կողմն արտահայտում է իր բարկությունը, հետևյալն է. լուր լսեր՝ առանց պատասխանելու նրանց գրոհներին, և մերթընդերք խնդրեք խոսողին շարունակել, մինչև որ նա չի ասել իր վերջին խոսքը: Այս կերպ դուք գրեք չեք օժանդակում իրավիճակի սրմանը, քաջալերում եք խոսողին՝ լիարժեքորեն ինքնարտահայտվելու և չեք բողնում ոչ մի մնացորդ (կամ բողնում եք շատ քիչ), որը հետագայում կարող է «եռալ»:

Մի արձագանքեք հուզական պոռթկումներին: Հույզերն արտահայտելը վտանգավոր է, եթե այն ծնուն է հուզական հակագրեցություն: Եթե այն չվերահսկվի, կարող է ավարտվել կատաղի վիճարանությամբ: Հույզերի ազդեցությունը կանխելու արտաստվոր և արդյունավետ մի մերոդ է կիրառվել 1950 թվականին Միջանձնային հարաբերությունների հանձնաժողովի կողմից: Այն պողպատի արդյունաբերությունում գրադարձ բանվորներից և դեկավար անձնակազմից բաղկացած մի խումք էր՝ ստեղծված առաջացող կրոնֆլիկտները մինչև դրանց լուրջ հիմնախնդրի վերաճելը կանխելու նպատակով: Հանձնաժողովի անդամները կարգ էին սահմանել, ըստ որի, նիստերի մասնակիցները գրանցված հերթականությամբ կարող էին արտահայտել իրենց վրդովմունքն: Դրա շնորհիվ, նախ՝ սահմանափակվում էր փորորկահույզ պոռթկումներին բորբոքված պատասխան տալու հնարավորությունը և, միաժամանակ, հնարավորություն էր տրվում յուրաքանչյուրին արտահայտելու իր զայրույթն ու վրդովմունքն օրինական ճանապարհով: «Ամեն ինչ լավ է: Այժմ նրա հերքն է» կանոնի առավելությունը նրանում է, որ այն օգնում է մարդկանց վերահսկել իրենց զգացմունքները, իսկ եթե դուք խախտում եք կանոնը, նշանակում է կորցրել եք ինքնատիրապետումը, հետևաբար նաև կորցրել եք դեմքը:

Կատարեք խորհրդանշանակ քայլեր: Ցանկացած սիրահարված տղամարդ գիտի, որ սիրած էակի հետ վիճարանությանը վերջ դնելու լավագույն միջոցը կարմիր վարդերի

փունջ նվիրելն է: Այնպիսի քայլերը, որոնք կարող են դրական հուզական ներգործություն ունենալ դիմացի կողմի վրա հաճախ նվազագույն կամ ընդհանրապես որևէ ծախք չեն ենթադրում: Կարեկցանքի արտահայտումը, զղումը, այցելությունը գերեզմանատուն, բռնիկին փոքրիկ նվեր մատուցելը, ձեռք սեղմելը կամ գրկախառնվելը, միասին ճաշելը, այս բոլորը կարող են անգնահատելի ծառայություն մատուցել թշնամական զգացմունքներ պարունակող իրավիճակները նվազագույն ծախքերով հաղթահարելու գործում: Հաճախ, պարզապես ներդրություն խնդրելը կարող է արդյունավետորեն չեզոքացնել հույզերը, եթե նույնիսկ չեք ստանձնում անձնական պատասխանատվություն որևէ գործողության կամ վճասելու մտադրության հանդեպ: Ներդրություն խնդրելը կարող է դառնալ նվազագույն ծախքեր և առավելագույն հատուց պարունակող ձեր ներդրումը:

Ե՞՞Ո՞Ա՞ՆԻ՞Յօ՞Ա՞Ծ

Առանց հաղորդակցման չկա բանակցություն: Բանակցությունը համատեղ որոշում կայացնելու նպատակով փոխադարձ հաղորդակցման գործընթաց է: Խսկ հաղորդակցվելը երբեւ դյուրիին գործընթաց չի եղել, անգամ այն դեպքում, եթե այն տեղի է ունենում հսկայական փորձառություն ունեցող և ընթանուր արժեքներ կրող անձանց միջև: Անգամ ամուսինները, ովքեր ապրել են համատեղ, օրինակ՝ երեսուն տարի, ունենում են տարածայնություններ գրեթե ամեն օր: Հետևաբար զարմանալի չէ, որ հաղորդակցման խնդիրներ են առկա մարդկանց միջև, ովքեր լավ չեն ճանաչում միմյանց կամ թշնամանքով և կասկածանքով են լցված մեկը մյուսի նկատմամբ: Նման դեպքերում ինչ էլ ասեք, պետք է ի նկատի ունենար, որ մյուս կողմը, գրեթե միշտ, կլսի ինչ-որ այլ բան:

Հաղորդակցման ընթացքում ծագում են երեք մեծ խնդիրներ: Առաջինը. բանակցողները, հնարավոր է, չեն խոսում միմյանց հետ կամ առնվազն խոսում են ոչ այնպես, որ

հասկացվեն: Հաճախ, կողմերը դիմացինին ինչ-որ բան բացատրելը համարելով անհմաստ՝ հրաժարվում են պատշաճ հաղորդակցության մեջ մտնել նրանց հետ: Փոխարենը, նրանք պարզապես շարունակում են շփումները՝ երրորդ կողմի կամ իրենց վստահորդների վրա տպավորություն գործելու նպատակով: Բանակցային գործընկերոց հետ փոխադարձ ընդունելի արդյունքի հասնելու վիճակը փորձում են նրան ծուղակը զցել: Գործընկերոցն առավել կառուցողական քայլի մղելու վիճակը փորձում են համոզել ականատեսներին՝ բռնելու իրենց կողմը: Կողմերի միջև արդյունավետ հաղորդակցությունն ամեն ինչ է, սակայն անհնար՝ երբ յուրաքանչյուր կողմ խաղում է միայն լսարանի համակրանքը և աջակցությունը շահելու նպատակով:

Երբեմն հնարավոր է մյուս կողմը ձեզ չի լսում անգամ, երբ դուք անմիջականորեն և պարզորոշ խոսում եք նրանց հետ: Սա հաղորդակցման երկրորդ խնդիրն է: Նկատե՞լ եք, թե որքան հաճախ մարդիկ պատշաճ ուշադրություն չեն դարձնում նրան, ինչ դուք ասում եք: Հավանաբար նույնքան հաճախ էլ դուք չեք կարող կրկնել այն, ինչ նրանք են ասել: Բանակցության ընթացքում հնարավոր է, որ ձեր միտքը գրադադար լինի նրանով, թե ինչ եք պատրաստվում ասել հաջորդ քայլին, ինչպես եք պատրաստվում պատասխանել արտահայտված վերջին մտքին կամ ինչպես եք պատրաստվում ձևակերպել ձեր հաջորդ փաստարկը և չեք լսում այն, ինչ մյուս կողմն ասում է այդ պահին: Կամ հնարավոր է, որ ավելի մեծ ուշադրությամբ լսում եք ձեր վատահորդների ելույթը, քան մյուս կողմին: Չէ՞ որ, ի վերջո, դուք հաշվետու եք նրանց առջև, նրանց շահերն եք դուք փորձում բավարարել: Հետևաբար, զարմանալի չէ, որ դուք առավել ուշադրություն եք դարձնում նրանց խոսքին: Սակայն, երբ դուք չեք լսում, թե ինչ է ասում մյուս կողմը, ապա հաղորդակցում չի կարող լինել:

Հաղորդակցման երրորդ խնդիրը թյուրլմբոնումն է: Մեկի կողմից ասվածը կարող է մյուսի կողմից սխալ մեկնաբա-

նության ենթարկվել: Նույնիսկ այն ժամանակ, երբ քանակցողները նոյն սենյակում են, փոխադարձ հաղորդակցությունը կարող է նմանվել ուժգին քամու ժամանակ ծխի քուլաներով նշաններ հաղորդելուն: Առավել ևս, երբ կողմերը խոսում են տարրեր լեզուներով, սխալ մեկնաբանության հնարավորությունը մեծանում է: Օրինակ՝ անզերենում «փոխզիջում» բառն ունի դրական իմաստ՝ «միջանկյալ լուծում, որը բավարարում է բոլոր կողմերին», մինչդեռ պարսկերենում այդ բառն ակնհայտորեն չունի նոյն դրական իմաստը և նշանակում է՝ «վիճարկվում է մեր ազնվությունը»: Նոյն կերպ և «միջնորդ» բառը, որը պարսկերենում նշանակում է «ամենագետ»՝ մարդ, ով իր քիթը խորում է ամեն ինչի մեջ: 1980թ. Սիացյալ ազգերի գլխավոր քարտուղար Վոլդեմար Մելինում է Իրան՝ բանակցելու ամերիկացի պատանելերի ազատ արձակման շուրջ: Նրա ջանքերը լուրջ խոշնդրություների են հանդիպում, երբ Թեհրան ժամանելուց հետո Իրանի ազգային ռադիոյի և հեռուստատեսության մեկնաբանությամբ, քարզմանաբար հեռարձակվում է նրա ժամանման նպատակի մասին հաղորդագրությունը, որտեղ ասվում է. «Ես ժամանել եմ որպես միջնորդ, որպեսզի որևէ փոխզիջում գտնենք»: Հաղորդումից մեկ ժամ անց նրա ավտոմեքենան քարկոծվում էր բարկացած իրանցիների կողմից:

Ի՞նչ կարելի է անել հաղորդակցման այս երեք խնդիրները լուծելու համար:

Ակտիվ լսեք և ընկալեք ասվածը: Լսելու անհրաժեշտությունն ակնհայտ է, սակայն դժվար է լինել մշտապես ուշադիր, հատկապես երկարատև բանակցությունների ընթացքում: Լսելը բույլ է տալիս ձեզ ըմբռնել նրանց ընկալումները, զգալ նրանց հոլովերը և ընկալել այն, ինչ նրանք փորձում են ասել: Ակտիվ լսելը ոչ միայն խթանում է այն, ինչ դուք լսում եք, այլ նաև առավել պարզ է դարձնում նրանց միտքը: Եթե դուք ուշադիր եք և ժամանակ առ ժամանակ ընդհատում եք՝ հարցնելով. «Արդյո՞ք ես ճիշտ հասկացա: Դուք ի նկատի ունեի՞ք...», մյուս կողմը հասկանում է, որ այդ ամենը ժամանակի անհմաստ կո-

բուստ չէ կամ միօրինակ և ձանձրալի ընթացակարգ: Նրանք նաև բավականություն են ստանում, որ իրենց լսում և հասկանում են: Նվազագույն ծախքեր պահանջող զիջումը, որ կարող եք կատարել մյուս կողմի համար՝ ցույց տալն է, որ իրենց ասելիքը տեղ է հասել:

Ակտիվ լսելը ենթադրում է՝ պատշաճ ուշադրություն դարձնել նրան, ինչ ասվում է. խնդրել մյուս կողմին մանրամասնել և պարզաբանել, թե հատկապես ինչ ի նկատի ունեն և կրկնել մտքերը, եթե կա որևէ անորոշություն կամ անվստահություն: Լսելու ընթացքում ձեր խնդիրը պետք է լինի ոչ թե պատասխաններ ձևակերպելը, այլ ընկալելը նրանց այնպես, ինչպես իրենք են տեսնում իրենց: Շանաչեք նրանց ընկալումները, նրանց կարիքներն ու անհանգստությունները:

Շատերի կարծիքով, մյուս կողմի փաստարկներին մեծ ուշադրություն չդարձնելը և նրանց տեսակետների ողջամտությունը չընդունելը ճիշտ մարտավարություն է: Մինչեւ փորձառու բանակցողը վարվում է ճիշտ հակառակ կերպով: Քանի դեռ դուք ցույց չեք տվել, որ լսել և հասկացել եք նրանց, նրանք կարող են կարծել, որ չեք լսում իրենց: Եվ երբ, այնուհետև, փորձեք արտահայտել մեկ այլ տեսակետ, նրանք կարող են ենթադրել, որ դուք շարունակում եք չընկալել իրենց մոտեցումները: «Ես արտահայտեցի իմ տեսակետը, բայց այժմ նա այլ բան է ասում, ուրեմն նա չի հասկացել իմ»: կմտածեն նրանք և ձեր տեսակետը լսելու փոխարեն կսկսեն մտորել, թե նորովի ինչպես ներկայացնեն իրենց փաստարկները, որ այս անգամ դրանք ձեզ համար հասկանալի լինեն: Հետևաբար, ցույց տվեք, որ հասկանում եք նրանց: «Թույլ տվեք պարզել, արդյո՞ք ես ճիշտ եմ հասկանում: Ըստ Ձեզ՝ իրավիճակն այսպիսի՞ն է....»:

Երբ փորձում եք կրկնել այն, ինչ հասկացել եք նրանց ասածից, ձեր ասելիքը ձևակերպեք այնպես, որ այն դրականորեն ներկայացնի նրանց տեսակետը՝ շեշտելով նրանց փաստարկների ուժեղ կողմերը: Դուք կարող եք ասել. «Ձեր

փաստարկը համոզիչ է: Թույլ տվեք պարզաբանել, արդյո՞ք ես այդ ճիշտ եմ հասկանում: Ահա թե ինչն է հետաքրքիր....»: Հասկանալ չի նշանակում համաձայնվել: Կարելի է կատարել լապես հասկանալ և, միաժամանակ, ամենին շհամաձայնել մյուս կողմի հետ: Այնուամենայնիվ, քանի դեռ չեք համոզել նրանց, որ հասկանում եք իրենց տեսակետները, հնարավոր է ի վիճակի չլինեք բացատրել ձերը: Եթե այլևս ցույց եք տվել, որ հասկանում եք նրանց փաստարկները, կարող եք վերադառնալ այն խնդիրներին, որոնք, ըստ ձեզ, առկա են նրանց առաջարկներում: Եթե ձեզ հաջողվի ներկայացնել նրանց փաստարկներն ավելի լավ, քան իրենք էին ներկայացրել, և այնուհետև հերքել դրանք, ապա դուք կունենաք բացառիկ հնարավորություն՝ նախաձեռնելու կառուցղական երկխոսություն իհմնախնդրի էռիքյան շուրջ և նվազագույնի հասցնելու կասկածներն առ այն, թե ճիշտ չեք հասկացել նրանց:

Խոսե՛ք, որպեսզի ձեզ հասկանան: Խոսեք մյուս կողմի հետ: Երբեմն բանակցությունների ընթացքում մոռացվում է, որ դա բանավեճ կամ դատական գործընթաց չի: Զեր խնդիրն ինչոր երրորդ կողմի համոզելը չի: Անձը, որին փորձում եք համոզել, նստած է ձեզ հետ միևնույն սեղանի շուրջ: Եթե փորձենք բանակցությունը համեմատել դատական գործընթացի հետ, ապա այն չափազանց ննանվում է երկու դատավորների միջև դատական գործի լուծման շուրջ համաձայնություն ձեռք բերելու գործընթացին: Փորձեք պատկերացնել ձեզ այդ դերում վերաբերվելով դիմացինին որպես ձեր գործընկեր դատավորի, որի հետ փորձում եք մշակել միասնական տեսակետ: Այս իրավիճակում բացարձակապես տեղին չի մեղադրել մյուս կողմին խնդրի մեջ, պիտակներ կացնել և ձայնը բարձրացնել: Ընդհակառակը, այժմ ձեզ ընձեռնված է հնարավորություն հստակորեն գիտակցելու, որ նրանք իրավիճակն ընկալում են այլ կերպ, ինչը կօգնի ձեզ առաջ գնալ՝ որպես մարդիկ, որոնք ունեն ընդհանուր խնդիրներ:

Մամուլի, ներկա գտնվողների, երրորդ կողմի ճնշող և շե-

դող ազդեցությունը մեղմելու համար, նպատակահարմաք է օգտվել հաղորդակցման գաղտնիությունն ապահովող և մասնավոր եղանակներից: Հաղորդակցման գործընթացը կարող էք բարելավել նաև սահմանափակելով մասնակիցների բվաքանակը: Տրիեստ քաղաքի շուրջ 1954 թվականին Հարավսլավիայի, Բրիտանիայի և Սիացյալ Նահանգների միջև տեղի ունեցած բանակցություններում նվազագույն առաջընթաց էր գրանցվում, մինչև երեք իմանական բանակցողները չձերքագատվեցին իրենց մեծաթիվ պատվիրակությունների կազմից և սկսեցին հանդիպել առանձին և ոչ պաշտոնական պայմաններում՝ ինչ-որ սեփական տանը: Այս տեսանկյունից միգուցե արժեք փոխարինել Վուդրո Վիլսոնի «Բաց պայմանավորվածություններ՝ ձեռք բերված բաց ճանապարհով» կարգախոսը «Բաց պայմանավորվածություններ՝ ձեռք բերված մասնավոր ճանապարհով» արտահայտությամբ: Կարևոր չէ, թե քանի մարդ է ներգրավված բանակցային գործընթացում, միևնույն է, կարևոր որոշումները սովորաբար ընդունվում են, եթե սենյակում գտնվում են երկուսից ոչ ավելի մարդիկ:

Խոսե՛ք ձեր մասին, ոչ թե նրանց: Բազմաթիվ բանակցություններում կողմերը բավական ժամանակ են ծախսում մյուս կողմի դրդապատճառներն ու մտադրությունները բացատրելու և դրանք վատարանելու վրա: Այնինչ, շատ ավելի համոզիչ է նկարագրել խնդիրը ձեր վրա ունեցած ազդեցության տեսանկյունից, քան թե՝ ինչ են նրանք արել և ինչու. «Դուք ձեր խոսքը չպահեցիք»-ի փոխարեն՝ «Ես հուսախարված եմ», ավելի շուտ՝ «Մենք գգում ենք, որ մեր դեմ ուսայական խտրականության քաղաքականություն է իրականացվում», քան՝ «Դուք ուսախուեք»: Նրանք կայրանան կամ կարհամարհեն ձեզ, եթե դուք այնախսի կարծիք հայտնեք նրանց մասին, որն, ըստ իրենց, ճիշտ չէ: Արդյունքում ձեր անհանգստությունները կմնան անուշադրության մատնված: Մինչեռ, շատ ավելի դժվար է վիճարկել այն, ինչ դուք եք գգում: Դուք վեր եք հանում նույն խնդիրը՝ առանց պաշտպանական հակագրեցություն իրա-

իրելու, ինչը կխոչընդոտի նրանց կողմից խնդրի ընկալմանը:

Նպատակային խոսեք: Եթեմն խնդիրը ոչ թե հաղորդակցման պակասն է, այլ՝ դրա չափից ավելի առատությունը: Եթե մեծ դժգոհություն և բյուրընկալում է առկա, լավ է որոշ մտքեր բողնել չարտահայտված: Առանձին դեպքերում ձեր ձկունության ամրողական բացահայտումը կարող է դժվարացնել համաձայնության գալու գործընթացը: Եթե դուք ինձ ասում եք, որ պատրաստ էիք տունը վաճառելու 80.000 դրամվ, այն դեպքում, եթե ես արդեն հաստատել եմ, որ կվճարեմ 90.000 դրամ, մենք գործաքը գլուխ բերելու հարցում թերևս ավելի մեծ խնդիր կունենայինք, քան այն դեպքում, եթե դուք ուղղակի լոեիք: Հետևաբար, կարեոր հայտարարություն անելիս խորհեք՝ ինչ եք ցանկանում հաղորդել կամ պարզել և ինչ նպատակի կարող է ծառայել այդ հայտարարությունը:

Ի՞նչ»ԵԱ Է՞րածած ԱՌԱՅ ԱՇքաօ՛Յ :

Ընկալման, հոյզերի և հաղորդակցման խնդիրները լուծելու վերը նկարագրված հնարքները սովորաբար լավ են գործում: Այնուամենայնիվ, մարդկային գործունով պայմանավորված խնդիրները լուծելու լավագույն ժամանակը մինչև դրանց հիմնախնդրի վերաճելն է: Դա ենթադրում է մյուս կողմի հետ անձնական և միջկազմակերպական այնպիսի հարաբերությունների ստեղծում, որոնք կպաշտպանեն կողմերին բանակցությունների ընթացքում տեղացող հարվածներից: Դա նշանակում է նաև՝ բանակցային խաղը կառուցել այնպես, որ անձնական հարաբերությունները տարանջատվեն էական խնդիրներից և թույլ չտրվի, որպեսզի մարդկանց «ես»-ը ներքաշվի խնդրի էության շուրջ քննարկումների մեջ:

Կառուցեք գործուն հարաբերություններ: Եթե անձնապես ճանաչում եք մյուս կողմին, դա կարող է գործին իրական օգուտ բերել: Անշուշտ, առավել դյուրին է սատանայական նկրտումներ վերագրել «մյուս կողմ» կոչվող անհայտ վերացական երևույթին, քան մեկին, ում ճանաչում եք անձնապես:

Տակավին այլ է առնչվել անծանոթի և գործ ունենալ դասընկերոց, գործընկերոց, ընկերոց կամ նույնիսկ ընկերոց ընկերոց հետ: Որքան արագ անծանոթներից վերածվեք ծանոթների, այնքան, հնարավոր է, ավելի թերև կրնանան բանակցությունները: Այս պարագայում նրանց հասկանալու համար ավելի քիչ դժվարությունների եք հանդիպում, ձեռք եք բերում վստահության հիմքեր, որոնց վրա կարող եք հենվել դժվար բանակցությունների ընթացքում, տեղի է ունենում հանգիստ և մտերմիկ հաղորդակցում, որտեղ լարվածությունը մեղմելու նպատակով հեշտորեն կարելի է կատակել կամ անկաշկանորեն շեղել թեման:

Այսպիսի հարաբերություններ անհրաժեշտ է զարգացնել մինչ բանակցությունը մեկնարկելը: Ծանրացեք նրանց հետ և պարզեք, թե ինչն է նրանց դրու գալիս և ինչը՝ ոչ: Փորձեք հանդիպել նրանց հետ ոչ պաշտոնական միջավայրերում: Փորձեք պայմանավորված վայր գալ սահմանված ժամանակից մի փոքր շուտ և ընկերական գրույցի բռնվել մյուս կողմի հետ, իսկ քննարկումներն ավարտվելուց հետո մի շտապեք հեռանալ: Բենյամին Ֆրանկլինն, օրինակ, նախընտրում էր խնդրել հակառակորդին որևէ գիրք տալ իրեն կարդալու: Դրանով նա շոյում էր դիմացինի ինքնասիրությունը և ստեղծում հաճելի զգացողություն, որ Ֆրանկլինը պարտավորված է իր հանդեավ:

Դիտարկե՛ք հիմնախնդիրը, ոչ թե մարդկանց: Երբ բանակցողներն ընկալում են միմյանց՝ որպես անձնական առճակատման մեջ հայտնված հակառակորդներ, անշուշտ դժվար է տարանցատել հարաբերությունները առկա հիմնախնդրից: Նման դեպքերում հիմնախնդրի մասին ասված ցանկացած միտք դիտարկվում և ընկալվում է անձնական հար-թության մեջ: Յուրաքանչյուր կողմ ձգտում է գրավել պաշտ-պանական և հակազդող դիրք և ամբողջապես արհամարիել մյուս կողմի ողջամիտ շահերը:

Կողմերի համար միմյանց իբրև լրջախոհ, փոխադարձ

բավարարող և խոհեմ համաձայնության համատեղ որոնմամբ գրադարակ գործընկերներ դիտարկելու առավել արդյունավետ տարրերակ է:

Ինչպես փրկամակույկում մթերքի պաշարների և դրանց օգտագործումը սահմանափակելու անհրաժեշտության շուրջ վիճող երկու նավարեկյալ նավաստիները՝ բանակցողները կարող են մեկնարկել իրքն հակառակորդներ: Յուրաքանչյուրը կարող է դիտարկել մյուսին որպես խոչընդոտ: Այնչեն, կենդանի մնալու համար նավաստիներին անհրաժեշտ է տարանցատել օրյեկտիվ խնդիրը մարդկանցից: Նրանց անհրաժեշտ է ճանաչել միմյանց կարիքները, լինի դա արևից պաշտպանվելը, դեղորայքը, ջուրը, թե սննդամթերքը: Ավելին, անհրաժեշտ է առաջ անցնել և ճանաչել դրանք որպես ընդհանուր կարիքներ՝ հոգալով դրանք այնպես, ինչպես և մյուս ընդհանուր խնդիրները, օրինակ՝ ժամանակին հետևելը, անձրևաջրերը հեռացնելը և ցամաքին հասնելը: Եթե նավատիները գիտակցեն, որ կոռք կոռքի ներգրավվել են ընդհանուր հիմնախնդրի լուծման գործում, նրանք առավել ի վիճակի կլինեն համաձայնեցնել իրենց հակասող շահերը, նաև՝ առաջ մտել իրենց ընդհանուր շահը: Նոյնը վերաբերում է նաև երկու բանակցողներին: Որքան էլ բարդ լինեն անձնական հարաբերությունները մեր միջև, դուք և ես, լավագույնս ի վիճակի կլինենք բարիորացիականորեն համաձայնեցնել մեր տարաբնույթ շահերը, եթե ընդունենք, որ խնդիրն ընդհանուր է և փորձենք լուծել այն միասնական ջանքերով:

«Դեմ առ դեմ» կողմնորոշումը «կոռք կոռքի»-ով փոխարինելու համար ձեզ անհրաժեշտ կլինի բացահայտորեն ըննարկել խնդիրը դիմացինի հետ: «Երկուս էլ իրավաբաններ ենք (դիմանագետներ, գործարարներ, մի ընտանիքի ամդամբներ և այլն) և հասկանում ենք, որ մինչև չփորձենք բավարարել ձեր շահերը, դժվար թե կարողանանք գալ համաձայնության, որը կբավարարի նաև իմ շահերը և հակառակը: Եկեք միասին դիտարկենք այս խնդիրը՝ ինչպե՞ս բավարարել համատեղ

շահը»: Որպես այլընտրանք, կարող եք միակողմանիորեն դիտարկել բանակցությունը որպես համատեղ գործընթաց, և ձեր գործողություններով դարձնել այն ցանկալի մյուս կողմի համար ու համոզել, որ միանա դրան:

Կշահեք, եթե, բառացիորեն, նստեք սեղանի նույն կողմում, իսկ ձեր դիմացը փոեք պայմանագիրը, քարտեզը, նորատետը կամ հիմնախնդրին առնչվող որևէ այլ բան: Եթե արդեն իսկ ձևավորել եք փոխադարձ վստահության հիմքեր, ապա՝ շատ ավելի լավ: Սակայն, որքան էլ մտահոգիչ լինեն ձեր հարաբերությունները, փորձեք բանակցությունը կառուցել որպես «կողք կողքի» իրականացվող մի գործ, որտեղ դուք ձեր տարբեր շահերով և ընկալումներով, ձեր հուզական ներգրավմամբ, պատրաստ եք համատեղ լուծելու ընդհանուր մի խնդիր:

Տարանշատել մարդկանց հիմնախնդրից չի նշանակում անել դա մեկ անգամ և մոռանալ դրա մասին. պետք է շարունակել աշխատել դրա վրա: Հիմնական մոտեցումն այս է. անհրաժեշտ է մարդկանց վերաբերվել իբրև մարդ արարածների, իսկ խնդիրներին՝ ըստ դրանց էության: Վերջինս իրագործելու ուղիները նկարագրվում են հաջորդ երեք գլուխներում:

3 Ի» Յ ի ն ա Յ ³ օ » ն Բ ³ Ն » ն Ը օ , ա օ ա Ա » ¹ Ծ ն ն » ն Ը ի ն ³

Երկու մարդ վիճում են գրադարանում: Մեկը ցանկանում է, որպեսզի սրահի պատուհանը բաց լինի, մյուսը՝ փակ: Նրանց վեճը լուծում չի ստանում. ի՞նչ չափով բաց բողնել պատուհանը՝ փոքրիկ ճեղքի⁹, կիսո՞վ չափ, թե՞ երեք քառորդով: Լուծումները չեն գոհացնում ո՛չ մեկին, ո՛չ մյուսին:

Ներս է մտնում գրադարանավարուիհն և հարցնում է նրանցից մեկին, թե ինչո՞ւ է վերջինս ցանկանում, որ պատուհանը բաց լինի.

– Որպեսզի մաքուր օդ գա, – հնչում է բացատրությունը:

Գրադարանավարուիհն հարցնում է մյուսին, թե նա՞յ ինչո՞ւ է ցանկանում, որ պատուհանը փակ մնա.

– Միջանցիկ քամուց խուսափելու համար, – պատասխանում է երկրորդը:

Մեկ յոպե մտածելուց հետո գրադարանավարուիհն մտնում է հարևան սրահը, լայն բաց է անում այնտեղի պատուհանը, որտեղից և՛ մաքուր օդ է գալիս, և՛ միջանցիկ քամի էլ չի փշում:

**Է ա Ն » Ս ա ն ա թ ա ծ Ա Ռ Ո Յ » Ե ա ծ Ն ³ Ս ³ ն Ն ³ Ս ³ Օ ³ Ս ՝ Յ » օ ն » ն
Բ ³ Ն » օ ն Ա , ա օ ա Ա » ¹ Ծ ն ն » ն Ա**

Վերը բերված օրինակը բանակցությունների մի պատմություն է: Կողմերին երբեմն թվում է, թե հիմնախնդիրը դիրքերի

հակասության, իսկ նպատակը՝ դիրքերի շուրջ համաձայնություն ձեռք բերելու մեջ է: Ուստի նրանք հակված են լինում մտածել և խոսել բացառապես դիրքերի շուրջ՝ արդյունքում հաճախ հայտնվելով փակուղու մեջ:

Գրադարանավարութին հազիվ թե հանգեր այդ որոշմանը, եթե կողմերի շահերին (մաքուր օդ և միջանցիկ քամու բացակայություն) անդրադառնալու փոխարեն կենտրոնանար միայն նրանց դիրքերի վրա (բաց կամ փակ պատուհան): Դիրքերի և շահերի միջև առկա հենց այս տարրերությունն է, որ վճռորոշ դեր է խաղում:

Շահերն են սահմանում հիմնախնդիրը: Բանակցության առարկա հանդիսացող հիմնախնդիրը ոչ թե դիրքերի, այլ կողմերի կարիքների, ցանկությունների, մտավախությունների ու մտահոգությունների միջև գոյություն ունեցող հակադրությունների հարթությունում է: Հաճախ կարելի է լսել. «Ես համոզում եմ նրան դադարեցնել տան հարևանությամբ իրականացվող շինարությունը», կամ. «Աենք համաձայն չենք: Տան համար նա պահանջում է 100.000 դոլար, իսկ ես 95.000 դոլարից անգամ մի ցենք ավել չեմ վճարի»:

Մինչեռ առավել խորքային մակարդակում խնդիրը ձևակերպվում է այսպես. «Նրան կանխիկ դրամ է անհրաժեշտ, իսկ ինձ՝ հանգստություն ու լուսավորություն», կամ. «Նրան առնվազն 100.000 դոլար է անհրաժեշտ նախկին կանց հետ հաշիվները մաքրելու համար, իսկ ես խոսք եմ տվել ընտանիքին անդամներին, որ տան համար չեմ վճարի 95.000 դոլարը գերազանցող գումար»:

Նմանօրինակ ցանկություններն ու մտահոգություններն ել հենց շահեր են: Շահերն առաջնորդում են մարդկանց: Դրանք դիրքերի աղմուկի հետևում տեղակայված լուս շարժիչներ են: Զեր դիրքն այն է, ինչ դուք արդեն որոշել եք, ձեր շահն՝ այն, ինչը դրդել է ձեզ կայացնել նման որոշում:

Եզրակացնելու համար առաջարկության պայմանագիրը, որ 1978թ. կնքվեց Քենսի Դեյվիդում, դիրքերի հիմքերն ուսում-

նասիրելու օգտակարության ակնառու վկայությունն է:

1967 թվականի «Վեցօրյա պատերազմից» հետո Եգիացտական Սինայ թերակղզին օկուպացվել էր Իսրայելի կողմից: Եթե 1978 թվականին խաղաղությունն ամրագրելու նպատակով Եգիալուսն ու Իսրայելը բանակցային սեղանի շորջ նստեցին, նրանց դիրքերն անհամատեղելի էին: Իսրայելը պնդում էր թերակղզու մի մասն իր հսկողության ներքո պահելու վրա: Եգիալուսը, մյուս կողմից, պահանջում էր հետ վերադարձնել Սինայի մինչև վերջին թիզը: Մարդիկ նորանոր քարտեզներ էին գծագրում, նշագծում Սինայի հնարավոր բաժննաման սահմանները: Մինչդեռ Եգիալուսի համար անընդունելի էր նման փոխզիջումը, և, նմանապես, Իսրայելի համար անընդունելի էր վերադարձը 1967 թվականի իրականությանը: Այնուամենայնիվ, դիրքերի փոխարեն նրանց շահերն ուսումնասիրելու արդյունքում հնարավոր եղավ լուծում մշակել: Իսրայելի շահն իր ժողովրդի անվտանգությունն ապահովելն էր. նրանք չէին կարող հանդուրժել ցանկացած պահի հարձակման պատրաստ Եգիալուս տանկերի առկայությունը սահմանի եզրագծին: Եգիալուսի շահը ինքնիշխանության պահպանումն էր. Սինայը Եգիալուսի անքաժան մասն էր փարավոնների ժամանակներից ի վեր: Դարերի ընթացքում գտնվելով հույսների, հոռմեացիների, բուրքերի, ֆրանսիացիների ու բրիտանացիների տիրապետության ներքո՝ Եգիալուսը միայն վերջերս էր վերականգնելի իր ինքնիշխանությունն ու չէր պատրաստվում անգամ մեկ թիզ հող զիջել որևէ օտար նվաճողի:

Եգիալուսի նախագահ Սադաթը և Իսրայելի վարչապետ Բեգինը Քեմփ Դեյվիդում համաձայնության եկան մի նախագծի շորջ, ըստ որի Սինայն ամբողջությամբ վերադարձվում էր Եգիալուսին, և վերականգնվում էր նրա ինքնիշխանությունը, միևնույն ժամանակ թերակղզու տարածքում ստեղծվում էր ապառազմականացված լայն գոտի, ինչով երաշխավորվում էր Իսրայելի անվտանգությունը: Եգիալուսին դրոշն այդուհետ

կծածանվեր ամենուր, սակայն նրանց տանկերը Խարայելին մոտ չէին գտնվի:

Դիքերի փոխարեն շահերը համաձայնեցնելը գործում է երկու պատճառով: Նախ՝ յուրաքանչյուր շահի համար գոյություն ունեն մի շաք հնարավոր դիքեր, որոնք կարող են բավարարել այն: Հաճախ մարդիկ պարզապես ընտրում են ամենաակնիայտ դիքը, ինչպես, օրինակ, Խարայելի դեպքում, որը պնդում էր, որպեսզի Սինայի մի մասը գտնվի իր տիրապետության ներքո: Սակայն դրդապատճառները պարզելու նպատակով բավական է հայացք նետել հակադիր դիքերի հիմքերին և գրեթե միշտ հնարավոր կլինի գտնել այլընտրանքային դիքը, որը բավարարում է ոչ միայն ձեր, այլ նաև նրանց շահերը: Սինայի ապառազմականացումը հենց այդ այլընտրանքն էր:

Դիքերի փոխարեն շահերը համաձայնեցնելը գործում է նաև այն պատճառով, որ հակադիր դիքերի հիմքում ընկած են ոչ միայն բախվող շահեր:

Հակադիր դիքերի հիմքում ընկած են ինչպես բախվոյ, այնպես էլ ընդհանուր և համադրելի շահեր: Սովորաբար մենք հակված ենք ենթադրել, որ եթե մյուս կողմի դիքերը հակադրվում են մեր դիքերին, ապա նրանց շահերն անհրաժեշտաբար պիտի հակադրվեն մեր շահերին: Եթե մեր շահը պաշտպանվելն է, ապա նրանք պետք է որ ցանկանան գրոհել մեզ: Եթե մեր շահը վարձավճարի նվազեցումն է, ապա նրանց շահը պետք է լինի այն առավելագույնի հասցնելը: Շատ դեպքերում, սակայն, շահերի առավել խորն ուսումնասիրությունը թույլ է տալիս բացահայտել ավելի շատ ընդհանուր և համադրելի, քան` բախվող շահեր:

Որպես օրինակ վերլուծենք կենվորի և տան սեփականատիրոջ ընդհանուր շահերը.

1. նրանց երկուսին էլ անհրաժեշտ է կայունություն. տան սեփականատերը ձգտում է ձեռք բերել մշտական կենվոր, կենվորը՝ անփոփոխ հասցե,

2. Երկուսն էլ կցանկանային, որ բնակարանը բարեկարգ լինի, քանի որ կենվորը պատրաստվում է ապրել այդտեղ, իսկ սեփականատերը ցանկանում է բարձր պահել բնակարանի արժեքն ու համբավը;
3. Երկուսն էլ շահագրգուզած են միմյանց հետ լավ հարաբերություններ ունենալ. տան տերը ցանկանում է կանոնավոր վճարող կենվոր, կենվորը՝ հոգացող տանտեր, ոչ հանձն կառնի ընթացիկ նորոգումների հետ կապված խնդիրները:

Նրանք կարող են ունենալ նաև տարբերվող, սակայն իրականում չբախվող շահեր: Օրինակ.

1. Կենվորը կարող է ցանկանալ տեղավորվել այնպիսի ներկով ներկած բնակարանում, որից ինքն ալերգիա է ունենում: Սեփականատերը կարող է ցանկանալ վճարել մնացած բոլոր բնակարանների նորոգման համար՝ առանց նորոգելու նաև այդ մեկը,
2. ապահովության համար սեփականատերը կցանկանար թեկուզ հենց վաղն ստանալ առաջին ամսվա վարձավճարը: Կենվորի համար կարող է նշանակություն չունենալ՝ վճարել վա՞ղը, թե՞ ավելի ուշ՝ հաշվի առնելով, որ դրանից լավ պայմաններով կացարան հազիվ թե հաջողվի գտնել:

Եթե վարձավճարը նվազեցնելու և եկամուտներն առավելագույնի հասցնելու բախսվող շահերը դիտարկենք վերոնշյալ ընդհանուր և տարամետ շահերի համատեքստում, ապա դրանք համաձայնեցնելով կազմի ավելի դյուրին թվալ: Ըստհանուր շահերը հնարավոր են դարձնում երկարաժամկետ վարձակալության պայմանագրի կնքումը, բնակարանի բարեկարգման ծախսերը կիսելու համաձայնության ձեռքբերումը, բարիդրացիական հարաբերություններ ունենալու նպատակով երկուստեր ջանքերի գործադրումը: Տարամետ շահերը, թերևս, հնարավոր է համաձայնեցնել՝ կանխավ վճարելով բնակարանի վարձը և համաձայնություն ձեռք բերելով տան տիրոջ հետ

առ այն, որ նա բնակարանը ներկի կենվորի գմած հատուկ ներկով: Մնաւմ է միայն վարձավճարի չափի հարցը, ինչի լավագույն և անաշառ լուծումն էլ բնակարանների վարձակալության շուկայի սահմանած գինն է:

Համաձայնությունը հաճախ հնարավոր է դառնում հենց այն պատճառով, որ շահերը տարբեր են: Օրինակ՝ և ձեզ, և կոշիկ վաճառողին դրամ անհրաժեշտ է, միևնույն ժամանակ երկուսիդ էլ դուր են գալիս կոշիկները, սակայն 50 դոլար վաստակելու նրա շահը գերազանցում է կոշիկն իրեն պահելու շահին: Ձեզ համար իրավիճակը հակառակն է. ձեզ այս պահին փողից ավելի անհրաժեշտ են կոշիկները: Ահա և ձեզ համաձայնություն: Թե՛ ընդհանուր և թե՛ տարբերվող, բայց միմյանց լրացնող շահերը կարող են խոհեմ համաձայնության կայացման հենասյուները դասնալ:

ԱԵՅԱԱ»±ë ×³Յ³Ա»Է Բ³Ն»ՌԱ

Ակնհայտ է, որ դիրքերի հետևում շահեր վիճարելը ճիշտ մոտեցում է, սակայն ինչպե՞ս դա անել: Դիրքը սովորաբար որոշակի է և ակնհայտ, մինչդեռ դրա հիմքում ընկած շահերը կարող են հստակ արտահայտված չլինել, լինել ոչ առարկայական կամ, հնարավոր է, հակասական: Ինչպե՞ս եք պատրաստվում հասկանալ բանակցության մեջ ներգրավված շահերը՝ չմոռանալով, որ նրանց շահերը հաշվի առնելը առնվազն նույնքան կարևոր է, որքան և ձերը:

Հարցրեք՝ ինչո՞: Շահերը հասկանալու հիմնական միջոցներից մեկը ձեզ իրենց տեղում պատկերացնելն է: Քննեք նրանց բռնած բոլոր դիրքերը և հարց տվեք ինքներդ ձեզ՝ ինչո՞: Ինչո՞ է, օրինակ, տան տերը նախընտրում, որ վարձավճարի չափը պայմանագրում ամրագրված լինի յուրաքանչյուր տարվա համար առանձին, այն դեպքում, եթե դուք վարձակալում եք բնակարանը հինգ տարով: Փնտրեք հարցին պատասխաններ. միգրոց նրա շահերից մեկն էլ հենց գների հնարավոր բարձրացման դեպքում չտուժե՞լն է: Դուք կարող

Եթ նաև հարցն ուղղել անմիջապես տանտիրոջը, թե ի՞նչու է նա բռնել այս կամ այն դիրքը: Այդ դեպքում պարզաբանեք նաև, որ հարցնում եք ոչ թե տվյալ դիրքն արդարացնելու, այլ հասկանալու համար, թե որո՞նք են այն կարիքները, հույսերը, մտահոգությունները կամ ցանկությունները, որոնց ծառայում է տվյալ դիրքը: «Ո՞րն է Ձեր մտավախությունը, պարո՞ն Ձոնս, որ չեք ցանկանում երեք տարուց ավելի ժամկետով պայմանագիր կնքել»:

Հարցրեք՝ ինչո՞ւ ոչ: Մտածեք մյուս կողմի ընտրության մասին: Դիմացինի շահերը հասկանալու ամենաարդյունավետ եղանակներից մեկն այն է, որ նախ պարզեք, թե ո՞րն է այն հիմնական որոշումը, որն, ըստ դիմացինների, դուք ակնկալում եք իրենցից, այնուհետև հարցրեք ինքններդ ձեզ, թե ինչո՞ւ նրանք իրենք այդ որոշումը չեն կայացրել: Այդ ո՞ր շահերն են, որ խոչընդոտում են դրան: Եթե փորձում եք փոխել դիմացինների մտքը, ապա նախ և առաջ պետք է հասկանար, թե ի՞նչ են նրանք տվյալ պահին մտածում:

Եկեք քննարկենք ԱՄՆ-ի և Իրանի միջև 1980 թվականին տեղի ունեցած քանակցությունները, որոնք կապված էին Թեհրանում ռազմատեմզ ուսանողների կողմից ԱՄՆ դիվանագիտական կորպուսի և դեսպանատան աշխատակազմի հիսուներկու ներկայացուցիչների պատանդ վերցնելու հետ: Չնայած միջադեպի կարգավորման շուրջ առկա էին բազմաթիվ լուրջ խոչընդոտներ՝ մենք խնդիրը պարզապես կդիտարկենք իրանցի տիպիկ ուսանողական առաջնորդի հնարավոր ընտրության համատեքսում: Միացյալ Նահանգների պահանջը հստակ էր՝ ազատել պատանդներին: 1980-ականների ուսանողական առաջնորդի հնարավոր ընտրությունը պետք է որ մոտ լիներ ստորև ներկայացված հաշվեկշռային աղյուսակում բերվածին:

Գարուն 1980թ.

Տվյալ պահին հնարավոր ընտրությունն ըստ իրանցի ուսանողական առաջնորդի

Առաջադրված հարցը. «Պե՞տք է արդյոք պնդեմ, որպեսզի ամերիկացի պատանդներն անհապաղ ազատ արձակվեն»

Եթե ասեմ այդ.

- Ես դավաճանում եմ հեղափոխությանը:
- Ինձ կը ննադատեմ՝ որպես ամերիկանետի:
- Մյուսները հավանաբար չեն համաձայնվի ինձ հետ, իսկ եթե նրանք համաձայնվեն և մենք ազատ արձակենք պատանդներին, ապա.
- Իրանը թույլ պետության համբավ կվաստակի:
- Մենք ընկրկում ենք ԱՄՆ-ի առջև:
- Մենք ոչինչ չենք ստանում (ո՛չ Շահ, ո՛չ փող):
- Մենք չգիտենք, թե ի՞նչ քայլի կորինի ԱՄՆ-ը:

Սակայն.

- + Յնարավոր է վերջ տրվի տնտեսական պատժամիջոցներին:
- + Մեր հարաբերություններն այլ՝ մասնավորապես Եվրոպական երկրների հետ կրարելավվեն:

Եթե ասեմ ոչ.

- + Ես օժանդակում եմ հեղափոխությանը:
- + Ինձ կդրվատեն իսլամը պաշտպանելու համար:
- + Մենք բոլորս հավանաբար կմիավորվենք:
- + Մենք ստանում ենք մեր բողոքը հեռուստատեսությամբ ողջ աշխարհին հասցնելու բացառիկ հնարավորություն:
- + Իրանը հզոր պետության համբավ կվաստակի:
- + Մենք ընդդիմանում ենք ԱՄՆ-ին:
- + Մենք ունենում ենք հնարավորություն՝ ստանալու ինչ-որ բան (առնվազն՝ մեր փողերի վերադարձը):
- + Պատանդների գոյությունն ԱՄՆ-ի ներխուժումը կամխելու երաշխիքներ է տալիս:

Սակայն.

- Տնտեսական պատժամիջոցներն անկասկած կշարունակվեն:
- Մեր հարաբերություններն այլ՝ մասնավորապես Եվրոպական երկրների հետ կվատանան:
- Սղածն ու տնտեսական հիմնախնդիրները կշարունակեն խորանալ:

Եթե ասեմ այս.**Եթե ասեմ ոչ.**

– Կա վտանգ, որ ԱՄՆ-ը կդիմի ռազմական գործողությունների (սակայն մարտիրոսաբար զոհվելն անմահություն է):

Բայցևայնպես.

+ ԱՄՆ-ը մեր գումարների, չներխուժելու, պատժամիջոցներ չկիրառելու և այլ հարցերի շուրջ կարող է պարտավորություններ ստանձնել:

+ Քետագայում մենք միշտ էլ կարող ենք ազատել պատանդներին:

Եթե տիպիկ ուսանողական առաջնորդի՝ տվյալ պահին հնարավոր ընտրության ընկալումը գեր որոշ չափով նոտ էր մեր նկարագրածին, ապա հասկանալի է դառնում, թե ինչո՞ւ էին զինված ուսանողներն այդքան երկար պահում պատանդներին: Որքան էլ վրդովեցուցիչ և անօրինական էր մարդկանց գերելը, այդուհանդերձ, պատանդներին մինչև առավել նպատակահարմար և շահեկան պահը գերեվարելու փաստն ուսանողական առաջնորդի տեսանկյունից այնքան էլ անտրամարանական չըր:

Մյուս կողմից՝ տվյալ պահին հնարավոր ընտրության ընկալումը հասկանալու համար առաջին հարցը, որ պետք է տրվի, հետևյալն է. «Ու՞մ որոշման վրա եմ ես ցանկանում ազդել»: Երկրորդ հարցը՝ ո՞րն է այն որոշումը, որն, ըստ դիմացինների, դուք ակնկալում եք իրենցից: Եթե դուք չգիտեք, թե ի՞նչ են նրանք մտածում իրենցից ակնկալվողի մասին, ապա նրանք պարզապես կարող են գաղափար անգամ չունենան դրա մասին: Միայն սա կարող է բացատրել, թե ինչո՞ւ նրանք չեն կայացնում ձեզ համար ցանկալի որոշումը:

Այժմ վերլուծեք ձեր կողմից առաջարկված որոշումն ընդունելու կամ մերժելու հետևանքներն ըստ մյուս կողմի հավանական պատկերացումների: Դրանում ձեզ կարող են օգնել

ստորև բերվող հարցերը:

Ազդեցությունն իմ շահերի վրա.

- Ես ձե՞ոք կրերեմ, թե՞ կկորցնեմ քաղաքական աջակցությունը:
- Դործնկերներս կփնտվե՞ն, թե՞ կդրվատեն ինձ:

Ազդեցությունը խմբի շահերի վրա.

- Որո՞նք կլինեն կարճաժամկետ և երկարաժամկետ հետևանքները:
- Ինչպիսի՞ն կլինեն տնտեսական հետևանքները (քաղաքական, իրավական, հոգեբանական, ռազմական և այլն):
- Ինչպիսի՞ ազդեցություն կունենա արտաքին աջակցության և հասարակական կարծիքի վրա:
- Դա լա՞վ, թե՞ վատ նախադեպ կդառնա:
- Տվյալ որոշման կայացումն արդյո՞ք չի խոչընդոտի ինչ-որ լավ բան անելուն:
- Համապատասխանո՞ւմ է տվյալ գործողությունը մեր սկզբունքներին: Արդյո՞ք այն «ճիշտ» է:
- Եթե ցանկանամ, կարո՞ղ եմ դա ավելի ուշ անել:

Միայն կլիներ փորձել ողջ այս գործնթացում հասնել առավելագույն ճշտության: Հազվադեպ են պատահում որոշում կայացնողներ, ովքեր գրի են առնում և կշուադատում բոլոր «այն»-ներն ու «ոչ»-երը: Չե՞ որ դուք փորձում եք հասկանալ չափազանց մարդկային մի ընտրություն և ոչ թե մաքնատիկական հաշվարկներ եք կատարում:

Հիշեք, որ յուրաքանչյուր կողմ ունի բազմակի շահեր: Գրեքե բոլոր բանակցություններում կողմերն ունեն ոչ թե մեկ, այլ բազմաթիվ շահեր: Որպես բնակարանի վարձակալության պայմանագրի շուրջ բանակցող կենվոր, դուք, օրինակ, կարող

եք ցանկանալ ձեռք բերել բարենպաստ համաձայնություն, դրան հասնել արագ՝ քիչ ջանքեր գործադրելով և լավ հարաբերություններ պահպանել տանտիրոջ հետ։ Դուք ոչ միայն խիստ շահագրգորված կլինեք կայացվող համաձայնության մեջ ձեր դերն ունենալու, այլև նախանձախնդիր կլինեք այն արդյունավետ դարձնելու հարցում։ Միևնույն ժամանակ դուք հետամուտ կլինեք թե՛ ձեր անհատական, թե՛ դիմացինների հետ ընդիանուր շահերին։

Բանակցային իրավիճակն ախտորոշելու ժամանակ հաճի բույլ տրվող սխալներից մեկը ենթադրելն է, որ բանակցության մյուս կողմում գտնվող մասնակիցներն ունեն միևնույն շահերը։ Մինչդեռ դա գրեթե երբեք այդպես չէ։ Վիետնամի պատերազմի տարիներին նախագահ Չոնստնը սովորություն ուներ մեկ «նա» անվան տակ միավորելու չյուսիսային Վիետնամի կառավարության բոլոր անդամներին, հարավում գտնվող Վիետկոնգին և նրանց խորհրդային ու չինացի խորհրդականներին։ «Թշնամին պետք է իմանա, որ ինձը չի կարող հակադրվել Միացյալ Նահանգներին ու անպատճ մնալ։ Նա ստիպված է լինելու հասկանալ, որ ագրեսիան հեշտ չի մարսվի»։ Դժվար կլինի ինչ-որ բանի շուրջ համաձայնություն կայացնելու նպատակով ազդել նման «նա»-ի (կամ «նրանց») վրա, երբ ձեզ չի հաջողվել անգամ տարբերակել ներգրավված մարդկանց և խմբավորումների տարբերվող շահերը։

Բանակցության դիտարկումը որպես երկու անձանց կամ երկու կողմերի միջև ընթացող գործընթաց, անշուշտ, կարող է լույս սփյուռք իրողությունների վրա, սակայն այդ լույսը չպետք է կուրացնի ձեզ՝ տեսնելու համար, որ բանակցության մեջ ներգրավված են նաև այլ անձինք, այլ կողմեր և այլ ազդեցություններ։ Բեյսրուխատի աշխատավարձի շուրջ մի բանակցությունում թիմի գլխավոր տնօրենն անզիջում պնդում էր, որ 500 հազար ԱՍՆ դոլարը պարզապես չափից ավելի մեծ աշխատավարձ է որևէ խաղացողի համար, թեև մյուս թիմերում նման տաղանդավոր խաղացողներին վճարում էին ճշշտ այդ-

քան: Իրականում, ղեկավարը հստակորեն գիտակցում էր, որ իր բռնած դիրքն արդարացված չէ, մյուս կողմից, սակայն, նա խիստ իրահաճիկ էր ստացել ակումբի սեփականատերերից՝ առանց բացատրություններ տալու մնալ աննկուն, քանի որ ակումբն ուներ ֆինանսական դժվարություններ և չէր ցանկանում հասարակայնացնել դրանք:

Յուրաքանչյուր բանակցողի համար միշտ էլ գոյություն ունեն վստահորդներ, ում շահերի նկատմամբ նա զգայուն է՝ լինի դա գործատուն, հաճախորդը, աշխատողը, գործընկերը, ընտանիքը կամ կինը: Հասկանալ այդ բանակցողի շահերը նշանակում է հասկանալ այն մասամբ տարրերվող շահերի բազմազանությունը, որ նա պարտավոր է հաշվի առնել:

Ամենահզոր շահերը մարդկային հիմնական կարիքներն են: Տվյալ դիրքը պայմանավորող հիմնական շահերի որոնման ճանապարհին հատուկ ուշադրություն դարձրեք մարդկանց շահաղողող հիմնարար մտահոգություններին: Եթե ձեզ հաջողվի բավարարել նրանց կարիքները, ապա դուք կմեծացնեք համաձայնություն ձեռք բերելու, իսկ համաձայնության առկայության դեպքում՝ այն պահպանելու հնարավորությունը: Մարդկային հիմնական կարիքները ներառում են.

- անվտանգությունը/ապահովությունը,
- տնտեսական բարեկեցությունը,
- պատկանելիության զգացումը,
- ճանաչումը/հարգանքը,
- անձնական կյանքի տնօրինումը:

Չնայած իրենց հիմնարար բնույթին՝ մարդկային հիմնական կարիքները հաճախ սպորտում են ուշադրությունից: Ծառ դեպքերում հակված ենք կարծել, որ բանակցություններում ներգրավված միակ շահը փողն է: Սինչդեռ նույնիսկ ամուսնալուծության համաձայնագրում նշվող ալիմենտի գումարի շուրջ ընթացող բանակցություններում շատ ավելին կարող է

ներգրավված լինել: Ի՞նչ է իրականում կինը ցանկանում՝ պահանջելով շաբաթական 500 դրամ ալիմենտ: Իհարկե՛ նա հետաքրքրված է իր տնտեսական բարեկեցության ապահովման խնդրով: Եվ վե՞րջ: Հավանաբար, նա ցանկանում է այդ գումարը հոգեբանորեն իրեն ապահով զգալու կամ նաև ճանաչված/հարգված լինելու համար, այսինքն զգալու համար, որ իր հետ արդարացի և հավասարի պես են վարվել: Գուցեն ամուսինը չունի շաբաթական 500 դրամ վճարելու հնարավորություն, իսկ կինն էլ, հնարավոր է, առանձնապես այդքան գումարի կարիք չունի և, հավանաբար, կհամաձայնվի ավելի քիչ գումարի, եթե նրա ճանաչում/հարգանք ունենալու և ապահով լինելու կարիքներն այլ կերպ բավարարվեն:

Այն, ինչ ճիշտ է անհատների համար, հավասարապես ճշմարիտ է նաև խմբերի ու ազգերի համար: Բանակցությունները չեն հանգեցնի էական առաջընթացի, քանի դեռ կողմերից մեկը վստահ է, որ մյուսն սպառնում է իր՝ մարդկային հիմնական կարիքների բավարարմանը: Միացյալ Նահանգների և Մեքսիկայի միջև տեղի ունեցած բանակցություններում ԱՄՆ-ը Մեքսիկայից ներկրվելիք բնական գազի դիմաց ցանկանում էր վճարել ցածր գին: Ենթադրելով, թե սա բանակցություն է լրկ դրամի շուրջ, ԱՄՆ էներգետիկայի նախարարը հրաժարվում էր հաստատել ավելի բարձր գին սահմանելու շուրջ մեքսիկացիների և ԱՄՆ նավթային կոնսորցիոնի միջև կայացված համաձայնությունը: Քանի որ այդ ժամանակ մեքսիկացիները չունեին որևէ այլ հնարավոր գնորդ, նախարարը ենթադրում էր, որ վերջիններս կընկրկեն և կիշեցնեն գինը: Սակայն մեքսիկացիները ոչ միայն շահագրգուված էին իրենց գազի դիմաց բարձր գին սահմանելու մեջ, այլ ցանկանում էին նաև, որ իրենց հետ հարգալից վերաբերվեն՝ որպես հավասարը հավասարին: Հետևաբար, ԱՄՆ-ի այդ քայլն ընկալվեց իրեն հերթական սպառնանք Մեքսիկային, ինչն անսահման ցասում առաջացրեց: Մեքսիկայի կառավարությունը վաճառելու փոխարեն նախընտրեց այրել գազը: Փաստորեն,

ցածր գնի շուրջ համաձայնության զալու հնարավորությունը քաղաքական դրասատճառներով հավասարվեց գրոյի:

Դիտարկենք մյուս օրինակը: Հյուսիսային Խոլանդիայի ապագայի շուրջ ընթացող բանակցություններում բողոքական առաջնորդները ջանում էին անտեսել կարողիկների պատկանելիության և ճանաչված լինելու կարիքները, նրանց որպես հավասարի ընդունելը և ըստ այդմ վերաբերվելը: Կարողիկ առաջնորդներն, իրենց հերթին, կարծեն պատշաճ կարևորություն չին տալիս բողոքականների՝ իրենց անվտանգ զգալու կարիքին: Բողոքականների իրավացիորեն ուշադրության արժանի մտավախություններն ընդունելու փոխարեն դրանք որպես «նրանց հիմնախնդիր» որակելը շատ ավելի էր դժվարացնում որևէ լուծման շուրջ բանակցելը:

Ծահերի ցանկ կազմեք: Կողմերի տարաբնույթ շահերը դասակարգելու նպատակով օգտակար է գրառել դրանք՝ ըստ ձեր ընկալման: Դա ոչ միայն կօգնի հիշել այդ շահերը, այլև հնարավորություն կրնածենի նոր տեղեկություններ ստանալով նորովի գնահատել և դասակարգել դրանք՝ ըստ իրենց կարեւորության: Ավելին, դա նաև խթան կհանդիսանա, որպեսզի այդ շահերի բավարարմանն ուղղված նոր գաղափարներ ծնվեն:

Էա«»ն Յ³Ն»»նԸ Ա³«»Ց

Բանակցության նպատակը ձեր շահերը բավարարեն է: Հաղորդակցվելով միմյանց հետ՝ դուք մեծացնում եք դրա հնարավորությունը: Մյուս կողմը հնարավոր է չիմանա, թե որոնք են ձեր շահերը, ինչպես և դուք՝ նրանք: Ապագայի մասին մտահոգվելու փոխարեն՝ ձեզնից մեկը կամ երկուսդ էլ կարող եք սևեռվել նախկին վիրավորանքների վրա: Հնարավոր է նաև՝ դուք պարզապես չեք լսում միմյանց:

Ինչպե՞ս կարելի է կառուցողական քննարկում ծավալել շահերի շուրջ՝ չկաղապարվելով կոշտ դիրքերում: Եթե ցանկանում եք, որ մյուս կողմը հաշվի նստի ձեր շահերի հետ՝

բացատրեք նրանց, թե որոնք են դրանք: Իրենց շենքի հարևանությամբ իրականացվող շինարարական աշխատանքներով մտահոգված քնակիշների ներկայացուցիչը պետք է կարողանա պարզորոշ ներկայացնել իրենց հուզող այնպիսի խնդիրները, ինչպիսիք են բակում խաղացող երեխաների անվտանգությունը և նրանց գիշերային հանգիստ քնի ապահովումը: Հեղինակը, որը ցանկանում է իր գրքի մի մեծ խմբաքանակ բաժանել, պետք է այդ հարցը քննարկի հրատարակչի հետ: Չէ՞ որ հրատարակիչը շահագրգուված է գրքի գովազդով, և ենելով ընդհանուր շահից՝ նա կարող է հեղինակի համար ավելի ցածր գին սահմանել:

Կյանքի կոչեք ձեր շահերը: Եթե դուք խոցի նոպայով դիմեք բժշկի և ներկայացնեք այն որպես քոյլ փորացավ, հազիվ թե կարող եք ակնկալել, որ ձեզ անհրաժեշտ օգնություն կցուցաբերվի: Ձեր խնդիրն է այնպես անել, որ մյուս կողմը հնարավորին շափ ճիշտ հասկանա, թե որքան կարևոր և ողջամիտ են ձեր շահերը:

Մեկ կարևոր խորհուրդ՝ ուրույն մոտեցում ցուցաբերեք: Առանձին մանրամասները ոչ միայն վստահություն են ներշնչում ձեր նկարագրությունների հանդեպ, այլև մեծացնում են դրանց ազդեցության ուժը: Օրինակ. «Անցած շաբաթվա ընթացքում մենք երեք անգամ ականատես եղանք, թե ինչպես ձեր բեռնատարները քիչ էր մնում վլաերքի ենթարկեին երեխաներին: Երեքշաբթի առավոտյան մոտավորապես ուժն անց կեսին կարմիր խիճ տեղափոխող ձեր հոկա բեռնատարը, դեպի հյուսիս պանալով ժամում մոտ յոթանասուն կիլոմետր արագությամբ, հազիվ շեղեց իր ուղղությունը, երբ մազ էր մնացել յոթամյա Լորետա Զոնստինին հարվածելուն»:

Քանի դեռ դուք չեք ակնարկել, թե մյուս կողմի շահերը կարևոր և ողջամիտ չեն, կարող եք ձեզ քոյլ տալ հաստատակամորեն պնդելու ձեր խնդիրների լրջությունը: «Իմելով մյուս կողմին «ուղղեք ինձ, եթե սիսալպում եմ» խոսքերով՝ դուք ցուցադրում եք ձեր բաց լինելը, իսկ եթե նրանք չեն ուղղում

ձեզ, նշանակում է՝ համաձայն են իրերի դրության ձեր մեկնաբանությունների հետ:

Ձեր շահերով մյուս կողմի վրա ներազդելու խնդիրներից մեկն այդ շահերի ողջամտության հաստատումն է: Ձեզ համար ցանկալի է, որ մյուս կողմի մոտ կարծիք ձևավորվի, որ ոչ թե դուք անձնապես նրանց եք գրոհում, այլ որ ձեր առջև կանգնած հիմնախնդիրն իրավամբ ուշադրություն է պահանջում: Դուք պետք է համոզեք նրանց, որ նրանք էլ նոյնը կզգային, եթե հայտնվեին ձեր տեղում: «Դուք երեխաներ ունե՞ք: Ինչպե՞ս ձեզ կզգայիք, եթե քեռնատար ավտոմեքենաները ձեր տան մոտով պահանջին յոթանասուն կիլոմետր/ժամ արագությամբ»:

Դիտարկեք նրանց շահերը որպես հիմնախնդրի մաս: Առավելապես կենտրոնանալով սեփական շահերի վրա՝ մենք պատշաճ ուշադրություն չենք դարձնում մյուսների շահերին:

Մարդիկ ավելի լավ են լսում, երբ զգում են, որ հասկացել են իրենց: Նրանք հակված են մտածելու, որ ովքեր հասկանում են իրենց՝ խելացի և կարեկցող մարդիկ են, ում կարծիքներն արժե լսել: Հետևաբար, եթե ցանկանում եք, որ մյուս կողմն արժենորի ձեր շահերը, ցույց տվեք, որ դուք էլ արժենորում եք իրենցը:

«Ինչպես ես եմ հասկանում, ձեր՝ որպես շինարարական ընկերության շահերն աշխատանքները նվազագույն ծախսերով արագ ավարտելու և անվտանգ ու պատասխանատու կազմակերպության հեղինակությունը պահպանելու մեջ եմ: Արդյո՞ք ճիշտ եմ հասկացել, կամ գուցե դուք այլ կարևոր շահեր է՞լ ունեք»:

Ցույց տալով, որ ընկալել եք նրանց շահերը, օգտակար կլինի նաև դրանք ընդունել որպես այն հիմնախնդրի մաս, որին դուք փորձում եք լուծում տալ: «Դա հատկապես հեշտ է անել, երբ ունեք ընդհանուր շահեր. «Ի՞նչ սարսափելի կլինիք բոլորին համար, եթե ձեր քեռնատար ավտոմեքենաներից մեկը երեխայի հարվածեր»:

Նախ խնդիրը ձևակերպեք, ոոր միայն լուծումներ առաջադրեք: Շինարարական կազմակերպության ներկայացուցի հետ խոսելիս դուք անշուշտ կարող եք ձեր խոսքը հետևյալ կերպ կառուցել. «Մենք կարծում ենք, որ դուք քառասունութ ժամվա ընթացքում պետք է ցանկապատեք շինարարական հրապարակը և ձեր բեռնատարների համար անհապաղ սահմանեք քանիհնագ կիլոմետր/ժամ առավելագույն արագություն Օուկ Սքրիֆի վրա: Հիմա կասեմ, թե ինչու...»: Սակայն հարցի նման ձևակերպման դեպքում, համոզված եղեք՝ նա այլև չի լսի ձեր փաստարկություները: Ընկալելով ձեր դիրքը և անհանգստանալով ձեր տոնից կամ հենց առաջարկից՝ նա, անկասկած, միանգամից մտովի կսկսի հակափաստարկներ նախապատրաստել: Արդյունքում՝ հետագա ձեր բոլոր բացատրություններն արդեն չեն ընկալվի:

Եթե ցանկանում եք, որ ձեր փաստարկները լսեն և ընկալեն՝ նախ ներկայացրեք ձեր շահերն ու փաստարկները, հետո միայն եզրակացություններ կամ առաջարկներ արեք: Նախ ընկերության ներկայացուցչին ներկայացրեք, թե ինչպիսի վտանգներ են իրենք ստեղծում երեխաների համար, և ինչպիսի անքուն գիշերներ եք դուք անցկացնում: Դրանից հետո նրանք ուշադրությամբ կլսեն ձեզ և կփորձեն հասկանալ, թե ո՞ր եք տանում խոսակցությունը: Իսկ եթե անցնեք եզրակացություններին ու առաջարկներին, նրանց համար, անշուշտ, պարզ կլինի, թե ինչո՞ւ եք հանգել հատկապես այդ լուծմանը:

Նայեք առաջ, ոչ թե հետ: Զարմանալ կարելի է, թե որքան հաճախ ենք մենք պատեհ-անպատեհ արձագանքում այլոց ասածներին կամ գործողություններին: Հաճախ երկու մարդ վիճաբանության գիրկն են ընկնում, որը շատ նման է բանակցության, մինչդեռ իրականում նման նպատակ բացարձակապես չին էլ հետապնդում: Ինչո՞ր հարցի շուրջ նրանք չեն համաձայնվում, խոսակցությունը թերվում է մեկ այս, մեկ այն ուղղությամբ, և թվում է՝ կողմերը փորձում են ի վերջո համա-

ձայնության հասնել: Իրականում, սակայն, այդ բանավեճը շարունակվում է իրքև ծես կամ պարզապես հաճելի ժամանց: Կողմերն զբաղված են «միավորներ» հավաքելով կամ դիմացինի տեսակետների դեմ իրենց փաստարկները ժողովելով՝ փաստարկներ, որ ծևավորվել են տևական ժամանակահատվածում և արդեն բավականաշափ կարծրացել են փոփոխման ենթարկելու համար: Նրանցից ոչ մեկը չի փորձում համաձայնվել մյուսի հետ կամ նույնիսկ ներազդել նրան:

Եթե դուք հարցնեք կողմերին, թե ինչո՞ւ են նրանք վիճում, պատասխանը իմննականում կվերաբերի պատճառին և ոչ թե նպատակին: Վիճաբանության ընթացքում, անկախ նրանից՝ այն տեղի է ունենում ամուսնու և կնոջ, որևէ կազմակերպության և արիմիության, թե երկու գործարարների միջև, մարդիկ հակված են ավելի շուտ հակագրել մյուս կողմի ասածին կամ արածին, քան գործել՝ ելնելով իրենց երկարաժամկետ շահերից: «Նրանք չեն կարող ինձ հետ նման կերպ վարվել և չարաշար սիսավում են, եթե կարծում են, որ կարող են այդպես իրենց գլուխներն ազատել: Ես դեռ ցույց կտամ նրանց»:

«Ինչո՞ւ» հարցն ունի երկու էապես տարրեր իմաստներ: Մեկն ուղղված է անցյալին. վեր է հանում պատճառը և դիտարկում մեր՝ նախորդ իրադարձություններով պայմանավորված վարքագիծը: Մյուսն ուղղված է ապագային՝ նպատակին և մեկնաբանում է մեր վարքն իրքև ազատ կամքի դրսեվորում: Մենք կամքի ազատության և պատճառապաշտության (դետերմինիզմ) շուրջ փիլիսոփայական բանավեճի մեջ ներքաշվելու նպատակ չենք հետապնդում՝ որոշելու համար, թե ինչպես է պետք գործել: Կամ մենք դրսերում ենք ազատ կամք, կամ կանխորոշված է, որ վարվելու ենք այնպես, ինչպես վարվում ենք: Մեզ ընտրելու հնարավորություն է ընձեռված՝ նայել հե՞տ, թե՞ առաջ:

Դուք ավելի լավ կկարողանաք բավարարել ձեր շահերը, եթե խոսեք այն մասին, թե դեպի ու՞՞ եք ուզում զնալ, քան թե խոսեք, թե որտեղի՞ց եք զալիս: Փոխանակ վիճաբանելու ան-

ցյալի մասին, օրինակ՝ վերջին երեք ամիսների վարձավճարի (որը շափազանց բարձր էր), անցած շաբաթվա ընթացքում առանց համապատասխան լիազորությունների ձեռնարկված գործողությունների կամ երեկվա ներկայացման մասին (որն ավելի ցածրորակ էր, քան սպասվում էր), խոսեք այն մասին, թե ի՞նչ կցանկանայիք, որ կատարվեր ապագայում: Երեկվա կատարվածի համար բացատրություն պահանջելու փոխարեն հարցըք. «Ո՞վ և ի՞նչ պետք է անի վաղը»:

Եղեք կոնկրետ, բայց ձկում: Բանակցության ընթացքում ձեզ անհրաժեշտ է իմանալ, թե ո՞ր եք գնում և միևնույն ժամանակ բաց լինել թարմ գաղափարների համար: Որևէ հարցի լուծման շուրջ որոշում կայացնելու պատասխանատվությունից խուսափելու համար մարդիկ հաճախ բանակցում են առանց որևէ հստակ ծրագրի՝ սպասելով, թե ի՞նչ կառաջարկի կամ կպահանջի մյուս կողմը:

Չահերը պարզելուց հետո ինչպե՞ս անցնել առանձին տարրերակների մշակմանը և միևնույն ժամանակ՝ այդ տարրերակների հանդեպ ձկունություն դրսեորել: Չահերը տարրերակների վերածելու ընթացքում ինքներդ ձեզ հարց տվեր. «Ենթադրենք՝ վաղը մյուս կողմը համաձայնվում է ինձ հետ, գիտե՞մ, արդյոք, ինչ ես պատրաստվում համաձայնեցնել»: Ձկուն լինելու համար ձեր կողմից առաջ քաշվող յորաքանչյուր տարրերակ պատկերավոր ձևակերպեք: Մտածեք, որ կան ձեր շահերը բավարարող մեկից ավելի տարրերակներ: «Պատկերավոր կոնկրետություն»՝ ահա ձեզ կարևորագույն մի հասկացություն:

Այն բանին, ինչին հավակնում են դիրքերի շուրջ սակարկողները՝ հայտարարելով իրենց դիրքը, հավասարապես հնարավոր է հասնել շահերի բավարարմանն ուղղված պատկերավոր առաջարկի օգնությամբ: Օրինակ, թեյսրովիստի հետ աշխատանքային պայմանագրի շուրջ բանակցությունում գործակալը կարող էր ասել. «Տարեկան 5 մլն դրամն այն գումարն է, որն, ըստ Հենդերսոնի, իրքն աշխատավարձ կրավարարի

իրեն: Միևնույն ժամանակ, հինգ տարվա պայմանագիրը լիովին կրավարարի աշխատանքով ապահոված լինելու նրա կարիքը»:

Դուք հանդիպման պետք է ներկայանաք ոչ միայն ձեր ողջամիտ շահերի բավարարման ուղղված մեկ կամ մի քանի սեփական տարբերակներով, այլ նաև լինեք բացամիտ: Եթե միտքը բաց է, չի նշանակում, որ դատարկ է:

Կոշտ եք հիմնախնդրի և մեղմ՝ մարդկանց հանդեայ: Դուք կարող եք նույնքան կոշտ լինել՝ ձեր շահերի մասին խոսելիս, որքան իր դիրքը պնդող որևէ բանակցող: Որպես կանոն, խորհուրդ է տրվում լինել կոշտ: Հնարավոր է՝ խոհեմ չէ կառչել սեփական դիրքերից, մինչդեռ անվերապահորեն խոհեմ կլինի հետևողական լինել շահերի հանդեայ: Հենց այստեղ է, որ բանակցության ընթացքում կարող եք սպառել ձեր ազրեսիվ էներգիան: Մյուս կողմը՝ մտահոգված սեփական շահերով, հնարավոր համաձայնությունների բույլի առումով չափազանց լավատեսական սպասումների հակվածություն կունենա: Հաճախ ամենախոհեմ որոշումները, որոնք մյուս կողմի նվազագույն ծախսերով ձեզ համար առավելագույն ձեռքբերում են ապահովում, կայացվում են միայն ձեր շահերը հաստատակամորեն պաշտպանելու արդյունքում: Երկկողմանի նպաստավոր լուծումներ մշակելու ճանապարհին անզիջում պնդելով իրենց շահերը՝ բանակցողները կարող են դրդել միմյանց առավել ստեղծագործ լինելու:

Սղածի դրսնորումներից անհանգստացած շինարարական ընկերությունն կարող է չափազանց շահագրգուված լինել նվազեցնելու ծախսերը և ժամանակին ավարտելու աշխատանքները: Թերևս դուք պետք է սրափեցնեք նրանց: Անկեղծ մի հույզ կարող է օգնել՝ վերականգնելու շահույթ ստանալուն և երեխանների անվտանգությանն առնչվող շահերի արդյունավետ հավասարակշռությունը: Հանուն հաշտության մի՛ զսպեք հիմնախնդրին հավոր պատշաճի վերաբերվելու ձեր ցանկությունը: «Դուք, իհարկե, չէիք ուզում ասել, որ իմ որդու կյանքն

ավելի քիչ արժեն, քան ցանկապատը: Դուք չեիք ասի նույնը նաև ձեր որդու մասին: Չեմ կարծում, որ Դուք զգացմունքներից զուրկ մարդ եք, պարոն Զենկինս: Եկեք ուրեմն մտածենք, թե ինչպէ՞ս կարելի է լուծել այս խնդիրը»:

Եթե դիմացիններին բվա, որ դուք հիմնախնդրի պատճառով գրոհում եք իրենց անձը, ապա նրանք կարող են պաշտպանական դիրք ընդունել և դադարել լսել ձեզ: Ահա թե ինչո՞ւ է կարևոր մարդկանց տարանջատել հիմնախնդրից: Գրոհեք խնդիրը՝ առանց մեղադրելու մարդկանց: Ավելին, աջակցության ձեռք մեկնեք նրանց. լսեք նրանց հարգանքով, սիրալիք եղեք, արտահայտեք ձեր գործունակությունը տրամադրված ժամանակի և գործադրված ջանքերի համար, ցույց տվեք, որ մտահոգված եք նրանց հիմնական կարիքները հոգալու խընդրով և այլն: Ցույց տվեք նրանց, որ գրոհում եք խնդիրը, ո՞չ թե իրենց:

Չատ ընդունված և օգտակար է մյուս կողմին նույն ուժով ու եռանդով աջակցելը, ինչ ուժով ու եռանդով շեշտադրում եք հիմնախնդիրը: Աջակցության ու գրոհի այս համակցությունը կարող է հակասական բվալ: Հոգեբանորեն այդպես էլ կա: Հակասությունն է, որ կարող է գործը տեղից շարժել: Հոգեբանության մեջ հայտնի ճանաչողական անհամապատասխանության տեսությունը (theory of cognitive dissonance) պնդում է, որ մարդիկ չեն սիրում հակասություններ, հետևաբար նրանք ջանում են վերացնել դրանք: Գրոհելով խնդիրը (օրինակ՝ բակով անցնող արագընթաց բեռնատարների) և միաժամանակ աջակցություն ցուցաբերելով շնչարարական կազմակերպության ներկայացուցչին՝ դուք նրա համար ճանաչողական անհամապատասխանություն եք ստեղծում: Այդ անհամապատասխանությունը հաղթահարելու նպատակով նա կփորձի տարանջատել իրեն հիմնախնդրից, որպեսզի ինչ-որ քայլեր ձեռնարկելու ակնկալիքով միանա ձեզ:

Էական հարցերի շուրջ կոշտ պայքարը մեծացնում է արդյունավետ լուծում գտնելու ուղղությամբ ճնշումը, իսկ մյուս

կողմում գտնվող մարդկանց աջակցելը բարելավում է ձեր հարաբերությունները և մեծացնում համաձայնություն ձեռք բերելու հավանականությունը։ Հետևաբար, աջակցության և գրոհի համակցումն է, որ դառնում է զործուն միջոց, մինչդեռ առանձին-առանձին դրանք կարծես բավարար չեն։

Չահերի շուրջ կոշտ բանակցել՝ չի նշանակում փակ լինել մյուս կողմի տեսակետի հանդեպ։ Ընդհակառակը, դուք չեք կարող ակնկալել, որ մյուս կողմը կլսի ձեր շահերի մասին և կքննարկի ձեր առաջարկած տարբերակները, եթե ինքներդ հաշվի շառնեք նրանց շահերը և ցույց շտաք, որ բաց եք նրանց առաջարկների հանդեպ։ Հաջող բանակցության համար պահանջվում է լինել և վճռական, և բաց։

4 ö á Ë ß³ Ñ³ í»ï ï³ ñ µ» ñ³ ï ÿ » ñ³ é³ ç ù³ ß» ù

Սինայ թերակղզու շուրջ Իսրայելի և Եգիպտոսի միջև տեղի ունեցած բանակցությունների օրինակում արտացոլված են և՛ բանակցության գլխավոր հիմնախնդիրը, և՛ դրա լուծման հիմնական հնարավորությունները:

Խնդիրը համատարած քնույթ ունի. թվում է, թե գոյություն չունի բլիթը բաժանելու որևէ ուղի, որը կրավարարի երկու կողմերին էլ: Հաճախ դուք բանակցում եք գուտ մեկ բանի շուրջ, օրինակ՝ տարածքի մեծության, ավտոմեքենայի գնի, բնակարանի վարձակալության ժամկետի, վաճառքի վերաբրի: Երբեմն էլ կանգնում եք այսպես կոչված «կամ-կամ» ընտրության առջև, որն ակնհայտորեն նպաստավոր է կամ միայն ձեզ համար, կամ միայն մյուս կողմի: Օրինակ՝ ապահարզանի համաձայնագիրը քննարկելիս կարող է հարց առաջանալ, թե ում պետք է բաժին հասնի տունը, կամ ով պետք է ճանաչվի երեխաների խնամակալ: Դուք ընտրությունը կարող եք տեսնել միայն հաղթանակի կամ պարտության միջև, մինչդեռ ոչ ոք չի համաձայնի պարտվել: Եթե անգամ հաղթեք և ստանաք 12 հազար դոլար արժողությամբ մեքենան, հինգ տարիների վարձավճարը կամ տունն ու երեխաների խնամակալությունը, միևնույն է, ձեզ չի լիի ճնշող զգացումը, որ նրանք քույլ չեն տալու մոռանալ կատարվածը: Խնչախին էլ որ լինի իրավիճակը, ընտրության ձեր հնարավորությունները, կարծես, սահմանափակ են:

Սինայի բանակցությունները նաև առկա հնարավորությունները հստակեցնելու լավ օրինակ են: Ստեղծագործական մոտեցումը, ինչպիսին Սինայի ապառազմականացումն էր, հաճախ կարող է փոխել իրերի դրությունը և փակուղուց տանել համաձայնության: Մեզ ծանոթ մի իրավաբան իր հաջողություններն ուղղակիորեն վերագրում է և՛ իր պատվիրատուի, և՛ մյուս կողմի համար շահեկան լուծումներ նորամուծելու իր կարողությանը: Նա մեծացնում է բլիթը՝ նախքան կիսելը: Տարբերակներ առաջ քաշելու հմտությունը բանակցողի ամենակարևոր կարողություններից մեկն է:

Սինչեն շատ հաճախ բանակցողներն իրենց պահում են այնպես, ինչպես հայտնի պատմության երկու փոքրիկները, որոնք գժտվում էին նարնջի համար: Երբ նրանք, ի վերջո, համաձայնվում են հավասար կիսել նարնջը, նրանցից մեկը մաքրում է կեղեւ, դեռ նետում այն և ուտում պտղամիսը: Սինչեն երկրորդը դեռ է նետում պտղամիսը, իսկ կեղեւն օգտագործում խմորեղեն պատրաստելու համար: Շատ հաճախ բանակցողները «բլիթը սեղանին են թողնում». չեն հասնում համաձայնության այն դեպքում, երբ դրա հնարավորությունը կար, կամ ձեռք են բերում համաձայնություն, որն իրականում կարող էր առավել բարենպաստ լինել կողմերից յուրաքանչյուրի համար: Շատ-շատ բանակցություններ ավարտվում են այնպես, որ կողմերից յուրաքանչյուրն ստանում է նարնջի կեսը, փոխանակ ողջ պտղամիսը բաժին հասներ մեկին, իսկ կեղեւը՝ մյուսին: Ինչ՞ու...

Հնածանական առաջ քաշեք

Թեպետ շատ տարբերակների առկայությունը չափազանց օգտակար է, բանակցողներն, առկայն, դրա կարիքը խիստ հազվադեպ են գգում: Բանավեճի ընթացքում մարդկանց սովորաբար բվում է, թե իրենց իրենք գիտեն ճիշտ պատասխանը, իետևաբար իրենց տեսակետը պետք է գերիշխող լինի: Որևէ պայմանագրի շուրջ բանակցություններում կողմերը հավասար

րապես հակված են հավատալու, որ իրենց ներկայացրած առաջարկը ողջամիտ է և պետք է ընդունվի, գուցե՝ զնի ան-նշան փոփոխությունից հետո: Առկա բոլոր պատասխանները կարծես գտնվում են մեկ ուղիղ գծի վրա՝ կողմերի դիրքերի միջև, իսկ ստեղծագործ մտքի միակ վկայությունը հաճախ դառնում է փոփոխման զնալու առաջարկը:

Բանակցությունների ընթացքում բազմարիվ տարբերակներ առաջ քաշելուն, որպես կանոն, խոչընդոտում են չորս հիմնական արգելվներ: Դրանք են.

1. հապճեա դատողությունները,
2. միակ պատասխանի փնտրութը,
3. ենրադությունը, թե բլիթի չափն անփոփի է,
4. «իրենց խնդիրները լուծելն իրենց խնդիրն է» մտածելակերպը:

Այս խոչընդոտները հաղթահարելու համար նախ անհրաժեշտ է հասկանալ դրանք:

Ե՞ս»»ա ՚մաՕածԱ՛Նա՛Շ՛»»նԱ

Տարբերակներ նորամուծելը բնականոն գործընթաց համարել չի կարելի: Ընդհակառակը, հենց չնորամուծելն է ավելի բնական իրավիճակը, անգամ երբ բանակցությունները լարված չեն: Եթե ձեզ խնդիրն առանձնացնել մեկին, որն, ըստ ձեզ, ամենաշատն է արժանի Խաղաղության Նորելյան մրցանակի, ձեր ցանկացած առաջարկ ձեր իսկ մտքում անմիջապես վերապահումների ու կասկածների ալիք կբարձրացնի: Ինչպես կարող եք համոզված լինել, որ հատկապես այս կամ այն անձն է ամենաարժանին: Դուք կամ պատասխան չեք ունենա, կամ, որպես ավանդական մտածելակերպի արտացոլում, կտաք միանգամից մի քանի պատասխան: «Դե, գուցե Հռոմի պապը կամ նախագահը»:

Նորամուծելուն ոչինչ այնքան չի վնասում, որքան բննադատական մտածողությունը՝ պատրաստ հարձակվելու

ցանկացած նոր գաղափարի թերությունների վրա: Դատողությունը խանգարում է երևակայությանը:

Առաջիկա բանակցությունների սպասումների ներքո ձեր քննադատական մտածողությունն ավելի է արկում: Թվում է՝ գործնական բանակցությունները պահանջում են գործնական մտածողություն և ոչ թե համարձակ գաղափարներ:

Մյուս կողմի ներկայությունը կարող է ավելի զավել ստեղծագործելու ձեր ծիրքը: Ենթադրենք՝ դուք բանակցում եք ձեր դեկավարի հետ հաջորդ տարվա աշխատավարձի վերաբերյալ: Դուք խնդրել եք նրան բարձրացնել աշխատավարձը մոտ 4000 դոլարի չափով, իսկ նա առաջարկել է 1500 դոլար, որն, ինչպես դուք էիք նշել, չի գոհացնում ձեզ: Նման լարված իրավիճակում հազիվ թե կարողանաք ստեղծագործական մոտեցում ցուցաբերել: Ավելին, հնարավոր է՝ հիմնար տպավորություն չքողնելու մտավախությունից դրդված խուսափեք առաջ քաշել հնարամիտ, սակայն լավ չնշակված առաջարկներ, ինչպես, ասենք, որոշակի չափով բարձրացնել աշխատավարձը, իսկ մնացած մասը տրամադրել որպես պարզեավճար: Ձեր դեկավարը կարող է ասել. «Լրջամի՛տ եղեք: Ինքներդ ել լավ գիտեք, որ ձեր առաջարկը չի տեղափորվում ընկերության որդեգրած քաղաքականության շրջանակներում: Ես նոյնիսկ զարմանում եմ, որ նման առաջարկ եք անում»: Իսկ եթե այդ պահին, առիթից օգտվելով, առաջ քաշեք հնարավոր մեկ այլ տարբերակ, օրինակ, ինչ-որ ժամկետի ընթացքում աստիճանաբար բարձրացնել աշխատավարձը, հնարավոր է, որ դեկավարը դա քննարկման արժանի առաջարկ համարի: «Ես պատրաստ եմ ձեզ հետ բանակցել դրա շուրջ»: Եվ քանի որ այդ դեպքում ձեր յուրաքանչյուր խոսք կարող է ընկալվել որպես խոստում, հետևաբար, նախքան ինչ-որ բան արտահայտելը, պետք է երից ծանր ու թեք անեք մտքերը:

Հնարավոր է նաև մտավախություններ ունենաք, որ տարբերակներ առաջ քաշելով կարող եք բացահայտել այնպիսի տեղեկություններ, որոնք սակարկությունների ընթացքում

կրուլացնեն ձեր դիրքերը: Օրինակ, եթե դուք առաջարկեք, որ ձեր կազմակերպությունը ֆինանսավան աջակցություն ցուցաբերի ձեզ բնակարան ձեռք բերելու նպատակով, ապա ձեր դեկավարը կարող է մտածել, որ մտադիր չեք բողնելու աշխատանքը և, հետևաբար, կհամաձայնվեք ընդունել աշխատավարձի ցանկացած հավելում, որ ինքը պատրաստ է առաջարկել:

ՕՉԻ ԱՅՐԵËՅՑ ՎԻՌԱՆԱ

Չատերին թվում է, թե նորամուծելը բանակցային գործընթացի մաս պարզապես չի կազմում: Մարդիկ իրենց խնդիրը տեսնում են դիրքերի միջև հեռավորությունը կրծատելու, ոչ թե հնարավոր տարբերակներն ընդարձակելու մեջ: Նրանք հակված են մտածել. «Մեր ժամանակը հազիվ բավարի միայն համաձայնեցնելու ամենն այնպես, ինչպես որ կա: Իսկ տարատեսակ մտքերի փունջն ամենավերջին բանն է, որ մենք կցանկանայինք ունենալու»: Եվ քանի որ բանակցությունների արդյունքում կայացվելու է մեկ որոշում, հետևաբար նրանք մտավախություն ունեն, որ անբռնազրուիկ քննարկումը միայն կիետաձգի և կիսճի գործընթացը:

Եթե ստեղծագործական մտածողությունը խոչընդոտող առաջին արգելքը հապճեպ քննադատությունն է, ապա երկրորդը՝ հապճեպ եզրափակումը: Հենց սկզբից սկսելով փնտրել միակ լավագույն պատասխանը՝ դուք, կարծես, կարծ միացում եք ստեղծում որոշումների կայացման ողջամիտ գործընթացում, որն ենթադրում է ընտրություն բազմաթիվ հնարավոր պատասխաններից:

•ÝԱ³ԱնածԱՍածÝԱ, ան Ի³ԱԻ³Ý¹³ԻՑ ա³÷Ý ³Ý÷ա÷աԷ ։

Երրորդ բացատրությունը, թե ինչո՞ւ է բանակցությունների սեղանին դրվող բարենպաստ տարբերակների թիվն այդքան սահմանափակ, այն է, որ յուրաքանչյուր կողմ ընկալում է իրավիճակը որպես «կամ-կամ» գործընթաց. կամ ես եմ շահում

վեճը, կամ՝ դուք: Հաճախ թվում է, թե բանակցությունը «հաստատում հանրագումարով» խաղ է. եթե դուք մերենայի զնի մեջ շահում եք 100 դոլար, նշանակում է՝ ես կորցնում եմ նույնքան: Ինչո՞ւ ինձ չաշշարեմ նոր բան առաջարկելու համար, եթե բոլոր տարբերակներն ակնհայտ են, և ես կարող եմ գոհացնել ձեզ միայն իմ հաշվին:

Ի՞նԻՉԱԱ, Ա» ՏԸՆ»ՅՕ ՆՉՈՒՅՅԵՎԿԱԱ ԷԱԾԻ»ԵՎ ԿՆ»ՅՕ ԵՎԿԱՅ Ճ:

Իրատեսական տարբերակների նորամուծմանը խոչընդոտող վերջին արգելքը կողմերի՝ միմիայն իրենց անմիջական շահերով մտահոգված լինելն է: Որպեսզի ձեռք բերվի սեփական շահը բավարարող համաձայնություն, բանակցողը պետք է կարողանա մշակել այնպիսի լուծում, որն ուղղված է նաև դեպի մյուս կողմի սեփական շահը: Մինչդեռ, խնդրի միակողմանի հուլական դիտարկումը դժվարացնում է խնդրից վեր կանգնելու հնարավորությունը, որը բույլ կտար երկկողմ շահերի բավարարման համար խելամիտ ուղիներ մշակել: «Մեր խնդիրներն առանց այդ էլ բավական շատ են, իրենց խնդիրները բող իրենք հոգան»: Հաճախ իր դերն է խաղում նաև մյուս կողմի տեսակետների ողջամտությունն ընդունելու հոգեբանական արգելքը. նրանց գոհացնող ուղիներ փնտրել դավաճանություն է համարվում: Այսպիսվ, անհեռատես հոգածությունն ինքն իր նկատմամբ դրդում է բանակցողին հանդես գալ միայն կողմնակալ դիրքերից, ներկայացնել կողմնակալ փաստարկներ և առաջարի միակողմանի լուծումներ:

, °Օ՞՞ԱԹԵ

Ստեղծագործական տարբերակներ նորամուծելու համար, ձեզ անհրաժեշտ է.

- 1) տարանջատել տարբերակներ՝ նորամուծելու գործընթացը դրանք քննադատելու գործընթացից,
- 2) քանակցային սեղանին դնել բազմաթիվ տարբերակներ, և չփնտրել միակ պատասխանը,
- 3) փնտրել ընդհանուր օգուտներ,
- 4) գտնել նրանց որոշում կայացնելու գործընթացը դյուրին դարձնող ուղիներ:

Այս քայլերից յուրաքանչյուրը քննարկվում է ստորև:

Ի՞ն՞չ Ե՞՞ս Անապահութեան Անախառած Ի՞ն՞չ Ե՞՞ս

Քանի որ քննադատելու խաթարում է երևակայական մտածելակերպն, ապա տարանջատեք ստեղծարար գործունեությունը քննադատականից: Տարանջատեք հնարավոր որոշումներն առաջ քաշելու գործընթացը դրանց միջև ընտրություն կատարելու գործընթացից: Նախ՝ նորամուծեք, հետո որոշում կայացրեք:

Որպես բանակցող, անխուսափելիորեն ստիպված կլինեք անձնական մեծ ջանքեր բափել նորամուծելու նպատակով, ինչն այնքան էլ հեշտ չէ: Ըստ սահմանման, նոր մտքեր նորամուծելը ձեզնից պահանջում է մտածել այնպիսի բաների մասին, որոնք ի սկզբանե չեն եղել ձեր մտքում: Հետևաբար, ձեզ անհրաժեշտ է մտածել գործընկերների կամ համախոհների հետ ստեղծագործական քննարկում կամ «մտքային գրոհ» կազմակերպելու մասին: Այդ կերպ նորամուծելու գործընթացը կարող է արդյունավետորեն տարանջատել որոշում կայացնելու գործընթացից:

Մտքային գրոհի նպատակն է վեր հանել որքան հնարավոր է շատ գաղափարներ՝ առկա հիմնախնդիրը լուծելու նպատակով, հիմնական կանոնը՝ ձեռնպահ մնալ բոլոր տեսակի քննադատություններից և գաղափարներին գնահատականներ տալուց: Խումբը պարզապես նոր գաղափարներ է ներմուծում առանց քննելու՝ լա՞վն են դրանք, թե՞ վատը, իրատեսակա՞ն են, թե՞ ոչ: Նման արգելքների վերացումը թույլ

կտա, որ նոր առաջադրված գաղափարը հղանա մեկ այլ նոր գաղափար, ինչպես հրավառության մի զարկն իր հետևից ծնունդ է մյուսը:

Մտքային գրոհի ընթացքում մարդիկ չպետք է մտահոգվեն, որ կարող են տգետի տպավորություն բողոքել, ընդհակառակը՝ արտասովոր մտքերը խիստ ողջունելի են: Իսկ մյուս կողմի բացակայության պայմաններում բանակցողները կարիք չունեն անհանգուտանալու, որ կարող են գաղտնի տեղեկություն բացահայտել կամ, որ արտահայտած միտքը կրնկալվի որպես ստանձնած պարտավորություն:

Գյուրիքուն չունի մտքային գրոհի անցկացման ինչ-որ ճիշտ եղանակ: Ավելի շուտ, դուք պետք է այն հարմարեցնեք ձեր սեփական կարիքներին ու միջոցներին: Այդ տեսանկյունից օգտակար կլինի հաշվի առնել ներքոհիշյալ ցուցուները:

ՕՐՈՒՅՆՈՒՅՆ ։ ԱՆԿՈՇ ։ ԵՐԵՎԱՆ

1. *Սահմանեք ձեր նպատակը:* Խորհեք, թե ի՞նչ կցանկանայիք քաղել այս հանդիպումից:

2. *Ընտրեք սահմանափակ քվով մասմակիցները:* Խումբը, որպես կանոն, պետք է լինի բավական մեծարիվ, որպեսզի խրանի մտքերի փոխադարձ փոխանակումը և միաժամանակ բավական փոքրարիվ, որպեսզի խրախուսի և անհատական մասնակցությունը, և անկաշկանդ ստեղծագործական գործընթացը ստվորաբար՝ 5-ից 8 հոգի:

3. *Փոխեք միջավայրը:* Միջոցառման համար ընտրեք այնպիսի ժամանակ և վայր, որպեսզի այն հնարավորինս տարբերվի ստվորական քննարկումներից: Որքան խիստ տարբերվի մտքային գրոհը ստվորական քննարկումից, այնքան մասնակիցների համար ավելի դյուրին կլինի զսպել քննադատությունները:

4. *Զնավորեք ոչ պաշտոնական մթնոլորտ:* Ի՞նչ է անհրաժեշտ ձեզ և մյուսներին ազատ զգալու համար. գուցե

զրուցել մեկ գավաք սուրճի սեղանի շուրջ կամ հանդիպել որևէ հանգստյան տանը, որևէ գեղատեսիլ վայրում կամ պարզապես ազատվել փողկապից ու կոստյումից և դիմել իրար անոն-ներով:

5. Հնտրեք վարող: Հանդիպման մասնակիցներից մեկը պետք է ստանձնի գործընթացը վարելու պարտականությունը: Նա պետք է ապահովի, որ քննարկումներն ընթանան ճիշտ հունով, բոլորին արտահայտվելու հնարավորություն ընծեռի, հետևի որդեգրված սկզբունքների ու ընդունված կարգի պահպանմանը և հարցեր տալով խթանի քննարկումը:

ՕՐԾՈՒՅՑ ՆԱՆԿ ԱՅԱԾՆԱԾՈՒ.

1. Նստեցրեք մասնակիցներին կողք-կողքի՝ դեմքով դեպի իմնախնդիրը: Միջավայրի ֆիզիկական դասավորվածությունը հզորացնում է հոգեբանական ազդեցությունը: Միմյանց նկատմամբ կողք-կողքի գտնվելը խթանում է ընդհանուր խնդրի լուծմանը միասնաբար ծեռնամուխ լինելու նարդկանց հոգեբանական տրամադրվածությունը: Դեմ առ դեմ գտնվող նարդիկ հակված են տալու անձնավորված պատասխաններ և ներքաշվելու երկխոսության կամ բանավեճի մեջ, մինչդեռ, նստելով կիսակլոր, սեղանի շուրջ կողք-կողքի դասավորված արողուների վրա՝ նրանք հակվում են արձագանքելու դեմ-դիմաց գտնվող գրատախտակի վրա ներկայացված հիմնախնդիրին:

2. Հստակեցրեք կանոնները, այդ թվում՝ քննադատությունն արգելող կանոնը: Եթե մասնակիցները ծանոր չեն միմյանց, ապա հանդիպումը սկզբում է մասնակիցների ներկայացմանք, որից հետո անցնում են կանոնների հստակեցմանը: Արգելեք բոլոր տեսակի անբարյացակամ քննադատությունները:

Ստեղծագործական համատեղ գործընթացը ծնում է նոր մտքեր, քանզի յուրաքանչյուրս ստեղծագործում ենք միայն մեր ընթացիկ ենթադրությունների սահմաններում: Եթե գաղափարները մերժվում են, քանի դեռ ընդունելի չեն բոլոր մաս-

նակիցների կողմից, ապա ներքին նպատակ է դառնում այն-այսի գաղափարների առաջ քաշումը, որոնց դեմ ոչ ոք չի առարկի: Այնինչ, եթք ողջունելի են անզամ իրազործելիի սահմաններից դուրս գտնվող համարձակ մտքերը, խումբը գուցե և կարող է դրանցից այնպիսի տարբերակներ դուրս բերել, որոնք իրազործելի են, սակայն մինչ այդ ոչ ոքի մտքով անգամ չեն անցել:

Հաջորդ կանոնը, որ արժե սահմանել, այն է, որ մտքային գրոհը պետք է անցկացնել «առանց հղումների» սկզբունքով և զերծ մնալ գաղափարները մասնակիցներին անհատապես վերազրելուց:

3. *Գրոհեք մտքով*: Եթք այլևս հանդիպման նպատակը պարզ է, ազատ արձակեք ձեր երևակայությունը: Փորձեք կազմել գաղափարների մի մեծ ցուցակ՝ հարցին մոտենալով բոլոր հնարավոր անկյուններից:

4. *Գրառեք մտքերն այնպես, որ բոլորի համար տեսանելի լինեն*: Գրատախտակին կամ, որ ավելի գերադասենի է, թոթի մեծ պաստառների վրա մտքերի գրառումը խմբի անդամների մոտ միասնական ձեռքբերումների հատակ զգացողություն է ձևավորում: Այն նոր ուժ է հաղորդում չքննադատելու կանոնին, նվազեցնում է կրկնվելու հակվածությունը և խրախուսում նոր գաղափարների ծնունդը:

ՕՐԻՆՅԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ

1. *Աստղանիշով առանձնացրեք ամենախոստումնալից գաղափարները*: Մտքային գրոհից հետո, ամենախոստումնալից գաղափարները գտելու նպատակով, մեղմեք չքննադատելու կանոնի գործողությունը: Դուք դեռ որոշումներ ընդունելու փուլում չեք, այլ ընդամենն առանձնացնում եք հետազա մշակման արժանի գաղափարները: Նշեք նրանք, որոնք խմբի անդամների կարծիքով լավագույնն են:

2. *Առաջարկեք խոստումնալից գաղափարները կատարելազործելու ուղիներ*: Ընտրեք որևէ խոստումնալից գաղափար

և առաջադրեք ուղիներ այն բարելավելու և իրատեսական դարձնելու, ինչպես նաև իրագործելու համար։ Այս փուլի խնդիրը որքան հնարավոր է գաղափարը գայթակղիշ դարձնելն է։ Ակսեք կառուցողական քննադատությունից։ «Ի՞նչն է ինձ մեծապես դուր զայիս այս գաղափարում... Միգուցե ավելի լավ կլիներ, եթե...»

3. Սահմանեք գաղափարները գնահատելու և որոշում կայացնելու ժամանակը։ Նախքան եզրափակելով, կազմեք մտքային գրոհի արդյունքների զտված և վերանայված ցուցակ և ժամանակ սահմանեք՝ որոշելու, թե այդ գաղափարներից որն առաջ քաշեք բանակցությունների ընթացքում և ինչպես։

Խորհեք մյուս կողմի հետ մտքային գրոհ անցկացնելու հնարավորության շուրջ։ Թեպետ մյուս կողմի հետ մտքային գրոհ անցկացնելը շատ ավելի դժվար է, քան կողմնակիցների հետ, այնուամենայնիվ, նրանց մասնակցությամբ մտքային գրոհը կարող է չափազանց արթեքավոր լինել։ Այն ավելի դժվար է անցկացնել այն պատճառով, որ մեծանում է վտանգը, թե կարտահայտեք այնպիսի մտքեր, որոնք վնասում են ձեր շահերը, չնայած մտքային գրոհի շրջանակներում հաստատված կանոններին։ Հնարավոր է, որ չկանխամտածված կերպով բացահայտեք ինչ-որ գաղտնի տեղեկություններ կամ ձեր հորինած տարրերակը մյուս կողմն սիսալմամբ ընկալի որպես առաջարկ։ Այնուամենայնիվ, համատեղ մտքային գրոհների մեծ առավելություններից մեկն այն է, որ բոյլ է տալիս մշակել այնպիսի գաղափարներ, որտեղ հաշվի են առնվում բոլոր ներգրավված կողմերի շահերը, ստեղծվում է հիմնախմնիքները համատեղ լուծելու համապատասխան մքնոլորտ, և յուրաքանչյուր կողմ հասկանում է մյուս կողմի մտահոգությունները։

Որպեսզի պաշտպանեք ձեզ մյուս կողմի հետ անցկացվող մտքային գրոհի ընթացքում, հստակորեն զատեք մտքային գրոհի գործընթացը բանակցային գործընթացից, որտեղ կողմերն արտահայտում են պաշտոնական տեսակետներ և ասվածն արձանագրվում է։ Մարդիկ այնչափ են վարժվել այն

մտքի հետ, որ յուրաքանչյուր հանդիպում համաձայնություն ձեռք բերելու նպատակ է հետապնդում, որ ցանկացած այլ նպատակ հստակ շեշտադրման կարիք է զգում:

Հնչեցված որևէ գաղափարից բխող պարտավորությունների թվացյալ ստանձնման վտանգը նվազեցնելու համար պարզապես անհրաժեշտ է սովորություն դարձնել առաջ քաշել առնվազն երկու այլընտրանքային գաղափար միաժամանակ: Կարող եք նաև սեղանին դնել այնպիսի տարբերակներ, որոնց հետ դուք ակնհայտորեն համաձայն չեք: «Ես կարող եմ այս բնակարանը հենց այնպես նվիրել ձեզ, կամ դուք կարող եք դրա դիմաց վճարել ինձ կանխիկ մեկ միջին դոլար, կամ...»: Քանի որ դուք ուղղակիորեն չեք պնդում այս երկու մտքերից և ոչ մեկը, հետագայում շարադրված գաղափարները որակվում են պարզապես որպես հնարավորություններ և ոչ թե առաջարկներ:

Ստրայխն գրոհի մասին ավելի լավ պատկերացում կազմելու համար դիտարկենք մի օրինակ, որտեղ տեղական արհմիության առաջնորդները և ածխահանքի ղեկավարությունը հավաքվում են մտքային գրոհի՝ մեկ կամ երկօրյա չարտունված գործադրությունների քանակը նվազեցնելու ուղիներ գտնելու նպատակով:

Տար մարդ, յուրաքանչյուր կողմից հինգ հոգի, նստած են սեղանի շուրջ՝ դեմքով դեպի գրատախտակը: Վարողը, որը մի շեզոք անձ է, առաջարկում է կողմերին արտահայտել իրենց մտքերը և գրառում է դրանք գրատախտակին:

Վարող.

— Լավ: Այժմ եկեք տեսնենք, թե ի՞նչ մտքեր կան աշխատանքները չարտոնված կերպով դադարեցնելու հիմնախնդրին լուծում տալու ուղղությամբ: Փորձենք հինգ րոպեների ընթացքում գրատախտակի վրա գրառել տասը միտք: Ակսենք թոմից:

Թոմ (արհմիություն).	– Անհրաժեշտ է, որ աշխատեկներն ի վիճակի լինեն տեղում ընթացք տալու արհմիության անդամների բողոքներին:
Վարող.	– Լավ, ես դա գրի առա: Զի՞մ, տեսնում եմ ծերք եք բարձրացրել:
Զիմ (դեկավարություն).	– Արհմիության անդամը պարտավոր է զրուցել աշխատեկի հետ խնդրի շուրջ նախքան որևէ գործողության դիմելը, որը... – Նրանք դա անում են, բայց աշխատեկները չեն լսում նրանց:
Թոմ (արհմիություն).	– Թոմ, խնդրում եմ առաջն ծեռնպահ մնալ քննադատու- թյունից: Մենք պայմանավորվել ենք դա անել ավելի ուշ, լա՞վ: Դուք ի՞նչ կասեք, Ձերի՝ երևում է, որ բան ունեք ասելու:
Ձերի (արհմիություն).	– Երբ գործադրությունը հարց է ծագում, արհմիության անդամներին պետք է թույլ տրվի անմիջապես հանդիպել հանդերձասրահում:
Ոոչեր (դեկավարություն).	– Ղեկավարությունը կարող է համաձայնվել թույլ տալ օգտագործելու հանդերձասրահը արհմիության անդամների հանդիպումների համար և կարող է երաշխավորել հանդիպման գաղտնիությունը՝ փակելով դրները և արգելելով աշխատեկներին ներկա գտնվել:
Քերոլ (դեկավարություն).	– Իսկ եթե կարգ սահմանենք, ըստ որի արգելվի գործադրու անց- կացնելը, քանի դեռ արհմիության առաջնորդներին ու դեկավարու- թյան ներկայացուցիչներին հնարավորություն չի ընծեռնվել հարցերը լուսել տեղում:
Ձերի (արհմիություն).	– Իսկ եթե կրծատենք բողոքների քննման ժամկետները և սահմանենք, որ այդ հանդիպումը

	կարող է հրավիրվել միայն աշխողեկների ու արհմիության անդամների ուժերով խնդիրը լուծելու անհաջող փորձից հետո՝ 24 ժամվա ընթացքում:
Կարեն (արհմիություն).	– Ահա, իսկ ի՞նչ կասեք արհմիության անդամների և աշխողեկների մասնակցությամբ ուսուցողական ծրագիրը իրականացնելու մասին՝ «Ինչպէս լուծել հիմնախնդիրը միասնական ջանքերով» խորագրով:
Ֆիլ (արհմիություն).	– Եթե մարդը լավ է աշխատում, ապա անհրաժեշտ է ասել նրան այդ մասին:
Զոն (դեկավարություն).	– Բարիդացիական հարաբերություններ հաստատել արհմիության անդամների և դեկավարության միջև:
Վարող.	– Դա խոստումնալից է հնչում, Զո՞ն, սակայն կարո՞ղ եք փոքր- ինչ հստակեցնել միտքը:
Զոն (դեկավարություն).	– Իհարկե: Ի՞նչ կասեք, եթե հիմնենք արհմիություն- դեկավարություն սոֆթորլի ⁴ թիմ:
Թոմ (միություն).	– Եվ մի բոռվլնջի թիմ նույնպես:
Ուզեր (դեկավարություն).	– Իսկ ինչպէս եք դիտում ընտանիքի բոլոր անդամների մասնակցությամբ ամենայա զրոսախնդույք կազմակերպելը:

Մտքային գրոհը կարող է այսպես շարունակվել, քանի դեռ
մասնակիցները հեղանում են նոր գաղափարներ: Դրանցից
շատերը, հավանաբար, կարող էին երբեք ի հայտ չգալ, եթե
տեղի չունենար նման մտքային գրոհ, իսկ որոշներն էլ կարող
են դառնալ շարտոնված գործադրությունները կանխելու արդյունա-
վետ միջոց: Համատեղ մտքային գրոհին նվիրած ժամանակը,
բանակցությունների ընթացքում ծախսված լավագույն ժամա-

⁴ Բեյսրոլի տարատեսակ (թարգ.)

նակահատվածներից մեկն է:

Այսպիսով, համատեղ է անցկացվում մտքային գրոհը, թե ոչ, ցանկացած բանակցությունների ընթացքում ծայրահեղ կարևոր է տարանջատել տարբերակներ մշակելու գործընթացը դրանց հիման վրա որոշում կայացնելու գործընթացից: Տարբերակները քննարկելը շեշտակիորեն տարբերվում է դիրքեր բռնելուց: Մինչ մի կողմի դիրքերը հակադրվում են մյուս կողմի դիրքերի հետ, տարբերակներն առաջ են քաշում այլ տարբերակներ: Անգամ լեզուն, որ օգտագործվում է, տարբեր է: Այն բաղկացած է հարցերից, ոչ թե պնդումներից: Այն բաց է, ոչ թե փակ: «Տարբերակներից մեկը սա է... Ի՞նչ այլ տարբերակներ կան ձեր մտքում»: «Իսկ եթե մենք ընտրենք ա՞յս մեկը»: «Իսկ եթե դա այսկե՞րպ անենք»: «Ինչպե՞ս դա կաշխատի»: «Ո՞րն է այստեղ սխալը»: Նախքան որոշում կայացնելն առաջ քաշեք տարբերակներ:

ԱՅԻ·ՌԱՍՏԱԿԵՐՎԱԿԱՆ ՕՐԸ ՔՆՄ»ՌՅ»ՌԱ

Անգամ ամենալավ մտադրություններ ունենալու պարագայում, մտքային գրոհի մասնակիցների մոտ, հավանական է, ձևավորվի կարծիք, թե իրենք իրականում փնտրում են միակ լավագույն պատասխանը, ինչպես, ասենք, խոտի դեզի մեջ կարելի է ասեղ փնտրել՝ հատիկ առ հատիկ բարձրացնելով ծիլերը:

Բանակցությունների այս փուլում, սակայն, դուք չպետք է ճիշտ ուղի փնտրեք: Դուք ընդամենը բանակցային դաշտ եք ձևավորում, ինչը նշանակում է ունենալ միմյանցից նկատելիորեն տարբերվող գաղափարների ամբողջություն, որոնց վրա դուք և մյուս կողմն, այնուհետև, կարող եք հենվել և դրանց միջից հետագայում համատեղ ընտրություն կատարել:

Գինեգործը լավ գինի պատրաստելս խաղողն ընտրում է մի քանի տեսակներից: Բեյսրոլի թիմն աստղեր հավաքագրելիս փորձված հետախույզներ է ուղարկում երկրով մեկ՝ տեղական լիգաներն ու համալսարանական թիմերը հետազո-

տելու նպատակով: Նույն սկզբունքը կիրառելի է նաև բանակցությունների դեպքում: Լինի դա գինեգործություն, բեյսոր թե բանակցություններ՝ խոհեմ որոշում կայացնելու բանալին բազմարիվ և բազմապիսի տարբերակներից ընտրություն կատարելու է:

Եթե ձեզ հարցրել են, թե ո՞վ պետք է արժանանա այս տարվա Խաղաղության նորելյան մրցանակին, լավ կլիներ, եթե պատասխաննեք. «Դե ինչ, եկեք խորիենք», և կազմեիք դիվանագիտության, գործարարության, լրագրության, իրավագիտության, գյուղատնտեսության, քաղաքագիտության, ակադեմիական, բժշկության, հոգեոր և այլ ոլորտների ներկայացուցիչների մոտ 100 անուն պարունակող մի ցուցակ՝ դրանով իսկ ապահովելով արտասովոր գաղափարների մի ամբողջություն: Այս կերպ գրեթե միշտ կհանգեք ավելի լավ որոշման, քան եթե փորձեիք որոշում կայացնել անմիջապես:

Մտքային գրոհները հնարավորություն են ընձեռում մարդկանց մտածել ստեղծագործաբար: Եթր այլև հնարավորությունն ընձեռնված է՝ անհրաժեշտ է ուղիներ փնտրել հիմնախնդիրների շուրջ խորիելու և կառուցղական լուծումներ հղանալու նպատակով:

Բազմապատկեր տարբերակների բանակը՝ պտտվելով որոշակիի և ընդհանուրի միջև: Ծրջանաձև գծապատկերը: Տարբերակներ նորամուծելու խնդիրը ենթադրում է մտածողության չորս տեսակ: Առաջին. մտածել մասնավոր հիմնախնդիր՝ մի իրավիճակի մասին, որը ձեզ դուր չի գալիս, օրինակ՝ ձեր հողամասով հոսող գարշահոտ և ախտոտված գետը: Մտածողության երկրորդ տեսակը՝ նկարագրական վերլուծությունն է. դուք ախտորոշում եք առկա իրավիճակն ընդհանուր գծերով, դասակարգում եք հիմնախնդիրները և նախանշում պատճառները, ասենք, հնարավոր է գետի ջուրը պարունակում է մեծ քանակությամբ տարատեսակ քիմիական նյութեր, կամ ջրում կա բրվածի պակասություն: Հետևաբար, կարող եք ներադրել, որ գետի հոսանքի վերին մասերում գործում են

տարբեր արդյունարերական ձեռնարկություններ: Մտածողության երրորդ տեսակը՝ իորհելմ է, դարձյալ ընդհանուր գծերով, թե ինչ է անհրաժեշտ ձեռնարկել: Ախտորոշման արդյունքների հիման վրա դուք կազմում եք տեսական առաջարկներ պարունակող դեղատոմներ, օրինակ՝ նվազեցնել քիմիական արտանետումները, փոխել ջրի հոսքը, կամ մաքուր ջուր ապահովել ինչ-որ այլ գետից: Մտածողության շորորդ և վերջին տեսակը՝ գործողություններ ենթադրող մի քանի յուրահատուկ և իրագործելի առաջարկների հանգելմ է. ո՞վ և ի՞նչ կարող է վաղը անել առաջարկված ընդհանուր մոտեցումներից որևէ մեկն իրագործելու նպատակով: Օրինակ, Շրջակա միջավայրի պետական տեսչությունը կարող է պարտադրել ախտոտող արդյունարերական ձեռնարկություններին նվազեցնել քիմիական արտանետումների քանակը:


Ստորև բերվող շրջանաձև գծապատկերը ներկայացնում է մտածողության վերոհիշյալ շրոս տեսակները՝ որպես որոշակի հերքականությամբ իրագործվող քայլեր: Գծապատկերում ներկայացված քայլերի հաջորդական և սահուն իրագործման արդյունքում առաջ քաշված որևէ յուրահատուկ գործողություն բույլ կտա հաղթահարել ձեր հիմնախնդիրը, եթե, իհարկե, արժանանա հավանության:

Շրջանաձև գծապատկերը որևէ առողջ գաղափարի օգնությամբ այլ գաղափարներ հղանալու մի պարզ եղանակ է առաջարկում: Զեռքի տակ ունենալով հետագա քայլերին ուղղված գործուն մի միտք՝ դուք (կամ մտքային գրոհի խումբը) կարող եք վերադառնալ և փորձել հայտնարերել այն ընդհանուր մոտեցումը, որտեղ այդ միտքն ընդամենը կիրառելի տարբերակներից մեկն է: Այնուհետև, կարող եք առաջ քաշել հետագա քայլերին ուղղված այլ մտքեր, որոնք իրականում նույն ընդհանուր մոտեցումներն են ենթադրում: Նույն կերպ, կարող եք այնուհետև մեկ քայլ հետ գնալ և հարցնել. «Ենթադրենք, սա գործուն տեսական մոտեցում է, իսկ ո՞րմ է որս հետևում ընկած ախտորոշումը»: Հստակեցնելով ախտորո-

շումը՝ կարող եք շրջանաձև գծապատկերում առաջարկված եղանակով առաջ քաշել հիմնախնդրի լուծմանն ուղղված այլ մոտեցումներ, այնուհետև մշակել այն քայլերը, որոնք կյանքի են կոչելու ձեր նոր մոտեցումները։ Այսպիսով, մեկ գործուն տարբերակը բույլ է տայիս ձևակերպել իր օգտակարությունը հիմնավորող մի տեսական մոտեցում, որի օգնությամբ, այնուհետև, կարելի է առաջադրել բազմաթիվ այլ տարբերակներ։

Երջանաձև գծապատկեր

Տարբերակներ նորամուծելու չորս հիմնական քայլերը



Ստորև ներկայացվող օրինակը կօգնի լույս սփռել գործընթացի վրա: Հյուսիսային Իոլանդիայի շուրջ հակամարտության կարգավորման շրջանակներում կարող էր առաջարկվել հետևյալ միտքը. կարողիկ և բողոքական համայնքներից ընտրված ուսուցիչներին՝ համատեղ շանքերով մշակել Հյուսիսային Իոլանդիայի պատմության միասնական դասագիրք՝ նախատեսված դպրոցական երկու համակարգերի տարրական դասարանների համար: Դասագիրքը կարող էր լուսաբանել Հյուսիսային Իոլանդիայի պատմությունը տարրեր տեսանկյուններից և կարող էր պարունակել դերային խաղերով վարժություններ, որպեսզի երեխաներին հնարավորություն տրվեր՝ դնելու իրենց մյուսների տեղը: Հետագայում նոր գաղափարներ հղանալու նպատակով կարելի էր սկսել գործողության հենց այս առաջարկից և փնտրել դրա հիմքում ընկած տեսական մոտեցումը:

Այս կերպ դուք կարող եք հանգել մի շարք այլ ընդհանրական առաջարկների, ինչպիսիք են.

- դպրոցական երկու համակարգերում կրթության բովանդակությունը պետք է պարունակի որոշակի ընդհանրական տարրեր,
- կարողիկները և բողոքականները պետք է աշխատեն միասին՝ փոքրածավալ և իրագործելի ծրագրերի շրջանակներում,
- երեխաների մոտ փոխըմբռնման ունակության զարգացմանը պետք է նպաստել վաղ հասակից, քանի դեռ շատ ոչ չէ,
- պատմություն առարկան պետք է դասավանդվի այնպես, որպեսզի լույս սփռվի կողմնակալ ընկալումների վրա:

Աշխատելով տեսական նման մոտեցման շրջանակներում, դուք, հավանաբար, ի վիճակի կլինեք առաջադրել հետագաքայլերին ուղղված մի շարք լրացուցիչ գաղափարներ, ինչպես,

օրինակ՝ Հյուսիսային Խոլանդիայի պատմությունը տարբեր տեսանկյուններից ներկայացնող համատեղ ֆիլմի նկարահանում, ուսուցիչների փոխանակման ծրագրի իրականացում, երկու համայնքների տարրական դասարանների երեխանների մասնակցությամբ համատեղ դասերի կազմակերպում:

Հիմնախնդիրը դիտարկեք տարբեր փորձագետների տեսանկյունից: Տարբերակների քանակն ավելացնելու մյուս եղանակը՝ հիմնախնդիրի դիտարկումն է գիտական և մասնագիտական տարբեր տեսանկյուններից:

Երեխայի խնամակալության խնդրի շուրջ ծագած վեճը կարգավորելու հնարավոր լուծումներ փնտրելու ընթացքում խնդիրը դիտարկեք ուսուցչի, քանկիրի, հոգեբույժի, իրավաբանի, նախարարի, սննդաբանի, բժշկի, ֆեմինիստի, ֆուտրոյի մարզի կամ որևէ այլ մասնագետի ուրույն տեսանկյունից: Եթե քանակցում եք որևէ գործարար պայմանագրի շուրջ, նորանուծեք տարբերակներ, որոնք կարող են քանկիրի, գյուտարարի, արիմյության առաջնորդի, անշարժ գույքի գործակալի, արժեքավորերի շուկայի բրոքերի, տնտեսագետի, հարկային ծառայողի կամ հասարակագետի մտքի արգասիքը լինել:

Կարող եք համատեղել նաև շրջանաձև գծապատկերի օգտագործումը հիմնախնդրին տարբեր փորձագետների տեսանկյունից դիտարկելու գաղափարի հետ: Խորիեք, թե ինչպես կարող էին ախտորոշել իրավիճակը տարբեր փորձագետներ, ինչպիսի մոտեցումներ կարող էին նրանք առաջարկել, և ինչ գործնական քայլեր կարող էին բխել այդ մոտեցումներից:

Նորանուծեք տարբեր տրամաչափի համաձայնություններ: Դուք կարող եք քազմապատկել սեղանին դրված հնարավոր համաձայնությունների քանակը՝ առաջ քաշելով «ավելի փոքր տրամաչափի» տարբերակներ, որոնք չեն խանգարի, եթե լինեին ձեռքի տակ այն դեպքում, եթե փնտրվող համաձայնությունն անհասանելի է: Եթե չի հաջողվում համաձայնության գալ հիմնախնդրի եռթյան շուրջ, գուցե կարող եք

համաձայնեցնել ընթացակարգային հարցերը: Եթե կոշիկի գործարանի և մեծածախ առևտրի կենտրոնի միջև խոտանի ված ապրանքը վերադարձնելու հետ կապված ծախսերը հոգալու շուրջ չի կայացվում համաձայնություն, գուցե հնարավոր է համաձայնվել տեղափոխել վեճը արքիտրաժ: Նոյն տրամաբանությամբ, գուցե հնարավոր է ժամանակավոր համաձայնություն կայացնել, երբ վերջնական անհնար է: Վերջին հաշվով, երբ դուք և մյուս կրողմ չեք կարողանում հասնել համաձայնության առաջնային հարցերի շուրջ, ապա, որպես կանոն, դժվար չէ համաձայնեցնել երկրորդային հարցերը: Օրինակ՝ համաձայնեցրեք անհամաձայնության եզրերը, այսպես որ երկու կողմն էլ ընկալեն վիճահարույց խնդիրները, քանի որ միշտ չէ, որ դրանք ակնհայտ են: Ստորև բերվող ածականների գոյացերը դասակարգում են հնարավոր համաձայնություններն՝ ըստ «տրամաշափի»:

Առավել մեծ

- բովանդակային
- մշտական
- համապարփակ
- վերջնական
- առանց վերապահումների
- պարտավորեցնող
- առաջնային

Առավել փոքր

- ընթացակարգային
- ժամանակավոր
- մասնակի
- սկզբունքային
- պայմանական
- շպարտավորեցնող
- երկրորդային

Փոխեք առաջարկվող համաձայնության շրջանակը: Դիտարկեք համաձայնության ոչ միայն տրամաշափը, այլ նաև շրջանակը փոփոխելու հնարավորությունը: Օրինակ, կարող եք հիմնախնդիրը «մասնատել» ավելի փոքր և գուցե առավել կառավարելի մասերի: Ձեր գրքի ապագա խմբագրին կարող եք առաջարկել. «Ի՞նչ կասեք, եթե առաջին գլուխը խմբագրելու համար առաջարկեմ 300 դոլար, իսկ մյուս մասերի համար պայմանավորվենք՝ ելնելով գործերի ընթացքից»: Համաձայնությունները կարող են. լինել մասնակի, ընդգրկել քիչ

թվով կողմեր, ուղղված լինել միայն առանձին թեմաների, ներառել միայն որոշակի աշխարհագրական տարածքներ կամ ուժի մեջ լինել միայն սահմանափակ ժամանակահատվածի ընթացքում:

«Պատառք քաղցրացնելու» և համաձայնությունն առավել գրավիչ դարձնելու տեսանկյունից խթանիչ միջոց կարող է ծառայել պարզաբանումը, բե ինչպես է հնարավոր ընդլայնել քննարկվող թեման: Հնդկաստանի և Պակիստանի միջև Ինդրս գետի շուրջ վեճը դարձավ կառավարելի, երբ Համաշխարհային Բանկը ներգրավվեց քննարկումներում և կոչ արեց կողմերին առաջադրել նոր ծրագրեր ոռոգման խնդիրները կարգավորելու, նոր ջրամբարներ կառուցելու և պետությունների համար շահեկան այլ ճարտարագիտական ծրագրեր իրականացնելու համար ֆինանսավորում ստանալու նպատակով:

օ՛Յի՞»ն Ա՛Յ'Ն՞Յա՞օ՞ն Բ՞Ն»ն

Հիմնախնդրի ստեղծագործական լուծմանը խոչընդոտող երրորդ արգելքը ենթադրությունն է, բե բլիթի շափն անփոփոխ է. որքան ավելի է ձեր բաժինը, այդքանով պակաս է մերը: Մինչդեռ հիմնականում, եթե ոչ միշտ, այս ենթադրությունը սխալ է: Նախ՝ երկու կողմերն ել կարող են ավելի վատ պայմաններում հայտնվել, քան առկա պայմաններն են: Օրինակ, թվում է, բե շահմատը «զրոյական հանրագումարով» խաղ է (եթե մեկը հաղթում է, ապա մյուսն անպայմանորեն պարտվում է), քանի դեռ հարևանությամբ խաղացող ձեր շունը թաքով չի հարվածել տախտակին, քափել գարեջուրը և երկուսիդ էլ գցել ավելի վատ վիճակի մեջ, քան մինչ այդ էր:

Համատեղ կորուստները կանխելու ընդհանուր շահից բացի, գրեթե միշտ գոյություն ունի համատեղ օգուտներ քաղելու հնարավորություն: Այն կարող է ունենալ տարբեր դրսևորումներ՝ փոխադարձ նպաստավոր հարաբերությունների զարգացում կամ ստեղծագործական լուծումներով բոլոր կողմերի շահերի բավարարում:

Քացահայտեք ընդիհանուր շահերը: Տեսականորեն ակնհայտ է, որ ընդիհանուր շահերի առկայությունն օժանդակում է համաձայնություն կայացնելու գործընթացին: Ըստ սահմանման, ընդիհանուր շահերը բավարարող գաղափարների նորամուծումն օգտակար է ինչպես ծեր, այնպես էլ նրանց համար: Գործնականում, սակայն, պատկերն այդքան էլ պարզ չէ: Գնի շորջ վարվող բանակցությունների կեսից արդեն կարող է պարզվել, որ ընդիհանուր շահերն այդքան էլ ակնհայտ չեն կամ չեն համապատասխանում միմյանց: Կարո՞ղ է, արդյոք, ընդիհանուր շահի բացահայտումն օգտակար լինել գործին այս դեպքում:

Դիտարկենք մի օրինակ: Դիցուք, դուք ենթադրյալ «Թառնասենդ Օյլ» նավթամշակման գործարանի տնօրինն եք: Փերջվիլ քաղաքի քաղաքապետը, որտեղ գտնվում է նավթամշակման գործարանը, հայտարարել է, որ ցանկանում է ավելացնել հարկերը, ինչի արդյունքում «Թառնասենդ Օյլ»-ի կողմից քաղաքի բյուջե վճարվող հարկերը տարեկան մեկ միլիոն դոլարից կհասնեն երկու միլիոնի: Դուք հայտնել եք ծեր կարծիքն այն մասին, որ տարեկան մեկ միլիոն դոլարն արդեն բավական գումար է: Բանակցությունները հանգել են հետևյալին. նա ցանկանում է ստանալ ավելին, դուք ցանկանում եք վճարել այնքան, որքան վճարում էիք: Նման իրավիճակներ չափազանց հաճախ են համոլիպում բանակցությունների ընթացքում: Հետաքրքրական է, թե որտե՞ղ են բաքնված ընդհանուր շահերը:

Եկեք քիչ ավելի խորությամբ անդրադառնանք քաղաքապետի ցանկություններին: Իհարկե, նրան դրամ է անհրաժեշտ, և անկասկած քաղաքային ինչ-որ ծառայությունների՝ հնարավոր է հասարակական որևէ նոր կենտրոն հիմնելու և հարկային այդ բերից քաղաքացիներին ազատելու համար: Սակայն, քաղաքը չի կարող ներկայի և ապագայի համար իրեն անհրաժեշտ բոլոր գումարներն ապահովել միայն «Թառնասենդ Օյլ»-ի հաշվին: Հետևաբար, քաղաքն իր եկա-

մուտները պետք է ապահովի նաև ի հաշիվ փողոցի հակառակ կողմում գտնվող նավթաքիմիական գործարանի, իսկ ապագայում՝ նոր հիմնադրվող ձեռնարկությունների և արդեն իսկ գործողների ընդլայնման հաշվին։ Քաղաքապետն ինքը, որպես գործարար, նույնպես կցանկանար խրախոսել արդյունաբերության ընդլայնումը և ներգրավել նոր ներդրումներ, որոնց շնորհիվ կստեղծվեին նոր աշխատատեղեր և կամրապնդվեր Փեյջվիլի տնտեսությունը։

Որո՞նք են ձեր ընկերության շահերը։ Ի նկատի ունենալով նավթի մշակման տեխնոլոգիաների արագ փոփոխությունները և նավթամշակման ձեր գործարանի տեխնոլոգիական մաշվածությունը՝ դուք նախատեսում եք գործարանի ամբողջական վերազինում և արտադրության ընդլայնում։ Մյուս կողմից, դուք մտահոգված եք, որ վերազինումից հետո քաղաքային իշխանությունները, գերազնահատելով ձեր ընդլայնված արտադրության հնարավորությունները, կարող են ավելի բարձրացնել հարկերը։ Հաշվի առեք նաև, որ ձեր ձեռնարկության հարեւանությամբ նախատեսվում է կառուցել պլաստմասսայի իրերի գործարան, ինչում դուք մեծապես շահագրգուված եք, քանի որ դրա շնորհիվ ձեր արտադրանքի օգտագործումը կդառնա շատ ավելի հարմարավետ։ Բնականաբար, ձեզ մտահոգում է հարկերի բարձրացումը, քանի որ հնարավոր եք համարում, որ այդ պատճառով պլաստմասսայի իրերի գործարանատերը կարող է փոխել ձեր քաղաքում ձեռնարկատիրությամբ գրադարձելու իր մտադրությունը։

Քաղաքապետի և ձեր միջև ընդհանուր շահերն այժմ, կարծես, ավելի ցայտուն են դառնում։ Դուք երկուադ էլ համաձայն եք ընդլայնել գործող արտադրությունները և խրախոսել արդյունաբերական նոր ձեռնարկությունների հիմնումը։ Եթե խորհեք ընդհանուր նպատակներն իրագործելու ուղղությամբ, ապա հնարավոր է հանգեք մի քանի օգտակար մտքերի, ինչպիսիք են, օրինակ՝ նոր ստեղծված ձեռնարկություններին յոթ տարի ժամկետով հարկերից ազատելը, նոր ներդրումներ

ներգրավելու նպատակով Առևտրային պալատի հետ համատեղ գովազդային արշավ անցկացնելը, գործունեությունն ընդլայնող ձեռնարկությունների համար հարկային արտոնություններ սահմանելը: Նման գաղափարները կարող են և խնայել ճեր դրամները, և համարել քաղաքի գանձարանը: Հակառակ դեպքում, եթե բանակցությունները սրեն ճեր և քաղաքապետարանի հարաբերությունները, ապա երկուսդ էլ կորուստներ կունենաք: Դուք, այս պարագայում, հավանաբար կվրաստեք ինչպես ճեր ներդրումները քաղաքի բարեգործական ծրագրերում, այնպես էլ նվիրատվությունները մարզադարուցներին: Քաղաքային իշխանությունները կարող են չափից ավելի կոշտ դիրք գրավել շինարարական նորմերը և իրավական ակտերը խստացնելու տեսանկյունից: Քաղաքի գործարար շրջանակների և քաղաքական առաջնորդների հետ ճեր անձնական հարաբերությունները կարող են լարվել: Այնինչ, կողմերի միջև հարաբերությունները, որոնք հաճախ դիտարկվում են այնպես, կարծես այդպես էլ պետք է լինեին և անուշադրության են մատնվում, երբեմն գերակշռում են որևէ մասնավոր խնդրի շուրջ ճեռք բերված արդյունքների կարևորությունը:

Չեզ՝ որպես բանակցողի, գրեթե միշտ անհրաժեշտ է գտնել այնպիսի լուծումներ, որոնք կգոհացնեն նաև մյուս կողմին: Եթե հաճախորդը գնումներ կատարելիս իրեն խարված է զգում, ապա խանութպանը նույնպես չի շահում, այն պարզ պատճառով, որ կարող է կորցնել հաճախորդին և վնասել իր բարի համբավը: Շատ ավելի վատ արդյունք է ճեզ համար, եթք մյուս կողմը չի շահում բացարձակապես ոչինչ, քան այն արդյունքը, որի դեպքում նրանք իրենց բավարարված են զգում: Գրեթե բոլոր դեպքերում, ճեր բավարարվածությունը կախված է նրանից, թե ճեռք բերված համաձայնությունը որքանով է գոհացնում մյուս կողմին և ապահովում, որ նրանք գործեն դրան համապատասխան:

Վատ չէր լինի, եթե մտապահելիք ընդհանուր շահերին վերաբերող հետևյալ երեք դրույթները:

Առաջին. բոլոր բանակցություններում ընդհանուր շահերը քողարկված են և հնարավոր է, որ անմիջապես չբացահայտվեն: Հարցրեք ինքներդ ձեզ. ունե՞նք, արդյոք, ընդհանուր շահ մեր հարաբերությունները պահպանելու մեջ, ի՞նչ հնարավորություններ կան ապագա համագործակցության և փոխադարձ օգուտներ քաղելու տեսանկյունից, ի՞նչ կորուստներ կունենանք բանակցությունները ձախողելու դեպքում, գոյություն ունե՞ն, արդյոք, համընդհանուր սկզբունքներ (ասենք՝ արդարացի զին), որ կարող ենք հարգել երկու կողմերս էլ:

Երկրորդ. ընդհանուր շահերը հնարավորություններ են, ոչ թե անսպասելի հաջողություններ: Պեսք է դրանցից ինչ-որ բան կորզել, որպեսզի օգտակար դառնան: Այդ կերպ հնարավոր կլինի ընդհանուր շահը դարձնել բացահայտ և ներկայացնել այն՝ որպես ընդհանուր նպատակ: Այլ խոսքով, հստակեցրեք ընդհանուր շահը և դարձրեք այն ապագային ուղղված: Օրինակ, դուք՝ որպես «Թառնսենդ Օյլի» դեկավար և քաղաքաբետը կարող էիք ձեր ընդհանուր նպատակը սահմանել հետևյալ կերպ՝ երեք տարվա ընթացքում Փեյջվիլում հիմնել հինգ նոր արդյունաբերական ձեռնարկություններ: Այդ դեպքում արդեն, նոր ձեռնարկություններին տրվելիք հարկային արտոնությունները կընկալվեին ոչ թե որպես քաղաքապետի կողմից ձեզ տրված զիջում, այլ ընդհանուր նպատակի իրագործմանն ուղղված գործողություն:

Երրորդ. ընդգծելով ձեր ընդհանուր շահերը՝ կարող եք բանակցությունը դարձնել առավել սահուն և բարյացակամ: Սննդի սահմանափակ պաշարներով օվկիանոսի կենտրոնում հայտնված փրկարար նավակի ուղևորները պատրաստ կլինեն ստորադասել սնունդը բաշխելու վերաբերյալ իրենց տարածայնությունները ափ հասնելու ընդհանուր շահին:

Հարմարեցրեք տարբերվող շահերը: Եվս մեկ անգամ անդրադառնանք երկու փոքրիկներին, որոնք վիճում էին նարինջը կիսելու շուրջ: Երկուսն էլ ցանկանում էին ստանալ նարինջը: Հետևաբար, նրանք կիսեցին այն, սակայն առանց զի-

տակցելու, որ մեկին անհրաժեշտ էր միայն պտղամիսը՝ ուտելու համար, իսկ մյուսին՝ միայն կեղլը՝ թխվածքի համար: Այս և նման շատ այլ դեպքերում հնարավոր է կայացնել կողմերին լիարժեքորեն բավարարող համաձայնություն, քանի որ նրանց ցանկությունները տարրելու են: Սա չափազանց հետաքրքրական է: Սովորաբար մարդկանց թվում է, թե կողմերի միջև առկա տարրերություններն են, որ խնդիրներ են հարուցում: Մինչդեռ դրանք կարող են հանգեցնել նաև լուծումների:

Համաձայնությունը հաճախ հիմնվում է տարածայնության վրա: Անհերերություն կլիներ կարծել, օրինակ, թե դուք արժեքորեք զնելու նախակով վաճառողի հետ համաձայնություն ձեռք բերելու համար պետք է փաստարկներ ներկայացնեք և համոզեք նրան, որ արժեքորերի գինը հնարավոր է աճի: Եթե նրանք համաձայնվեն, որ գինը շուտով բարձրանալու է, ապա, հավանաբար, վաճառողը չի ցանկանա ազատվել դրանցից: Հետևաբար, առոք ու վաճառքի գործարքը հնարավոր է դառնում այն բանի շնորհիվ, որ վաճառողը կարծում է, թե գինը կիշնի, իսկ գնորդը՝ որ կբարձրանա: Համոզմունքների միջև տարրերությունները հող են նախապատրաստում գործարքի կայացման համար:

Ստեղծագործաբար ձեռք բերված բազմաթիվ համաձայնություններ արտացոլում են հենց տարրերությունների միջոցով համաձայնության հասնելու այս սկզբունքը: Շահերի և համոզմունքների միջև տարրերությունների շնորհիվ է, որ որևէ բան բարձր օգուտ է ապահովում ձեզ համար՝ էժան նստելով մյուս կողմի վրա: Հիշենք մանկական մի բառատող.

Զեր Սպրաթը չի սիրում ճարպոտ միս,
Կինը նրա չի ուտում անճարպ միս,
Թե որ սեղան նստեն միասին,
Անշուշտ վերջ կտան մսով լի բասին:

Լավագույն կերպով հաջողվում է հարմարեցնել այն տարրերությունները, որոնք հիմնված են շահերի, համոզմուն-

քնների, ժամանակային արժեքների, կանխատեսումների և ոլիսկի հանդեպ հակակրանքի վրա:

Կա՞ն արդյոք տարբերություններ շահերի միջև։ Ներքուիշյալ աղյուսակում հակիրճ ներկայացված են շահերի միջև առկա հիմնական տարբերությունները։

Մի կողմին առավելապես մտահոգում է.

Ձեզ
Տնտեսական կողմը
Ներքին խնդիրները
Խորհրդանշանակ կողմը
Մոտ ապագան
Որոշակի արդյունքները
Տեխնիկական ապահովումը
Առաջննարարը
Նախադեպը
Հեղինակությունը, համբավը
Քաղաքական սկզբունքները

Մյուս կողմին առավելապես մտահոգում է.

Բովանդակությունը
Քաղաքական կողմը
Արտաքին խնդիրները
Գործնական կողմը
Հեռավոր ապագան
Հարաբերությունները
Գաղափարախոսությունը
Ավանդապաշտությունը
Փաստը
Արդյունքները
Խմբի բարեկեցությունը

Համոզունքներն են տարբեր։ Եթե ես իմ ճշմարիտ լինելու մեջ եմ համոզված, իսկ դոր՝ ձեր, համոզունքների այս տարբերությունից անգամ հնարավոր է օգուտներ քաղել։ Ցուրաքանչյուրս մեր հաղթանակի վրա վստահ՝ խնդիրը լուծելու նպատակով, հավանաբար համաձայնվենք դիմել անկողմնակալ արբիտրի։ Եթե արհմիության առաջնորդների երկու խմբերի միջև չի հաջողվում համաձայնություն կայացնել աշխատավարձի չափը սահմանող ինչ-որ առաջարկի շորջ, նրանք կարող են համաձայնվել հարցը լուծել անդամների համընդհանուր քվեարկությամբ։

Ժամանակային արժեքներն են տարբեր։ Հնարավոր է, որ դուք մեծապես մտահոգված եք ներկայով, մինչդեռ մյուս կողմին առավելապես մտահոգում է ապագան։ Գործարարության լեզվով ասած՝ դուք նվազեցնում եք ապագա արժեքը

տարբեր դրույքաշափերով: Նույն սկզբունքով է գործում տարածամկետ վճարման համակարգը: Գնորդն ավտոմեքենայի համար պատրաստ է վճարել ավելի բարձր գին, եթե հնարավորություն տրվի վճարումը կատարել ավելի ուշ: Վաճառողն իր հերթին համաձայն է հետաձգել վճարումը՝ պայմանով, որ վճարելիք գումարի չափը շատ ավելի մեծ կլինի:

Կանխատեսումներն են տարբեր: Կայացած բեյսբոլային «աստղի» և բեյսբոլի բարձրագույն լիգայի ակումբի դեկավարի միջև աշխատավարձի շուրջ վարվող բանակցություններում «աստղը» կարող է վստահ լինել, որ իր խաղի շնորհիվ ապագա հաղթանակների թիվն անպայմանորեն կածի, մինչդեռ ակումբի դեկավարը կարող է ունենալ հակառակ սպասումներ: Օգտվելով սպասումներում առկա տարբերությունից, նրանք կարող են համաձայնվել 750 հազար դրամ բազային աշխատավարձի շուրջ՝ գումարած 500 հազար դրամ, եթե խաղացողին հաջողվի յուրաքանչյուր խաղի ընթացքում գլուխ բերել միջինում երեք արդյունավետ շրջապտույտ:

Ոիսկի դիմելու հակակրա՞նքն է տարբեր: Տարբերության վերջին աւեսակը, որից կարող եք հաջողությամբ օգտվել, ոիսկի դիմելու հակակրանքն է: Դիտարկենք ստորջրյա հանքարդյունահանման հարցը Ծովային իրավունքի շուրջ վարվող բանակցությունների օրինակում: Արդյունահանման արտոնություն ստանալու դիմաց արդյունահանող ընկերություններն ի՞նչ շափով պետք է փոխհատուցեն միջազգային հանրությանը: Նրանց մեծապես մտահոգում է մեծ կորուստներից խուսափելու խնդիրը, քան մեծ շահույթներ ստանալը: Ստորջրյա հանքարդյունահանումը նրանց համար խոշոր ներդրում է, ուստի, նրանք կցանկանային նվազեցնել ոիսկերը: Մյուս կողմից, միջազգային հանրությանն առավելապես մտահոգում է փոխհատուցման խնդիրը: Եթե որևէ ընկերություն պատրաստվում է մեծ շահույթ ստանալ «մարդկության համընդիանուր ժառանգությունից», ապա աշխարհի հանրությունն էլ ցանկանում է իր բաժինն ունենալ դրանից:

Այս տարբերությունը երկու կողմերի համար ձեռնտու սակարկություն անելու ներուժ է պարունակում: Ոխսվ կարեի է մեղմել փոխատուցմամբ: Շահարկելով ոխսկի հանդեպ հակարանքի տարբերությունները՝ առաջարկվում է համաձայնության մի տարբերակ, ըստ որի, քանի դեռ արդյունահանող ընկերությունների ներդրումները չեն հատուցվել, այսինքն՝ քանի դեռ բարձր է ոխսկի գործոնը, նրանց համար սահմանվում է փոխատուցման վճարի ցածր դրույքաչափ: Հետազյում, երբ ոխսկերը կնվազեն, համաձայնությամբ նախատեսվում է սահմանել փոխատուցման վճարի շատ ավելի բարձր դրույքաչափ:

Պարզաբանեք նրանց նախընտրությունները: Որպես շահերը հարմարեցնելու մի եղանակ՝ առաջ քաշեք կողմերի համար հավասարապես ընդունելի տարբերակներ և հարցրեք մյուս կողմին, թե դրանցից ո՞րն են նախընտրում: Տվյալ դեպքում անհրաժեշտ է պարզել, թե որն է նախընտրելին, ոչ թե անվերապահորեն ընդունելին: Այնուհետև, կարող եք շարունակել աշխատել նախընտրելի տարբերակի վրա և կրկին մյուս կողմին ներկայացնել երկու կամ ավելի ենթատարբերակներ՝ պարզելու, թե այս անգամ դրանցից որին են տալիս նախընտրությունը: Այս ճանապարհով, առանց որևէ որոշում կայացնելու, դրդ կարող եք բարելավել ձեր նախագիծը, քանի դեռ չի սպառվել դրանցից առավելագույն համատեղ օգուտ քաղելու հնարավորությունը: Օրինակ, թեյսրովի «աստղի» գործակալը կարող է հարցնել ակումբի սեփականատիրոջը. «Ո՞րն է առավել լավ բավարարում ձեր շահերը՝ 875 հազար դրլար տարեկան աշխատավարձը՝ շորս տարի ժամկետով աշխատանքային պայմանագրի դեպքում, թե՝ տարեկան 1,0 մլն դրլարը՝ երեք տարի ժամկետով աշխատանքային պայմանագրի դեպքում: Վերջի՞նը: Լավ: Այդ դեպքում ի՞նչ կասեք միջին մի տարբերակի մասին, ենթադրենք, տարեկան աշխատավարձի չափը՝ 900 հազար դրլար, աշխատանքային պայմանագրի ժամկետը՝ երեք տարի և, ի հավելումն դրան, տարեկան 500

հազար դոլար լրացուցիչ՝ որպես պարզեավճար, եթե Ֆերման-դոն առավել լավ արդյունք ցոյց տա քան 3.00 ՍԱՀ-ը¹:»

Եթե հարմարեցումն անհրաժեշտ լիներ արտայտել մեկ նախադասությամբ, ապա այն կինչեր հետևյալ կերպ. վնատրեք այնպիսի տարրերակներ, որոնք նվազ ծախսատար կլինեն ձեզ համար և հնարավորինս շահավետ՝ նրանց համար, և հակառակը: Չահերի, նախընտրությունների, համոզմունքների, կանխատեսումների և ոխսկի հանդեպ վերաբերմունքի միջև տարրերություններն են, որ հարմարեցումը դարձնում են հնարավոր: Բանակցողի կարգախոսը կարող է լինել «Vive la difference!²»:

՝ՈԱԾԿՅ ՚ՆՕՆ»Ն ՈՒԱԾԸ ՚ԼԱՇՎԱԾՈՒՅ»Ն ՚ԾՈՅ»ԷԱԾ ՚ԱՆԻԱՅՅԾԾԱ

Քանի դեռ ձեր հաջողությունները կախված են մյուս կողմի՝ ձեզ համար ցանկալի որոշում կայացնելու հանգամանքից, դուք պետք է ամեր ամեն ինչ, որպեսզի այդ որոշման կայացումը լինի դյուրին: Մյուս կողմի համար խոչընդոտներ հարուցելու փոխարեն, անհրաժեշտ է կանգնեցնել նրանց որքան հնարավոր է անցավ ընտրության առջև: Սեփական խնդրի էությամբ տպավորված՝ մարդիկ հաճախ պատշաճ ուշադրություն չեն դարձնում սեփական խնդիրները առաջ տանելուն զուգընթաց մյուս կողմի շահերի մասին հոգ տանելու խնդրին: Մարդկանց ընթացիկ անձնական շահերը շափից ավելի ներ անկյան տակ դիտարկելու հետևանքով ձևավորված անհեռատեսությունը հաղթահարելու համար անհրաժեշտ է, որ դնեք ձեզ նրանց տեղը: Նրանց համար գրավիչ տարրերակի բացակայության պայմաններում, հնարավոր է, որ համաձայնություն ընդիհանրապես չկայացվի:

¹ «ՍԱՀ» - միջին արդյունավետ շրջապատույթը, որը հաշվարկվում է (արդյունավետ շրջապատույթ) * 9/(պաշտպանական նետում) բանաձևով և ցոյց է տալիս խաղացողի արդյունավետության վիճակագրությունը, որը գոյություն ունի դեռևս 1900 թվականից (թարգ.)

² «Կեցցե՛ տարրերությունը» (թարգ.)

Ո՞ւմ տեղը: Ո՞ւմ վրա եք փորձում ազդել. որոշակի բանակցողի⁹, բանակցությանն անմիջականորեն չմասնակցող դեկավարի⁹, թե՝ ինչ-որ հանձնաժողովի կամ կոլեկտիվ որոշումներ կայացնող մեկ այլ մարմնի վրա: Անհնար է հաջող բանակցել ինչ-որ ընդհանրական հասկացության հետ, ինչպիսին է, օրինակ՝ «Հյուստոնը» կամ «Կալիֆորնիայի Համալսարանը»: Փոխարենը համոզելու «Ապահովագրական ընկերությանը», որ այն ինչ-որ որոշում կայացնի, ճիշտ կլինի ջանքերը կենտրոնացնել ապահովագրական որևէ գործակալի կողմից անհրաժեշտ հանձնարարականներ ստանալու ուղղությամբ: Որքան էլ որ բարդ բվա մյուս կողմի որոշում կայացնելու գործընթացը, այն ավելի ընկալելի կդառնա ձեզ համար, եթե ընտրելով որևէ մեկին, հավանաբար նրան, ում հետ բանակցում եք, փորձեք դիտարկել հիմնախնդիրը նրա տեսանկյունից:

Կենտրոնանալով որևէ մեկի վրա՝ դուք չեք անտեսում գործընթացի բարությունները: Ավելի շուտ, հասկանալով, թե ինչպես են դրանք ծառանում այն մարդու առջև, որի հետ բանակցում եք, դուք հաղթահարում եք դրանք: Դուք կարող եք սկսել նոր լույսի ներքո գնահատել բանակցողի ձեր դերը և տեսնել ձեր խնդիրն, օրինակ՝ այդ անձին ձեռք մեկնելու կամ նրան այնպիսի անհրաժեշտ փաստարկներ տրամադրելու մեջ, որոնց օգնությամբ նա կկարողանա համոզել մյուսներին հասկանալ ձեր տեսակետը: Բրիտանացի մի դեսպան բնութագրում էր իր աշխատանքը, որպես. «օգնություն հակառակ կողմին՝ ստանալու նոր հրահանգներ»: Եթե դուք կարողանաք դնել ձեզ հակառակ կողմի տեղը, ապա կհասկանաք նրա խնդիրները, ինչպես նաև, թե ինչ եղանակներով է հնարավոր դրանք լուծել:

Ինչպիսի⁹ որոշում: Երկրորդ գլխում մենք քննարկեցինք, թե ինչպես կարելի է ընկալել մյուս կողմի շահերը՝ վերլուծելով նրանց տվյալ պահին հնարավոր ընտրության ընկալումը: Այժմ դուք փորձում եք վեր հանել տարբերակներ, որոնք կփո-

փոխսեն նրանց ընտրությունն այնպես, որ բարձրանա ձեզ բավարարող որոշում կայացնելու հավանականությունը: Զեր խնդիրը ոչ թե խոչընդոտներ հարուցելն է, այլ պատասխաններ առաջադրելը, ոչ թե որոշման կայացումը դժվարեցնելն է, այլ այդ գործընթացը դյուրիխ դարձնելը: Այդ ընթացքում չափազանց կարևոր է, որ ձեր ուշադրությունը սեղոված լինի անմիջապես որոշման բովանդակության վրա: Հաճախ որոշումների կայացումը խոչընդոտվում է անորոշությունների պատճառով:

Երբեմն դուք ցանկանում եք ստանալ այն առավելագույնը, ինչ հնարավոր է, ինքներդ էլ չգիտենալով, թե որն է այդ հնարավորի սահմանը: Իրական բանակցություններում հնարավոր է, որ ասեք. «Ներկայացրեք ձեր առաջարկը, և ես կասեմ, արդյոք բավարար է դա, թե ոչ»: Սա կարող է տրամաբանական թվականությունը մոտենաք մյուսների տեսանկյունից, կզգաք, որ անհրաժեշտ է ներկայացնել առավել գրավիչ խնդիրը: Ինչ էլ որ նրանք ասեն կամ անեն, դուք, հավանաբար, կհամարեք, որ դա հնարավոր նվազագույնն է և ավելի խնդիր կդնեք: Խնդրելով մյուս կողմին, որ լինի «առավել առատաձեռն», ամենայն հավանականությամբ, չեք հանգի ձեզ համար ցանկալի որոշման:

Բանակցողներից շատերը վստահ չեն՝ արդյոք խոստումնե՞ր են ակնկալում, թե՞ գործողություններ: Մինչդեռ, տարրերությունը վճռորոշ է: Եթե դուք ակնկալում եք գործողություն, ապա կարիք չկա «բանակցային դաշտն» ընդունելու նպատակով ավելացնել ինչ-որ նոր բան: Եթե ձեզ անհրաժեշտ է, որ նժույգը հաղթահարի արգելքը, մի բարձրացրեք այս: Եթե դուք ցանկանում եք, որ ավտոմատ սարքում հյութի մեկ բաժակն արժենա 75 ցենտ, պետք չէ, ուրեմն գինը սահմանել մեկ դոլար և ձեզ համար լրացնից բանակցության տեղ բողնել:

Բանակցությունների մեծ մասում ձեր ակնկալիքը խոստումն է՝ համաձայնությունը: Թուղթ ու գրիչ վերցրեք և փորձեք կազմել հնարավոր համաձայնությունների մի բանի նախագծեր: Բանակցելիս նման նախագծերը կարող են

խթանել ձեր հստակ մտածողությունը, հետևաբար, երբեք վաղ չէ սկսել դրանց կազմումը: Կազմեք քազմաթիվ տարբերակներ՝ սկսելով հնարավոր պարզագույնից: Որո՞նք են այն կետերը, որ մյուս կողմը կարող է ստորագրել, որոնք կարող են գրավիչ լինել ինչպես նրանց, այնպես էլ ձեզ համար: Կարո՞ղ եք կրծատել այն անձանց թիվը, որոնցից անհրաժեշտ է հավանություն ստանալ: Կարո՞ղ եք համաձայնությունը ձևակերպել այնպես, որ մյուս կողմի համար դյուրին լինի դրա իրագործումը: Մյուս կողմն, անշուշտ, հաշվի է առնելու համաձայնության իրագործման դժվարությունները, հետևաբար, դուք պարտավոր եք նկատի ունենալ դրանք նոյնապես:

Սովորաբար, շատ ավելի հեշտ է, օրինակ, ձեռնպահ մնալ ինչ-որ քան ձեռնարկելոց, քան կանգնեցնել արդեն մեկնարկած գործողությունը կես ճանապարհին, և առավել դյուրին է դադարեցնել արդեն սկսված գործը, քան գործընթացն իրականացնել բոլորովին նոր եղանակով: Եթե աշխատողները ցանկանում են, որ աշխատանքն ուղեկցվի երաժշտությամբ, կազմակերպության համար ավելի հեշտ է համաձայնվել շխչընդոտել աշխատողների կողմից ձեռնարկված մի քանի շաբաթ տևողություն ունեցող փորձնական երաժշտական ծրագրի իրագործմանը, քան հանձն առնել՝ իրականացնելու այն:

Այն պարզ պատճառով, որ շատերն ուղղակիորեն առաջնորդվում են ողջամտության մասին իրենց պատկերացումներով, մյուս կողմի համար ընդունելի լուծումներ մշակելու արդյունավետ ուղիներից մեկը դրանց ողջամտ տեսք տան է: Մյուս կողմն, ամենայն հավանականությամբ, կընդունի ինչ-որ լուծում, որը տեղին է թվում, այսինքն՝ անաշառ, օրինական, ազնիվ և այլն:

Շատ չեն այն միջոցները, որոնք դյուրին են դարձնում որոշման կայացումն այնպես, ինչպես նախադեպը: Հետևաբար, փնտրեք նախադեպը: Գտեք որևէ որոշում կամ հայտարարություն, որ մյուս կողմը երբեք ընդունել է նման իրավի-

ճակներում և փորձեք դրա օգնությամբ հիմնավորել ձեր առաջարկած համաձայնությունը: Դա օբյեկտիվություն կհաղորդի ձեր պահանջին և մյուս կողմից համաձայնություն ստանալը կդարձնի ավելի դյուրին: Հաշվի առնելով, որ նրանք կցանկանային լինել հետևողական և ի մի բերելով նրանց ասածն ու արածը՝ դուք կարող եք անզնահատելի ծառայություն մատուցել ինքներդ ձեզ՝ մշակելով ձեզ համար ընդունելի տարրերակներ, որոնք հաշվի են առնում նաև մյուս կողմի տեսակետները:

Սպառնալն ամենին բավարար չէ: Ցանկալի որոշման բովանդակությունից բացի՝ ձեզ անհրաժեշտ է նաև դիտարկել այդ որոշման իրազործման հետևանքները՝ մոտենալով նրանց տեսանկյունից: Եթե լինեիք նրանց տեղը, ո՞ր արդյունքներից առավելապես կանհանգատանայիք, ինչի՞ հետ կկապեիք ձեր հույսերը:

Հաճախ մենք փորձում ենք ազդել մյուսների վրա սպառնայիքներով և նախազգուշացումներով, թե ինչ կլինի, եթե նրանք չկայացնեն այն որոշումը, որը մենք ենք ցանկանում: Մինչդեռ, առավել արդյունավետ է առաջարկներով հանդես գալը: Կենտրոնացրեք ձեր ուշադրությունը հետևյալ խնդիրների վրա. նախ աշխատեք, որ մյուս կողմը գիտակցի, թե ինչպիսի հնարավոր հետևանքներ կարող է ակնկալել, եթե կայացնի ձեզ համար ցանկալի որոշում, երկրորդ, բարելավել այդ հետևանքները նրանց տեսանկյունից: Ինչպես անել, որպեսզի ձեր առաջարկները վստահություն ներշնչեն: Ի՞նչ են նրանք որոշակիորեն նախընտրում: Գուցե նրանք ցանկանան, որ իրենց վստահվեր վերջնական առաջարկի կազմումը: Կցանկանա՞ն համաձայնության մասին հայտարարությունն իրենք անեն: Ի՞նչ կարելի է նորամուծել, որ իրապուրիչ լինի նրանց համար և նվազ ծախսատար՝ ձեզ համար:

Նրանց տեսակետից որևէ տարրերակին գնահատական տալու համար խորհեք, թե ինչպիսի քննադատության կարող են ենթարկվել նրանք այն ընդունելու դեպքում: Գրեք մեկ կամ

Երկու արտահայտություն, որ կարող էին հնչել մյուս կողմի ամենաանխնան քննադասի շուրթերից՝ ձեր կողմից առաջարկված որոշման վերաբերյալ: Գրառեք արտահայտությունների ևս մեկ գույգ, որ մյուս կողմը կարող էր հնչեցնել՝ ի պաշտպանություն: Նմանօրինակ վարժությունը կօգնի ձեզ վեր հանել այն սահմանափակումները, որոնց շրջանակներում բանակցում է մյուս կողմը: Դրա օգնությամբ դուք պետք է նաև վեր հանեք նրանց շահերին համապատասխանող այնպիսի տարբերակներ, որոնց շնորհիվ նրանք ի վիճակի կլինեն կայացնել ձեր շահերին համապատասխանող որոշում:

Տարբերակների ստուգման վերջին եղանակը դրանց ներկայացումն է «այս ենթադրող առաջարկների» ձևով: Փորձեք ձևակերպել այնպիսի առաջարկ, որին նրանք կարող են պատասխանել մեկ բառով՝ «այս», և այդ պատասխանը կլինի բավարար, իրատեսական և գործուն: Եթե դա ձեզ հաջողվում է, ուրեմն դուք նվազեցրել եք ընթացիկ անձնական շահերի ազդեցության տակ գտնվելու պատճառով մյուս կողմի մտահոգություններն անհրաժեշտ ուշադրության շարժանացնելու վտանգը:

Հատկապես բարդ իրավիճակներում անվերապահորեն անհրաժեշտ է կիրառել ստեղծագործական նորամուծության մոտեցում: Դա ցանկացած բանակցության ընթացքում կօգնի բացահայտել նորանոր հնարավորություններ և ի հայտ բերել բոլոր կողմերին բավարարող համաձայնությունների մի ամբողջ շարք: Հետևաբար, նախքան ընտրություն կատարելը առաջ քաշեք բազմաթիվ տարբերակներ: Նախ՝ նորամուծեք, այնուհետև՝ որոշեք: Փնտրեք ընդհանուր և տարբերվող շահեր հարմարեցնելու համար: Վերջապես, աշխատեք դյուրին դարձնել նրանց որոշում կայացնելու գործընթացը:

**5 ä³Ñ³Ý ç»ù ,
á ñ å»ë½Ç
û µ Ü»ÏïÇí
ä³÷³Ý Ç ß Ý »ñ
Ï Ç ñ³é í»Ý**

Որքան էլ որ լավ ընկալեք մյուս կողմի շահերը, որքան էլ հմտորեն կարողանաք ուղիներ առաջադրել դրանք համաձայնեցնելու նպատակով, որքան էլ բարձր գնահատեք շարունակական հարաբերությունները, դուք գրեթե միշտ բախվելու եք հակամարտող շահերի դառը իրականության հետ, և ոչ մի «հաղթել-հաղթել» ռազմավարություն չի կարող քողարկել այդ փաստը: Դուք ցանկանում եք, որ վարձավճարը լինի ցածր, տան սեփականատերը ցանկանում է, որ այն լինի բարձր: Դուք ցանկանում եք, որ ապրանքը մատակարարվի հաջորդ օրն իսկ, մատակարարը, հավանաբար, կցանկանար առաքել այն հաջորդ շաբաթվա ընթացքում: Դուք, անկասկած, նախընտրում եք ընդարձակ գրասենյակը պատուհանից բացվող իր գեղեցիկ տեսարանով, որին հավակնում է նաև ձեր գործընկերը: Սրանք տարածայնություններ են, որոնք հնարավոր չեն քողարկել:

**Ի Û³ÛÇÝ Ñ³ñÃáõÃÛ³Ý íñ³ áñáßáõÛÝ»ñ Ï³Û³óÝ»ÉÁ Ã³ÝÏ ;
ÝëïáõÛ**

Սովորաբար բանակցողները նման կոնֆլիկտները փորձում են լուծել դիրքային սակարկությունների ճանապարհով,

այլ կերպ ասած՝ քննարկելով, թե ինչի հետ են նրանք կամենում համաձայնվել և ինչի հետ՝ ոչ: Բանակցողը կարող է եական գիշումներ պահանջել՝ պարզապես պնդելով դրանց վրա. «Գինը 50 դրամ է և վե՛րջ»: Մյուսը կարող է ձեռնրաց առաջարկություն անել՝ հուսալով, որ կամ կարժանանա խրախուսանքի, կամ ձեռք կրերի ընկերական հարաբերություններ: Անկախ նրանից, իրավիճակը համառության դրսեվորման, թե մեծահոգության ցուցաբերման մրցավեճ է ներկայացնում, այս բանակցային գործընթացը հիմնվում է այն բանի վրա, թե ինչի հետ է կողմերից յուրաքանչյուրը կամենում համաձայնվել: Մարդկանց կամքի փոխադարձ ներգործության արդյունքը գրեթե այնպիսին է, կարծես բանակցողներն ապրում են ինչ-որ աննարդարնակ կղզու վրա, չեն ունեցել պատմություն, սովորույթներ ու բարոյականության չափանիշներ:

Ինչպես արդեն քննարկել ենք առաջին գլխում, առկա տարածայնությունները կամային հարքության վրա համաձայնեցնելու փորձը լուրջ ծախքեր է պարունակում: Հազիվ թե որևէ բանակցություն ընթանա բարյացակամորեն կամ լինի արդյունավետ, եթե դուք ձեր կամքը հակառակում եք նրանց կամքին եւ արդյունքում կամ դուք եք ստիպված նահանջել ձեր դիրքերից, կամ նրանք: Անզամ, եթե ճաշելու վայր եք վիճարում, նոր գործ եք սկսում կամ բանակցում եք երեխայի խնամակալության շուրջ, հազիվ թե կարողանաք հանգել այնպիսի համաձայնության, որ հիմնված լինի խոհեմ, օրյեկտիվ չափորոշիչների վրա, եթե ինքններդ հաշվի չեք առնում նման չափորոշիչները:

Եթե շահերի միջև տարբերությունների՝ կամային հարթության վրա կարգավորման փորձը պարունակում է այդշափ մեծ ծախքեր, որեմն լուծումը կողմերի կամքից կախում չունեցող մի այլ հիմքի վրա բանակցելն է, այն է՝ օբյեկտիվ չափանիշների:

ԱՄՈՒ»ԻՇԻ ԱՅՆՎԵՐՏ ԿԱՊՈՒՅԻՆ ԵՎ ԱՄԱՆԱԿԱՆ ՎՐԱՅԻ ՀԱՅՐԱՎԱՐԻ ԱՅՆՎԵՐՏ

Դիցուք, դուք ձեր տունը կառուցելու նպատակով կնքել եք ամրագրված գնով շինարարական կապավի պայմանագիր, որտեղ նախատեսված է, որ շինությունը պետք է ունենա ուժեղացված հիմք, սակայն չի նշված, թե որքա՞ն պետք է լինի դու խորությունը: Կապալառուն առաջարկում է հիմքը կառուցել 2 մետր խորությամբ: Դուք կարծում եք, որ նման շինությունների համար հիմքի խորությունը ընդունված է սահմանել 5 մետր:

Այժմ ենթադրենք՝ կապալառուն ասում է.

Ես համաձայնվեցի ձեզ հետ տանիքի պողպատյա հեծանի հարցում, այժմ ձեր հերթն է համաձայնվելու ինձ հետ հիմքի խորության շորջ:

Ոչ մի խոհեմ պատվիրատու չի համաձայնվի զիջել տվյալ հարցում: Այս դեպքում, փոխանակ խոհեմորեն փոխսպառուների շորջ սակարելու, դուք կպնդեք, որպեսզի հարցը լուծվի ապահովության օբյեկտիվ չափորոշիչների հիման վրա:

– Հնարավոր է, որ ես սխալպում եմ: Գուցե երկու մետր խորությունը բավարար է: Ես, ընդամենը, ցանկանում եմ, որ հիմքը լինի այնչափ ամուր և խորը, որպեսզի ապահովի կառույցի անվտանգությունը: Չկա՞ն արդյոք հողային այս պայմանների վերաբերյալ պետության կողմից սահմանված նորմեր: Ի՞նչ խորություն ունեն այս տարածքում գտնվող մյուս շինությունների հիմքերը: Ինչպիսի՞ն է երկրաշարժի ռիսկի գործակիցն այստեղ: Որտեղի՞ց կարող ենք գտնել նման տվյալներ, որպեսզի լուծում տանք այս հարցին:

Պատշաճ պայմանագիր կնքելն ավելի դյուրին չէ, քան ամուր հիմք կառուցելը: Եթե պատվիրատուի և կապալառուի միջև բանակցության շրջանակներում միանգամայն ակնհայտորեն կարելի է վստահել օբյեկտիվ չափորոշիչներին, ինչո՞ւ չվստահել դրանց նաև առևտրային գործարքներ կնքելիս, աշխատանքային վեճեր կարգավորելիս, իրավական կարգադրումներ իրականացնելիս և միջազգային բանակցություններ վարելիս: Ինչո՞ւ չպնդել, որ բանակցվող գինը վաճառողի կա-

մայական պահանջի վրա հիմնված լինելու փոխարեն հիմնված լինի այնպիսի չափորոշիչների վրա, ինչպիսիք են, օրինակ, շուկայական գինը, փոխադարձ փոխարինելի ապրանքների գները, մնացորդային արժեքը կամ մրցակցային գինը:

Եթե ավելի կարծ, ապա մոտեցումը հետևյալն է՝ ինքներդ պարտավորված զգացեք հանգելու լուծումների՝ հիմնված սկզբունքների, ոչ թե ճնշումների վրա: Կենտրոնացեք խնդրի էռույթյան, ոչ թե կողմերի խառնվածքի վրա: Բաց եղեք փաստարկների առջև, փակ՝ սպառնալիքների:

Քարիզմացիականորեն և արդյունավետորեն խոհեմ համաձայնություններ ձեռք բերելու ուղին սկզբունքային քանակցությունն է: Որքան ավելի հետևողականորեն եք առաջ քաշում արդարության, արդյունավետության չափորոշիչներ կամ գիտական հիմնավորումներ որևէ առանձին վերցված խնդիրը կարգավորելիս, այնքան ավելի է մեծանում հավանականությունը, որ ձեր վերջնական համաձայնությունները կլինեն անաշառ և խոհեմ: Որքան ավելի հաճախ եք դուք և մյուս կողմը հղումներ կատարում նախադեպին և հասարակական փորձին, այնքան ավելի է մեծանում անցյալի փորձից օգտագործելու քաղելու ձեր հնարավորությունը: Ավելին, նախադեպին համապատասխանող համաձայնությունը դառնում է անհամեմատ պակաս խոցելի: Եթե Վարձակալության պայմանագիրը պարունակում է տիպային հոդվածներ, կամ եթե առուվաճառքի պայմանագիրը համապատասխանում է առկա փորձին, ապա շատ ավելի փորքը է վտանգը, որ քանակցողին կարող է թվալ, թե իր նկատմամբ անարդար են գտնվել, կամ էլ որ նա հետազոտություններից կփորձի խույս տալ ձեռք բերված համաձայնությունից:

Գերիշխող դիրք ունենալու համար մշտական պայքարը վտանգում է հարաբերությունները, մինչդեռ սկզբունքային քանակցությունները պաշտպանում են դրանք: Շատ ավելի դյուրին է գործ ունենալ մարդկանց հետ, եթե միմյանց զիջումների մղելու փոխարեն նրանք միասնաբար քննարկում են հիմնա-

ինդրի կարգավորման օբյեկտիվ չափորոշիչները:

Օբյեկտիվ չափանիշների քննարկման ճանապարհով համաձայնության ձեռքբերումը կրճատում է նաև այն պարտավորությունների ցանկը, որ յուրաքանչյուր կողմ պետք է ստանձնի, այնուհետև հրաժարվի դրանցից համաձայնության հանգելու ճանապարհին: Դիրքային սակարկությունների ընթացքում բանակցողներն իրենց ժամանակի մեծ մասը ծախսում են իրենց դիրքը պաշտպանելու և մյուս կողմին գրոհելու վրա: Մարդիկ, ովքեր կիրառում են օբյեկտիվ չափանիշներ, հակված են առավել արդյունավետորեն օգտագործելու իրենց ժամանակը՝ խոսելով հնարավոր չափորոշիչների և լուծումների մասին:

Եթե բանակցությունում ներգրավված կողմերը մի քանիսն են, ապա բանակցության արդյունավետությունն ապահովելու տեսանկյունից առավել կարևորվում է անկախ չափորոշիչների կիրառումը: Նման դեպքերում դիրքային սակարկություններ վարելը, մեղմ ասած, բարդանում է: Դա պահանջում է կոռայիցիաներ ստեղծել կողմերի միջև, և որքան շատ կողմեր են համաձայնության գալիս մեկ դիրքի շուրջ, այնքան ավելի դժվար է դառնում այդ դիրքը փոփոխելը: Նմանապես, եթե բանակցողը ներկայացնում է իր վստահորդին կամ պարտադրված է համաձայնեցնել դիրքը բարձր դեկավարության հետ, դիրքեր գրավելը, իսկ այնուհետև դրանք փոփոխելը դառնում է ժամանակատար և դժվարին գրադարձունք:

Ծովային իրավունքին նվիրված համաժողովից մեջ բերվող մի դրվագ պարզորոշ կերպով լուսաբանում է օբյեկտիվ չափանիշների կիրառման արժանիքները: Բանակցությունների ընթացքում Հնդկաստանը, որը ներկայացնում էր «Երրորդ աշխարհի» երկրների բլոկը, առաջարկում էր նախավճար սահմանել ստորջրյա հանքարդյունահանմաք գրադպող ընկերությունների համար՝ յուրաքանչյուր հանքավայրից 60 միլիոն դոլարի չափով: ԱՄՆ-ը դեմ էր այդ առաջարկին և առարկում էր որևէ նախավճար սահմանելու դեմ: Կողմերը համառում էին.

խնդիրը վերածվում էր կամային պայքարի:

Քննարկումներն այլ ընթացք ստացան, երբ հայտնի դարձավ, որ Մասաշուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտը (ՄՏԻ) մշակել է ստորգրյա հանքարդյունահանման տնտեսական մի մոդել, որը հետզհետև ընդունվեց բոլորի կողմից որպես հանքարդյունահանման նկատմամբ սահմանվող վճարի տնտեսական ազդեցության գնահատման օբյեկտիվ եղանակ: Այնուհետև, երբ Հնդկաստանի ներկայացուցիչը հետաքրքրվեց, թե ինչպիսին էր իր առաջարկի ազդեցությունը, նրան ներկայացվեց, որ այն ահոելի գումարը, որ նա առաջարկում էր վճարել, այն էլ 5 տարի շուտ՝ քանի հանքարդյունահանողները կհասցնեին եկամուս ստանալ իրենց գործից, ըստ էության անհնարին էր դարձնում հանքարդյունահանումն ընդհանրապես: Դրանից տպավորված՝ ներկայացուցիչը հայտարարեց, որ պատրաստ է վերանայել իր դիրքորոշումը: Մյուս կողմից, ՄՏԻ մողելը դաս եղավ նաև ամերիկացիների համար, որոնց տեղեկացվածությունը խնդրի վերաբերյալ խիստ սահմանափակ էր, քանի որ նրանք հիմնվում էին միայն հանքարդյունահանող ընկերությունների կողմից տրամադրված տվյալների վրա: Մողելի օգնությամբ բացահայտվեց, որ, այնուամենայնիվ, որոշ նախավճարի սահմանումը կարող է տնտեսապես արդարացված լինել: Արդյունքում ԱՄՆ-ը ևս փոխեց իր դիրքորոշումը խնդրի համեմականացնելու:

Կողմերից և ոչ մեկը չփիցեց, ոչ մեկը չընկալվեց որպես թույլ կողմ. բոլորն էլ խոհեմ գտնվեցին: Երկար բանակցություններից հետո նրանք եկան նախնական համաձայնության, որը բավարարում էր բոլորին:

ՄԻՏ մողելը մեծացրեց համաձայնություն ձեռք բերելու հնարավորությունը և նկազեցրեց դիրքեր բոնելու հետ կապված ծախսքերը: Այն հանգեցրեց լավագույն որոշման. ընկերությունների համար ապահովեց ստորգրյա հանքարդյունահանման գրավչությունն, իսկ համաշխարհային հանրությանն էլ ընձեռեց զգալի եկամուտներ վաստակելու հնարա-

Վորություն: Որևէ առաջարկի հետևանքները կանխատեսող օրյեկտիվ մոդելի առկայությունը բույլ տվեց համոզելու կողմերին, որ իրենց կայացրած նախնական համաձայնությունն անաշառ է: Վերջինս էլ իր հերթին ամրապնդեց հարաբերությունները բանակցողների միջև և վստահություն ներշնչեց, որ կայացված համաձայնությունը կրոնի ժամանակի փորձությունը:

ԱՄՄ»ԷՇԻ ՁՅԱԿՑԵՐ»ՆԸ ԱՅԻՆԸ

Սկզբունքային բանակցություն վարելը շոշափում է երկու հարց. ինչպե՞ս մշակել օրյեկտիվ չափանիշներ և ինչպե՞ս կիրառել դրանք բանակցությունների ընթացքում:

Բանակցության որ մեթոդից էլ օգտվելու լինեք, շատ ավելի լավ կլինի, եթե նախապատրաստվեք դրան վաղորոք: Այս պնդումն անվերապահորեն ճշմարիտ է սկզբունքային բանակցության համար: Հետևարար, մշակեք մի քանի այլընտրանքային չափորոշիչներ, այնուհետև խորհեք ձեր դեպքում դրանց կիրառելիության մասին:

Անաշառ չափորոշիչներ: Սովորաբար հնարավոր է գտնել ավելի քան մեկ օբյեկտիվ չափանիշ, որոնք կարող են համաձայնության կայացման հիմք հանդիսանալ: Դիտարկենք մի օրինակ. դիցուք, ձեր մեքենան վնասվել է, և դուք փոխհատուցման հայց եք ներկայացրել ապահովագրական ընկերություն: Ապահովագրական գործակալի հետ հարցի քննության ընթացքում անհրաժեշտ է, որ հաշվի առնեք ավտոմեքենայի գին հետ կապված մի քանի առանձնահատկություններ, ինչախիք են:

1. մեքենայի սկզբնական գինն առանց ամրութիզացիայի,
2. ի՞նչ գնով կարող եք վաճառվել մեքենան,
3. ավտոմեքենայի տվյալ մակնիշի գինը՝ ըստ այդ տարվա «կապույտ գրքի»¹,
4. ի՞նչ գին կվճարեիք, եթե այն փոխարինեիք այդ կարգի մեկ այլ ավտոմեքենայով,

5. ի՞նչ զին կարող էր սահմանել դատարանը ավտոմեքենայի համար:

Այլ դեպքերում, կախված հարցի եռթյունից, դուք կարող եք առաջարկել, որ համաձայնությունը հիմնվի՝

շուկայական գնի վրա	դատարանի որոշման վրա
նախադեպի վրա	բարոյական նորմերի վրա
գիտական գնահատա- կանի վրա	հավասար մոտեցման վրա
մասնագիտական չափորոշիչների վրա	ավանդույթների վրա
արդյունավետության վրա	փոխադարձության վրա
ծախքերի վրա	և այլն

Օբյեկտիվ չափանիշներն, առնվազն, պետք է անկախ լինեն յուրաքանչյուր կողմի կամքից: Իդեալական դեպքում, խոհեմ համաձայնություն երաշխավորելու համար, օբյեկտիվ չափանիշները պետք է լինեն ոչ միայն որևէ մեկի կամքից անկախ, այլ նաև՝ ողջամիտ և գործնականում ընդունելի: Օրինակ, սահմանների հետ կապված վեճի շրջանակներում ավելի դյուրին կլինի համաձայնվել, որ սահմանագիծն անցնի, ասենք, տվյալ տարածքով հոսող գետի երկայնքով, քան` գետափից երեք մետր դեպի արևելք անցնող գծով:

Օբյեկտիվ չափանիշները, գոնե տեսականորեն, պետք է երկու կողմերի համար էլ կիրառելի լինեն: Բացահայտելու համար՝ արդյո՞ք առաջարկված չափանիշն անաչառ է և կողմերի կամքից անկախ, կարող եք քննության ենթարկել դրա

փոխադարձ կիրառելիությունը: Եթք անշարժ գույքի գործակալությունը բնակարան վաճառելիս առաջարկում է կնքել առուվաճառքի մի տիպային պայմանագիր, ձեր կողմից խոհեմ կլինի, եթե հետաքրքրվեք, թե արդյո՞ք դա նույն տիպային պայմանագրի ձևն է, որ բնակարան գնելիս կնքում են իրենք: Միջազգային հարաբերությունների ոլորտում շատ ժողովուրդներ պնդում են ազգերի ինքնորոշման հանրահայտ սկզբունքը որպես իրենց հիմնարար իրավունք, սակայն, մերժում են նույն սկզբունքի կիրառումը մյուս կողմի նկատմամբ: Միջին Արևելքի, Հյուսիսային Իռլանդիայի կամ Կիպրոսի դեպքերը ասվածի ընդամենը երեք օրինակներն են:

Անաշառ ընթացակարգեր: Կողմերի կամքից կախում չունեցող արդյունք արձանագրելու համար դուք կարող եք կիրառել կամ անաշառ չափորոշիչներ, երբ հարցը վերաբերում է խնդրի եռթյանը, կամ անաշառ ընթացակարգեր, երբ անհրաժեշտ է համաձայնեցնել հակառիք շահերը: Դիտարկենք երկու երեխաների միջև թիվածքի բաժանման քաջածանոք եղանակը. մեկը կտրում է այն, մյուսն՝ ընտրում իրեն դուք եկած կտորը: Նրանցից և ոչ մեկը չի կարող բողոքել, որ բաժանումն անարդար է:

Այս պարզագույն ընթացակարգը կիրառվել է Ծովային իրավունքի շորջ ծավալված՝ երրևէ հանդիպած ամենախրին բանակցության ընթացքում: Եղավ մի պահ, երբ ստորջրյա հանքարդյունահանման տարածքների բաշխման խնդիրը բանակցային գործընթացը տարավ դեպի փակուղի: Ըստ համաձայնագրի նախագծի՝ հանքավայրերի կեսի շահագործումը պետք է իրականացվեր մասնավոր ընկերությունների կողմից, մյուս կեսին՝ Սիավորված Ազգերի Կազմակերպության հիմնադրամ Զեռնարկության կողմից: Աղքատ երկրները մտավախություն ունեին, որ հարուստ երկրների մասնավոր ընկերությունները, արդեն իսկ ունենալով համապատասխան փորձ եւ տեխնոլոգիաներ, կտիրանային հանքավայրերի լավագույն կեսին, իսկ Զեռնարկությանը, որը պակաս փորձառու էր այդ

գործում, բաժին կհասներ պակաս եկամտաքեր մասը:

Առաջարկված լուծումը հետևյան էր՝ մասնավոր ընկերությունը, որը հայտ է ներկայացնում ստորջրյա հանքարդյունահանումք գրաղվելու համար, պարտավոր է Զեռնարկությանը ներկայացնել հանքավայրի ընտրության երկու առաջարկ: Զեռնարկությունն, այնուհետև, իր հայեցողությամբ ընտրում է առաջարկված հանքավայրերից մեկն՝ իր կողմից արդյունահանում կազմակերպելու նպատակով, իսկ հայտը ներկայացրած մասնավոր ընկերությանը տրամադրում է համապատասխան լիցենզիա՝ մյուս հանքավայրում արդյունահանում իրականացնելու: Քանի որ մասնավոր ընկերությունը չի կարող կանխատեսել, թե հատկապես ո՞ր հանքավայրը կտրվի իրեն, ուստի շահագրգիռ կլինի, որպեսզի առաջարկված երկու հանքավայրերն էլ լինեն հնարավորինս հեռանկարային: Այս պարզագույն ընթացակարգը այսպիսով հնարավորություն ստեղծեց օգտագործելու մասնավոր ընկերությունների բարձրակարգ փորձագիտական ներուժը փոխադարձ օգուտներ քաղելու նպատակով:

«Մեկը կտրում է, մյուսն՝ ընտրում» ընթացակարգի տարատեսակներից մեկն էլ այն է, որ կողմերը, նախքան համաձայնության շրջանակներում իրենց համապատասխան դերերը բաշխելը, բանակցեն, թե որն է իրենց կարծիքով անաշառ համաձայնությունը: Օրինակ՝ ապահարզանի շուրջ վարվող բանակցություններում, մինչ կորոշվի, թե ծնողներից որ մեկը կստանանի երեխայի խնամակալությունը, կարելի է համաձայնեցնել ծնողի՝ երեխային այցելելու իրավունքի իրացման հետ կապված հարցերը: Սա կխթանի, որպեսզի այցելությունների կարգավորման շուրջ կայացվի երկու կողմերի տեսանկյունից էլ անաշառ համարվող համաձայնություն:

Ընթացակարգային լուծումներ փնտրելու ժամանակ ուշադրություն դարձրեք նաև տարածայնությունների հարթման մյուս հիմնական միջոցների՝ հերթականություն սահմա-

նելու, վիճակահանություն անցկացնելու, կողմնակի անձին որոշում կայացնելու հնարավորություն տալու և այլնի վրա:

Հաճախ հերթականություն սահմանելը ժառանգված մեծաքանակ գույքը ժառանգների միջև բաժանելու լավագույն եղանակ է հանդիսանում: Բաժանելուց հետո ժառանգները կարող են սակարգել, եթե ցանկանան: Կարող են նաև, մինչ ժառանգությունն ընդունելու հետ կապված պարտավորություններ ստանձնելը, փորձնական ընտրություն կատարել՝ պարզելու, թե ինչպես է գործը գլուխ գալիս: Վիճակ հանելը, մետաղադրամ նետելը կամ պատահական ընտրության այլ ձևերն ի սկզբանե օժտված են իրենց ներհատուկ անաշառությամբ: Ծիշտ է, դրանց արդյունքում հնարավոր է, որ բաշխումը լինի անհավասար, սակայն անվիճելի է, որ կողմերից յուրաքանչյուրն ունեցել է հավասար հնարավորություն:

Համատեղ որոշումներ կայացնելու գործընթացում կողմնակի անձին առանցքային դեր հատկացնելը լայն տարածում ունեցող և գրեթե անսահման հնարավորություններով ընթացակարգ է: Կողմերը կարող են համաձայնվել ներկայացնել իրենց մասնավոր խնդիրը որևէ փորձագետի՝ խորհրդատվություն ստանալու կամ որոշում կայացնելու, կարող են դիմել որևէ միջնորդի՝ օգնելու հանգել որոշման, կամ հարցը ներկայացնել արքիտրամային դատարան՝ պաշտոնական և կատարման համար պարտադիր որոշում կայացնելու:

Պրոֆեսիոնալ բեյսբոլում, օրինակ, թիմի անդամի աշխատավարձի շուրջ վեճը կարգավորելու նպատակով կիրառվում է «վերջին ամենալավ առաջարկի արքիտրամի» մեթոդը: Դատավորը պարտավոր է ընտրություն կատարել երկու կողմերից յուրաքանչյուրի վերջնական առաջարկների միջև: Այս ընթացակարգի իմաստն այն է, որ ստիպում է կողմերին ներկայացնել հնարավորին չափ լավ հիմնավորված առաջարկներ: Բեյսբոլում և այն նահանգներում, որտեղ արքիտրամի այս ձևը պարտադիր է հանրային ծառայողների հետ կապված որոշ վեճերի կարգավորման դեպքում, կարծիք կա, որ ձեռք բերված

համաձայնությունների թիվն ավելի մեծ է, քան երբ համանման պայմաններում իրականացվում է ավանդական արքիտրաժ. կողմերը, չհանգելով որոշման, երբեմն կանգնեցնում են արքիտրին երկու ծայրահեղ առաջարկների միջև անհաճող ընտրություն կատարելու փաստի առջև:

ԱՄՈՒ»ԷՇԻ ՅԱՌԵՎ ԱՅԱԾԱՆ ԱՅԱԾԱՆ ԵԱ

Երբ այլև սահմանել եք օբյեկտիվ չափանիշներն ու ընթացակարգերը, ինչպես եք պատրաստվում քննարկել դրանք մյուս կողմի հետ:

Անհրաժեշտ է հիշել հետևյալ երեք հիմնական դրույթները.

1. ցանկացած խնդիր ներկայացրեք որպես օբյեկտիվ չափանիշների համատեղ որոշում,
2. փաստարկեք և բաց ենեք փաստարկների հանդեպ, թե որ չափորոշիչներն են առավել համապատասխան, և թե ինչպես դրանք պետք է կիրառվեն,
3. երբեք մի ընկրուեք ճնշումների առջև, զիջեք միայն սկզբունքներին:

Այսպիսով, վճռականորեն կենտրոնացեք օբյեկտիվ չափանիշների վրա, սակայն մնացեք ճկուն:

Ցանկացած խնդիր ներկայացրեք որպես օբյեկտիվ չափանիշների համատեղ որոշում: Տուն գնելու նպատակով վաճառողի հետ կարող եք սկսել բանակցությունն՝ ասելով. «Հարգելիս, Դուք ցանկանում եք վաճառել տունը բարձր գնով, ես ցանկանում եմ գնել այն ցածր գնով: Եկեք, ուրեմն, պարզենք, թե ո՞րն է անաշառ գինը: Օբյեկտիվ չափորոշիչներից որո՞նք կարող էին լինել ամենահամապատասխանը»: Հնարավոր է, որ դուք և մյուս կողմն ունեք բախվող շահեր, սակայն այս պահին դուք ձեռք եք բերում ընդհանուր նպատակ՝ որոշել անաշառ գինը: Ծիշտ կլինի, որ նախ ինքներդ առաջարկեք մեկ կամ մի քանի չափանիշներ (տասն` մաշվածքով և ինֆյացիայով ճշգրտված գինը, հարևանությամբ գտնվող վերջերս

վաճառված նմանատիպ տների գները կամ որևէ անկախ գնահատական), իսկ այնուհետև խնդրեք, որ առաջարկներ ներկայացնի վաճառողը:

Հարցրեք. «*Ո՞րմ է ձեր մոտեցումք*»: Եթե վաճառողն սկսում է բանակցել՝ ներկայացնելով իր դիրքը, ասենք. «Տունն արժե 155 հազար դոլար», հետաքրքրվեք, թե որն է այդ գնի հաշվարկման հիմքում ընկած տեսությունը. «*Ինչպես հանգեցիք այդ թվին*»: Դիտարկեք խնդիրն այնպես, կարծես վաճառողը ևս օրյեկտիվ չափանիշների վրա հիմնված անաշառ գին է փնտրում:

Նախ և առաջ համաձայնվեք սկզբունքների շուրջ: Մինչ հնարավոր պայմանների քննարկմանն անցնելը, ձեզ անհրաժեշտ է համաձայնեցնել, թե որ չափանիշը կամ չափանիշներն եք կիրառելու:

Մյուս կողմի առաջարկած ցանկացած չափորոշիչ վերածվում է մի լծակի, որը հետագայում կարող եք կիրառել նրանց համոզելու նպատակով: Ձեր փաստարկն ավելի մեծ ազբեցություն կունենա, եթե այն ներկայացվի նրանց կողմից առաջարկված չափանիշների տեսանկյունից, իսկ նրանց համար դժվար կլինի հակազդել հիմնախսնդրի նկատմամբ իրենց իսկ առաջարկած չափանիշները կիրառելուն:

«*Դուք ասացիք, որ պարոն Զոնսը հարեանությամբ գտնվող իր տունը վաճառել է 160 հազար դոլարով*»: Ձեր մոտեցման համաձայն՝ այս տունը պետք է վաճառվի այնքանով, որքանով վաճառվում են տվյալ տարածքում գտնվող նմանատիպ տները, այդպես չէ: «Ես, որեմն, եկեք պարզեմք, թե ի՞նչ գումարով են վաճառվել Էլսվորը և Օքսֆորդ կամ Բրոդվեյ և Դանա փողոցների անկյունում գտնվող տները»: Հատկապես դժվար է գիշել, եթե ստիպված եք լինում ընդունել կողմնակի անձի ինչ-որ առաջարկ: Մինչդեռ, եթե հենց իրենք են առաջարկում չափորոշիչը, ապա դրան ենթարկվելը խոսում է ոչ թե նրանց բոլորին, այլ ուժեղ կամքի և խոսքի տերը լինելու մասին:

Փաստարկեք և բաց եղեք փաստարկների հանդեպ: Բանակցությունը համատեղ փնտրտուքի կարող է վերածվել այն դեպքում, երբ բանակցային սեղանի շուրջ եք գալիս բաց մտքով, անկախ նրանից, թե որքան շատ օբյեկտիվ չափանիշներ եք նախապատրաստել: Բանակցություններից շատերի ընթացքում մարդիկ նախադեպը կամ օբյեկտիվ այլ չափորոշիչներն օգտագործում են ուղղակի որպես դիրքին աջակցող փաստարկներ: Ոստիկանության ծառայողների արհմիությունն, օրինակ, կարող է պնդել ծառայողների աշխատավարձի որոշակի չափով բարձրացումը, իսկ որպես իրենց դիրքն արդարացնող փաստարկ՝ ներկայացնել, թե ինչի է հասել ոստիկանությունն այլ քաղաքներում: Չափորոշիչների նմանօրինակ կիրառությունը, սովորաբար, նպաստում է մարդկանց՝ իրենց դիրքերի մեջ ավելի խորը ներքաշվելուն:

Ավելին, երբեմն որոշ բանակցողներ ի սկզբանե հայտարարում են, որ իրենց բռնած դիրքն սկզբունքային հարց է և հրաժարվում են անգամ դիտարկել մյուս կողմի փաստարկները: «Սա սկզբունքային հարց է» կարգախոսը դառնում է զաղափարախոսությունների շուրջ նվիրական պատերազմի մարտակը: Տարածայնությունները գործնականից վերաճում են սկզբունքայինի և տանում բանակցողներին ավելի շուտ դեպի փակուղի, քան թե գործելու ազատություն շնորհում նրանց:

Միանշանակորեն պետք է շեշտել, որ սկզբունքային բանակցություն ասելով՝ մենք դա չենք, որ ի նկատի ունենք: Պնդել, որ համաձայնությունը հիմնված լինի օբյեկտիվ չափանիշների վրա, չի նշանակում պնդել, որ այն հիմնված լինի բացառապես ձեր կողմից առաջ քաշված չափանիշի վրա: Օրինականության մեկ չափորոշիչի առկայությունը չի բացառում մյուսների գոյությունը: Մյուս կողմի տեսանկյունից անաշառ համարվող չափորոշիչը կարող է այդպիսին չլինել ձեզ համար: Դուք պետք է դատավորի կեցվածք ընդունեք. թեև առավել հավանական է, որ նախատրամադրվածություն ունե-

նաք կողմերից մեկի հանդեպ (տվյալ դեպքում՝ սեփական կողմի), այնուամենայնիվ, պետք է կամք դրսևորեք՝ արձագանքելու որևէ այլ չափանիշ կիրառելու կամ չափանիշն այլ կերպ կիրառելու հիմնավորումներին։ Այն դեպքում, եթե կողմերից յուրաքանչյուրն առաջ է քաշում տարբեր չափանիշներ, փորձեք գտնել օբյեկտիվ հիմնավորումներ վերջիններիս միջև ընտրություն կատարելու համար, օրինակ՝ որ չափանիշից են օգտվել կողմերն անցյալում, կամ որ չափանիշն է առավել լայն կիրառում ունեցել։ Ծիշտ այնպես, ինչպես եռթյանը վերաբերող խնդիրը չպետք է կարգավորվի կամային հարթությունում, այնպես էլ նույն հարթությունում չպետք է կարգավորվի այն հարցը, թե որ չափանիշը պետք է կիրառվի։

Առանձին դեպքերում հնարավոր է գրյություն ունենան երկու չափորոշիչներ (ինչպիսիք են, օրինակ, շուկայական գինը և ամորտիզացիոն ծախքերը), որոնք տարբեր արդյունքներ են տալիս, սակայն երկու կողմերն էլ համաձայնվում են, որ դրանք հավասարապես ընդունելի են բվում։ Այդ դեպքում երկու օբյեկտիվ չափանիշների կողմից առաջարկված արդյունքների միջև տարբերությունները հարթելը կամ, այլ կերպ ասած՝ փոխսպառման գնալը միանգամայն ողջամիտ է։ Արդյունքն, այնուամենայնիվ, անկախ է կողմերի կամքից։

Եթե, սակայն, հարցի եռթյան բազմակողմանի ըննարկումից հետո դուք այնուամենայնիվ չեք կարող ընդունել նրանց առաջարկած չափանիշները՝ որպես ամենահամապատասխանը, ապա կարող եք առաջարկել, որ դրանք ըննության դրվեն։ Ընտրեք մեկին, ով երկուսիդ կարծիքով կարող է անաշառ լինել, տվեք նրան առաջարկված չափանիշների ցանկը և խնդրեք, որ որոշի, թե որոնք են ամենաանաշառ և ձևավորված իրավիճակին ամենահամապատասխանող չափանիշները։ Քանի որ օբյեկտիվ չափանիշները պետք է ողջամիտ լինեն, իսկ ողջամտությունն էլ ենթադրում է, որ դրանք ընդունելի են շատերի կողմից, հետևաբար ձեր խնդրանքն արդարացված է։ Դրանով դուք չեք պահանջում

Երրորդ կողմից կարգավորել խնդրի էության շուրջ ունեցած ձեր վեճը, այլ խնդրում եք միայն խորհուրդ տալ, թե որ չափորոշիչից կարելի է օգտվել վեճը կարգավորելու համար:

Խնդրի լուծման նպատակով համապատասխան սկզբունքների շուրջ համաձայնության փնտրուորի և կողմի դիրքերին օժանդակելու նպատակով սկզբունքներն ուղղակի որպես փաստարկներ կիրառելու միջև տարրերությունը հաճախ աննկատ է, սակայն մշտապես զգալի: Ակզրունքային բանակցողը բաց է էությանը վերաբերող հիմնավոր փաստարկների հանդեպ, դիրքային բանակցողը՝ ոչ: Հենց փաստարկների հանդեպ բացության և լուծումներն օբյեկտիվ չափանիշներով հիմնավորելու համար պահանջի համակցումն է, որ սկզբունքային բանակցությունը դարձնում է այդքան համոզիչ և այդքան արդյունավետ՝ մյուս կողմին խաղի մեջ ներգրավելու գործում:

Երեք մի ընկրկեք ճնշումների առջև: Կրկին անդրադառնամբ կապալառուի հետ բանակցության օրինակին: Ինչպե՞ս կվերաբերվեք հարցին, եթե նա առաջարկի աշխատանքի ընդունել ձեր եղբորը՝ պայմանով, որ դուք կզիշեք տան հիմքի խորության հարցում: Դուք, հավանաբար, կպատասխանեք. «Եղբորս աշխատանքի ընդունելը բացարձակորեն չի առնչվում այն խնդրի հետ, թե արդյոք այդ խորությամբ հիմքը կապահովի տան համար պատշաճ անվտանգություն, թե՝ ոչ»: Իսկ եթե կապալառուն փորձի սպառնալ ձեզ՝ պահանջելով ավելի բարձր գին, այդ դեպքում գուցե պատասխանեք նույն ոճով. «Նենք կվարգավորենք այդ հարցն՝ ըստ էության: Ենեք պարզենք, թե որքան են պահանջում մյուս կապալառուները նման աշխատանքի դիմաց», կամ. «Ներկայացրեք ձեր ծախսերը, և մենք կսահմանենք ձեզ համար շահույթի արդարացված չափ»: Եթե կապալառուն փորձի շահարկել. «Ինչպե՞ս, չէ՞ որ դուք ինձ վտահում եք», դուք կպատասխանեք. «Վստահելը միանգամայն այլ հարց է, իսկ խնդիրն այն է, թե որքան պետք է լինի հիմքի խորությունը, որպեսզի տունն ապահով լինի»:

Ծնշումը կարող է արտահայտվել տարբեր ձևերով՝ կաշառքի, սպառնալիքի, վստահելուն ուղղված շահադիտական կոչի կամ պարզապես տեղից շարժվելուց հրաժարվելու: Բոլոր այս դեպքերին անհրաժեշտ է արձագանքել նույն սկզբունքային տեսանկյունից. խնդրեք նրանց ներկայացնել իրենց փաստարկները, առաջարկեք այն օբյեկտիվ չափանիշները, որոնք մտադիր եք կիրառել և հայտարարեք, որ դուք ևս չեք շարժվի տեղից, եթե այս մոտեցումը չընդունվի որպես հիմք: Երբեք մի ընկրկեք ծնշումներին, զիջեք միայն սկզբունքին:

Ո՞վ կգերիշխի: Անհնար է կանխատեսել այս հարցի պատասխանը յուրաքանչյուր որոշակի դեպքում, սակայն, ընդհանուր դեպքում դուք կունենար որոշակի առավելություն: Ի հավելումն ձեր կամքի ուժի, դուք օժտված եք նաև օրինականության ուժով և համոզված, որ անհրաժեշտ է քաց լինել փաստարկների հանդեպ: Դուք ավելի հեշտորեն կկարողանաք ընդրիմանալ կամայական զիջումներ անելուն, քան նրանք՝ օբյեկտիվ չափանիշներ առաջ քաշելուն: Հրաժարվելով գնալ զիջումների, բացառությամբ առողջ փաստարկներին զիջելուց, դուք բռնում եք մի դիրք, որն ավելի դյուրիհն է պաշտպանել հասարակայնորեն և անհատապես, քան երբ հրաժարվում եք և՛ զիջել, և՛ առողջ փաստարկներ առաջ քաշել:

Ծայրահեղ դեպքում, դուք գրեթե միշտ գերիշխող կիմեք, երբ հարցը վերաբերում է գործընթացին, քանի որ, որպես կանոն, կարող եք գործընթացը դիրքային բանակցությունից վերափոխել օբյեկտիվ չափանիշների փնտրությի: Այս իմաստով սկզբունքային բանակցությունը դիրքային սակարկության նկատմամբ գերակայող ռազմավարություն է: Նա, ով պնդում է, որ բանակցությունը իհմնված լինի խնդրի էռոթյան վրա, կարող է համոզել մյուսներին ներքաշվել այդ խաղի մեջ, քանի որ դա է հանդիսանում իրենց էական շահերն առաջ քաշելու միակ ճանապարհը:

Էռոթյան հարցում, հավանաբար, նույնպես լավ վիճակում

Կլիմեք: Ակզրունքային բանակցությունը թույլ է տալիս պաշտպանել սեփական տեսակետը և միևնույն ժամանակ մնալ անաշառ հատկապես նրանց, ում, պատկերավոր ասած, կարող էր վախեցնել դիրքերի շուրջ սակարգողը: Ակզրունքը ծառայում է ճեղ որպես մի անհողորդ գործընկեր, ով թույլ չի տա, որ ընկրկեք ճնշման առջև: Սա «իրավացիությունն ուժ է տալիս» ճշնարտության ճերից մեկն է:

Եթե մյուս կողմը, բարիս թուն իմաստով տեղից չշարժվի և համոզիչ փաստարկներով չիմնավորի իր դիրքը, ապա բանակցության հետագա ընթացքը դատապարտված է: Այս պարագայում դուք ունեք ճիշտ այնպիսի ընտրություն, ինչպիսին կարող եք ունենալ որևէ խանություն, որտեղ ապրանքի գինը, որ դուք կցանկանայիք գնել, նախապես սահմանված է և ենթակա չէ բանակցման: Դուք կարող եք գնել այն կամ հրաժարվել: Մինչ հրաժարվելը, սակայն, անհրաժեշտ է, որ ևս մեկ անգամ խորհեք, թե արդյոք ճեր աշքից չի վրիպել այն օրյեկտիվ չափորոշիչն, որն արդարացնում է նրանց առաջարկը: Եթե կգտնեք նման չափորոշիչ, և եթե այդ հիմքի վրա համաձայնության կայացումը ճեղ համար ավելի նախընտրելի է, քան ընդհանրապես որևէ համաձայնության չհանգելը, ապա այդպես էլ վարվեք: Համապատասխան չափորոշիչի առկայությունը թույլ է տալիս խույս տալ կամայական դիրքի առջև ընկրկելու հետ կապված ծախքերից:

Եթե նրանց դիրքը չի ենթադրում ոչ մի գիշում, դուք էլ ճեր հերթին որևէ սկզբունքային հիմք չեք գտնում դրա հետ համաձայնվելու համար, ապա ճեղ անհրաժեշտ է գնահատել այն, թե ինչ օգուտ կարող էք քաղել, առաջին հերթին՝ համաձայնվելով նրանց չարդարացված դիրքի հետ, հետո միայն՝ դիմելով ճեր լավագույն այլընտրանքին: Դուք պետք է կշռեք այդ իրական օգուտը հանդեպ այն օգտի, որ ճեր համբավ՝ որպես սկզբունքային բանակցողի, կարող է քաղել՝ լրելով բանակցային սեղանը:

Ինչ խոսք, բանակցության ընթացքում քննարկումների

տեղափոխումը «ի՞նչ է կամենում մյուս կողմն անել» հարցից դեպի «ինչպե՞ս պետք է լուծվի խնդիրը» հարցը ոչ վերջակետ է դնում բանավեճին, ոչ էլ երաշխավորում ցանկալի արդյունքը: Սակայն, այն զինում է ձեզ մի ռազմավարությամբ, որին կարող եք անվերապահորեն հետևել և խույս տալ այնպիսի մեծ ծախքերից, ինչպիսիք պարունակում են դիրքային սակարկությունները:

§Հ³ ԱՅԻ»•հածԱ՛Կ՝ ա՞ն¹»•հ³Ի ն³Օ³ն³Ի³ Ա՛ՍԱ՛Կ՝ ա՞ն³Ե³ Հ³ Ճ³

Եկեք դիտարկենք իրական մի դեպք, որի ընթացքում կողմերից մեկը բանեցնում է դիրքային սակարկությունների մերողը, մյուսը՝ սկզբունքային բանակցությունների:

Թոմի՝ մեր գործընկերոջ, կայանված ավտոմեքենային հարվածել էր աղքատար ավտոմեքենան և ամբողջովին ջախչախել: Մեքենան ապահովագրված էր, սակայն հատուցման ենթակա գումարի ստույգ չափը դեռևս պետք է քննարկվեր ապահովագրական գործակալի հետ:

Ապահովագրական գործակալ Թոմ

— Մենք ուսումնասիրել ենք ձեր ավտոմեքենայի վրարի դեպքը և որոշել, որ այն տեղավորվում է մեր որդեգրած քաղաքականության շրջանակներում: Դա նշանակում է, որ դուք իրավունք ունեք պահանջելու 6600 դոլարի հատուցում:

— Դասկանում եմ: Իսկ ինչպե՞ս ստացաք այդ թիվը:

— Սա ճիշտ այնքան է, որքան, ըստ մեզ, մեքենան կարող էր արժենալ:

-
- Հասկանում եմ, սակայն, ի՞նչ չափորոշիչի օգնությամբ որոշեցիք այդ գինը: Կարո՞ղ եք հուշել, արդյոք որտեղից կարող եմ գնել համանման ավտոմեքենա այդ գնով:
- Իսկ որքա՞ն եք դուք պահանջում:
- Թիշտ այնքան, որքան ապահովագրության վկայագիրն իրավունք է տալիս ստանալ: Ես գտել եմ համանման նի բանեցված ավտոմեքենա 7700 դրամով: Եթե դրան ավելացնենք նաև հարկը վաճառքից և ակցիզային հարկը, ապա կստացվի մոտավորապես 8000 դրամ:
- Ութ հազար դոլար: Դա չափազանց շատ է:
- Ես ոչ թե ութ կամ վեց կամ տասը հազար դոլար եմ խնդրում, այլ արդարացի փոխհատուցում: Համաձայն չեք արդյո՞ք, որ միակ անաշխառ լուծումը կլինի այն, որ ես ստանամ բավականաչափ գումար, որ կարողանամ գնել համանման մեկ այլ մեքենան:
- Լավ: Ես կառաջարկեմ ծեզ 7000 դոլար: Դա առավելագույն է, որին կարող եմ դիմել: Այսպիսին է ընկերության որդեգրած քաղաքականությունը:
- Լսե՞ք, 7000 դոլարն այն առավելագույնն է, որ կարող եք ստանալ: Ուզում եք, համաձայն-վեք, ուզում եք՝ ոչ:
- Իսկ ինչպե՞ս է ընկերությունը հաշվարկում այդ:

– Զգիտեմ, գուցե 7000-ն արդարացված է: Ես խկապես ընթառումով եմ մոտենում ձեր դիրքորոշմանը, քանի որ դուք սահմանափակված եք ընկերության քաղաքականությամբ: Սակայն, եթե դուք չեք կարող օբյեկտիվորեն հիմնավորել, թե ինչու է ինձ հասանելիք հատուցման չափը սահմանափակվում հատկապես այդ գումարով, ուրեմն, կարծում եմ, ճիշտ կլինի, որ դիմեն դատարան: Ինչո՞ւ չփորձենք ևս մեկ անգամ պարզաբանել հանգամանքները, այնուհետև՝ կրկին խոսել: Չորեքշաբթի ժամը 12-ը հարմա՞ր է ձեզ համար:

– Այսպես, պարո՞ն Գրիֆիտ, այսօրվա թերթում ես մի հայտարարություն եմ գտել, որում 1989 թվականի արտադրության Օպելն առաջարկվում է 6800 դոլարով:



– 49 հազար կմ: Իսկ ինչո՞ւ եք հետաքրքրում:

– Թույլ տվեք ճշտեմ... 450 դոլարով:

– Պարզ է: Իսկ որքա՞ն է կազմում նրա վազքը:

– Հետաքրքրում եմ, քանի որ իմ մեքենայի վազքն ընդամենը 25 հազար կիլոմետր էր: Որքանո՞վ կավելանա գինն այս դեպքում համաձայն ձեր մատյանների:

-
- Ընդունենք 6800 դոլարը որպես հնարավոր մեկնարկային գին:
 - Հետևաբար, ավելացնելով 450-ը, կստանանք 7250: Իսկ հայտարարության մեջ չի խոսվում արդյո՞ք ռադիոյի մասին:
 - Ոչ:
 - Ուրեմն, որքա՞ն պետք է հավելել դրա համար՝ ըստ ձեր մատյանի:
 - 125 դոլար:
 - Օդորակիչ սարքի համար որքա՞ն...
-

Կես ժամ հետո Թոմը դուրս եկավ 8024 դոլարի կտրոնով:

III - $\hat{U}^2 \hat{A}, \hat{e}^2 \hat{I}^2 \hat{U} \ddot{U} \dots$

6. $\mathcal{AE}\tilde{Y}^3\tilde{I}^3\tilde{U}^3\tilde{O}$, $\mathcal{A}\tilde{Y}^3\tilde{I}^3\tilde{U}^3\tilde{O}\tilde{C}\tilde{A}\tilde{O}\tilde{Y}$
 $(\mathcal{O}\beta^3\tilde{I}^3\tilde{U}^3\tilde{O})\tilde{D}\tilde{E}^2 - \tilde{Y}^a\mu^3\tilde{Y}^3\tilde{I}^3\tilde{U}^3\tilde{C}\tilde{Y}^3\tilde{U}^3\tilde{O}^3\tilde{U}^3\tilde{Y}^3\tilde{A}\tilde{U}^3\tilde{Y}^3\tilde{E}^3\tilde{I}^3\tilde{A}\tilde{O}\tilde{U}^3\tilde{Y}^3\tilde{U}^3\tilde{E}\tilde{A}\tilde{Y}^3\tilde{I}^3\tilde{U}^3\tilde{A})$
7. $\mathcal{AE}\tilde{Y}^3\tilde{I}^3\tilde{U}^3\tilde{O}$, $\mathcal{A}\tilde{Y}^3\tilde{I}^3\tilde{U}^3\tilde{O}\tilde{C}\tilde{Y}^3\tilde{I}^3\tilde{U}^3\tilde{E}\tilde{O}\tilde{Y}$
 $(\tilde{U}^3\tilde{E}^3\tilde{A}\tilde{N}\tilde{I}^3\tilde{U}^3\tilde{O}^3\tilde{U}^3\tilde{C}\tilde{Y}^3\tilde{I}^3\tilde{O}\tilde{C}\tilde{O}\tilde{A}\tilde{O})$

6 *Æ Ý á å»±ë í³ ñ í»É, »Ñ» Ý ñ³ Ý ù ³í»É Ç á ð Å»Ó »Ý*

(Մշակեք ձեր ԲՅԼԱ -մ` բանակցային
համաձայնության լավագույն այլընտրանքը)

Ո՞րն է շահերի, տարբերակների և չափորոշիչների մասին խոսելու իմաստը, եթե մյուս կողմի սակարկային դիրքն ավելի ուժեղ է: Ի՞նչպես վարվել, եթք մյուս կողմն ավելի հարուստ է կամ ունի ավելի մեծ կապեր, եթե նրանց կազմն ավելի մեծ է կամ պայքարի միջոցներն ավելի զորեղ են:

Ոչ մի մերոդ չի կարող հաջողություն երաշխավորել, եթե բոլոր լծակներին տիրապետում է մյուս կողմը: Այգեգործությանը նվիրված և ոչ մի գիրք չի կարող սովորեցնել ձեզ շուշաններ աճեցնել անապատում կամ կակտուս՝ ճահճում: Եթե դուք այցելում եք հնասոճ իրերի խանուր՝ գնելու Գեորգ 4-րդի ժամանակաշրջանի թեյի արծաթյա սպասք, որն արժե հազարավոր դոլարներ, իսկ ձեր ունեցած ողջ գումարը կազմում է ընդամենը հարյուր դոլար, ապա չպետք է ակնկալեք, որ հմտութանակցության արդյունքում կկարողանաք ծածկել այդ տարբերությունը: Ցանկացած բանակցությունում կան իրողություններ, որոնք փոփոխելը չափազանց դժվար է: Առավելագույնը, որ բանակցային այս կամ այն մերոդը կարող է հակադրել ուժին, հետևյալ երկու խնդիրների իրազործումն է. Այսին՝ պաշտպանել ձեզ այնպիսի համաձայնություններ կայացնելուց, որոնք դուք պետք է որ մերժեիք, երկրորդ՝

աջակցել ձեզ առավելագույնս օգտագործելու ունեցած հնարավորությունները. այնպես, որ կայացված որևէ համաձայնություն հնարավորինս բավարարի ձեր շահերը: Դիտարկենք այս խնդիրները հերթականությամբ:

ԱԵՎՆՅՅԱՅՑԱՅԱԾԱԾՅ

Եթե վերջին պահին փորձում եք հասնել օդանավակայան չվերթը բաց չքողնելու համար, ամենայն հավանականությամբ, այս նպատակը ձեզ չափազանց կարևոր է թվում: Մինչդեռ, հետադարձ հայացք գցելով, հասկանում եք, որ կարող էք թռչել նաև հաջորդ չվերթով: Բանակցությունները ձեզ հաճախ կպարզեն նման իրավիճակներ: Օրինակ, դուք կանհանգստանաք, որ կարևոր գործարքներից մեկի շորջ, որի մեջ մեծ ներդրում եք ունեցել, համաձայնություն չի կայացվում: Նման պայմաններում հիմնական վտանգը նրանում է, որ գործը համաձայնությամբ ավարտելու նպատակից դրդված՝ չափազանց հարմարվողական եք դառնում մյուս կողմի տեսակետների հանդեպ: Գայթակղիչ երգչուհու քաղցրահունչ երգը՝ «Եկեք բոլորս համաձայնվենք և վերջ տանք այս ամենին», համոզիչ է դառնում: Արդյունքում հնարավոր է կնքեք մի գործարք, որը պետք է որ մերժեիք:

Հնարավորի սահմանն օգտագործելու ծախքերը: Բանակցողները սովորաբար փորձում են ապահովագրել իրենց նման արդյունքից՝ նախապես սահմանելով իրենց համար ծայրահեղ դեպքում ընդունելի տարրերակը՝ իրենց «հնարավորի սահմանը»: Գնումներ կատարելիս հնարավորի սահմանն այն առավելագույն գինն է, որ կցանկանայիք վճարել: Վաճառելիս հնարավորի սահմանն այն նվազագույն գինն է, որ կհամաձայնվեիր ընդունել: Դուք և ձեր ամուսինը կարող եք, օրինակ, ձեր տան համար պահանջել 200 հազար դրլար և պայմանավորվել, որ մերժելու եք 160 հազար դրլարից ցածր առաջարկները:

Ծատ դյուրին է դառնում դիմադրել ճնշումներին և պահի

գայրակղությանը, երբ հստակեցված է հնարավորի սահմանը: Ներկայացված օրինակում հնարավոր է, որ գնորդը չի կարող վճարել ավելին, քան 144 հազար դոլար: Հնարավոր է նաև, որ գործարքում ներգրավված բոլոր անձիք գիտեն, որ դուք անցած տարի այս տունը գնել եք ընդամենը 135 հազար դոլարով: Այս իրավիճակում, որտեղ դուք օժտված եք համաձայնություն կայացնելու կարողությամբ, իսկ գնորդը՝ ոչ, անշարժ գույքի գործակալը կամ ներկաներից էլի ինչ-որ մեկը հավանաբար ճնշում կգործադրի ձեզ վրա: Եվ, հավանաբար, միայն նախապես որոշած հնարավորի սահմանը կպաշտպանի ձեզ այնպիսի որոշում կայացնելուց, որի համար հետագայում, հավանաբար, գոջայիք:

Եթե ձեր կողմից բանակցությանը մասնակցում են մեկից ավելի անձիք, նրանց հետ հնարավորի սահմանի համատեղ որոշումը վստահություն կներշնչի ձեզ առ այն, որ ոչ չի ակնարկի մյուս կողմին, թե դուք, հավանաբար, կհամաձայնվեիք նաև պակաս գումարի առաջարկի դեպքում: Այդ կերպ դուք սահմանափակում եք իրավաբանի, անշարժ գույքի գործակալի կամ այլ գործակալների իրավասությունները: «Վաճառեք բարձր գնով, եթե կարող եք, սակայն ես ձեզ չեմ տալիս տունը 160 հազար դոլարից պակաս գնով վաճառելու իրավունք», կարող եք ասել դուք: Հրատարակիչների ընկերակցության հետ բանակցելիս լրազրերի խմբագրությունների արհմիությունների անկախ կոալիցիան հնարավորի սահմանի շուրջ համաձայնություն կայացնելով՝ նվազեցնում է վտանգն առ այն, որ արհմիություններից որևէ մեկը կրի կոալիցիան՝ ընդունելով մյուս կողմի առաջարկը:

Սակայն պաշտպանվածությունը, որ ձեռք է բերվում հնարավորի սահմանը որոշելով, նաև մեծ ծախքեր է պարունակում: Հնարավորի սահմանը սահմանափակում է ձեր ունակությունն օգտվելու այն ամենից, ինչ ստվորում եք բանակցության լնարացքում: Ըստ սահմանման՝ հնարավորի սահմանը մի դիրք է, որը չի կարող փոփոխվել: Դուք ամուր

փակում եք ձեր ականջները՝ կանխավ որոշած լինելով, որ ինչ էլ որ ասի մյուս կողմը, միևնույն է, չի կարող ստիպել ձեզ բարձրացնել կամ իջեցնել հնարավորի սահմանը:

Հնարավորի սահմանը զսպում է նաև երևակայությունը: Այն զսպում է յուրահատով լուծումներ նորամուծելու խթանը. լուծումներ, որոնք հնարավորություն կրնածեռեին առավելագույն բարենպաստ եղանակով համաձայնեցնել կողմերի տարածետ շահերը: Գրեթե բոլոր բանակցությունները պարունակում են ավելի քան մեկ փոփոխական: Տունը պարզապես 160 հազար դոլարով վաճառելու փոխարեն, կարող եք ավելի մեծ ծառայություն մատուցել ձեր իսկ շահերին՝ համաձայնվելով 135 հազար դոլար առաջարկին, սակայն պայմանով, որ ձեռք կրերեք տունը հետ գնելու առաջնային իրավունք, հնարավորություն կստանաք հետաձգել տունն ազատելու ժամկետը, իրավունք կվերապահվի օգտագործել խորդանոցը տան վաճառքից հետո՝ երկու տարվա ընթացքում, կտրվի հնարավորություն հետ գնելու երկու ակր արտավայր: Մինչդեռ, եթե համառորեն պնդեք հնարավորի սահմանի վրա, գուցե և երբեք էլ չհանգեք ստեղծագործական այնպիսի մի լուծման, ինչպիսին վերը ներկայացվածն էր: Բնույթով արդեն իսկ անբեկանելի հնարավորի սահմանը գրեթե մշտապես պարտադրում է իր բնույթը՝ չափազանց խիստ դրսերմանք:

Ավելին, երբեմն հնարավորի սահմանը շատ բարձր է ամրագրվում: Դիտարկենք մի օրինակ. դիցուք, դուք ձեր ընտանիքի անդամների հետ նախաճաշի սեղանի շորջ փորձում եք որոշել, թե որն է այն նվազագույն գինը, որի դիմաց կարող եք համաձայնվել վաճառել տունը: Ընտանիքի անդամներից մեկն առաջարկում է 100 հազար դոլար: Մյուսն առարկում է.

– Նվազագույն ընդունելի գինը չպետք է պակաս լինի 140 հազար դոլարից:

Երբորդը միջամտում է խոսակցությանը.

– 140 հազար դոլար մեր տան դիմա՞ց: Դա թալան է: Տունն

արժե առնվազն 200 հազար դոլար:

Կարո՞ղ է, արդյոք, սեղանի շուրջ նստածներից որևէ մեկն առարկել, երբ բոլորն էլ գիտակցում են, որ որքան բարձր լինի գինն, այնքան ավելի մեծ կլինի օգուտը: Երբ այլևս որոշումը կայացված է, նման հնարավորի սահմանը հավանաբար դժվար կլինի փոփոխել և հնարավոր է այն թույլ չտա, որ տունը վաճառվի այն ժամանակ, երբ դա խիստ անհրաժեշտ է: Այլ պարագայում հնարավորի սահմանը կարող է ամրագրվել չափազանց ցածր. տունն այդ գնով վաճառելու փոխարեն, շատ ավելի կշահեիք, եթե վարձակալության տայիք:

Այսպիսով, եթե հնարավորի սահման ամրագրելը կարող է մի կողմից պաշտպանել ձեզ չափից ավելի անհաջող համաձայնության կայացումից, մյուս կողմից, սակայն, այն կարող է նաև հետ պահել ձեզ թե՝ ստեղծագործական լուծումներ նորամուծելուց և թե՝ այնպիսի լուծումների հետ համաձայնվելուց, որոնց ընդունումը կլիներ խոհեմ մի քայլ: Կամայական թվով չի կարող չափվել այն, ինչը դուք պետք է ընդունեք:

Կա՞, արդյոք, այլնուրանք հնարավորի սահմանին: Կա՞, արդյոք, համաձայնությունը չափելու ինչ-որ միավոր, որը կպաշտպանի ձեզ և այնպիսի համաձայնության կայացումից, որը դուք պետք է որ մերժեիք, և այնպիսի համաձայնության մերժումից, որը դուք պետք է որ ընդունեիք: Այո՛, կա:

Ճանաչեք ձեր ՔՀՀԱ-ն: Երբ ընտանիքը որոշում է կայացնում իրենց տան վաճառքի նվազագույն գնի շուրջ, հարցը, որ տեղին է տալ, այն չէ, թե որքան գումար է «նպատակահարմար» ձեռք բերել, այլ թե ինչպես վարվել, եթե տունն անհրաժեշտ ժամկետում չվաճառվի: Շարունակե՞լ վաճառքի առաջարկ ներկայացնել շուկա, թե՞ վարձակալության տալ տունը, գուցե հողատարածքը վերածել ավտոկայանատեի՞ն, թե՞ թույլ տալ, որ որևէ մեկն առանց վարձավճարի ապրի այնտեղ, պայմանով, որ կնորոգի տունը, թե՞ ինչ-որ այլ տարրերակ ընտրել: Բոլոր հանգամանքները հաշվի առնելով՝

այս այլընտրանքներից ո՞րն է առավել գրավիչ: Ինչպես համեմատել այլընտրանքներից յուրաքանչյուրը տունը վաճառելու համար ստացված լավագույն առաջարկի հետ: Հնարավոր է, որ այդ այլընտրանքներից մեկն ավելի գրավիչ լինի, քան տունը 160 հազար դրամով վաճառելը: Գուցե տունը 124 հազար դրամով վաճառելն ավելի լավ է, քան անորոշ հեռանկարով դրանից կառչելը: Մինչդեռ նվազ հավանական է, որ կամայականորեն ընտրված որևէ հնարավորի սահման իրապես արտահայտի ընտանիքի շահերը:

Բանակցելու իմաստն այն է, որ հանգեր ավելի լավ արդյունքների, քան այն, որ կարող էիր ձեռք բերել անօգան առանց բանակցելու: Որո՞նք են այդ արդյունքները: Ո՞րն է այդ այլընտրանքը: Ո՞րն է ձեր ԲՀԼԱ-ն՝ բանակցային համաձայնության լավագույն այլընտրանքը, այսինքն այն չափորոշիչը, որի նկատմամբ պետք է չափվի յուրաքանչյուր առաջարկված համաձայնություն: Դա այն միակ չափորոշիչն է, որ կարող է ինչպես պաշտպանել ձեզ այնախի պայմաններ ընդունելուց, որոնք բացարձակապես ցանկալի չեն ձեզ համար, այնպես էլ այնպիսիները մերժելուց, որոնց ընդունումը բխում է ձեր իսկ շահերից:

Ձեր ԲՀԼԱ-ն ոչ միայն ամենալավ չափման միավորն է, այլև ունի մեկ առավելություն ևս. այն բավական ճկուն է, հետևաբար, թույլ է տալիս, որ հայտնաբերվեն եւ քննարկվեն ստեղծագործական լուծումներ: Փոխանակ բացառելու առաջարկված այս կամ այն լուծումը, ելնելով միայն նրանից, որ այն չի համապատասխանում հնարավորի ձեր սահմանին, դուք կարող եք համեմատել այն ձեր ԲՀԼԱ -ի հետ պարզելու համար՝ արդյո՞ք այն ավելի լավ չի բավարարում ձեր շահերը:

Վտանգը, որ պարունակում է ԲՀԼԱ-ն չգիտակցելը: Եթե դուք խորությամբ չեք խորհել, թե ինչ եք անելու այն դեպքում, եթե համաձայնություն ձեռք չբերվի, ապա դուք բանակցում եք փակ աշքերով: Դուք, օրինակ, կարող եք չափագանց լավատես լինել և ենթադրել, որ ունեք մեծ ընտրություն. այլ տներ, որ

կարող եք վաճառել, բազմաթիվ այլ գնորդներ ձեր օգտագործված մեքենայի համար, այլ եռակցող վարպետներ, աշխատանքի այլ հնարավորություն, մեծածախ առևտրով գրադարձ այլ գործընկերներ և այլն: Եթե նույնիսկ ձեր այլընտրանքը հստակ է, հնարավոր է, որ դուք վարդագույն եք տեսնում համաձայնության չհանգելու հետևանքները: Հնարավոր է, որ դատական գործընթացների, վիճարկելի ապահարզանների, գործադրությունների, սպառազինությունների մրցավագքի կամ պատերազմների ծախքերի շուրջ ձեր գնահատականը լիարժեք չէ:

Հաճախ հանդիպող սխալներից մեկն ունի հոգեբանական ծագում: Դա այն է, երբ մարդիկ իրենց այլընտրանքները տեսնում են համակցված: Դուք կարող եք ենթադրել, որ եթե աշխատանքի վարձատրության շուրջ չհասնեք համաձայնության, ապա ցանկացած պահի կարող եք գնալ Կալիֆորնիա կամ Հարավ, շարունակել կրթությունը, գրադարձ ստեղծագործական աշխատանքով, աշխատել ֆերմայում, ապրել Փարիզում կամ գրադարձ որևէ այլ քանով: Հնարավոր է, որ ձեզ համար այլընտրանքների այս հանրագումարն ավելի գրավիչ թվա, քան կրնկրեալ աշխատավարձով ինչ-որ կրնկրեալ աշխատանք կատարելը: Բարդությունը, սակայն, նրանում է, որ դուք չեք կարող միաժամանակ ունենալ այլընտրանքների այս ողջ համբագումարը. եթե ձեզ չհաջողվի համաձայնության գալ, դուք ստիպված եք լինելու ընտրել դրանցից միայն մեկը:

Չափ դեպքերում, սակայն, առավել մեծ վտանգ է համաձայնության հասնելու մտքից չափից ավելի կառչած լինելը: Նախապես շնչակելով բանակցվող լուծման այլընտրանք՝ դուք չափազանց հորեւտեսորեն եք գնահատում այն, թե ինչ կարող է պատահել, եթե բանակցությունն տապալվի:

Որքան էլ որ կարող է արժեքավոր լինել ԲՀՀԱ-ն ճանաչելը, դուք, այնուամենայնիվ, կարող եք կրկին այլընտրանքներին անդրադառնալու երկնտանը ունենալ: Դուք հույսեր եք տածում, որ այս կամ հաջորդ գնորդը տունը գնելու գրավիչ

առաջարկ կներկայացնի: Հետևաբար, դուք կարող եք խույս տալ այն հարցից, թե ինչ եք պատրաստվում ծեռնարկել, եթե համաձայնություն չկայացվի: Դուք, հավանաբար, կմտածեք. «Եկեք նախ բանակցենք և տեսնենք, թե ինչ է ստացվում: Եթե գործը զլուխ չգա, այնժամ կմտածեմ, թե ինչ անել»: Այնուհանդերձ, եթե մտադիր եք, որ բանակցությունը խոհեմորեն ընթանա, ուրեմն անշափ կարևոր է, որ ունենաք վերջին հարցի գոնե մոտավոր պատասխանը: Բանակցության ընթացքում պետք է համաձայնվեք ինչ-որ բանի հետ, թե ոչ՝ մեծապես կախված է նրանից, թե որքանով է գրավիչ ձեզ համար հասանելի լավագրւյն այլլուտրանքը:

Ձևավորեք ազդանշանային համակարգ: Թեև ձեր ԲՀՀԱ-ն է այն ճիշտ միավորը, որով պետք է գնահատեք առաջարկված յուրաքանչյուր համաձայնություն, դուք, այնուամենայնիվ, կարող եք ևս մեկ ստուգում անցկացնելու ցանկություն ունենալ: Հնարավոր համաձայնության բովանդակության գրավչությունը վտանգված լինելու մասին վաղօրոք ազդանշան ստանալու նպատակով օգտակար կլինի, եթե առաջ քաշեք թերևս ոչ կատարյալ, սակայն ձեր ԲՀՀԱ-ից հաջող մի համաձայնության տարրերակ ևս: Սա էլ հենց կլինի ձեր ազդանշանային համակարգի փաթեթը, եւ նախքան դրանից ավելի վատ համաձայնություն կայացնելը, անհրաժեշտ է, որ ընդմիջեք բանակցությունը և վերաքննեք իրավիճակը: Ինչպես հնարավորի սահմանը, այնպես էլ ստուգման շղթան կարող է սահմանափակել գործակալի լիազորությունները: «158 հազար դոլարն այն գինն է, որ ես վճարել եմ՝ գումարած տոկոսները, հետևաբար մի համաձայնվեք վաճառել դրանից ցածր գնով, բանի դեռ չեք խորհրդակցել ինձ հետ»:

Անհրաժեշտ է, որ ազդանշանային համակարգը ձեզ պահուստային որոշ հնարավորություններ տրամադրի: Եթե դրանում արտացոլված շափորոշչին հասնելուց հետո որոշում եք միմել միջնորդի օգնությանը, դուք նրան առաջարկում եք մուտք գործել բանակցությունների գործընթաց՝ տրամադրելով

որոշ լծակներ, որ դեռևս հնարավոր է շահարկել ձեր օգտին: Հետևաբար, դուք դեռևս տեղաշարժվելու հնարավորություն ունեք:

Օ»»³ ԵՇԻ³ Յ»»³ ՅՇ³ Յ»»³ ԵՇ³ ԱՇ³ ՈՒ³ ԵՇ³ ԱՇ³ Յ»»³ ԵՇ³ Յ»»³ ԵՇ³

Անհաջող համաձայնությունից ինքներդ ձեզ պաշտպանելը մի բան է, օգտակար համաձայնություն կայացնելու համար ձեր ակտիվներից առավելագույն օգուտներ քաղեմ՝ այլ: Ինչպե՞ս հասնել դրան: Պատասխանը կրկին ԲՀԼԱ-ի մեջ է:

Որքան ավելի լավ է ձեր ԲՀԼԱ-ն, այնքան ավելի ուժեղ եք դուք: Կարծիք կա, որ բանակցային ուժը կախված է այնպիսի ռեսուրսներից, ինչպիսիք են հարստությունը, քաղաքական կապերը, ֆիզիկական ուժը, ընկերները և ռազմական հզորությունը: Մինչդեռ իրականում, կողմերի բանակցային ուժը ուղղակիորեն կախված է այն բանից, թե նրանցից յուրաքանչյուրի համար որքանով է գրավիչ ոչ մի համաձայնություն չկայացնելու տարբերակը:

Դիցուք, մի բարեկեցիկ գրոսաշրջիկ Բոնքեյի երկարուղային կայարանում ցանկանում է համեստ գնով գնել փոքրիկ արույրե մի գավաք: Հնարավոր է, որ վաճառողն աղքատ է, սակայն նա հաստատապես քաջածանոր է շուկային. Եթե նա չվաճառի գավաքն այս գրոսաշրջիկին, կարող է վաճառել այն մեկ ուրիշին: Եթ փորձից ելնելով՝ նա ի վիճակի է գնահատելու, թե երբ և որքանով կարող է վաճառել այդ իրն ուրիշ մեկին: Հնարավոր է, որ գրոսաշրջիկը հարուստ է և «ուժեղ», սակայն տվյալ դեպքում նա իրականում բույլ կլինի, քանի դեռ չգիտի, թե մոտավորապես որքան կարող է արժենալ գավաքը և հնարավոր է, արդյոք, գտնել համանման մեկ այլ գավաք այլ վայրում: Նրա համար գրեթե անվիճելի է, որ կամ կորցնելու է համանման մի գավաք գնելու հնարավորությունը կամ վճարելու է չափազանց բարձր մի գին: Զբոսաշրջիկի բարեկեցությունը ոչ մի կերպ չի ավելացնում նրա բանակցային ուժը:

Ընդհակառակը, դա ակնհայտորեն թուլացնում է գավաքը ցածր զնով զնելու նրա հնարավորությունը: Հարստությունը բանակցային ուժի փոխակերպելու համար զբոսաշրջիկն ստիպված է օգտագործել այն՝ պարզելու, թե ինչ զնով կարող է զնել համանման կամ գուցե առավել գրավիչ մի գավաք մեկ այլ վայրում:

Պատկերացրեք մի պահ, թե ինչպիսին կլիներ ձեր ինքնազգացողությունը աշխատանքի ընդունվելու նպատակով հարցազրույցի մասնակցելիս, երբ չունեք աշխատանքի այլ առաջարկ, բացի մի քանի անորոշ ակնարկներից: Մտածեք, թե ինչպիսի ընթացք կունենա զրոյցն աշխատավարձի շուրջ: Այժմ համեմատեք այս իրավիճակը մեկ այլնի հետ, երբ հարցազրույցի եք զնում՝ ձեռքի տակ ունենալով աշխատանքի ևս երկու առաջարկ: Ինչպե՞ս կընթանան բանակցություններն աշխատավարձի շուրջ: Տարբերությունն էլ հենց ուժն է:

Այն, ինչ ճշմարիտ է ֆիզիկական անձանց միջև բանակցությունների համար, հավասարապես ճշմարիտ է նաև կազմակերպությունների միջև բանակցությունների համար: Արդյունաբերական հզոր ձեռնարկության և այդ ձեռնարկության հարկերը բարձրացնել փորձող փոքր քաղաքի բանակցային ուժերը պայմանավորված չեն համապատասխան բյուջեների ծավալով, կամ ունեցած քաղաքական ազդեցությամբ, այլ պայմանավորված են յուրաքանչյուր կողմի լավագույն այլընտրանքով: Այսպիսի մի դեպք գրանցվեց, երբ փոքր քաղաքի իշխանությունները, բանակցելով մի ընկերության հետ, որի գործարանը գտնվում էր քաղաքից դուրս՝ անմիջապես սահմանագծի հարևանությամբ, կարողացան «գուղվիլի» հարկը տարեկան 300 հազար դոլարից դարձնել 2 մլն 300 հազար դոլար: Ինչպե՞ս դա հաջողվեց:

Քաղաքային իշխանությունները հստակորեն գիտակցում էին, թե ինչ կարող էին ձեռնարկել, եթե համաձայնությունը չկայացվեր: Նրանք կընդարձակեին քաղաքի սահմանները, դրանց մեջ կներառեին նաև գործարանը և, որպես ոեզիդենտ՝

դրա նկատմամբ կկիրառեին համապատասխան հարկն իր ողջ դրույքաչափով՝ տարեկան 2 մլն 500 հազար դրլար: Ընկերության նպատակը գործարանը պահպանելն էր. նա համաձայնության և ոչ մի այլընտրանք չէր մշակել: Առաջին հայացքից թվում էր, թե ընկերությունը մեծ ուժի է տիրապետում: Այն բազմաթիվ աշխատատեղեր էր ապահովում տնտեսական դժվարին կացության մեջ գտնվող քաղաքի համար, ինչը նշանակում էր, որ գործարանի փակումը կամ տեղափոխումը կամայացներ քաղաքը: Միևնույն ժամանակ, ընկերության վճարած հարկերի շնորհիվ էր, որ ֆինանսավորվում էին քաղաքային իշխանության դեկավարների աշխատավարձերը, ովքեր էլ հենց ավելին էին պահանջում: Սակայն բոլոր այս ակտիվները, քանի որ չէին փոխակերպվել գրավիչ ԲՀՀԱ-ի, գրեթե օգտակար չեղան: Մինչդեռ գրավիչ ԲՀՀԱ ունեցող փոքր քաղաքը բանակցության արդյունքին ներգործելու ավելի մեծ կարողություն ունեցավ, քան աշխարհի ամենամեծ ընկերություններից մեկը:

Մշակեք ձեր ԲՀՀԱ-ն: Ձեր բազկին կարող է մեծ ուժ հաղորդել հարցի խորն ուսումնասիրությունը՝ ինչպես վարվել, եթե համաձայնություն չկայացվի: Գրավիչ այլընտրանքներն երբեք պատրաստ վիճակում ձեզ չեն մատուցվելու, սովորաբար ստիպված եք լինելու ինքնուրույն մշակել դրանք: Հնարավոր ԲՀՀԱ-ների մշակումը պահանջում է հետևյալ երեք հստակ գործողությունների իրականացում.

1. համաձայնություն չկայացվելու դեպքում ձեռնարկվելիք հնարավոր գործողությունների ցանկի նորամուծում,
2. առավել խոստումնալից զաղափարների բարելավում և դրանց փոխակերպում գործուն այլընտրանքների,
3. լավագույն համարվող այլընտրանքի փորձնական ընտրություն:

Գործողություններից առաջինը նորամուծումն է: Ի՞նչ կարող եք ձեռնարկել, եթե, ասենք, մինչև ամսվա վերջը Ա ընկե-

բության կողմից չստանաք համապատասխան աշխատանքի առաջարկ: Կարո՞ղ եք, արդյոք, աշխատանքի անցնել Բ ընկերությունում, կամ աշխատանք փնտրել այլ քաղաքում: Կարո՞ղ եք, արդյոք, սեփական գործ ձեռնարկել կամ գուցե ինչ-որ այլ մի բան: Արհմիության համար բանակցային համաձայնության այլնտրանքը հավանաբար կներառեր. գործադրովի հայտարարումը, առանց պայմանագրի աշխատելը, գործադրով սկսելու մասին 60-օրյա նախազգուշական ժամկետի հայտարարումը, միջնորդ ներգրավելու պահանջը և միության անդամներին ուղղված կոչը՝ խստորեն հետևելու աշխատանքային պայմանագրի բոլոր դրույթներին:

Երկրորդ փուլը ձեր լավագույն գաղափարների բարեկավումն է և դրանցից ամենախոստումնալիցի փոխակերպումն իրական այլնտրանքի: Եթե դուք մտադիր եք աշխատել Զիկագոյում, փորձեք ցանկությունը վերածել այնտեղից ստացված գոնե մեկ գործնական առաջարկի: Եթե ձեռքի տակ ունենք Զիկագոյից ստացված աշխատանքի առաջարկ (կամ եթե նույնիսկ պարզել եք, որ այնտեղ աշխատանք գտնելու ակնկալիք չունեք), դուք ավելի լավ նախապատրաստված կլինենք զնահատելու Նյու Յորքից ստացված առաջարկի արժանիքները: Այն ընթացքում, քանի դեռ արհմիությունը բանակցում է, նա պետք է միջնորդի դիմելու և գործադրով հայտարարելու գաղափարները վերածի իրազործման պատրաստ որոշումների նախագծերի: Արհմիությունը, հիմնախնդրի կարգավորման շուրջ բանակցություններին զուգահեռ, կարող է, օրինակ, խնդրի կարգավորման համար սահմանված ժամկետն անարդյունք ավարտվելու դեպքում գործադրով հայտարարելու լիազորություն ստանալու նպատակով քվեարկություն անցկացնել անդամների շրջանում:

ԲՀԼԱ-ն մշակելու վերջին քայլն այլնտրանքներից լավագույնի ընտրությունն է: Եթե բանակցության ընթացքում համաձայնության չեք հանգում, ապա ձեր իրատեսական այլնտրանքներից ո՞րն եք այժմ նախատեսում իրազործել:

Վերոհիշյալ կետերի շուրջ ջանքեր բափելով՝ այժմ դուք ունեք ԲՀՀԱ: Համեմատեք ներկայացված առաջարկներից յուրաքանչյուրը ձեր ԲՀՀԱ-ի հետ: Որքան ավելի լավն է ձեր ԲՀՀԱ-ն, այնքան ավելի մեծ է որևէ բանակցային համաձայնության պայմանները բարեկավելու ձեր կարողությունը: Բանակցային գործընթացում ձեզ լրացուցիչ վստահություն կներշնչի այն բանի գիտակցումը, թե ինչ եք պատրաստվում անել, եթե բանակցությունը չհանգեցնի համաձայնության: Շատ ավելի դյուրին է խզել բանակցությունն այն դեպքում, եթե գիտեք, թե որ եք գնում: Որքան ավելի մեծ է բանակցությունները խզելու ձեր կամքը, այնքան ավելի համոզիչ կերպով կարող եք ներկայացնել ձեր շահերը և այն հիմքը, որի վրա, ըստ ձեզ, պետք է կայացվի համաձայնությունը:

Ձեր ԲՀՀԱ-ն մյուս կողմին հայտնի դարձնելու նպատակահարմարությունը կախված է նրանից, թե, ըստ ձեզ, ինչ կարծիքի է դրա մասին մյուս կողմը: Եթե ձեր ԲՀՀԱ-ն շափազանց գայթակողիչ է, օրինակ՝ հարևան սենյակում սպասող մեկ այլ հաճախորդ ունեք, դուք շահագրգորված պետք է լինեք, որ մյուս կողմն իմանա այդ մասին: Եթե նրանց թվում է, թե չունեք լավ այլնտրանք, եթե իրականում դա այդպես չէ, ապա գրեք միշտ դուք պետք է տեղեկացնեք նրանց այդ մասին: Սինչդեռ, եթե ձեր բանակցային համաձայնության լավագույն այլնտրանքը ձեր տեսանկյունից ավելի փատն է, քան նրանք են կարծում, ապա դրա բացահայտումն ավելի շուտ կրուլացնի, քան թե կուժեղացնի ձեզ:

Հաշվի նաև մյուս կողմի ԲՀՀԱ-ի հետ: Ձեզ անհրաժեշտ է խորհել նաև մյուս կողմի հավանական բանակցային համաձայնության այլնտրանքների շուրջ: Նրանք հնարավոր է անիրավացիորեն լավատես են առ այն, թե ինչ կարող են ձեռնարկել, եթե համաձայնություն չկայացվի: Գուցե նրանք թյուր կարծիք ունեն, որ տիրապետում են բազմաթիվ այլնտրանքների և գտնվում են իրենց կուտակային հանրագումարի ազդեցության ներքո:

Որքան ավելի շատ քան կարողանաք իմանալ նրանց այլընտրանքների մասին, այնքան ավելի պատրաստված կլինեք բանակցությանը: Գիտենալով նրանց այլընտրանքները՝ դուք կարող եք իրատեսական գնահատական տալ բանակցություններից ծեր ակնկալիքներին: Եթե, ըստ ձեզ, նրանք գերազնահատում են իրենց ԲՀԼԱ-ն, ապա ձեզ անհրաժեշտ է նվազեցնել նրանց սպասումները:

Նրանց համար իրենց ԲՀԼԱ-ն հնարավոր է, որ շատ ավելի լավը լինի, քան ծեր պատկերացրած անաշառ լուծումներից որևէ մեկը: Դիցուք, դուք ներկայացնում եք համայնքի մի խումք բնակիչների, որոնք անհանգստացած են կառուցվող էլեկտրակայանից վնասակար գազերի հնարավոր արտանետման հեռանկարով: Էներգետիկ ընկերությունն ունի հետևյալ ԲՀԼԱ-ները. կամ լիովին արհանարիել բողոքները կամ թույլ տալ, որ ապարդյուն բողոքները շարունակվեն՝ մինչև կայանը կկառուցվի: Զեր մտահոգությունների նկատմամբ նրանց կողմից ավելի լուրջ վերաբերմունք ապահովելու նպատակով դուք, հնարավոր է, ստիպված լինեք կայան կառուցելու թույլտվությունը անվավեր ճանաչելու հայցով դիմել դատարան: Այլ կերպ ասած, եթե նրանց ԲՀԼԱ-ն այնքան լավն է, որ նրանք չեն զգում հիմնախնդրի էության շուրջ բանակցելու կարիք, խորհեք, թե ինչ կարող եք անել, որպեսզի փոփոխեք այս:

Եթե երկու կողմերն էլ ունեն գրավիչ ԲՀԼԱ-ներ, ապա նրանց երկուսի համար էլ բանակցության լավագույն ելքը, հավանաբար, ոչ մի համաձայնություն չկայացնելու է: Նման դեպքերում հաջողված բանակցությունն այն է, որի ընթացքում կողմերը բարիդրացիականորեն և արդյունավետորեն բացահայտում են, որ իրենց համապատասխան շահերն առաջ մղելու լավագույն ուղին անհրաժեշտ է փնտրել այլուր և չարժե շարունակել համաձայնության հասնելու փորձը:

“Ի՞մ ԱՌԱՋԵ ԻԱՕՒՅ ԱՃԱ»Ծ

Եթե մյուս կողմն ունի հզոր հրանորդներ, դուք, իհարկե, չեք ցանկանա բանակցությունը վերածել հրետանային փոխ-հրածգության: Որքան ավելի ուժեղ են թվում նրանք ֆի-զիկական և տնտեսական ուժի տեսանկյունից, այնքան ավելի կշահեք դուք՝ էության շուրջ բանակցելով: Այնքանով, որ-քանով նրանք ունեն մկաններ, իսկ դուք՝ սկզբունքներ, դուք ավելի բարենպաստ իրավիճակում կհայտնվեք այն դեպքում, եթե կարողանաք ավելի մեծ դեր ապահովել ձեր սկզբունքների համար:

Լավ ԲՀՀԱ ունենալը կարող է օգտակար լինել ձեզ էության շուրջ բանակցելիս: Զարգացնելով և բարելավելով ձեր ԲՀՀԱ-ն՝ դուք կարող եք փոխակերպել ձեր ունեցած ռեսուրս-ներն արդյունավետ բանակցային ուժի: Օգտագործեք ձեր զի-տելիքները, ժամանակը, դրամը, մարդկանց, կապերն ու զա-դափարները ձեզ համար լավագույն, մյուս կողմի համաձայ-նությունից կախում չունեցող որոշում կայացնելու նպատակով: Որքան ավելի կարող լինեք առանց երկմտելու և հաջողված կերպով լրել բանակցությունը, այնքան ավելի մեծ է դրա արդյունքին ներգործելու ձեր հնարավորությունը:

Այսպիսով, ԲՀՀԱ մշակելը ոչ միայն հնարավորություն է ընձեռում որոշելու, թե որն է նվազագույն ընդունելի համաձայ-նությունը, այլ հավանաբար նաև բարձրացնում է այդ նվազա-գույնի սահմանագիծը: Այսպիսով, ենթադրաբար առավել ու-ժեղ բանակցողի հետ գործ ունենալիս ամենաարդյունավետ ուազմավարությունը, թերևս, ԲՀՀԱ մշակելն է:

7 Æ Ŷ á å » ± ë í³ ñ í » É,
» Á » Ŷ ñ³ Ŷ ù á » Ŷ
ó³ Ŷ ï³ Ŷ á ð Ù
Ù³ ë Ŷ³ ï ó » É
Ë³ ð Ç Ŷ

(Օգտագործեք բանակցային ջութիցու¹)

Չի բացառվում, որ շահերի, տարբերակների և չափությունների քննարկումն իրենից խոհեմ, արդյունավետ և բարիդրացիական մի խաղ է ներկայացնում, սակայն ինչպես վարվել, եթե մյուս կողմը չի ցանկանում մասնակցել այդ խաղին: Սինչ դուք փորձում եք քննարկել շահերը, նրանք կարող են իրենց դիրքերի շուրջ աներկրա հայտարարություններ անել: Դուք գուցե մտահոգված եք կողմերի շահերն առավելագույնի հասցնող հնարավոր համաձայնություններ մշակելու խնդրով, մինչդեռ նրանք գրոհում են ձեր առաջարկները՝ մտահոգված բացառապես սեփական շահն առավելագույնի հասցնելու խնդրով: Հնարավոր է, որ դուք գրոհում եք խնդիրը՝ ըստ էության, իսկ նրանք գրոհում են ձեզ: Ի՞նչ կարող եք անել որպեսզի նրանց ուշադրությունը շեղեք դիրքերից հիմնախնդրի էության վրա:

Գոյություն ունեն երեք հիմնական մոտեցումներ: Առա-

¹ ճապոնական մարտաժան, որից առաջացել է ձյուդր մարզաձևը (**զու**-մեղմություն, բուլություն, **ջիցու**-արվեստ, հմտություն) (քարգ.)

զինը կենտրոնանում է այն հարցի վրա, թե ինչ կարող եք անել դուք: Նախ, դուք ինքներդ կարող եք կենտրոնանալ էության վրա, ոչ թե դիրքերի: Այս մեթոդը, որը սույն գրքի բուն առարկան է, վարակիչ ազդեցություն ունի. այն հաջողության հասնելու հեռանկար է խոստանում նրանց, ովքեր պատրաստ են խոսել շահերի, տարբերակների, կամ չափանիշների մասին: Ըստ էության, դուք հեշտորեն կարող եք փոխել խաղը՝ սկսելով նորը:

Եթե այս մեթոդը չի աշխատում, և նրանք շարունակում են վարել դիրքային սակարկություններ, դուք կարող եք դիմել երկրորդ ռազմավարությանը, որը կենտրոնանում է այն բանի վրա, թե ինչ կարող են անել ճրանք: Սա հակադրվում է դիրքային սակարկության հիմնական քայլերին այնպիսի եղանակներով, որոնք ուղղում են նրանց ուշադրությունը դեպի հիմնախնդրի էությունը: Այս ռազմավարությունը մենք անվանում ենք *բանակցային ջուջիցու:*

Երրորդ մոտեցումը կենտրոնանում է նրա վրա, թե ինչ կարող է անել երրորդ կողմը: Եթե ոչ սկզբունքային բանակցությունը, ոչ էլ բանակցային ջուջիցուն ի զորու չեն ներառելու նրանց խաղի մեջ, որեմն քննարկեք այնպիսի մի երրորդ կողմ ներգրավելու հնարավորությունը, որը մասնագիտացված է քննարկումները շահերի, տարբերակների և չափանիշների ուղղությամբ վարելու հարցերում: Հավանաբար այս դեպքում ամենաարդյունավետ գործիքը, որ երրորդ կողմը կարող է գործածել, մեկ տերստի միջնորդային գործընթացն է:

Առաջին մոտեցումը, որը հենց սկզբունքային բանակցությունն է, արդեն քննարկվել է նախորդ գլուխներում: Սույն գլխում լուսաբանվում են բանակցային ջուջիցուն և մեկ տերստի գործընթացը: Դլուխն ավատվում է մի երկխոսությամբ, որը հիմնվում է տան սեփականատիրոջ և կենվորի միջև իրականում տեղի ունեցած բանակցությունների վրա, և որտեղ մանրամասնորեն նկարագրվում է, թե ինչպես կարող եք, կիրառելով սկզբունքային բանակցության և բանակցային

Չուզիցուի համակցությունը, համոզել խաղալու ցանկություն չունեցող կողմին՝ ներգրավել խաղի մեջ:

ՀՅԻՇՅՈՒՅ քածԾօած

Երբ մյուս կողմը բացահայտորեն կոշտ դիրք է բռնում, դուք, հնարավոր է, կու տաք խայծը և սկսեք քննադատել ու մերժել այն: Երբ նրանք քննադատում են ձեր առաջարկը, դուք, հնարավոր է, տեղի տաք գայթակղությանը՝ սկսելով պաշտպանել այն և ամբողջովին ներքաշվեք դրա մեջ: Երբ նրանք գրոհում են ձեզ, դուք, հավանաբար, չեք զայի պաշտպանվելու և հակահարձակ լինելու ձեր ցանկությունը: Կարծ ասած, եթե նրանք ուժգին հրեն ձեզ, դուք կջանաք նույն ուժով հետ հրել նրանց:

Սակայն, եթե դուք վարվեք այդ կերպ, ապա դրա վերջը «դիրքային սակարկություն» կոչվող խաղի մեջ հայտնվելն է: Նրանց դիրքի մերժումը միայն ներփակում է նրանց: Ձեր առաջարկը պաշտպանելը միայն ներփակում է ձեզ: Միևնույն ժամանակ, ինքնապաշտպանությունը շեղում է բանակցությունը՝ տանելով այն դեպի անձնական ընդհարում: Որպես հետևանք՝ դուք կհայտնաբերեք ձեզ գրոհի և պաշտպանության արատավոր շրջանում և շատ ժամանակ ու էներգիա կվատնեք աճօգուտ հրմշտոցի մեջ:

Եթե հետ հրելը չի օգնում, ապա ինչպե՞ս վարվել: Ինչպե՞ս կարող եք կանխել ազդեցություն-հակազդեցություն շրջապտույտի առաջացումը: Հետ մի՛ հրեք: Երբ նրանք պնդում են իրենց դիրքերի վրա, մի՛ մերժեք դրանք: Երբ նրանք գրոհում են ձեր գաղափարները, մի՛ պաշտպանեք դրանք: Երբ նրանք գրոհում են ձեզ, մի՛ անցեք հակագրոհի: Խզե՛ք արատավոր շրջանը՝ մերժելով հակագրումը: Հետ հրելու վոխարեն խոյս տվեք նրանց գրոհից և շեղեք այն դեպի իիմնախնդիրը: Ինչպես ընդունված է արևելյան ձյուլո և ջուզիցու մարտաձևերում, խոյսափեք նրանց ուժի հանդեպ ուղղակիորեն ուժ հակադրելուց: Փոխարենը՝ հմտորեն կողք քայլ կատարեք և նրանց

ուժն օգտագործեք ի օգուտ ձեզ: Դիմադրելու փոխարեն՝ նրանց ուժը ուղղեք շահերը բացահայտելուն, փոխադարձաբար շահավետ տարրերակներ առաջադրելուն և անկախ չափորոշիչներ բացահայտելուն:

Ինչպե՞ս է «քանակցային ջուջիցուն» աշխատում գործնականում: Ինչպե՞ս խուսափել գրոհից և շեղել այն դեպի հիմնախմնդիրը:

Նրանց տիպիկ «գրոհը» բաղկացած կլինի երեք ուազմավարժությունից. սեփական դիրքի ուժեղացված պաշտպանություն, գրոհ ձեր գաղափարների վրա և գրոհ ձեր դեմ: Եկեք քննարկենք, թե ինչպես կարող է սկզբունքային բանակցողը հաղթահարել սրանցից յուրաքանչյուրը:

Սի՞ գրոհեք նրանց դիրքը, այլ վճռորեք, թե ինչ կա դրա հետևում: Երբ մյուս կողմն շարադրում է իր դիրքը, ոչ մերժեք այն, ոչ էլ ընդունեք: Վերաբերեք դրան որպես հնարավոր մի տարբերակի: Փնտրեք, թե ինչ շահեր են թաքնված դրա հետևում, որոնք այն սկզբունքները, որ արտացոլում են այդ դիրքը և մտածեք այն բարեկավելու հնարավորությունների մասին:

Դիցուք, դուք ներկայացնում եք ուսուցիչների մի միավորում, որը գործադրու է անցկացնում աշխատավարձը բարձրացնելու և աշխատանքային ստաժը՝ որպես աշխատանքից ազատելու միակ չափանիշ սահմանելու պահանջով։ Դպրոցի խորհուրդն առաջարկել է միանվագ բարձրացնել բոլորի աշխատավարձը 2000 դոլարով, ինչպես նաև իրավունք վերապահել խորհրդին՝ միակողմանիորեն որոշելու, թե ում պետք է ազատել աշխատանքից: Փորփրեք նրանց դիրքը թաքնված շահերը բացահայտելու նպատակով: Ի՞նչ հնարավորություններ ունի բյուջեն, որոնք բույլ են տալիս բարձրացնել աշխատավարձն ավելի քան 2000 դոլարով։ Ինչո՞վ է պայմանավորված աշխատանքից ազատելու գործընթացի վրա ամբողջական հսկողություն սահմանելու ցանկությունը։

Ենթադրենք, որ նրանց բոնած յուրաքանչյուր դիրք անկեղծ մի փորձ է՝ ուղղված փարատելու յուրաքանչյուր կողմի

հիմնական մտահոգությունները. հարցրեք նրանց, թե, ըստ իրենց, ինչպես է այդ դիրքը նպաստում առկա հիմնախնդրի լուծմանը: Ընդունեք նրանց դիրքը որպես հնարավոր մի տարբերակ և օրյեկտիվորեն քննեք, թե որքանով է այն բավարարում կրղմերի շահերին կամ ինչպես կարելի է այն բարելավել, որպեսզի բավարարի դրանց: «2000 դոլարի չափով աշխատավարձի համընդիմանուր բարձրացումը կդարձնի» արդյոք ուսուցիչների աշխատավարձերը մրցակցային տարածքի մյուս դպրոցներում տրվող աշխատավարձերի նկատմամբ և կերաշխավորվի՝ արդյոք դրանով, որ աշակերտները կունենան բարձրակարգ ուսուցիչների: «Ինչպե՞ս կարող եք համոզել ուսուցիչներին, որ աշխատանքից ազատելու որոշում ընդունելիս ձեր գնահատման ընթացակարգը կլինի անաշառ: Մենք հավատում ենք, որ դուք անձամբ անաշառ կլինեք, սակայն ի՞նչ կլինի այն դեպքում, երբ դուք դուքս գաք խորհուրդի կազմից: Ինչպե՞ս կարող ենք մեր ապրուսի և մեր ընտանիքների բարեկեցության խնդիրները քողմել կամայականություն ենթադրող որոշման հույսին»:

Բացահայտեք և քննարկեք այն սկզբունքները, որոնք ընկած են մյուս կողմի դիրքի հիմքում: «Ո՞րն է այն մտեցումը, որ հիմնավորում է աշխատավարձի 2000 դոլարով ավելացման անաշառությունը: Հաշվի առնո՞ւմ է արդյոք այն, թե որքան են վճարում հարևան դպրոցներում, կամ թե որքան է կազմում համապատասխան որակավորում ունեցող այլ ուսուցիչների վարձատրությունը»: «Ի՞նչ եք կարծում, աշխատանքից առաջն հերթին պետք է ազատվեն պակա՞ս փորձառու ուսուցիչները, թե՞ ամենափորձառուները, ում աշխատավարձերն, անշուշտ, ավելի բարձր են»:

Նրանց ուշադրությունը սեղանին դրված տարբերակները բարելավելուն սեղուելու նպատակով քննարկեք նրանց հետ, թե ինչ կլիներ, եթե, ենթադրենք, նրանց դիրքերից որևէ մեկն ընդունվեր: 1970թ. ամերիկացի մի իրավաբանի հնարավորություն է ընձեռնվում հարցազրույց անցկացնել Եգիպտոսի նա-

խագահ Նասերի հետ՝ արաբա-իսրայելական կոնֆլիկտի թեմայով: Նրա հարցին, թե ինչպես կցանկանայիք, որ Գոլդա Սեերը վարվեր, Նասերը պատասխանում է.

– Հետ քաշվի:

– Հետ քաշվի⁹, – հարցնում է իրավաբանը:

– Հետ քաշվի արաբական տարածքների յուրաքանչյուր քառակուսի մետրից:

– Առանց որևէ համաձայնությա՞ն և ձեր կողմից որևէ բանի⁹, – հարցնում է ամերիկացին թերահավատորեն:

– Այո, առանց որևէ բանի: «Դա մեր տարածքն է: Նա պետք է խոստանա, որ կիեռանա, – կրկնում է Նասերը:

– Իսկ ձեր կարծիքով, ի՞նչ կկատարվի Գոլդա Սեերի հետ, եթե նա վաղճ առավոտյան հանդես գա իսրայելական ռադիոյով ու հեռուստատեսությամբ և հայտարարի. «Իսրայելի ժողովրդի անունից, ես խոստանում եմ հեռանալ 1967 թվականից մեր տիրապետության տակ գտնվող արաբական յուրաքանչյուր քառակուսի մետր տարածքից՝ Մինայից, Գազայից, Արևմտյան ափից, Երուսաղեմից, Գոլանյան բարձունքներից: Միաժմանակ, հայտնում եմ ի գիտություն բոլորի, որ փոխարենը չեմ ստացել ոչ մի խոստում և ոչ մի արարից», - հարցնում է ամերիկացին:

– Օ՛, նա հաստատ անախորժություններ կունենա տանը, – բացականչում է Նասերը բարձրածայն ծիծաղելով:

Ըմբռնումն այն բանի, թե Եգիպտոսի կողմից ինչպիսի անիրատեական առաջարկ էր ներկայացվում Իսրայելին, հավանաբար, նպաստեց, որ Նասերը նոյն օրն՝ ավելի ուշ, հյուծիչ պատերազմում հրադադար սահմանելու պատրաստականություն հայտներ:

Մի՛ պաշտպանեք ձեր գաղափարները, այլ դոդեք, որ քննադատեն և խորհուրդներ տան: Բանակցության ընթացքում բավական ժամանակ է ծախսվում քննադատության վրա: Մյուս կողմի քննադատությանն ընթիմանալու փոխարեն, խրախուսեք այն: Փոխանակ պահանջեք, որ նրանք ընդունեն

կամ մերժեն ձեր այս կամ այն գաղափարը՝ հարցրեք նրանց, թե ինչումն է սխալը: «Ձեր ո՞ր մտահոգություններն են, որ հաշվի չի առնում աշխատավարձի այս առաջարկը»: Նրանց հիմնական շահերը բացահայտելու և ձեր գաղափարները նրանց տեսակետին համապատասխանեցնելու նպատակով քննության առեք նրանց հակափաստարկները: Այնուհետև, բաղված դասերի լույսի ներքո լրամշակեք ձեր գաղափարները, որպեսզի քննադատությունը, համաձայնություն կայացնելու գործընթացի խոչընդոտից, վերածեք այդ գործընթացի էական մի մասնիկի: «Եթե ես ճիշտ հասկացա, դուք պնդում եք, որ 750 ուսուցիչների համար ի վիճակի չեք ապահովել աշխատավարձի՝ 2000 դոլարից ավելի չափով համընդհանուր բարձրացում: Մենք գուցե և ընդունենք այս առաջարկը, միայն մի պայմանով, որ եթե լրիվ դրույքով աշխատանքի ընդունենք ավելի քիչ թվով ուսուցիչներ, ապա խնայված գումարները կրաշիվեն աշխատողների միջև՝ որպես ամսեկան պարզեավճար»:

Քննադատությունը կառուցողական հունի մեջ դնելու եղանակներից մյուսն էլ իրավիճակն ամբողջապես վերափոխելու ու նրանց խորհրդին դիմելու է: Հարցրեք նրանց, թե ինչպես կվարվեին, եթե հայտնվեին ձեր իրավիճակում: «Եթե սեղանին դրված լինեք ձեր աշխատանքի հարցը, դուք ի՞նչ կանեթիք: Մեր միության անդամներն խիստ անվստահ են, որ կպահպանվի իրենց աշխատանքը և այնքան ընկճված են իրենց եկամուտների սղության պատճառով, որ իրենց շահերը ներկայացնելու նպատակով մտածում են անգամ մի մարտաշունչ արհմիություն իրավիրելու մասին: Եթե դուք լինեթիք ուսուցիչների միության առաջնորդը, ինչպես կվարվեիք»: Այս կերպ դուք կանգնեցնում եք նրանց հիմնախմնդրի ձեր բաժնի առջև, և հնարավոր է, որ նրանք առաջարկեն մի որոշում, որը կարող էր նաև հաշվի առնել ձեր մտահոգությունները: «Հիմնախմնդրի բաղադրիչներից մեկը կարծես այս է, որ ուսուցիչներին թվում է, թե իրենց ոչ ոք չի լսում: Իսկ օգտակար չէ՞ր

լինի արդյոք, եթե կանոնավոր կերպով խորհրդաժողովներ հրավիրվեին և ուսուցիչներին հնարավորություն տրվեր հանդիպելու դպրոցի խորհրդի անդամների հետ»:

Վերափոխեք ձեր դեմ ձեռնարկված գրոհն այնպես, որ այն դառնա գրոհ խնդրի վրա: Եթե մյուս կողմը գրոհում է անձամբ ձեզ, ինչպես հաճախ է պատահում, մի տրվեք պաշտպանվելու կամ հակագրոհի անցնելու գայթակղությանը: Ընդհակառակը, հանգիստ նստեք և քոյլ տվեք, որ նրանք հանդարտվեն: Լսեք նրանց, ցոյց տվեք, որ հասկանում եք այն, ինչ նրանք ասում են, իսկ եթե ավարտեն, վերաձեւվակերպեք ձեր դեմ ձեռնարկված գրոհն այնպես, որ այն դառնա գրոհ խնդրի վրա: «Եթե դուք ասում եք, որ գործադուլը ցոյց է տալիս, որ մենք հոգ չենք տանում երեխաների մասին, ես հասկանում եմ, որ ձեզ մտահոգում է երեխաների կրթության խնդիրը: Կցանկանայի, որ իմանաք՝ մենք կիսում ենք ձեր մտահոգությունը. նրանք մեր երեխաներն են ու մեր աշակերտները: Մենք ցանկանում ենք, որ գործադուլը դադարեցվի, որպեսզի վերադառնանք մեր գործին՝ կրթենք նրանց: Ի՞նչ կարող ենք ձեռնարկել երկուս էլ, որպեսզի որքան հնարավոր է շուտ համաձայնության գանք»:

Հարցադրումներ արեք և դադար առեք: Բանակցային ջուցիուի մասնակիցները գործածում են երկու հիմնական հնարքներ: Առաջինը՝ պնդումներ անելու փոխարեն հարցադրումներ անելն է: Պնդումները դիմադրություն են հրահրում, իսկ հարցադրումները՝ պատասխաններ: Հարցերը քոյլ են տալիս մյուս կողմին հատակեցնել իրենց տեսակետները և հասկանալի դարձնել դրանք ձեզ համար: Դրանք մարտահրավերներ են նետում և կարող են ուղղորդել մյուս կողմին հակադրվելու հիմնախնդրին: Հարցադրումները մյուս կողմին ոչ թիրախ են առաջարկում, որին պետք է հարվածել, և ոչ էլ դիրք, որը պետք է գրոհել: Հարցերը ոչ թե քննադատում են, այլ՝ ուսուցանում: «Ի՞նչ եք կարծում, արդյոք ավելի լա՞վ չէ, եթե ուսուցիչները համագործակցում են մի գործընթացի ընթաց-

քում, որի մեջ իրենց ներգրավված են զգում, քան երբ ակտիվորեն դիմադրում են մի գործընթացի, որը, նրանց կարծիքով պարտադրվում է իրենց և մտահոգություններն ել հաշվի չի առնում»:

Լոելը ծեր լավագույն զենքերից մեկն է: Օգտագործեք այն: Եթե նրանք ոչ խելամիտ առաջարկ են արել կամ անարդարացիորեն գրոհել են ձեզ, լավագույնը, որ կարող եք անել՝ նստելն ու լրելն է:

Եթե դուք անկեղծ հարցադրում եք արել, որին նրանք անբավարար պատասխան են տվել, պարզապես սպասեք: Մարդիկ անհարմարության զգացում են ունենում, երբ լուսույթուն է տիրում, հատկապես, երբ կասկածներ ունեն իրենց ասածի էության շորջ: Օրինակ, եթե ուսուցիչների ներկայացուցիչը հարցնում է. «Իսկ ուսուցիչներն ի՞նչու չպետք է իրենց ասելիքն ունենան աշխատանքից ազատման քաղաքականության վերաբերյալ», դպրոցի խորհրդի նախագահը կարող է շփոթության մեջ հայտնվել.

Աշխատանքից ազատումը զուտ վարչական խնդիր է... Անշուշտ ուսուցիչները հետաքրքրված են աշխատանքից ազատման քաղաքականությամբ, սակայն իրականում նրանք չունեն համապատասխան որակավորում, որպեսզի կարողանան պարզել, թե ով է լավ ուսուցիչը... Ես ի նկատի ունեն հետևյալը...

Լուսույնը հաճախ անելանելի իրավիճակի տպավորություն է ստեղծում, և մյուս կողմը հարկադրված է լինում ընտհատել այն՝ պատասխանելով ձեր հարցին կամ նոր առաջարկներ ներկայացնելով: Երբ հարցեր եք տալիս, դադար առեք: Անմիջապես մի անցեք մյուս հարցին կամ ձեր սեփական մեկնարարանությունները ներկայացնելուն, որպեսզի թույլ չտաք, որ նրանք «պոկվեն կարթից»: Ձեր կողմից երբեք վարածքանակություններից ամենաարդյունավետները կլինեն նրանք, որոնց ընթացքում դուք կլրեք:

ԹՅԱԾ ՀԵՇ ՈՒՆԵԻՑ ԱՆԻԱՅԱՅՆ

Դուք երրորդ կողմի օգնությանը կդիմեք, հավանաբար, միայն այն դեպքում, եթե բանակցային խաղը դիրքային սակարկությունից սկզբունքային բանակցության վերածելու ձեր անձնական շաճքերն ապարդյուն անցնեն: Հիմնախնդիրը, որ ծառացել է ձեր առջև, փորձենք ներկայացնել բանակցության մի պարզ օրինակի միջոցով, որտեղ ամուսինները ծրագրում են նոր տուն կառուցել:

Կնոջ պատկերացմամբ տունը պետք է լինի երկիարկանի, ունենա բուխարի և ապակեպատ ելուստաձև լուսամուտներ: Ամուսինը մտածում է ժամանակակից մի ազարակատիպ տան մասին, որը կունենա առանձնասենյակ և ավտոտնակ՝ պահեստային մեծ հնարավորություններով: Բանակցության ընթացքում նրանք միմյանց բազմաթիվ հարցեր են տալիս, օրինակ՝ «Փնչապիտի միմյանցից պիտի լինի, ըստ քեզ, հյուրատենյակը», կամ «Որու իսկապե՞ս պնդում ես, որ այն կառուցվի այնպես, ինչպես դու ես պատկերացնում»: Նման հարց ու պատասխանի արդյունքում հետզիեսե ավելի ու ավելի առերևույթ են դառնում երկու միմյանցից տարբեր նախագծերը: Այնուհետև նրանք դիմում են տարբեր ճարտարապետների և խնդրում, նախ կազմել էրիզներն, իսկ այնուհետև՝ դետալացված նախագծերը և այդ կերպ նրանցից յուրաքանչյուրն ավելի խորն է ներքաշվում իր սեփական դիրքի մեջ: Ի պատասխան կնոջ որոշ ձկունություն ցուցաբերելու պահանջին՝ ամուսինը համաձայնվում է փորբացնել ավտոտնակի երկարությունը մեկ մետրով: Ի պատասխան ամուսնու պնդմանը՝ զիջել, կինը հրաժարվում է իր ամենաերազած մտահղացումներից մեկից՝ շքապատշգամբ ունենալու գաղափարից, որն այսպես քեզ այնպես չէր էլ ներառվել իր նախագծում: Նրանցից յուրաքանչյուրը փաստեր է ներկայացնում՝ հօգուտ նախագծերից մեկի և ի հակադրություն մյուսի, որի ընթացքում խոցվում են զգացմունքները և դժվարանում է հաղորդակցությունը: Կողմերից և ոչ մեկը չի ցանկանում զիջումների գնալ, քանի որ դա,

հավանաբար, նորանոր զիջումներ պահանջելու առիթ է տալու:

Սա դիրքային սակարկության դասական օրինակ է: Եթե ձեզ չի հաջողվում շեղել գործընթացը դեպի հիմնախնդրի էության վրա հիմնված լուծումներ փնտրելը, գուցե դա կարողանա անել երրորդ կողմը: Ի տարրերություն քանակցությունում ուղղակիորեն ընդգրկվածների՝ միջնորդի համար շատ ավելի դյուրին կինի տարանջատել մարդկանց հիմնախնդրից և ուղղորդել քննարկումը դեպի շահերն ու տարրերակները: Ավելին, նա տարածայնությունները հարթելու նպատակով հաճախ կարող է որևէ անկողմնակալ հիմք առաջարկել: Երրորդ կողմը կարող է նաև լուծումների առաջադրման գործընթացը տարանջատել որոշումներ կայացնելու գործընթացից, կրծատել համաձայնության հանգելու համար պահանջվող որոշումների քանակը և օժանդակել կողմերին՝ պատկերացնելու, թե ինչ են ձեռք բերելու, երբ որոշումը կայացվի: Այն գործընթացը, որը հնարավորություն է ընձեռում երրորդ կողմին անել ամբողջ վերը նկարագրվածը, հայտնի է **մեկ տեքստի գործընթաց** անվանմամբ:

Ամուսնու և կնոջ միջև տան նախագծի շուրջ վարվող բանակցության ընթացքում օգնության է հրավիրվում մի անկախ ճարտարապետ, և նրան ցույց են տրվում ամուսնու և կնոջ ներկա դիրքերն արտացոլող վերջին նախագծերը: Ինչ խոսք, որպես երրորդ կողմ հրավիրված յուրաքանչյուր ոք չէ, որ կարող է խոհեմ գտնվել: Որևէ ճարտարապետ, օրինակ, հնարավոր է, որ խնդրի կողմերին պարզաբանել իրենց դիրքերը, ճնշումներ գործադրի նրանց վրա մի շարք զիջումների գնալու նպատակով և այդպիսով հուզական ավելի մեծ կապվածություն ստեղծի կողմերի և իրենց մասնավոր լուծումների միջև: Այնինչ, մեկ տեքստի գործընթաց կիրառող ճարտարապետն այլ կերպ կվարվի: Դիրքերը պարզաբանել խնդրելու փոխարեն, նա կհարցնի շահերի մասին. ոչ թե ի՞նչ մեծության պետք է լինի ելուստածն լուսամուտը, որ կինն է նախընտրում,

այլ՝ ինչո՞ւ է նա ցանկանում ունենալ այդպիսի լուսամուտ: «Դա առավոտյա՞ն, թե՞ կեսօրվա արևի համար է: Դա անհրաժեշտ է, որպեսզի դուք բա՞կը տեսնեք, թե՞ բակից՝ տան ներսը»: Նա կդիմի ամուսնուն. «Ինչո՞ւ եք ցանկանում ավտոտնակ ունենալ: Ի՞նչ եք ցանկանում պահեստավորել: Ի՞նչով եք նախատեսում գրադիվել առանձնասենյակում, գուցե կարդա՞լ, կամ հեռուստացու՞յց դիտել, թե՞ զվարճանալ ընկերների հետ: Ե՞րբ եք օգտագործելու առանձնացված սենյակը՝ օրվա ընթացքու՞մ, հանգստյան օրերի՞ն, թե՞ երեկոյան և այլն»:

Ճարտարապետը հասկանալ է տալիս, որ չի պահանջում, որ ամուսինները զիջեն իրենց այս կամ այն դիրքը: Ավելի շուտ նա փնտրում է հնարավորություններ, որպեսզի ի վիճակի լինի խորհուրդ տալ նրանց, կամ գուցե ոչ թե խորհուրդ տալ, այլ այս փուլում պարզապես փորձել իմանալ ամեն հնարավոր բան կողմերի կարիքների և շահերի մասին:

Այնուհետև ճարտարապետը կազմում է ամուսինների շահերի և կարիքների ցանկը (առավտոյան արև, բաց բուխարի, կարդալու համար հարմար անկյուն, արհեստանոց, պահեստ ձյուն մաքրող մեքենայի և միջին մեծության ավտոմեքենայի համար և այլն): Որից հետո նա առաջարկում է ամուսիններին հերթով տալ իրենց քննադատական դիտուրյունները ցանկի վերաբերյալ և ներկայացնել այն բարեկավելու առաջարկներ: Դժվար է գնալ զիջումների, սակայն դյուրին է քննադատել:

Սի քանի օր հետո ճարտարապետը վերադառնում է հարկ առ հարկ մշակված նախագծի նախնական տարրերակով.

– Ես ինքս դժգոհ եմ սրանից, սակայն մինչ կշարունակեի աշխատանքս, մտածեցի լսել ձեր դիտուրյունները:

Հնարավոր է, որ ամուսինն ասի.

– Այստեղ ինչ-որ բան այնպես չէ: Օրինակ, լողասենյակը չափազանց հեռու է ներասենյակից: Չեմ տեսնում, որ բավականաշափ տարածք է հատկացված գրքերիս համար: Իսկ որտե՞ղ են հանգրվանելու զիշերակյաց հյուրերը:

Կնոջը նույնապես առաջարկվում է քննադատել նախական տարրերակը:

Կարծ ժամանակ անց ճարտարապետը վերադառնում է երկրորդ նախագծով և կրկին առաջարկում նրանց քննադատել այն.

— Ես փորձել եմ լուծել լողասենյակի և գրապահարանի խնդիրները, ինչպես նաև առաջարկում եմ որպես պահեստային ննջասենյակ օգտագործել առանձնասենյակը: Ի՞նչ կասեք սրա մասին:

Նախագծի որոշակիացմանը զուգընթաց, ամուսինները հակված կինեն բարձրացնել իրենց համար առավել կարևորություն ներկայացնող հարցեր, քան թե անդրադառնալ աննշան մանրամասնորոշուներին: Կինն, օրինակ, առանց որևէ զիջում անելու, կցանկանար հավաստիանալ, որ ճարտարապետն ամբողջությամբ հասկանում է իր իիմնական կարիքները: Նախագծերից և ոչ մեկում չի արտացոլվում կողմերից և ոչ մեկի, այդ թվում՝ ճարտարապետի «ես»-ը եւ նրանցից ոչ ոք չի կառչում այս կամ այն նախագծից: Ֆինանսական սահմանափակումների շրջանակներում շահերը հնարավոր լավագույն եղանակով համաձայնեցնելու գործընթացը տարրերակված է որոշում կայացնելու գործընթացից և չի պարունակում մտավախություն առ այն, որ կողմերից որևէ մեկը կարող է ժամանակից շուտ պատասխանատվություն ստանձնել: Ամուսինը և կինը ոչ միայն ստիպված չեն լրել իրենց դիրքերը, այլև նստում են կողք կողքի (գոնե փոխարերական իմաստով), միասին ներկայացնում են իրենց քննադատական դիտողություններն ուրվագծվող նախագծի վերաբերյալ և օգնում ճարտարապետին առաջարկներ նախապատրաստել, որոնք հետագայում նա ներկայացնելու է իրենց:

Այսպես գործն առաջ է գնում. ծնվում է երրորդ նախագիծը, չորրորդը, հինգերորդը...: Եվ այնժամ, երբ ճարտարապետն զգում է, որ այլև բարելավման հնարավորությունները սպառվել են, ներկայանում է ամուսիններին՝

ասելով.

– Սա այն լավագույնն է, ինչ ես կարող եմ անել: Ես փորձել եմ հնարավորիս համաձայնեցնել ձեր տարաբնույթ շահերը: Խնդիրների մեծ մասին ես տվել եմ ստանդարտ ճարտարապետական և ճարտարագիտական լուծումներ, օգտվել եմ նախադեպից և լավագույն մասնագիտական կարծիքից, որ ես կարող էի կիրառել այս դեպքում: Ահա այն: Ես խորհուրդ եմ տալիս ձեզ ընդունել այս նախագիծը:

Այժմ ամուսիններից պահանջվում է ընդամենը մեկ որոշում կայացնել՝ այս կամ ոչ: Իրենց որոշումը կայացնելու համար նրանք այժմ հստակորեն գիտակցում են, թե ինչ են ստանալու: Հետևաբար, կողմերից մեկի «այո» պատասխանը հնարավոր է դառնում, երբ մյուս կողմը նույնպես պատասխանում է «այո»: Մեկ տեքստի գործընթացը ոչ միայն շեղում է խաղը դիրքային սակարկություններից, այլև զգալիորեն դյուրին է դարձնում և տարբերակներ առաջարկելը, և դրանցից մեկի շուրջ որոշում կայացնելը:

Ո՞վ կարող է խաղալ ճարտարապետի դերը այլ բանակցություններում: Անշուշտ, կարող եք որպես միջնորդ ներգրավել մի երրորդ կողմի, իսկ այնախի բանակցություններում, որտեղ ներգրավված են ավելի քան երկու կողմեր, երրորդ կողմի դերը, բնականաբար, կարող է ստանձնել մասնակիցներից այն մեկն, ում շահերը տվյալ հարցում առավել միտված են համաձայնության կայացմանը, քան դրա առանձին դրույթների վրա ներգործելուն:

Սի շարք դեպքերում այդ դերը կարող եք ստանձնել ինքներդ: Օրինակ, ենթադրենք, դուք պլաստմասա արտադրող գործարանի առևտրային ներկայացուցիչն եք և մի մեծաքանակ պատվերի շուրջ բանակցում եք մի գնորդի հետ, որը ներկայացնում է պլաստմասսե շշեր արտադրող մի ձեռնարկություն: Ենթադրենք, գնորդին հարկավոր է ինչ-որ հատուկ տեսակի պլաստմասա, իսկ գործարանը, որը դուք եք ներկայացնում, հնարավոր է, նպատակահարմար չի գտնում անց-

կացնել պատվերն իրականացնելու համար անհրաժեշտ տեխնոլոգիական վերազինում: Այս պարագայում ձեր խնդիրն առավելապես գնորդի և ձեր ներկայացրած գործարանի միջև համաձայնության կայացման վրա ազդելու է, քան պայմանների վրա ներգործելը: Մի այլ դեպք. ենթադրենք, դուք սենատորներից մեկի իրավական հարցերով օգնականն եք: Այս պահին սենատորին շատ ավելի մտահոգում է ֆինանսական հատկացումներ սահմանող օրենքի նախագծի ընդունման խնդիրը, քան թե որքան է կազմելու հատկացումը՝ տասը թե տասնմեկ միլիոն դրամը: Կամ, ենթադրենք, դուք ինչ-որ կազմակերպության ղեկավարն եք և փորձում եք լուծում տալ մի հարցի, որի շուրջ ձեր երկու աշխատակիցներն առաջարկում են գործողությունների տարրեր պլաններ: Ձեզ շատ ավելի մտահոգում է, որ կայացվի այնպիսի որոշում, որի հետ կհաշտվեն երկուսն էլ, քան թե՝ առաջարկվող տարրերակներից որը կը լուծարի: Նկարագրված դեպքերից յուրաքանչյուրում, թեկուզ և դուք դրանց անմիջական մասնակիցն եք, ձեր շահերից է բխում, որ վարվեք այնպես, ինչպես կվարվեք որևէ միջնորդ և կիրառեք մեկ տերստի գործընթացը: Սիշնորդի դեր ստանձնեք այս բանավեճերում, որի անմիջական մասնակիցն եք նաև:

Սիսալված չենք լինի, եթե ասենք, որ մեկ տերստի գործընթացի կիրառման ամենացայտուն օրինակը Սիացյալ Նահանգներին է. այն, երբ ԱՄՆ-ը Եզիփատոսի և Խորայելի միջև 1978 թվականի սեպտեմբերին Քեմփ Դեյվիդում վարվող բանակցությունների ընթացքում հանդիս էր գալիս որպես միջնորդ: Երկու կողմերին լսելուց հետո Սիացյալ Նահանգները նախապատրաստեցին մի նախագիծ, որը չէր պարտավորեցնում բանակցության մասնակիցներից և ոչ մեկին, ներկայացրեցին այն կողմերի քննադատությանը և կատարեցին առաջարկված շտկումները: Այս ընթացակարգը կրկնվեց այն քան անգամ, մինչև ԱՄՆ-ը զգաց, որ փաստարություն բարելավելու հնարավորությունն այլևս սպառվել է: Տասներեք օր անց՝ շուրջ քսաններեք նախագծեր կազմելուց հետո, Սիացյալ

Նահանգները մշակեցին համաձայնության մի տեքստ, որը լիարժեքորեն պատրաստ էր կողմերին ներկայացվելու համար: Նախազահ Քարտերի կողմից փաստաբուղբը ներկայացվելուց հետո Խորայելն ու Եգիպտոսն ընդունեցին այն: Որպես մի մեխանիկական հնարք, որը թոյլ է տալիս սահմանափակել ընդունվող որոշումների քանակը, նվազեցնել դրանցից յուրաքանչյուրին պարուրող անորոշությունը և կանխարգել կողմերի՝ իրենց դիրքերի մեջ ավելի խորը ներքաշվելու հնարավորությունը, այն չափազանց լավ գործեց:

Միակ տեքստի գործընթացը չափազանց օգտակար է միջնորդի մասնակցությամբ երկկողմ բանակցությունների դեպքում և գրեթե միշտ անհրաժեշտ՝ բազմակողմ բանակցությունների դեպքում: Հարյուր հիսուն ազգեր, օրինակ, չեն կարող կառուցնական քնննարկում ծավալել հարյուր հիսուն զանազան առաջարկների շուրջ, ոչ ել կարող են զիջումների գնալ՝ կախված մյուս բոլորի փոխադարձ զիջումներից: Անհրաժեշտ է կիրառել որոշում կայացնելու գործընթացը դյուրին դարձնելու մի եղանակ: Միակ տեքստի գործընթացը ծառայում է հենց այդ նպատակին:

Մենակ տեքստի գործընթաց սկսելու համար չի պահանջվում ստանալ որևէ մեկի համաձայնությունը: Պարզապես նախապատրաստեք մի նախագիծ և խնդրեք, որ այն քննադատեն: Այստեղ կրկին կարող եք փոխել խաղը՝ պարզապես սկսելով նորը: Անգամ եթե մյուս կողմը չի ցանկանում խոսել ձեզ հետ ուղղակիորեն (կամ հակառակը), նախագիծը կարող է շրջանառության մեջ դնել որևէ մի երրորդ կողմ:

Է՞՞Ծ Ա»ց Կ»ն՞ն՞Ց»ԷԱ.

Զնն» անշարժ գույքի գործակալության և Ֆրանկ Թըրնբուլի գործը

Տան տիրոջ և կենավորի միջև իրականում տեղի ունեցած բանակցության հետևյալ օրինակը պետք է, որ պարզ դարձնի,

թե ինչպես պետք է վարվեք այն կողմի հետ, որը չի ցանկանում ներգրավել սկզբունքային բանակցության մեջ: Օրինակը ցույց է տալիս, թե ինչ է նշանակում փոխել խաղը՝ սկսելով նորը:

Միջադեպի մասին՝ համառոտ: Ֆրանկ Թըրնբուլը մարտ ամսին մի քնակարան էր վարձակալել «Զոնս» անշարժ գույքի գործակալությունից ամսական 600 դոլար վարձավճարով: Հուլիս ամսին, երբ նաև իր սենյակակից Փոլը որոշել էին դրս գալ քնակարանից, Թըրնբուլին հայտնի է դառնում, որ քնակարանը գտնվել է վարձակալական վերահսկողության ներքո¹: Քնակարանի վարձավճարի օրենսդրորեն սահմանված առավելագույն չափը կազմում էր ամսական 466 դոլար, ինչը 134 դոլարով պակաս էր իր վճարած գումարից:

Հուզված, որ իրենից սահմանվածից ավելի գումար էին գանձել, Թըրնբուլը դիմում է տիկին Զոնսին «Զոնս» անշարժ գույքի գործակալությունից՝ քննարկելու հիմնախնդիրը: Սկզբում տիկին Զոնսի վերաբերմունքն անհանդուժող էր և քշնամական: Նա պնդում էր, որ ճիշտ է և մեղադրում էր Թըրնբուլին ապերախտության և դրամաշորթության մեջ: Այ քանի երկարատև բանակցային հանդիպումներից հետո, այնուամենայնիվ, տիկին Զոնսը համաձայնվում է փոխհատուցել Թըրնբուլին և նրա ընկերոջը: Վերջում նրա տոնը դառնում է առավել բարեհամբույր և ներողամսություն հայցող:

Ողջ այդ ընթացքում Թըրնբուլն օգտագործում էր սկզբունքային բանակցության մերողը: Ստորև ներկայացվում են մեջբերումներ բանակցության ընթացքում նրանց միջև տեղի ունեցած մտքերի փոխանակումից: Յուրաքանչյուր մեջբերում վերնագրված է մի ստանդարտ արտահայտությամբ, որ յուրաքանչյուր սկզբունքային բանակցող կարող է օգտագործել որևէ համանման իրավիճակում: Յուրաքանչյուր մեջբերումից հետո վերլուծվում է դրա հիմքում ընկած տեսությունը և ներկայաց-

¹ Կառավարության կողմից սահմանված վարձավճարի առավելագույն չափի սահմանափակում (Քարգ.)

վում դրա ազդեցությունը բանակցության վրա:

§ԷՅՇԱԾՈՒ »Ո ԱՇՈԾ»Ն ՉՅՕ, »Ա« ԸԷՇԵԱԾՈՒ »ՈՒ«

ԹԾՐՆԲՈՎԼ. – Տիկին Զոնս, խնդրում եմ ուղղեք ինձ, եթե սխալվում եմ, բայց ես հենց նոր պարզեցի, որ մեր բնակարանը վարձակալական վերահսկողության տակ է: Մեզ հայտնեցին, որ վարձավճարի օրենսդրությունը սահմանված առավելագույն ամսական չափը կազմում է 466 դրամ: Գուշե մեզ սխա՞լ տեղեկություններ են տվել:

Վերլուծություն: Ակզրունքային բանակցության էությունը հետևյալն է՝ պատրաստ լինել փոխելու համոզմունքները, եթե ներկայացվում են օբյեկտիվ փաստարկներ և սկզբունքներ: Չքացառելով, որ օբյեկտիվ փաստերի նկատմամբ ունեցած իր տեսակետը կարող է սխալ լինել և խնդրելով տիկին Զոնսին շտկել այն՝ ԹԾՐՆԲՈՎԼ հաստատում է տրամաբանության վրա հիմնված մի երկխոսություն: Նա դրան մասնակից է դարձնում Զոնսին՝ առաջարկելով կամ համաձայնվել փաստերի հետ, կամ շտկել դրանք: Այս մոտեցման շնորհիվ նրանք վերածվում են գործըկերների, որոնք փորձում են հիմնավորել փաստերը: Եթե ԹԾՐՆԲՈՎԼ պարզապես ներկայացներ դրանք՝ որպես գոյություն ունեցող փաստեր, տիկին Զոնսին կրվար, թե իրեն սպառնում են և պաշտպանական դիրք կընդուներ: Նա, հավանաբար, կսկսեր հերքել դրանք, բանակցությունն էլ չեր ընթանա կառուցղական հունով:

Նախապես խնդրելով ուղղել իրեն, եթե ինքն իրոք սխալ է, ԹԾՐՆԲՈՎԼ սխալների ընդունումը դարձնում է շատ ավելի դյուրին: Ասել տիկին Զոնսին, որ սրանք հավաստի փաստեր են և հանկարծ հայտնաբերել, որ ինքը սխալվում է, կիանգեցնի նրան, որ ԹԾՐՆԲՈՎԼ կկորցնի իր հեղինակությունը: Եվ, որ շատ ավելի վաս է, տիկին Զոնսը այնուհետև կասկածի տակ կառնի նրա կողմից ասված ցանկացած այլ միտք՝ դժվարացնելով բանակցության ընթացքը:

Ծովումների և համոզելու հանդեպ բաց լինելը սկզբունքային բանակցության ուազմավարության հենասյուներից մեկն

Է: Համոզել մյուս կողմին բաց լինել ձեր կողմից առաջարկված սկզբունքների և օրյեկտիվ փաստերի հանդեպ կարող եք միայն այն դեպքում, երբ ցույց տաք նրանց, որ ինքներդ էլ բաց եք նրանց առաջարկների հանդեպ:

§Օ»Ýն ·Ý³Ñ³իածÙ »Ýն ³ÛÝ, ÇÝã ³ñ»É »ն Ù»½ Ñ³Ù³ñ!

Թըրնբուլ. – Փոլը և ես հասկանում ենք, որ դուք բարեհած գտնվեցիք մեր հանդեպ՝ վարձակալության տակով այս բնակարանը: Դուք շատ սիրալիք գտնվեցիք՝ ներդնելով ձեր ժամանակն ու ջանքերը, և մենք գնահատում ենք այդ:

Վերլուծություն: Մյուս կողմում գտնվողներին անձնական աջակցություն ցուցաբերելը վճռական նշանակություն ունի մարդկանց իիմնախնդրից տարանջատելու, հետևաբար նաև հարաբերությունները իիմնախնդրի եռությունից տարանջատելու գործում: Իր գնահատամբն արտահայտելով տիկին Զոնսին՝ վերջինիս լավ վերաբերմունքի համար, Թըրնբուլն, ըստ էության, ասում է. «Անձամբ ձեր դեմ մենք ոչինչ չունենք: Մեր կարծիքով դուք մեծահոգի անձնավորություն եք»: Նա անցնում է տիկնոց կողմը և չեղոքացնում որևէ սպառնալիք, որ Զոնսը կարող էր զգալ իր անձնական վարկի հանդեպ:

Ավելին, գովարանությունն ու աջակցությունը ենթադրում են, որ դրան արժանացած անձը ձգտելու է կրկին արժանանալ դրանց: Գովասանքի արժանանալուց հետո տիկին Զոնսն այժմ ունի մի փոքր հոգական ներդրում Թղթմբուլի՝ իրեն ուղղված խրախուսանքի մեջ: Հետևաբար, նա այժմ կանգնած է ինչ-որ բան կորցնելու վտանգի առջև և, որպես հետևանք, կսկսի առավել հաշտվողական վարք ցուցաբերել:

§Օ»½ Ù³Ñá·åðÙ ; ³Ý³ã³éåðÃÛåðÝÁ!

Թըրնբուլ. – Մենք ցանկանում ենք հավաստիանալ, որ չենք վճարել ավելին, քան պեսոք է վճարեինք: Երբ մենք համոզվենք, որ մեր

Վճարած գումարն ճիշտ այնքան է, որքան պետք է Վճարենք բնակարանը մեր կողմից զբաղեցնելու ժամանակահատվածի համար, մենք կհամարենք, որ դա անհաջող է և կիեռանանք:

Վերլուծություն. Թղրնքովի հղում է կատարում սկզբունքի վրա և հայտարարում, որ մտադիր է հավատարիմ մնալ դրան: Հետևաբար, նրան համոզելու համար նույնպես անհրաժեշտ է հիմնվել սկզբունքի վրա: Դրանով նա տիկին Զոնսին, միևնույն ժամանակ, հասկանալ է տախս, որ պատրաստ է փոփոխել իր համոզմունքները, պայմանով, որ կպահպանվեն սկզբունքները: Ուստի, տիկին Զոնսին չի մնում ոչինչ, քան ընտրության մի սույն հնարավորություն՝ խորհել Թղրնքովի հետ միասին՝ հօգուս իր խակ շահերի:

Թղրնքովը չի պաշտպանում իր որդեգրած սկզբունքը՝ կառչելով իր արդարացի լինելու կամ ինչ-որ այլ հանգամանքներից: Ոչ միայն նրա նպատակներն են սկզբունքային, այլև դրանց հասնելու միջոցները: Իր նպատակը, վստահեցնում է նա, վճարված վարձի և վարձակալության ժամկետի միջև անաշար հավասարակշռության ապահովումն է: Եթե համոզեն իրեն, որ ինքը վճարել է այնքան գումար, որքան պետք է վճարվեր տվյալ ժամկետում վարձակալության համար, ապա նա դուրս կգա բնակարանից: Մինչդեռ, եթե նա վճարել է ավելին, ապա արդարացի կլինի, որ նա շարունակի բնակվել այնքան ժամանակ, մինչև որ վճարված վարձը համապատասխանի բնակարանի վարձակալության ժամկետին:

Ø»Ù Íð³Ý³ÙÛÇÙÙ Íð³ñ·³áñ» Ë ³Ùë Ñ³ñòÁ· ÑÇÙÝÙ» Ëáí ³ÝÙË
á³÷áñáßÇáÝÙñÇ íñ³, " áã Á» §áí, áðÙ YÙÙ³Ùµ, ÇÝá ÍðñáÖ ;
³ÝÙ» Ë! Íðñµ»ñ³Íáí

შექმნა ვინა. – Ծხბათელი է, որ հենց դուք եք խոսում անաշառության մասին, որպիտես ձեր ասածից իրականում պարզ է դառնում, որ դուք և Փոլը ուղղակի ցանկանում եք փող աշխատել և փրկում եք օգտվել այն հանգամանքից, որ դեռևս չեք լրել բնակարանը: Դա ինձ հիմքապես զարյացնում է: Եթե ինձ ձեռքում լիներ, ապա դուք և

Փոլն այսօրևեր դուրս կիրավիրվեիք բնակարանից:

Թըղնքով (մի կերպ զսպելով իր բարկությունը). – Գուցե ես հստակ չարտահայտեցի իմ միտքը: Իհարկե, լավ կլիներ, եթե ես և Փոլը ինչ-որ գումար ստանայինք: Ինչ խոսք, մենք կարող էինք գրադեցնել բնակարանն այնքան ժամանակ, մինչև դատարանը բնակառանից մեզ արտաքսելու որոշում կկայացներ: Սակայն հարցը դրանում չէ, տիկին Զոնս:

Այս կամ այն կերպ մի քանի դոլար վաստակելուց առավել, մեզ համար կարևոր է, որ մեր նկատմամբ անաշար գտնվեն: Ոչ մեկին դուր չի գալիս, երբ իրեն խարում են: Եթե մենք նպատակ ունենայինք լուծել խնդիրը ուժով կամ համառությամբ, ապա կդիմեինք դատարան, բավական ժամանակ և գումար կվատնեինք, արդյունքում կվերածեինք խնդիրը մի մեծ գլխացավանքի թե՝ մեզ համար և թե՝ ձեզ համար: Դուք էլ, երկի, նույնը կանեիք: Ու՞մ է դա անհրաժեշտ:

Ոչ, տիկին Զոնս, մենք ցանկանում ենք լուծել այս խնդիրն անաշար կերպով՝ իմինվելով անկախ չափորոշիչների վրա, և ոչ թե ով, ում և ինչ կարող է անել տարբերակով:

Վերլուծություն: Տիկին Զոնսը մարտահրավեր է նետում սկզբունքների վրա իիմնված բանակցության գաղափարին՝ անվանելով այն կեղծավորություն: Խնդիրն արդեն դիտարկվում է կամային հարքության մեջ և, ըստ այդմ, նա կամենում է վրնիել թըրնբուլին և նրա լնկերոջն հենց այսօր:

Այստեղ թըրնբուլը գրեթե կորցնում է ինքնատիրապետումը և դրա հետ մեկտեղ՝ վերահսկողությունը բանակցության նկատմամբ: Նրա մոտ հակահարձակ լինելու ցանկություն է առաջանում. «Կցանկանայի իմանալ, թե ինչպե՞ս եք պատրաստվում մեզ վոնդել: Մենք դատարան կդիմենք: Մենք կիասնենք նրան, որ ձեր լիցենզիան անվավեր ճանաչվի»: Նման զարգացումների դեպքում բանակցությունը կընդհատվեր, իսկ թըրնբուլին կմնար միայն վատնած ժամանակը, ջանքերը և խոռված հանգիստը: Մինչդեռ, հակազդելու փոխարեն, թըրնբուլը զսպում է իրեն և կրկին վերադարձնում բանակցությունը եռթյան շուրջ: Սա բանակցային ջուջիցուի հաջողված օրինակ է: Իր վրա վերցնելով տիկին Զոնսի թյուրընկալումների պատասխանատվությունը՝ նա շեղում է

գրոհը և փորձում համոզել նրան, որ անկեղծորեն շահագրգոված է սկզբունքային լուծում տալ հիմնախնդրին: Նա չի թարցնում ոչ իր եսասիրական շահերը, և ոչ էլ նրա վրա ազդեցության իր միջոցները, ընդհակառակը, նա թե՛ մեկը, և թե՛ մյուսը դարձնում է ակնհայտ: Եվ երբ այլևս դրանք գիտակցված են, նա կարող է տարանջատել դրանք հիմնախնդրի էռորդունից, ինչի հետևանքով դրանք այլևս չեն դիտվի որպես հիմնահարց:

Թղրնքուլը նաև փորձում է որոշակի կշիռ հաղորդել սկզբունքների վրա հիմնված բանակցային խաղին՝ ասելով տիկին Զոնսին, որ սրանք են վարքի այն հիմնական կանոնները, որոնցով ինքը մշտապես առաջնորդվում է: Եվ նա դրանք պայմանավորում է ոչ թե իր ազնիվ մղումներով, ինչը մշտապես կասկածանքի տեղիք է տալիս, այլ պարզապես իր անձնական շահով:

ՏիերՆածԱՌածՅՅ ՞ՈՒ ԷՌ'ՉՌ ՃՌ:

Տիկին Զոնս. – Դուք ինձ չե՞ք վստահում այն ամենից հետո, ինչ ես արել եմ ձեզ համար:

Թղրնքուլ. – Տիկին Զոնս, մենք գնահատում են ամենն, ինչ դուք արել եք մեզ համար: Խնդիրն այստեղ, սակայն, վստահության մեջ չե, այլ սկզբունքի. Վճարե՞լ ենք արդյոք մենք ավելին, քան պետք է վճարեինք: Ըստ ձեզ, ի՞նչ նկատառումներ մենք պետք է հաշվի առնենք հիմնախնդրոյ լուծելու համար»:

Վերլուծություն: Տիկին Զոնսը, հնարքներ գործածելով, փորձում է Թղրնքուլին անկյուն նացնել. վերջինս կամ շարունակելու է պնդել իր տեսակետը և ձեռք բերել մի մարդու համբավ, որը չունի վստահելու ունակություն, կամ պահպանելու է բարի համբավը և ստիպված է լինելու ընկրկել: Թղրնքուլն, սակայն, դուրս է պրծնում անկյունից, մեկ անգամ ևս արտահայտելով իր երախտագիտությունը, միաժամանակ հստակեցնելով, որ վստահության հարցը կապ չունի իիմնախնդրի հետ: Թղրնքուլը վերահաստատում է իր շնորհակալ վերա-

բերմունքը տիկին Զոնսի հանդեպ, մինչդեռ միևնույն ժամանակ հաստատուն մնում սկզբունքների վրա: Ավելին, Թըրնբուլը ոչ միայն մի կողմ է հրում վստահության հարցը, այլ գործնական քայլով վերադարձնում է քննարկումը դեպի սկզբունքը՝ հարցնելով տիկին Զոնսին, թե որ նկատառումներն են այստեղ տեղին:

Թըրնբուլը կառչում է սկզբունքից՝ առանց մեղադրելու տիկին Զոնսին: Նա նրան երբեք անազնիվ չի անվանում: Նա հարցը հետևյալ կերպ ձևակերպելու փոխարեն՝ «Դուք փորձեցիք օգտագործել մեզանից, այնպես չե՞»», տախս է առավելապես շանձնավորված մի հարց. «Վճարե՞լ ենք արդյոք մենք ավելին, քան պետք է վճարեինք»: Նույնիսկ եթե Թըրնբուլը չի վստահում տիկին Զոնսին, սխալ կլիներ ասել նրան դրա մասին, քանի որ վերջինս, հավանաբար, կզայրանար և կսկսեր պաշտպանվել՝ վերադառնալով իր կոշտ դիրքին կամ խօսելով բանակցությունն ընդհանրապես:

Խիստ օգտակար է մտապահել որոշ ստանդարտ արտահայտություններ, ինչպիսին, օրինակ. «Հարցը վստահությունը չե՞» արտահայտությունը, խույս տալու համար խորածանկ հնարքներից, ինչպիսին տիկին Զոնսի՝ իրեն վստահելու կոչն էր:

**§՝³նա±Ծ »Ù ÙҪ ն³ÝҪ Ն³նօ ածԾԾ»É Ծ»½ ա³ն½³մ³Ý»Éած`
³ն¹Ûա±ն ×ҪՑԮ»Ý ԾÙ ÷³՛՛»նԱ!**

Թըրնբուլ. – Կարո՞՞ղ եմ մի քանի հարց ուղղել ձեզ պարզելու՝ արդյո՞ք ճիշտ են ինձ տրամադրված փաստերը: Բնակարանն իսկապես գտնվո՞ւմ է Վարձակալական վերահսկողության ներքո: Վարձակարի օրենսդրորեն սահմանված առավելագույն չափն իսկապե՞ս 466 դոլար է: Փոլն անհանգստանում էր, չե՞նք դաշնում արդյոք մենք օրինախախտության մասնակից: Որևէ մեկն արդյոք տեղեկացրե՞լ էր Փոլին, որ բնակարանը վարձակալական վերահսկողության տակ է և որ Վարձակարի օրենսդրորեն սահմանված առավելագույն չափը 134 դոլարով պակաս է պայմանագրում սահմանվող գումարից՝ այն ժամանակ, երբ նա ստորագրում էր Վարձակալության պայմանագիրը:

Վերլուծություն: Երբ փաստեր եք թերում, կարող է թվալ, թե սպանում եք: Փոխարենը՝ հարցեր տվեք, երբ հնարավոր է:

Թըրնբուլը կարող էր հայտարարել. «Օրենսդրութեան սահմանված վարձավճարը 466 դրամ է: Դուք խախտել եք օրենքը: Իսկ որ ավելի փատ է, դուք ներքաշել եք մեզ օրինախախտության մեջ առանց այդ մասին մեզ տեղյակ պահելու»: Տիկին Զոնսը հավանաբար վճռականորեն կիակագղեր այս հայտարարությանը՝ վանելով իրենից դրանք՝ որպես միավորներ կուտակելու նպատակ հետապնդող բանավոր գրոհներ:

Ունեցած տեղեկությունները որպես հարց ձևակերպելը թույլ է տախս տիկին Զոնսին մասնակցել, լսել փաստերը, վերլուծել, այնուհետև ընդունել կամ շտկել դրանք: Թըրնբուլն այդ կերպ, փաստորեն, ներկայացնում է նույն փաստերը, սակայն պակաս սպառնալից ձևով, իսկ սուր հարցերն իր բացակայող ընկերոջը վերագրելով, նա շարունակում է պակասեցնել սպառնալիքը:

Հստ էության, Թըրնբուլը դրդում է տիկին Զոնսին աջակցել իրեն՝ համաձայնեցված փաստերից կազմված մի հիմք գցելու, իսկ այնուհետև այդ հիմքի վրա սկզբունքային լուծում մշակելու գործում:

ՏԱՐԱՆԴՅԱՆ ՇԱՄԱՍՆԱԿԱՆ ՎԱՐԱՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Թըրնբուլ. – Ինձ համար պարզ չէ, թե ի՞նչու ամսական վարձավճարը մեզ համար սահմանեցիք 600 դրամ: Որո՞նք էին վարձավճարի այդքան բարձր չափ սահմանելու ձեր հիմնավորումները:

Վերլուծություն: Ակզրունքային բանակցողը ո՞չ ընդունում է, և ո՞չ էլ մերժում մյուս կողմի դիրքերը: Երկխոսությունը հիմնախնդրի էության վրա սեռված պահելու նպատակով Թըրնբուլը հարցնում է տիկին Զոնսին այդ դիրքը բռնելու դրդապատճառների մասին: Նա չի հարցնում, թե արդյոք ինչոր պատճառներ եղել են, թե ոչ: Նա ենթադրում է, որ կան հիմնավոր պատճառներ: Այս շողոքորք ենթադրությունը ստիպում

Է մյուս կողմին հիմնավորումներ փնտրել, նույնիսկ եթե դրանք չկան: Արդյունքում բանակցությունը շարունակվում է՝ մնալով սկզբունքի վրա հիմնված:

Տեղական պատմություն Հայության մասին

Թըրնբուլ. – Սպասեք, տեսմեն ճիշտ եմ հասկանում արդյոք այն, ինչ դուք ասում եք, տիկին Զոնս: Ըստ ձեզ, ինչպես ես հասկանում եմ, մեզնից գանձված Վարձավճարի չափն արդարացված է, քանի որ վարձակալական վերահսկողության կողմից իրականացված վերջին գնահատումից ի վեր դուք բազմաթիվ անգամ վերանորոգել և բարեկարգել եք բնակարանը: Այնուհետև համարել եք, որ չարժե դիմել Վարձակալության վերահսկողության խորհրդին բարձրացնելու վարձավճարը այն մի քանի անհսների համար, երբ մենք էինք վարձակալել բնակարանը: Փաստորեն, դուք վարձակալության եք տվել բնակարանը միմիայն Փոլին լավություն անելու նկատառումով: Այժմ դուք մտահոգ եք, որ մենք կարող ենք անարդարացնելուն օգտվել իրավիճակից՝ փորձելով փող շորեթ ձեզանից՝ որպես բնակարանն ազատելու գին: Կա՞ արդյոք, ինչ-որ բան, որ հնարավոր է սպարել է իմ ուշադրությունից կամ սիսալ եմ հասկացել:

Վերլուծություն: Ակզրունքային բանակցությունը պահանջում է պատշաճ հաղորդակցություն: Նախքան տիկին Զոնսի փաստարկներին պատասխանելով, Թըրնբուլը դրական արտահայտություններով վերաբարձրում է այն, ինչ լսել է նրանից համոզվելու համար՝ արդյոք իսկապես հասկացել է նրան:

Զգալով, որ իրեն հասկանում են, տիկին Զոնսը կարող է փոքր-ինչ մեղմել լարվածությունը և կառուցողական քննարկումներ ծավալել հիմնախնդրի շուրջ: Նա չի կարող անտեսել Թըրնբուլի փաստարկները՝ պատճառաբանելով, թե դրանք հաշվի չեն առնում այն, ինչ ինքը գիտի: Նա այժմ, հավանաբար, հակված է լսելու և առավել բաց է փաստարկների հանդեպ: Փորձելով ամփոփել նրա տեսակետը՝ Թըրնբուլը ձեռնարկում է համատեղ մի խաղ, որի շրջանակներում երկուսն էլ փորձում են համոզվել, որ Թըրնբուլն ընկալում է փաստերը:

§°Ե»Ն Ն³Ý¹Çå»Ýù նÇã ³»ÉÇ άօՑ!

Թըրնբուլ. – Այժմ, երբ ինձ թվում է, որ հասկանում եմ ձեր տեսակետը, թույլ տվեք խոսել սենյակակցիս հետ և ներկայացնել այն նրան: Կարո՞՞ղ ենք հանդիպել վաղո՞ւ ձեզ հարմար ժամին:

Վերլուծություն: Լավ բանակցողը հազվադեպ է ոտքի վրա կարևոր որոշում կայացնում, քանի որ առկա է սիրայիր գտնվելու և ընկրկելու մղող զգակի հոգեքանական ճնշում: Կարճատև ընդմիջումը և առանձնանալն օգտակար են մարդկանց հիմնախնդրից տարանջատելու տեսանկյունից:

Լավ բանակցողը մնուենում է բանակցային սեղանին՝ գրպանում ունենալով վստահություն ներշնչող մի պատճառաբանություն, որը թույլ է տալու լրեւ սեղանը, երբ անհրաժեշտ է: Նման պատճառաբանությունը չպետք է ընկալվի որպես անգործության կամ որոշում կայացնելու անկարողության արդյունք: Տվյալ դեպքում, Թըրնբուլը գործում է այնպես, կարծես հաստատ գիտի, թե ինչ է անում և պայմանավորվում է վերսկսել բանակցությունը նշանակված ժամկետում: Նա ոչ միայն ցուցադրում է, որ հաստատակամ է, այլ նաև՝ որ վերահսկում է բանակցության ընթացքը:

Երբ այլևս բանակցային սեղանից հեռու է, նա կարող է ստուգել տեղեկությունները և խորհրդակցել իր «վստահորդի»՝ Փոլի հետ: Նա կարող է խորհել որոշման շուրջ և հավաստիանալ, որ դեռևս չի կորցրել հաջողության հասնելու հեռանկարը:

Երկար ժամանակ բանակցային սեղանի շուրջ գտնվելը կարող է նվազեցնել սկզբունքային բանակցության կանոններին հետևելու մարդկանց ցանկությունը: Վերադառնալով բանակցային սեղանի շուրջ վերագտած վճռականությամբ՝ Թըրնբուլը կարող է մեղմ գտնվել անձի հանդեպ, կոշտ՝ խնդրի:

§ԱԱԾՈՒԵ մ»ն ՅՅ»Է, Ա» Օ»ն ՞ՈՒ ան ՞ՅԵՐԵ՞ՈՒ»ն Յ» ան
'ԱՐԵ՞ՅԱԾՈՒ »Ո ՆԵՐԵ՞ՅԵ՞

ԹԵՐՆԲՈՎ. – Թույլ տվեք նշել, ձեր 134 դոլարով ավելի վարձավճար գանձելու շուրջ այն փաստարկները, որոնք դժվարանում են հասկանալ: Որպես մի հիմնավորում՝ դուք նշեցիք բնակարանի վերանորոգումն ու բարեկարգումը: Ըստ վարձակալական վերահսկողության հսկիչ՝ որպեսզի արդարացված համարվի վարձավճարի ավելացումն ամսական 134 դոլարով, անհրաժեշտ է, որ բարեկարգման վրա ծախսված գումարը կազմի շուրջ 15 հազար դոլար: Դետարբիքի է, թե որքան գումար է ծախսվել բարեկարգման վրա: Պետք է նկատեմ, որ ոչ ինձ, և ոչ էլ Փոլին չի թվում, թե ծախսվել է 15 հազար դոլարին համարժեք գումար: Լինոլեումի վնասվածքը, որ խստացաք վերանորոգել, այդպես էլ մնաց չվերանորոգված, հյուրասենյակի հատակի անցքը՝ նույնպես: Զուգարանն անընդհատ անսարք էր: Սրանք մեր հայտնաբերած թերությունների և անսարքությունների ընդամենը մի մասն են:

ՎԵՐԱՌԵՊՐԵՋՈՒՄ: Սկզբունքային բանակցությունում պահանջվում է, որ նախ՝ ներկայացնեք ձեր բոլոր փաստարկներն, այնուհետև՝ առաջարկ անեք: Եթե սկզբունքները ներկայացվում են հաջորդիկ, դրանք հնչում են ոչ թե որպես օբյեկտիվ չափանիշներ, որոնց պետք է բավարարի ցանկացած առաջարկ, այլ սոսկ կամայական դիրքի արդարացում:

Որպեսզի ԹԵՐՆԲՈՎ կարողանա պարզ դարձնել իր փաստարկները, նա անմիջապես զգացնել է տալիս, որ բաց է փոփոխելու համոզունքները և գիտակցում է, որ անհրաժեշտ է համոզել տիկին Զոնսին: Եթե նա սկզբում ներկայացներ իր առաջարկը, տիկին Զոնսը, հավանաբար, չէր լսի դրան հաջորդող փաստարկները: Նրա միտքը զբաղված կլիներ այլ բանով՝ առարկությունների և հակընդեմ առաջարկների փնտրտուքով:

§² Յ³ ա³ է ԵԱԾՈՒԵ Ո»Յ» Յ» Ա» Ի» Յ» Յ» Յ» Յ» Ե...!

ԹԵՐՆԲՈՎ. – Ի մի բերելով բոլոր նկատառումները, որ մենք քննարկեցինք, պարզ է դառնում, որ Փոլի և ինձ համար անաշառ լուծումներից մեկը կարող էր լինել այն, որ մեզ փոփոխատուցեին

այն գումարի չափով, որը մենք վճարել ենք սահմանված առավելագույն վարձավճարից ավելի: Արդյոք ձեզ չի՝ թվում, որ սա անաշառ լուծում է:

Վերլուծություն: Թըրնբուլը ներկայացնում է առաջարկն այնպես, կարծես դա իր առաջարկը չէ, այլ համատեղ քննարկման արժանի մի անաշառ տարբերակ: Նա չի պնդում, որ դա միակ անաշառ լուծումն է, այլ՝ որ ընդամենը դրանցից մեկն է: Առաջարկը հստակ է, իսկ Թըրնբուլն ինքը չի ներքաշվում որևէ դիրքի մեջ և չի տալիս առարկելու առիթ:

§ºԱ» Ո» Յն Ն³ Ս³ Օ³ Մ³ Ա» Յն... °Ա» Ո» Յն ա» Յն Ն³ Ս³ Օ³ Մ³ Ա» Յն...!

Թըրնբուլ. – Եթե դուք և ես կարողանայինք համաձայնության գալ հենց իիմա, ապա Փոլը և ես անմիջապես կըթենք բնակարանը: Չակառակ դեպքում, վարձակալական վերահսկողության խորհրդի տեսուչի առաջարկով, մենք առանց վարձ վճարելու կշարունակենք զբաղեցնել բնակարանը և կամ հայց կներկայացնենք դատարան ընդդեմ ձեզ՝ պահանջելով փոխհատուցել գերավճարը, կրած վնասի եռակին և դատական ծախքերը: Փոլը և ես բացարձակապես հակված չենք դիմելու նշված քայլերից որևէ մեկին: Մենք վստահ ենք, որ կարող ենք կարգավորել հարցը անաշառ կերպով, այնպես, որ լուծումը գոհացնի և ձեզ, և մեզ:

Վերլուծություն: Թըրնբուլը ջանում է այնպես անել, որ տիկին Զոնսի համար իր առաջարկին «այս» ասելը դյուրին լինի: Հետևաբար, նա հենց սկզբից պարզաբանում է, որ իիմնախնդիրը լուծելու համար ընդամենն անհրաժեշտ է տիկին Զոնսի համաձայնությունը:

Ուղերձը պարունակում է մի խորամանկ հնարք. դա համաձայնության չկայացնելու այլընտրանքն է, որն էլ անհրաժեշտ է հաղորդել: Ինչպե՞ս կարող է Թըրնբուլը գլուխ բերել այդ, որպեսզի բանակցությունը չխափանվի, իսկ տիկին Զոնսն էլ որոշում կայացնելիս հաշվի առնի այդ: Նա այլընտրանքը դնում է օրյեկտիվ սկզբունքի վրա՝ հղում անելով օրինական իշխանության ներկայացուցչի՝ տեսուչին: Նա

հեռավորություն է սահմանում իր և առաջարկի միջև և չի էլ ասում որոշակիորեն, որ որևէ քայլի է դիմելու: Փոխարենը՝ նա թողնում է դա որպես հնարավորություն և շեշտում, որ չի ցանկանում կտրուկ միջոցների դիմել: Վերջապես, նա ավարտում է ուղերձը վստահություն արտահայտելով, որ փոխադարձ բավարարող համաձայնությունն ի վերջո ձեռք է բերվելու:

Թղրնբուլի ԲՀՀԱ-ն՝ իր բանակցային համաձայնության լավագույն այլընտրանքը, գուցե և ո՞չ բնակարանում մնալն է, ո՞չ էլ դատարան զնալը: Նա և Փողն արդեն վարձել են այլ բնակարան և այժմ նախընտրում են տեղափոխվել: Դժվար կլիներ նրանց համար մասնակցել դատական գործընթացին՝ հաշվի առնելով իրենց զբաղվածությունը և, եթե անգամ հաղթեին, հազիվ թե կարողանային ստանալ գումարը: Թղրնբուլի ԲՀՀԱ-ն, հավանաբար, բնակարանից տեղափոխվելն է և դադարել մտածել 670 դոլար գերավճարի մասին: Հաշվի առնելով, որ իր ԲՀՀԱ-ն թերևս պակաս գրավիչ է, քան տիկին Զոնսն է կարծում, Թղրնբուլը չի բացահայտում այսի:

§Օ»Ýն աօն³Է ԻԵԾÝ»ԾÝն Ն»é³Ý³É ³ÛÝ ³ՆԾÝ, »ñμ Ӯ»½ :
Ն³ñ Ո³ñ!

Տիկին Զոնս. – Ե՞ր եք նախատեսում տեղափոխվել:

Թղրնբուլ. – Մեր կողմից բնակարանի վարձակայության

ժամանակահատվածի և դրան համապատասխան վարձավճարի շուրջ համաձայնություն կայացնելուց հետո մենք ուրախ կլինենք տեղափոխվել ձեզ համար ամենահարմար պահին: Ո՞րն է ձեր նախնըտրած պահը:

Վերլուծություն: Զգալով, որ առկա է համատեղ օգուտ քաղելու հնարավորություն՝ Թղրբուլը նշում է, որ ցանկություն ունի քննարկել տիկին Զոնսի շահերը բավարարելու ուղիները: Ինչպես պարզվում է, Թղրնբուլն ու տիկին Զոնսն ունեն համատեղ շահ. նրանք երկուսն ել ցանկանում են, որ Թղրնբուլը տեղափոխվի որքան հնարավոր է շուտ:

Տիկին Զոնսի շահերի ներառումը համաձայնության շրջա-

նակ ոչ միայն բարձրացնում է նրա մասնակցության աստիճանը, այլև թույլ է տալիս, որ նա պահպանի իր հեղինակությունը: Մի կողմից, նա կարող է լավ զգալ, որ անաշառ լուծում են գտել, թեն դա իր համար որոշ ծախսեր է ենթադրում, մյուս կողմից, սակայն, կարող է ասել, որ հասավ այն բանին, որ վարձակալները բնակարանը սահմանված ժամկետից շուտ լրեն:

§Ե՞՞՞ Օ՞՞՞ Ն՞՞՞ Ա՞՞՞ Յ՞՞՞ Ե՞՞՞

Թըրնբուլ. – Տիկին Զոնս, Փոլը և ես գնահատում ենք այն ամենը, ինչ դուք արել եք մեզ համար, իսկ ես գոհ եմ, որ մեզ հաջողվեց կարգավորել այս վերջին խնդիրը արդարացնեն և բարիդրացնեն:

Տիկին Զոնս. – Ծնորհակալ եմ, պարուն Թըրնբուլ: Մադրում եմ ձեզ հաճելի ամառ անցկացնել:

Վերլուծություն: Թըրնբուլն ավարտում է բանակցությունը տիկին Զոնսի հետ հաշտվողական նոտայով: Նրանք, առանց անձնական հարաբերությունները շոշափելու, հաջողությամբ հաղթահարեցին հիմնախնդիրը, հետևաբար կողմերից և ոչ մեկն իրեն խարված կամ զայրացած չի զգում: Ուստի և նրանցից ոչ մեկը հավանաբար չի փորձի նենգադրուի ենթարկել կամ արհամարհել համաձայնությունը: Աշխատանքային հարաբերությունները պահպանվում են ապագայի համար:

Անկախ այն բանից, թե դուք կիրառում եք սկզբունքային բանակցության մեթոդը և բանակցային զուշիցուն, ինչպես Ֆրենկ Թըրնբուլը, կամ հրավիրում եք մի երրորդ կողմի՝ բանեցնելու մեկ տեքստի գործընթացը, հետևությունը մնում է նույնը. որպես կանոն, դուք ի վհճակի եք դրդել մյուս կողմին մտնել սկզբունքային բանակցության խարի մեջ, անգամ եթե սկզբում նրանք հրաժարվում էին դրանից:

**8 Æ± Ŷ ã å»ë í³ ñ í»É,
»ñ µ Ÿ ñ³ Ÿ ù
Ï»Ó ïáï Ñ Ý³ ñ ù Ý»ñ
»Ý µ³ Ÿ »ó Ý á õ Ù**

(Կոշտ սակարկողի սանձահարումը)

Սկզբունքային բանակցություն վարելը շատ լավ է, սակայն ինչպես վարվել, երբ մյուս բանակցողը մոլորեցնում է ձեզ, կամ փորձում հավասարակշռությունից հանել, կամ խստացնում է իր պահանջները հենց այն պահին, երբ դուք համաձայնություն կայացնելու եզրին էիք:

Կան բազմաթիվ մարտավարություններ և հնարքներ, որոնց օգնությամբ մարդիկ կարող են փորձել առավելության հասնել ձեր նկատմամբ: Դրանցից մի քանիսը քաջածանոք են բոլորիս: Դրանց ցանկը բավական մեծ է՝ ստերից և հոգեբանական գրոհից մինչև ճնշման տարատեսակ մարտավարություններ: Դրանք կարող են լինել անօրինական, անքարո կամ պարզապես տհաճ: Դրանց նպատակն է օժանդակել բանեցնողին սկզբունքներից գորկ կամային մրցավեճում ինչ-որ էական «հաղթանակ» տանելու: Այսպիսի մարտավարությունները կարող են անվանվել «նենգ սակարկություններ»:

Երբ մարդիկ զիտակցում են, որ իրենց նկատմամբ բանեցվում է նենգ սակարկության մեթոդը, նրանցից շատերն արձագանքում են դրան հետևյալ երկու եղանակներով: Առաջին տիպիկ եղանակը դրա հետ հաշտվելն է: Չարժե «խառնել կրե-

տարույնը»: Դուք կարող եք ավելորդ գլխացավանքից խուսափելու նպատակով թույլ տալ, որ մյուս կողմը շարունակի վարվել նույն կերպ կամ զայրանալ և խոստանալ ինքներդ ձեզ՝ այլևս երբեք գործ չունենալ նրանց հետ: Մինչդեռ ներկայում դուք հույս ունեք, որ ամեն ինչ լավ է լինելու և լրում եք: Շատերը պատասխանում են հենց այս կերպ: Նրանք հույս ունեն, որ եթե զիշեն այս անգամ, մյուս կողմը կրավարարվի և ավելին չի պահանջի: Սա, իհարկե, երբեմն գործում է, մինչդեռ շատ հաճախ՝ ոչ: Ահա հենց այսպես Նեվիլ Չեմբերլենը՝ Բրիտանիայի վարչապետը, 1938 թվականին արձագանքեց Հիտլերի բանակցային մարտավարությանը: Մինչ Չեմբերլենը կարծում էր, որ համաձայնությունն այլևս կայացված է, Հիտլերը կոշտացրեց իր պահանջները: Մյունիենում Չեմբերլենը, հույս ունենալով, որ կարող է խոսափել պատերազմից, շարունակեց վարվել նույն կերպ: Մեկ տարի անց սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը:

Արձագանքելու երկրորդ տարածված եղանակը նույն ոճով պատասխան տալն է: Երբ նրանք սկսում են վրդովեցնելու չափ բարձրից, դուք սկսում եք նույն չափ ցածրից: Եթե նրանք խարուսիկ են, դուք նույնպես խափուսիկ եք: Եթե նրանք սպառնում են, սպառնում եք և դուք: Եթե նրանք ներփակվում են իրենց դիրքերում, դուք ներփակվում եք ձերում առավել ամուր: Վերջ ի վերջոն կամ կողմերից մեկը համձնվում է, կամ որ շատ ավելի հաճախ է պատահում, բանակցությունը խզվում է:

Նման նենազ մարտավարությունները ողջամիտ չեն, քանի որ չեն բռնում փոխադարձության քննությունը: Դրանք նախատեսված են, որ կիրառվեն միայն մի կողմից. ենթադրվում է, որ մյուս կողմը չգիտի այս մարտավարության մասին կամ, եթե անգամ գիտի, ապա ակնկալվում է, որ հանդուրժելու է: Նախորդ գլուխներում մենք քննարկել ենք, որ հիմնախնդրի էության վերաբերյալ միակողմանի առաջարկին հակահարված տալու արդյունավետ եղանակը դրանում պարունակող

սկզբունքի ողջամտությունը քննության առնելն է: Նենգ սակարկության մարտավարություններն, ըստ էության, իրենցից միակողմանի առաջարկներ են ներկայացնում բանակցային գործընթացի և բանակցային այն խաղի վերաբերյալ, որ կողմերը պատրաստվում են խաղալ: Դրանց հակագղելու համար ձեզ անհրաժեշտ է սկզբունքային բանակցություն մեկնարկել բանակցային գործընթացի շուրջ:

ԱԵՎԱԾԱՀԱՅԻ ՄՅԱՅԻԾ» Ե՞ՌԾ Ի՞ՎԱԾԱՀ» ԱՅՆԸ ՎԱԾՈՒՑ

Երբ կասկածներ կան, որ մյուս կողմը բանեցնում է նենգ մարտավարություն, քննարկեք բանակցային խաղի կանոնները հետևյալ երեք քայլերի օգնությամբ.

- բացահայտեք այդ մարտավարությունը,
- հիմնահարցը դարձրեք բացահայտ քննարկման առարկա,
- քննեք մարտավարության ողջամտությունը և իրագործման ցանկալիությունը, այսինքն՝ բանակցեք անմիջապես մարտավարության շուրջ:

Դուք նախ պեսոք է իմանաք, թե իմ է տեղի ունենում, որպեսզի կարողանաք որևէ բան ձեռնարկել դրա շուրջ: Սովորեք ճանաչել այն յուրահատուկ հնարքները, որոնք խաբեություն են պարունակում, որոնք նախատեսված են ձեզ անհարմար դրության մեջ զցելու համար և որոնք ներփակում են մյուս կողմին իրենց դիրքի մեջ: Հաճախ միայն մարտավարության բացահայտումը կարող է չնպացնել այն: Օրինակ, գիտակցելով, որ մյուս կողմը գրոհում է ձեզ անձնապես ձեր դատողությունների ընթացքը շեղելու նպատակով, դուք դրանով իսկ, ամենայն հավանականությամբ, գրոյի կիավասարեցնեք նրանց ջանքերը:

Մարտավարությունը բացահայտելուց հետո այն դարձրեք մյուս կողմի հետ քննարկման առարկա: «Լսեք, Զո՞, հնարավոր է, որ ես լիովին սխալվում եմ, սակայն ինձ մոտ տպավո-

բուրյուն է ձևավորվում, թե դուք և Թեղն այստեղ “լավ ու վատ տղաների” համրահայտ խաղն եք խաղում: Եթե տարածայնությունները հարթելու նպատակով ձեզ անհրաժեշտ է ինչ-որ պահի ընդմիջում վերցնել, պարզապես ասեք այդ մասին»: Մարտավարությունը քննարկելը ոչ միայն նվազ արդյունավետ է դարձնում այն, այլ նաև կարող է մյուս կողմին մտահոգության տեղիք տալ, որ հարաբերությունները ձեզ հետ կարող են վերջնականապես խզել: Մարտավարության մասին պարզապես հարց բարձրացնելը կարող է բավարար լինել, որ նրանք այլևս հրաժարվեն այն կիրառել:

Մարտավարության շուրջ բացահայտ հարցադրումներ անելը, թերևս, ունի իր ամենակարևոր նշանակությունը՝ այն հնարավորություն է ընձեռում ձեզ բանակցել խաղի կանոնների շուրջ: Սա էլ երրորդ քայլը: Այս դեպքում բանակցությունը հիմնախնդրի էության վրա կենտրոնանալու փոխարեն սկեռվում է ընթացակարգի վրա, սակայն նպատակը մնում է արդյունավետ և բարիդրացիական ճանապարհով խոհեմ համաձայնություն կայացնելը (խոսքն այս անգամ ընթացակարգի շուրջ համաձայնության մասին է): Եվ զարմանալի չէ, որ մեթոդը մնում է նույնը:

Տարանջատեք մարդկանց հիմնախնդրից: Մի գրոհեք մարդկանց անձնապես, այն բանի համար, որ նրանք կիրառում են այնպիսի մի մարտավարություն, որն, ըստ ձեզ, ողջամիտ չէ: Եթե նրանք պաշտպանական դիրք բռնեն, նրանց համար հավանաբար շատ ավելի դժվար կլինի հրաժարվել որդեգրած մարտավարությունից, նրանց մոտ կառաջանա զայրույթի զգացում, որը բորբոքվելով՝ կխոչընդոտի այլ հարցերի լուծմանը: Հարցականի տակ առեք մարտավարությունը, ոչ թե նրանց անձնական ազնվությունը: Փոխարենն ասենու. «Դուք դիտմանք նստեցրիք ինձ այստեղ՝ հենց արևի տակ», գրոհեք հիմնախնդիրը. «Արևն ընկնում է աչքերիս մեջ և շեղում ինձ աշխատանքից: Մինչև մենք կլուծենք խնդիրը, ես հավանաբար ստիպված կլինեմ քիչ ավելի շուտ ավարտել աշխատանքը

հանգստանալու նպատակով: Անիրաժեշտություն կա՞ վերանայելու աշխատանքային օրակարգը»: Չատ ավելի դյուրիհն կլինի վերափոխել բանակցության ընթացքը, քան վերափոխել նրանց, ում հետ գործ ունեք: Թույլ մի տվեք, որ նրանց դաստալու մղումը շեղի ձեզ բուն բանակցությունից:

ԿԵՆՏՐՈՆԱԳԵՐ ՀԱՀԵՐԻ, ոչ թե դիրքերի վրա: «Ինչո՞ւ եք նման ծայրահեղ դիրքից հանդես գալիս մանուլում: Գուցե դրանով փորձում եք պաշտպանե՞լ ձեզ քննադատությունից: Գուցե ապահովում եք ինքներդ ձեզ բռնած դի՞քը փոփոխելուց: Արդյո՞ք մեր փոխադարձ շահերից է բխում նման մարտավարություն կիրառելը»:

Առաջադրեք փոխահավետ տարբերակներ: Առաջարկեք այլընտրանքային խաղեր: «Ի՞նչ կասեք, եթե պայմանավորվենք հանդես չգալ մամուլում հայտարարություններով, քանի դեռ համաձայնության չենք հասել կամ բանակցությունը չենք խցել»:

Դահանջեք, որպեսզի օրյեկտիվ չափանիշներ կիրառվեն: Նախ և առաջ, հաստատակամ եղեք սկզբունքների հարցում: «Ո՞րն է ինձ ցածր արողի վրա, մեջքով դեպի բաց դուռը նստեցնելու հիմնավորումը»: Փորձարկեք նրանց վրա փոխադարձության սկզբունքը: «Կարո՞ղ եմ ենթադրել, որ վաղն առավոտյան դուք եք նստելու այս արողին»: Զևակերպեք յուրաքանչյուր մարտավարության հիմքում ընկած սկզբունքն այնպես, որ դրանք հնչեն որպես խաղի կարգավորման «կանոններ»: «Հերթ սահմանե՞նք, թե հաջորդ օրն ով է մյուսի վրա սուրճ թափելու»:

Որպես վերջին ապավեն դիմեք Ձեր ԲՀԼԱ-ին և հեռացեք: «Ինձ մոտ տպափորւթյուն է ստեղծվում, որ դուք կարծես հետաքրքրված չեք բանակցելու այս ճանապարհով, որը, ինչպես երկուս էլ համոզված ենք, կարող է արդյունքի հանգեցնել: Վերցրեք իմ հեռախոսահամարը, և եթե գտնում եք, որ սխալ փում եմ, ապա պատրաստ եմ կրկին հանդիպել ձեզ հետ ցանկացած պահի, երբ ձեզ հարմար կինի: Իսկ մինչ այդ մենք

հետամուտ կլինենք դատարան դիմելու տարրերակին»: Եթե դուք լքում եք խաղը զուտ ողջամտությունից դրդված, հաշվի առնելով, որ ձեզ մտածված կերպով մոլորության մեջ են զցել փաստերի կամ իրենց լիազորությունների առնչությամբ, և, եթե նրանք անկեղծորեն հետաքրքրված են համաձայնության գալու հարցում, ապա նրանք հավանաբար հետ կկանչեն ձեզ սեղանի շուրջ:

«» ԵՌՅԱՆԱՌԱՋԱԾԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎՈՐ ՀԱՆՉԱՐԵՐ»

Նենց մարտավարությունները կարող են դասակարգվել ըստ հետևյալ երեք խմբերի՝ դիտավորյալ խարեւություն, հոգեբանական պատերազմ և դիրքային ճնշում: «Դուք պետք է պատրաստ լինեք դիմակայելու բոլոր երեքին էլ: Ստորև ներկայացնում ենք տարածում գտած մի շարք օրինակներ՝ ըստ առանձին խմբերի և յուրաքանչյուրի համար պարզաբանում, թե ինչպես կարելի է սկզբունքքային բանակցությունը հակադրել դրանց:

«» ԵՌՅԱՆԱՌԱՋԱԾԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎՈՐ ՀԱՆՉԱՐԵՐ»

Կեղտուտ հնարքների ամենատարածված ձևը, հավանաբար, փաստերի, լիազորությունների և մտադրությունների կեղծ ներկայացնումն է:

Կեղծ փաստեր: Բանակցային հնարքներից ամենահին ձևը գիտակցարար կեղծ հայտարարություններ անելն է. «Այս մերենան վարել է մի մեծահասակ կին Պասարենայից, որը երբեք չի գերազանցել արագությունը ժամում 40 կիլոմետրից և հասցրել է վարել ընդամենը վեց հազար կիլոմետր»: Կեղծ հայտարարությանը հավատալու վտանգը չափազանց մեծ է: Ի՞նչ կարող եք անել:

Տարանջատեք մարդկանց հիմնախնդիրներից: Քանի դեռ որևէ մեկին վստահելու հիմնավոր պատճառ չունեք, մի վստահեք: «Դրույթից չի բխում, որ այդ կերպ դուք ստախոս եք անվանում դիմացինին. դրանով դուք ուղղակի շարունակում եք բանակցությունը՝ դարձնելով այն վստահության խնդրից անկախ: Թույլ մի տվեք, որ ձեր կասկածները որևէ մեկի կողմից

մեկնաբանվեն որպես գրոհ անձի վրա: Ոչ մի վաճառող հավանաբար չի համաձայնվի հանձնել ձեզ վաճառվող ժամացույցը կամ ավտոմեքենան՝ հիմնվելով սուկ բանկում դրամ ունենալու մասին ձեր հայտարարության վրա: Այնպես, ինչպես վաճառողը ուղղակի կսուզի ձեր հաշիվը բանկում («քանի որ այս քան շատ են շրջապատում այնպիսիները, որոնց չի կարելի վստահել»), նույն կերպ էլ դուք կարող եք վերաբերվել մյուս կողմի հայտարարություններին: Փաստերի համապատասխանութան ճշտումը նվազեցնվում է խարեւության դիմելու դրդապատճառները և խարված լինելու վտանգը:

Անորոշ լիազորություններ: Մյուս կողմը կարող է ստիպել ձեզ հավատալ, որ ինչպես դուք, իրենք ևս օժտված են փոխզիջման գնալու բոլոր լիազորություններով, այնինչ իրականում դա այդպես չէ: Ձեզ վրա հնարավոր առավելագույն ճնշում գործադրելուց հետո, երբ դուք վստահ եք, որ մշակվել է մի կայուն համաձայնագիր, նրանք հանկարծ հայտարարում են, որ այն վավերացնելու համար պարտավոր են ստանալ էլի ինչ-որ մեկի համաձայնությունը: Այս հնարքի նպատակն է՝ ստեղծել «ամբողջից ևս մի պատառ պոկելու» հնարավորություն:

Նման իրավիճակներից անհրաժեշտ է խուսափել: Այն դեպքում, երբ միայն դուք եք լիազորված զիջումներ անելու, որեմն միայն դուք կարող եք գնալ զիջումների:

Միայն այն փաստը, որ մյուս կողմը գտնվում է ձեր կողքին և բանակցում ձեզ հետ, դեռևս չի նշանակում, որ նրանք օժտված են ամբողջական լիազորություններով: Ապահովագրական գործակալը, իրավաբանը կամ առևտրային միջնորդը կարող են տպավորություն ստեղծել, թե ձեր ճկունությունը համարժեք է իրենց ճկունությանը: Ավելի ուշ դուք կարող եք պարզել, որ այն, ինչը ձեր կարծիքով վերջնական համաձայնություն էր, մյուս կողմն օգտագործելու է ընդամենը որպես հիմք հետագա բանակցությունների համար:

Նախքան առ ու տուրին անցնելը, պարզեք, թե ինչ լիազո-

բություններով է օժտված մյուս կողմը: Միանգամայն ողջամիտ է հարցնել «Ինչպիսի՝ լիազորություններով եք օժտված այս բանակցության շրջանակներում»: Եթե պատասխանը կասկածի տեղիք է տալիս, դուք հավանաբար ցանկություն կիայտնեք քննարկումները վարել համապատասխան լիազորություններով օժտված այլ մեկի հետ կամ պարզորոշ կերպով հասկացնել կտաք, որ հավասար ազատություն եք վերապահում ձեր կողմին՝ վերանայելու համաձայնության ցանկացած կետ:

Եթե նրանք անսպասելիորեն հայտարարում են, թե այն, ինչը ձեզ համար վերջնական համաձայնություն էր, իրենց համար հետագա բանակցության հիմք է, պնդեք փոխադարձության վրա: «Լավ: Մենք կը նորունենք դա որպես համատեղ մշակված նախագիծ, որը կողմերին և ոչ մի բանի չի պարտավորեցնում: Սակայն, մինչ դուք կխորհրդակցեք ձեր դեկավարության հետ, ես գիշերը կմտածեմ դրա մասին և գուցե արթնանամ ինչ-որ փոփոխություններ նացնելու առաջարկներով, որոնք էլ կներկայացնեմ վաղը»: Դուք կարող եք ասել նաև. «Եթե ձեր դեկավարը վաղը հավանություն տա այս նախագծին, ես հետամուտ կլինեմ դրա դրույթներին: Հակառակ դեպքում մեզնից յուրաքանչյուրը պետք է ազատ զգա իրեն՝ փոփոխություններ առաջարկելու տեսանկունից»:

Կասկածահարույց մտադրություններ: Եթե համաձայնության դրույթներին ենթարկվելու նրանց մտադրությունները կասկածի տեղիք են տալիս, կարելի է համաձայնագրում ուղղակիորեն ներառել ստանձնած պարտավորությունների իրագործումը երաշխավորող առանձին դրույթներ:

Դիցուք, դուք՝ որպես փաստաբան, ապահարզանի շուրջ վարվող բանակցությունում ներկայացնում եք ամուսնալուծվող կնոջը: Ձեր հաճախորդը չի հավատում, որ ամուսինը կվճարի երեխայի խնամքի համար, եթե անգամ վճարում կատարելու համաձայնություն տա: Այն ժամանակը և էներգիան, որը կինն ամեն անգամ ստիպված է լինելու վատնել դատարան դիմելու համար, կարող են նաև ստիպել նրան հրաժարվել ջանքերի

գործադրումից: Ի՞նչ կարող եք անել դուք: Պարզաբանեք խնդիրը մյուս կողմի առջև և, եթե նրանք առարկեն, օգտվեք դրանից երաշխիքներ ստանալու նպատակով: Դուք կարող եք դիմել ամուսնուն ներկայացնող փաստաբանին.

– Իմ վստահորդը մտավախորժուն ունի, որ երեխայի խնամքի համար սահմանվող վճարումները երբեք էլ չեն կատարվելու: Հետևաբար ամենամյա վճար սահմանելու փոխարեն միգրուցե ավելի լավ կլիներ նրան տնից մասնաբաժին հատկացնե՞լ:

Ամուսնու իրավաբանը, հնարավոր է, որ ասեր.

– Իմ վստահորդը խիստ վստահելի անձնավորություն է: Որպես դրա ապացույց մենք համաձայնագրում գրավոր կերպով կամրագրենք մի դրույթ, որը կպարտավորեցնի նրան կատարել վճարումները կանոնավոր կերպով:

Սրան դուք կարող եք պատասխանել.

– Խնդիրը վստահելը չէ, այլ այն, թե համոզվա՞ծ եք արդյոք, որ ձեր վստահորդը կատարելու է վճարումները:

– Իհա՛րկե:

– Համոզված եք հարյուր տոկոսո՞վ:

– Այո՛, հարյուր տոկոսով:

– Այս պարագայում, կարծում եմ, չեք առարկի, եթե համաձայնագրում ներառենք հետևյալ պայմանը: Այսպես, ձեր վստահորդը համաձայնվում է կատարել վճարումներ երեխայի խնամքի համար, իսկ մենք ամրագրում ենք՝ եթե որևէ չիհնավորված պատճառով, ինչի հավանականությունն, ըստ ձեզ, հավասար է գրոյի, նա երկու անգամ չկատարի վճարումները, իմ վստահորդն ինքնըստինքյան դառնում է տան որոշակի մասնաբաժնի սեփականատեր (հանած, իհարկե, այն գումարը, որ ձեր վստահորդն արդեն իսկ վճարել է երեխայի խնամքի համար), իսկ ձեր վստահորդն այլևս ազատվում է վճարումներ իրականացնելու պարտավորությունից:

Այս պայմաններում ամուսնուն ներկայացնող փաստաբանի համար դժվար կլինի առարկել:

Փաստերի մասնակի ներկայացումը խարեռություն չէ: Փաստերի կամ ինչ-որ մեկի մտադրությունների դիտավորյալ կեղծ ներկայացումը և որևէ մեկի մտադրությունների մասնակի բացահայտումը բացարձակորեն տարրեր բաներ են: Բարեխիղծ բանակցությունը չի պահանջում մտադրությունների ամրողական բացահայտում: «Որքա՞ն է այն առավելագույն չափը, որ ի վիճակի եք վճարելու ծայրահեղ դեպքում» հարցի լավագույն պատասխանը, թերևս, կարեի է ձևակերպել հետեւյալ կերպ. «Եկեք չենթարկենք մեզ մոլորության ճանապարհով առաջնորդվելու գայթակղությանը: Եթե ձեր կարծիքով հնարավոր չէ կայացնել որևէ համաձայնություն, և մենք անտեղի ժամանակ ենք վատնում, գուցե ներկայացնենք մեր մտահղացումները մի որևէ վատահելի երրո՞րդ կողմի, որն էլ կասի, թե կա», արդյոք, համաձայնություն կայացնելու հավանականություն: Այս դեպքում չբացահայտված տեղեկությունների հանդեպ հնարավոր է դրսորել բացարձակորեն անկողմնակալ վարք:

Թա՛»մ³Շ³Ռ³Կ³»Ռ³½Ը

Այս մարտավարությունների նպատակը ձեզ անհարմարության այնպիսի զգացում պատճառելն է, որ ձեզ մոտ արքնանա բանակցությունը որքան հնարավոր է շուտ ավարտելու մի ենթագիտակցական ցանկություն:

Սքրեսային իրավիճակներ: Արդեն բավականաչափ գրվել է այն ֆիզիկական հանգամանքների մասին, որոնցում տեղի են ունենում բանակցությունները: Դուք պետք է զգայուն լինեք այնպիսի պարզ հարցերի նկատմամբ, ինչպիսին է, օրինակ, հանդիպման վայրի ընտրությունը. որտե՞ղ է տեղի ունենում հանդիպում՝ ձեր, նրանց, թե մի չեզոք դաշտում: Ի հակադրություն ընդունված իմաստության՝ երբեմն շահեկան է ընդունել մյուս կողմի դաշտում հանդիպելու առաջարկը: Դա կարող է բազալերել նրանց և դարձնել ավելի բաց ձեր առաջարկների հանդեպ, իսկ ձեզ համար, անհրաժեշտության դեպքում, շատ

ավելի հեշտ կլինի լրել բանակցությունը: Երբ, այնուամենայնիվ, թույլ եք տվել, որ մյուս կողմն ընտրի ֆիզիկական միջավայրը, ուշադրություն դարձրեք, թե ինչպիսին է այդ ընտրությունը և ինչ ազդեցություն այն կարող է ունենալ:

Հարցրեք ինքներդ ձեզ, արդյոք չե՞ք զգում սրբեսային լարվածություն: Եթե այս, ապա ի՞նչն է պատճառը: Այն դեպքում, երբ սենյակը չափից ավելի աղմկոտ է, եթե սենյակում շատ շոգ է կամ ցուրտ, եթե գործընկերների հետ մասնավոր փակ խորհրդակցություն իրականացնելու նպատակով սենյակ չի հատկացվել, ապա ի նկատի ունեցեք, որ միջավայրը հավանաբար դիտավորությամբ է այդպես նախատեսվել, որպեսզի ձեզ մոտ բանակցությունները շտապ եզրափակելու ցանկություն առաջանա՝ նույնիսկ զիշումների գնով:

Եթե ֆիզիկական միջավայրի ընտրության հարցում նկատում եք դիտավորություն, մի վարանեք ասել դրա մասին: Դուք կարող եք առաջարկել փոխել արոռները, ընդդի՛զում վերցնել կամ տեղափոխել հանդիպումը մեկ այլ վայր կամ այլ ժամանակ: Յուրաքանչյուր դեպքում դուք պետք է կարողանաք ճանաչել իհմնախնդիրը, ներկայացնել այն մյուս կողմին, այնուհետև օրյեկտիվ և սկզբունքային եղանակով բանակցել ֆիզիկական միջավայրը բարելավելու հարցերի շուրջ:

Գրոհ անձերի վրա: Ի հավելումն ֆիզիկական միջավայրի շահարկման՝ մյուս կողմի տրամադրության տակ կան նաև բանավոր և ոչ բանավոր հաղորդակցության միջոցով ձեզ անհարմարություններ պատճառելու այլ ճանապարհներ: Նրանք կարող են քննարատական դիտողություններ անել ձեր հագուստի և տեսքի մասին: «Այնպիսի տեսք ունեք, կարծես ողջ զիշերն արքուն եք եղել: Գրասենյակում ինչ-որ բան կարգին չէ»: Նրանք կարող են այնպիսի վերաբերմունք ցուցաբերել ձեր հանդեպ, որը հարիր չէ ձեր կարգավիճակին. սպասեցնել ձեզ կամ ընդհատել բանակցությունները այլ մարդկանց հետ հարցեր քննարկելու նպատակով: Նրանք կարող են ենթադրել, որ դուք անիրազեկ եք: Կարող են անթաքույց հրաժարվել լսել

ձեզ և ստիպել, որ կրկնվեք: Կարող է մտածված կերպով խուսափեն խոսակցության ընթացքում ձեր աչքերին նայելուց: (Ուսանողների շրջանում իրականացված փորձերը հաստատել են, որ նրանցից շատերը տիհաճ զգացողություններ են ունեցել, երբ իրենց հանդեպ կիրառվել է նշված մարտավարությունը: Հետաքրքիր է, որ նրանք ի վիճակի չեն եղել բացահայտելու խնդրի պատճառը): Ամեն դեպքում, մարտավարության ճանաչումը կօգնի չեղոքացնել դրա ազդեցությունը, իսկ խնդրի բացահայտ քննարկումը, հավանաբար, կկանխի դրա կրկնությունը:

«Լավ ու վատ տղայի» հանրահայտ հնարքը: Հոգեբանական ճնշման ձևերից մեկը, որը նաև խարեւություն է պարունակում, «լավ ու վատ տղայի» հանրահայտ հնարքն է, որն իր կատարյալ դրսերումն է ստացել ոստիկանության աշխատանքին նվիրված հին կինոնկարներում: Առաջին ոստիկանն սպառնում է կասկածյալին քրեական հետապնդմամբ՝ մեղադրելով նրան մի շարք քրեական հանցագործությունների մեջ, ուժեղ լույս է գցում նրա դեմքին, հրմշտում նրան, վերջապես դադարեցնում է և հեռանում: Այնուհետև գալիս է «լավ տղան», անջատում է լույսը, սիգարետ է առաջարկում կասկածյալին և ներողություն խնդրում կոպիտ ոստիկանի փոխարեն: Նա ասում է, որ կցանկանար վերահսկել կոպիտ տղայի գործողությունները, սակայն չի կարող անել այդ, քանի դեռ կասկածյալը չի համագործակցում իր հետ: Արդյունքում կասկածյալը պատմում է ամենն, ինչ որ գիտի:

Նույնը կարող է տեսիլ ունենալ բանակցության ընթացքում, երբ միևնույն կողմը ներկայացնող երկու անձիք ձևացնում են, թե վիճում են: Մեկը կարող է կոչշու դիրք գրավել.

– Այս գործերն արժեն ութ հազար դրամ և ոչ մի ցեմտ պակաս:

Նրա գործընկերը ձևացնում է, թե ցավում է գործընկերոց նման վերաբերմունքի համար և փոքր-ինչ շփոթված է: Վերջապես նա միջամտում է.

– Ֆրանկ, քո առաջարկը խելամիտ չէ: Վերջիվերջո այս գրեթեն երկու տարվա հնություն ունեն, թեև գրեթե չեն օգտագործվել:

Այնուհետև, դառնալով մյուս կողմին, առաջին հայացքից խելամիտ թվացող առաջարկ է անում.

– Կարո՞՞ղ եիք վճարել 7600 դոլար:

Զիջումը մեծ չէ, մինչդեռ թվում է, թե ձեզ լավություն են արել:

«Լավ ու վաստ տղայի» հանրահայտ հնարքը հոգեբանական աճպարարության մի ձև է: Եթե այն ճանաչեք, ապա չեք տրվի դրան: Եթե «լավ տղան» կատարում է իր քայլը, դիմեք նրան նույն հարցով, որը տվել էիք «վաստ տղային».

– Շատ զգացված եմ, որ փորձում եք խելամիտ առաջարկ անել, այնուամենայնիվ, կցանկանայի իմանալ՝ ինչո՞ւ եք կարծում, որ ձեր առաջարկածն անաշառ գին է: Ո՞րն է այն սկզբունքը, որի վրա հիմնվում եք: Ես պատրաստ եմ վճարել անգամ ութ հազար դոլար, եթե միայն ձեզ հաջողվի համոզել ինձ, որ դա ամենաանաշառ գինն է:

Սպառնալիքներ: Սպառնանքը բանակցության ընթացքում ամենաչարաշահիվող մարտավարություններից մեկն է: Թվում է, թե շատ ավելի դյուրին է սպառնալ, քան առաջարկ ներկայացնել: Պահանջվում է արտաքերել ընդամենը մի քանի քառ և, եթե դա գործի, դուք երբեք էլ ստիպված չեք լինի ասկածն իրագործել: Սակայն սպառնալիքներն աճող պարույրի տրամաբանությամբ կարող են հանգեցնել հակընդրեմ սպառնալիքների, ինչի հետևանքով կարող է խարարվել բանակցության ընթացքը և հնարավոր է նույնիսկ, որ փշանան հարաբերությունները:

Սպառնալիքները ճնշման մի ձև են, իսկ ճնշում գործադրելու հետևանքով հաճախ ձեռք է բերվում սպասվածից տրամագծորեն հակառակ արդյունք. այն իրակրում է հակադարձ ճնշում: Մյուս կողմի որոշում կայացնելու գործընթացը դյուրին դարձնելու փոխարեն, ճնշման գործադրումը հաճախ շատ ա-

Վելի է դժվարացնում այն: Ի պատասխան արտաքին ճնշման՝ արհմիությունը, կոմիտեն, ընկերությունը կամ կառավարությունը կարող են միավորել իրենց ուժերը: Չափավորներն ու կոշտ կուրսի կողմնակիցները միավորվում են՝ դիմակայելու այն բանին, ինչն իրենց գնահատմամբ հարկադրանք պարտադրելու ապօրինի փորձ է: «Պե՞տք է արդյոք կայացնենք այս որոշումը» հարցը վերափոխվում է «Պե՞տք է արդյոք ենթարկվենք արտաքին ճնշմանը» հարցին:

Փորձառու բանակցողները հազվադեպ են դիմում սպառնալիքների: Նրանք դրանց կարիքը չունեն, քանի որ գոյություն ունեն անհրաժեշտ տեղեկությունները տեղ հասցնելու այլ ճանապարհներ: Եթե գտնում եք, որ տեղին է նկարագրել մյուս կողմի գործողությունների հնարավոր հետևանքները, ապա մատնաշեք նրանք, որոնք կարող են ի հայտ գալ ձեր կամքից անկախ, ոչ թե նրանք, որոնք կարող են տեղի ունենալ ձեր կամքից կախված: Զգուշացումները շատ ավելի ողջամիտ են, քան սպառնալիքները և խոցելի էլ չեն հակադարձ սպառնալիքների կողմից. «Արժե՞» արդյոք ձախողել համաձայնության կայացումն այն դեպքում, եթե, ինչպես ինձ է թվում, մեծ է հավանականությունը, որ մամուլ կստիպի հրապարակել այս զգվելի պատմության մանրամասները: Հասարակական նման հետաքրքրության առկայության պայմաններում չեն պատկերացնում, թե ինչպե՞ս կարող ենք ողջամտորեն կանխել տեղեկատվության արտահոսքը: Համամի՞տ չեք»:

Որպեսզի սպառնալիքներն արդյունավետ ազդեցություն ունենան, անհրաժեշտ է, որ դրանք հաղորդվեն հստակորեն: Դուք երբեմն կարող եք ներգործել հաղորդակցման այդ ընթացքի վրա: Դուք կարող եք արհամարհել սպառնալիքները, կարող եք համարել անհիմն, շտապողականության մեջ ասված կամ պարզապես գործին չվերաբերող: Կարող եք նաև այնպես անել, որ սպառնալն ինքը վտանգավոր լինի: Ածխահանքերից մեկում, որտեղ սույն գործի հեղինակներից մեկը միջնորդություն էր իրականացնում, տեղադրված պայքուցիչների

մասին բազմաթիվ կեղծ ահազանգեր էին ստացվում և մեծ վնասներ հասցնում ծեռնարկությանը: Այն բանից հետո, երբ ընդունարանի գործավարութիւն սկսեց բոլոր հեռախոսագնութիւններին պատասխանել «Զեր ձայնը ձայնագրվում է: Ո՞ր համարով եք զանգահարում» արտահայտությամբ, կեղծ ահազանգերի թիվը կտրուկ նվազեց:

Երբեմն ձեզ ուղղված սպառնալիքները կարող են վերածվել նրանց նկատմամբ ձեր քաղաքական առավելությունների: Արհմիությունը կարող է հայտարարություն տարածել մամուլում. «Ընկերության դեկավարության փաստարկներն այնքան թույլ են, որ նրանք ստիպված դիմում են սպառնալիքների»: Այնուամենայնիվ, լավագույն պատասխանն սպառնանքին, հավանաբար, սկզբունքայնությունն է: «Մենք համապատասխան հակաքայլեր ենք մշակել դեկավարության կողմից հնչեցված յուրաքանչյուր սպառնալիքի հանդեպ: Սակայն, առայժմ ձեռնպահ ենք մնում գործողությունների դիմելուց, քանի դեռ չենք պարզաբանել, թե ինչարավոր է արդյոք համատեղել մեր կարծիքները այն բանի շուրջ, որ սպառնալիքն ամենակառուցղղական միջոցը չէ, որ պետք է կիրառենք հենց այս պահից» կամ. «Ես բանակցում եմ միայն էության շուրջ: Իմ հեղինակությունը կառուցված է այն բանի վրա, որ ես չեմ պատասխանում սպառնալիքներին»:

«ՉՌԱՆՑՈՒՅ ԽՎԱՐԵՑ ԱՌԱՋԱԴԱՌԱՅ»»

Սակարկության այս մարտավարության նպատակն այն-պիսի մի իրավիճակ ձևավորելն է, որտեղ գործնականում զիջումների կարող է գնալ կողմերից միայն մեկը:

Քանակցելուց հրաժարվելը: Երբ ամերիկացի դիվանագետներն ու դեսպանատան աշխատակազմը պատասխանդ է ին վերցվել Թեհրանում 1979 թվականի նոյեմբերին, Իրանի կառավարությունը հայտարարեց իր պահանջները և հրաժարվեց բանակցել: Փաստաբանները հաճախ են դիմում ննան քայլի, պարզապես ասելով հակառակ կողմի փաստաբանին. «Կհան-

դիպենք դատարանում»: Ի՞նչ կարող եք ձեռնարկել, երբ մյուս կողմն ընդհանրապես հրաժարվում է բանակցել:

Առաջին. դիտարկեք մարտավարությունը որպես բանակցային մի հնարք. փորձ՝ օգտագործելու բանակցության մեջ մտնելու համաձայնությունը որպես սակարկային խաղաքարտ՝ էության շուրջ ինչ-որ զիջումներ կորզելու նպատակով: Սրա տարրերակներից մեկը նախապայմաններ սահմանելն է՝ որպես բանակցության մեջ մտնելու զին:

Երկրորդ. քննարկեք, թե ինչու են նրանք հրաժարվում բանակցել: Հաղորդակցության մեջ մտեք անմիջականորեն կամ երրորդ կորմի միջնորդությամբ: Մի գրոհեք նրանց, այն պատճառով որ հրաժարվում են բանակցել: Ավելի լավ է բացահայտեք, թե որոնք են բանակցությունից խուսափելու նրանց շահերը: Գուցե նրանց մտահոգում է, որ նստելով ձեզ հետ քննարկման սեղանի շուրջ, լրացուցիչ քաշ են հաղորդում ձեր կարգավիճակին: Միգուցե անձիք, ովքեր բանակցության մեջ կմտնեն ձեզ հետ, կորակվեն որպես «մեղմ» և քննադատությա՞ն կարժանանան: Գուցե նրանք կարծում են, որ բանակցությունը կսասանի նրանց շարքերում հաստատված, առանց այդ էլ անկայուն ներքին համախմբվածությունը կամ գուցե նրանք պարզապես չեն էլ հավատում, որ համաձայնությունն ընդհանրապես հնարավոր է:

Առաջարկեք մի քանի տարրերակներ, օրինակ՝ բանակցություններ երրորդ կորմի մասնակցությամբ, բանակցություններ նամակագրական հաղորդակցության եղանակով կամ ինչ-որ մասնավոր անձանց ներգրավմամբ, ասենք օրինակ՝ լրագրողների, որպեսզի նրանք քննարկում ծավալեն հիմնահարցի շուրջ (ինչպես տեղի ունեցավ Իրանի դեպքում):

Եվ վերջապես, պնդեք, որ կիրառվեն սկզբումքները: Արդյո՞ք նրանք ցանկանում են, որ դուք այս կերպ մտնեք խաղի մեջ: Ցանկանու՞ն են, որ դուք ևս նախապայմաններ առաջադրեք: Կցանկանա՞ն արդյոք նրանք, որ մյուսներն էլ հրաժարվեն բանակցել իրենց հետ: Որո՞նք են այն սկզբունքները, որ,

ըստ իրենց, պետք է կիրառվեն այս իրավիճակում:

Ծայրահեղ պահանջներ: Հաճախ որոշ բանակցողները բանակցության հենց սկզբից ներկայացնում են ծայրահեղ առաջարկներ, օրինակ՝ առաջարկում են 75 հազար դրամ այն տան համար, որի արժեքն ակնհայտորեն 200 հազար դրամ է: Այս մոտեցման նպատակը ձեր սպասելիքները նվազեցնելն է: Նրանք կարծում են նաև, որ ծայրահեղ նախնական դիրքը կարող է հանգեցնել ավելի լավ վերջնական արդյունքի, հույսները դնելով այն բանի վրա, որ կողմերը վերջին հաշվով գնալու են փոխզիջումների իրենց դիրքերի միջև: Մինչդեռ այս մոտեցումը որոշ բերություններ ունի նույնիսկ նենակ բանակցողների համար: Ներկայացնելով ծայրահեղ պահանջներ, այն դեպքում, երբ չկա տարակարծություն, որ դրանք մերժվելու են, նրանք խարարում են իրենց համեստ վստահությունը: Հետևաբար, բանակցության նման մեկնարկը կարող է նաև տապալել գործարքը. երբ նրանք մեկնարկում են չափազանց ցածր առաջարկից, դուք հավանաբար կմտածեք, որ չարժե նույնիսկ գործ ունենալ նրանց հետ:

Այս դեպքերում շատ լավ է գործում նրանց ուշադրությունը մարտավարության վրա սևեռլը: Պահանջեք, որ սկզբունքային արդարացում տան իրենց դիրքին, մինչև որ այն ծիծաղելի դառնա նույնիսկ իրենց համար:

Աճող պահանջներ: Բանակցության ընթացքում կողմերից մեկը կարող է իր յուրաքանչյուր զիջման դիմաց խստացնել նաև իր պահանջներից որևէ մեկը, ինչպես նաև վերստին անդրադանալ այն հարցին, որն, ըստ ձեզ, արդեն կարգավորված էր: Այս մարտավարության առավելությունները հետևյալն են՝ այն նախ նվազեցնում է ամբողջական զիջման անհրաժեշտությունը և երկրորդ, հոգեբանական այնպիսի ազդեցություն է ապահովում, որի արդյունքում դուք ջանում եք արագ համաձայնություն կայացնել, բանի դեռ նա ավելի չի խստացրել իր պահանջները:

1971 թվականին Մալթայի վարչապետը Սեծ Բրիտա-

նիայի հետ ծովային և օդային հենակայանների վճարի շուրջ բանակցությունների շրջանակներում կիրառեց հենց այս մարտավարությունը: Յուրաքանչյուր անգամ, երբ բրիտանացիներին թվում էր, թե համաձայնությունն այլևս ձեռք է բերված, նա ասում էր. «Այո, համաձայն եմ, սակայն կա մի փոքր խնդիր ևս», և այդ փոքր խնդիրը վերածվում էր 10 միլիոն կանչիկ վճարի կամ հենակայանի և նապաշինարանի անձնակազմի համար անժամկետ, պայմանագրային հիմունքներով երաշխավորված աշխատանքի:

Մարտավարությունը բացահայտելուց հետո այն անմիջապես դարձրեք նրանց ուշադրության առարկան, այնուհետև ընդմիջում վերցրեք, որպեսզի խորհեք, թե արդյոք ցանկանում եք շարունակել բանակցությունները և, եթե այո, ապա ինչ հիմունքներով: Այս կերպ դուք կխոսափեք պահային հակազդեցությունից և կընդգծեք, թե որքան լուրջ եք վերաբերվում նրանց այս վարվելակերպին: Այստեղ կրկին պնդեք սկզբունքների վրա, իսկ երբ հետ վերադառնաք, յուրաքանչյուր ոք, ով հետաքրքրված է խնդիրի կարգավորմամբ, առավել լրջախոն մոտեցում կցուցաբերի:

Փակուրք մարտավարություններ: Այս մարտավարությունը նկարագրված է Թոմաս Շելինգի հանրահայտ օրինակում, որտեղ պայթուցիկ նյութեր տեղափոխող երկու բեռնատար ավտոմեքենաներ մեծ արագությամբ միաշարք ճանապարհով պահում են իրար հանդիման: Խնդիրը նրանում է, թե վրահաս վթարից խուսափելու համար բեռնատարներից որն է զիջելու ճանապարհը: Երբ բեռնատար ավտոմեքենաները բավականաշափ մոտենում են միմյանց, վարորդներից մեկը ցուցադրաբար պոկում է մեքենայի դեկը և դուրս նետում պատուհանից: Երկրորդ բեռնատարի վարորդին մնում է միայն երկու ընտրություն. ավտովթարի եւ պայթյունի հեռանկարը, կամ էլ բեռնատարը ճամփեզրի առվի մեջ զցելու տարրերակը: Սա ծայրահեռ պարտավորությունների մարտավարության մի օրինակ է, որի նպատակն է ստեղծել այնպիսի մի իրավիճակ, որ-

տեղ զիջել ուղղակի անհնար է: Կարող է տարօրինակ թվալ սակայն քուլացնելով վերահսկողությունը իրավիճակի վրա՝ դուք ուժեղացնում եք ձեր սակարկային դիրքը:

Այս մարտավարությունը մեծապես ընդունված է աշխատանքային հարաբերությունների կարգավորման շուրջ վարդող և միջազգային բանակցություններում: Արհմիության նախագահը բոցաշունչ ելույթ է ունենում իր ընտրողների առջև՝ խոստանալով, որ երբեք չի համաձայնվի աշխատավարձի բարձրացման 15 տոկոսից ցածր առաջարկի հետ: Այսպիսով, նա հայտնվում է մի իրավիճակում, որտեղ, եթե համաձայնվի 15 տոկոսից ցածր առաջարկի հետ, ապա կկորցնի դեմքը և փստահությունը: Հետևաբար ստիպված է առավել համոզիչ կերպով հորդորելու ձեռնարկության դեկավարությանը, որ արհմիությանն ուղղակի անհրաժեշտ է աշխատավարձի 15 տոկոս ավելացում:

Սակայն փակուղու մարտավարությունն իրենից մի վտանգավոր խաղ է ներկայացնում: Դուք կարող եք մերկացնել մյուս կողմի թեքքը և պարտադրել նրանց զիջումների գնալ, որոնք, այնուհետև, նրանք ստիպված են լինելու բացատրել իրենց կողմնակիցներին:

Ինչպես սպառնալիքների մարտավարությունը, այնպես էլ փակուղու մարտավարությունը կախված է հաղորդակցումից: Եթե մյուս թեռնատարի վարորդը չնկատի, որ դիմացի մեքենայի վարորդը դուրս է նետում մեքենայի դեկը, կամ եթե նա մտածի, թե դիմացի մեքենան հավանաբար կառավարման վրարային համակարգ ունի, դեկը պատուհանից դրւու նետելու գործողությունը չի ունենա սպասված ազդեցությունը: Այս դեպքում ընդհարումից խուսափելու ճնշումը հավասարապես կազդի երկու վարորդների վրա էլ:

Հետևաբար, ի պատասխան ծայրահեղ պարտավորությունների մարտավարության՝ դուք պետք է ի վիճակի լինեք ընդիհատել հաղորդակցումը: Դուք կարող եք այնպես մեկնաբանել նրանց ստանձնած պարտավորությունը, որ դրա ազ-

դեցությունը մեղմվի: «Այո, իհարկե, ես հասկանում եմ: Դուք մամուլով հայտարարել եք, որ ձեր նպատակը 200 հազար դոլարի շուրջ համաձայնություն կայացնելն է: Ինչ խոսք, կարծում եմ յուրաքանչյուրս Էլ ունենք մեր ցանկությունները: Չէի՞ք ցանկանա արդյոք ծանոթանալ իմ ցանկություններին»: Որպես այլընտրանք, կարող եք կատակել և փակուղին լուրջ չընդունել:

Դուք կարող եք դիմակայել նման մարտավարությանը՝ նաև հիմնվելով սկզբունքների վրա. «Լավ, Բո՛ք, ես հասկանում եմ, որ դուք հրապարակայնորեն հայտարարություն եք արել: Սակայն գործնականում ես երբեք չեմ զիջում ճնշմանը, զիջում եմ միայն փաստարկներին: Այժմ խոսենք խնդրի էության շուրջ»: Ինչ էլ որ ձեռնարկելու լինեք, խուսափեք ստանձնած պարտավորությունը քննարկման առանցքային հարցի վերածելուց: Սի դարձրեք այն հատուկ ուշադրության առարկա և, որպես հետևանք, մյուս կողմն ավելի բարյացակամորեն կգնա զիջումների:

Անզիջում գործընկեր: Ամենաընդունված բանակցային մարտավարություններից մեկը, որի օգնությամբ մյուս կողմը սովորաբար փորձում է արդարացնել իր անզիջում լինելը, այն է, երբ այդ կողմը ներկայացնողներից մեկն ասում է, որ ինքն անձամբ ոչ մի առարկություն չունի հիմնախնդրի շուրջ, մինչդեռ իր անզիջում գործընկերը թույլ չի տալիս իրեն համաձայնվել: «Սա միանգամայն պատճառաբանված առաջարկ է, ես համաձայն եմ: Սակայն կինս բացարձակապես չի համաձայնվում ինձ հետ այս հարցի շուրջ»:

Ծանաչեք մարտավարությունը: Որից հետո, մյուս բանակցողի հետ այն քննարկելու փոխարեն, փորձեք ստանալ նրա համաձայնությունը ներգրավված սկզբունքի առնչությամբ, անհրաժեշտության դեպքում՝ գրավոր, այնուհետև, եթե հնարավոր է, ուղղակիորեն խոսեք «անզիջում գործընկերոջ» հետ:

Հաշվարկված հապաղում: Հաճախ է պատահում, որ կողմերից մեկը փորձում է հետաձգել որոշման կայացումը մինչև

իր համար բարենպաստ պահը: Աշխատանքային պայմանների շուրջ բանակցողները հաճախ են հապաղում մինչև գործադրություն սկսելու հայտարարությանը սահմանված վերջնաժամկետը լրանալու վերջին մի քանի ժամը՝ ապավիճելով այն հավանականությանը, որ սահմանված վերջնաժամկետի հոգեբանական ճնշման տակ դեկավարությունը կարող է ավելի զիջողական դառնալ: Դժբախտաբար նրանց հաշվարկները հաճախ չեն արդարանում, և հայտարարված վերջնաժամկետն անցնում է: Եթե այլևս գործադրությունը սկսված է, դեկավարությունն իր հերթին հավանաբար կորոշի սպասել ավելի հարմար պահի, օրինակ այնքան, մինչ արհմիության գործադրությունը համար նախատեսված բյուջեն սպառվի: Բարենպաստ ժամանակին սպասելը բարձր ծախքեր պարունակող մի խաղ է:

Ի հավելումն հապաղման մարտավարությունները բացահայտելու և դրանց շուրջ բանակցելու մարտավարությանը՝ գուգահեռաբար խորհեք այնպիսի պայմաններ ստեղծելու մասին, որ մյուս կողմն ընկալի իրավիճակը՝ որպես հետզհետեւ կորավոր հնարավորություն: Եթե դուք ներկայացնում եք մի ընկերություն, որը մեկ այլ ընկերության հետ բանակցում է միավորվելու շուրջ, գուգահեռաբար սկսեք բանակցել նաև մի երրորդ ընկերության հետ՝ բացահայտելու նրանց հետ միավորվելու հնարավորությունը: Փնտրեք այնպիսի օրյեկտիվ հանգամանքներ, որոնցից օգտվելով կարող եք սահմանել վերջնաժամկետներ: Այդպիսի հանգամանքներ կարող են լինել հարկերը վճարելու վերջնաժամկետը, հոգաբարձուների խորհրդի տարեկան նիստը, պայմանագրի կամ օրենսդիր մարմնի նատաշրջանի ավարտը:

«Վերցրեք կամ հեռացեք»: Ըստ էության մյուս կողմին կոշտ ընտրության առջև կանգնեցնելու մեջ չկա անարդարացի որևէ բան: Իրականում ամերիկան գործարար աշխարհի մեծ մասը դեկավարվում է այս եղանակով: Եթե դուք մտնում եք հանրախանութ և տեսնում, որ լոբու պահածոյի տուփի վրա

նշված է 75 ցենտ, դուք չեք փորձում բանակցել գնի շուրջ խանութի կառավարչի հետ: Սա գործարարությամբ գքաղվելու արդյունավետ մի մեթոդ է, սակայն այն բանակցություն չէ և ոչ էլ անմիջական քննարկումների արդյունքում որոշման կայացում: Եվ անարդարացի ոչինչ չկա նրանում, որ երկար բանակցություններից հետո, երբ նպատակադրվում եք ավարտել դրանք, ասեք. «Եթե ցանկանում եք, համաձայնվեք, եթե ոչ, ապա հեռացեք», թերևս անհրաժեշտ է միայն այդ արտահայտությանն առավել բարեկիրք ձևակերպում տալ:

Որպես «վեճը եք կամ հեռացեք» մարտավարությունը ճանաչելու և դրա շուրջ բանակցելու այլընտրանք՝ սկզբում փորձեք անտեսել այն: Շարունակեք խոսել, կարծես ոչինչ չեք լսել, կամ փոխեք խոսակցության թեման, ասենք՝ ներկայացնելով այլ լուծումներ: Եթե դուք, այնուամենայնիվ, որոշել եք քննարկել մարտավարությունը, արեք այնպես, որ նրանք գիտակցեն, թե ինչ են ստիպված լինելու կորցնել, եթե համաձայնություն չկայացվի, և միևնույն ժամանակ փնտրեք դեմքը պահպանելու ճանապարհ, օրինակ, այնպես փոփոխեք հանգամանքները, որպեսզի նրանք ի վիճակի լինեն դուրս գալու այդ իրավիճակից: Այն բանից հետո, երբ ձեռնարկության դեկավարությունը հրապարակում է իր վերջնական առաջարկը, արհմիությունը կարող է դիմել նրանց. «Վերջին անգամ դուք համաձայնեցիք բարձրացնել գինը 1,69 դրամով այն ժամանակ, երբ մենք քննարկում էինք համատեղ ջանքերով գործարանի արտադրողականությունը բարձրացնելու հարցը»:

ՕԸ ԾՐՅՈՎ»Ն ½ԱՆՑ ¹»Ռ

Հաճախ դմվար է որոշել, թե ինչ է նշանակում բանակցել «քարեխաղնորեն»: Տարբեր մարդկանց համար դրա սահմանագիծը տարբեր է: Այստեղ օգտակար կարող է լինել, եթե ինքներդ ձեզ հարց տաք. «Արդյոք նմա՞ն մոտեցում կրանեցնեի մտերիմ ընկերոջս կամ ընտանիքիս անդամներից որևէ մեկի հանդեպ: Եթե իմ ողջ ասածի և արածի ամբողջական վերլու-

ծությունը հայտնվի լրագրերում, արդյոք դա ինձ շփոթության չի՝ մատնի: Գրականության մեջ նման վարքն առավելապես հերոսներին, թե՝ սրիկաներին է հարիր»: Այս հարցերի նպատակը ոչ թե արտաքին կարծիքի կարևորության ամրագրումն է, այլ ծեր անձնական ներքին արժեքների վրա լույս սփռելը: «Դուք ինքներդ պետք է որոշեք՝ արդյոք ցանկանո՞ւմ եք կիրառել մի մարտավարություն, որն, ըստ ձեզ, անբարեխիղճ է և ոչ պատշաճ ու նաև չիք ցանկանա, որ այդ կիրառվեր ծեր հանդեպ:

Օգտակար կարող է լինել, եթե բանակցության հենց սկզբում դիմեք մյուս կողմին. «Լսեք, գուցե ընդունված չէ այսպես վարվել, սակայն ես կցանկանայի իմանալ այն խաղի կանոնները, որ մենք պատրաստվում ենք խաղալ: Արդյո՞ք մենք երկուս էլ ծգուում ենք զալ համաձայնության որքան հնարավոր է շուտ և հնարավորին չափ քիչ ջանքեր գործադրելով, թե՝ պատրաստվում ենք խաղալ «կոշտ սակարկություն», որտեղ հաղթում է ամենահամառը»: Ինչպես էլ վարվեք, պատրաստ եղեք պայքարելու կեղոստ սակարկությունների մարտավարության դեմ: «Դուք կարող եք նույնքան հաստատակամ լինել որքան նրանք, նույնիսկ՝ առավել: Ավելի դյուրիհն է պաշտպանել սկզբունքը, քան ոչ ողջամիտ մարտավարությունը: Մի ստանձնեք զոհի դեր:

IV - ïºðæ²'²ÜÆ öàÊ²ðºÜ

՚»՞Ծ³Մ³ՇՑ ÷ԱՌ³՞»Շ

Երեք նկատառում

՚ԱԾՈՒ՞՞Ն ՚ԱՅՑ ՌԾԱԾՈՒ ՚ՉԾՈՉՆ

Հավանաբար, այս գրքում չկա այնպիսի մի բան, ինչի մասին դուք, ենթելով ձեր կենսափորձից, արդեն իսկ այս կամ այս չափով չգիտեիք: Մենք ընդամենը փորձել ենք միավորել առողջ մտածելակերպն ու հասարակական փորձն այնպես, որ ապահովի մտածելու և գործելու համար հարմարավետ մի հենք: Ոքքան ավելի համատեղելի են այս գաղափարները ձեր գիտելիքների և ներըմբռնման հետ, այնքան ավելի լավ: Երբ ուսուցանում էինք այս մերողը տարիների մասնագիտական փորձ ունեցող իրավաբաներին և գործարարներին, ստանում էինք հետևյալ արձագանքները. «Այժմ ես գիտեմ, թե ինչ եմ մինչ այժմ արել, և ինչու է դա երբեմն գլուխ գալիս» և. «Ես գիտեի, որ ինչ դուք ասում էիք՝ ճշմարիտ եք, որովհետև ես ինքս արդեն դրա մասին տեղյակ եի»:

՚ԵԱԻԱՆՑՆ ՚ԱՆՌԱԻ

Գիրքը կարող է ուղղորդել ձեզ խոստումնալից ճանապարհով: Այն կարող է օգնել ձեզ սովորելու՝ հնարավորություն տալով գիտակցելու գաղափարներն ու այն ամենն, ինչ անում եք:

Մինչեւ հմտություններ ձեռք բերելու գործում միայն դուք, և ոչ այլ մեկը, կարող եք օգտակար լինել ինքներդ ձեզ: Կանադայի թագավորական օրումի վարժանքների ուղեցույցների ընթերցումը ձեզ չի դարձնի ֆիզիկապես ավելի ուժեղ: Թենիսի, լողի, հեծանիվ վարելու կամ ձիավարության մասին գրականությունն ուսումնասիրելով՝ դուք չեք տիրապետի այդ մարզաձևներին: Նույնը վերաբերում է բանակցությանը:

§Ծ³ՕÃ³Ý³Í!

1964 թվականին ամերիկացի մի տղամարդ իր 12-ամյա որդու հետ վայելում էին շաբաթօրյա հիասքանչ առավոտը՝ Լոնդոնի Հայդ Պարկում ֆրիզբի¹ խաղալով։ Անգլիայում այդ ժամանակ քերին էր ծանոթ ֆրիզբին, այնպես որ շուտով նրանց շուրջ գրունողների մի փոքր խումբ հավաքվեց՝ հետեւ վելու այս տարօրինակ սպորտաձևին։ Վերջապես, ցիլինդրով մի բրիտանացի մոտեցավ հորը։

— Ներեցեք, պարո՞ն, արդեն տասնիննակ րոպե է, ինչ հետևում եմ ձեզ։ Ո՞վ է հաղթում։

Շատ դեպքերում հարցնել բանակցողին, թե ով է հաղթում, նույն է, թե հարցնել՝ ով է շահում ամուսնությունը։ Եթե դուք տալիս եք այս հարցը ձեր ամուսնության մասին, ապա հաշվեք, որ արդեն տանուլ եք տվել շափազանց կարևոր մի բանակցություն, այն է՝ ինչպիսի² խաղ պետք է խաղալ, ինչպես կառուցել հարաբերությունները միմյանց հետ և ինչպես վարվել ընդհանուր և տարամետ շահերի հետ։

Այս գիրքն այն մասին է, թե ինչպես «հաղթել» կարևոր այդ խաղում, այսինքն՝ ինչպես մեկնարկել տարածայնությունները հաղթահարելու լավագույն գործընթացը։ Որպեսզի գործընթացը լավագույնը լինի, այն, անշուշտ, պետք է պատշաճ էական արդյունքներ արձանագրի։ Հիմնախնդրի էության շուրջ հաղթանակը չի կարող լինել միակ նախատակը, թեև տանուլ տալն էլ, հիարկե, հարցի լուծում չէ։ Թե՛ տեսությունը, թե՛ փորձը ցույց են տալիս, որ սկզբունքային բանակցության մերողը կարող է վերջիվերջո հանգեցնել այնպիսի էական արդյունքների, որոնք նույնքան լավ են, որքան բանակցային որևէ այլ ռազմավարության կիրառման արդյունքում ստացված լուծումները, կամ նույնիսկ ավելի լավը։ Ավելին, մարդկային հարաբերությունների տեսանկյունից, ամենայն հավանականությամբ,

¹ Ֆրիզբի- մի քանի սամտիմետր տրամագծով թերև սկավառակ, որը խաղի մասնակիցները նետում են միմյանց (թարգ.)

218 ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

այն առավել արդյունավետ և նվազ ծախսատար է: Սենք գտնում ենք, որ այս մեթոդը հարմար է կիրառության համար և հուսով ենք, որ դուք համամիտ կլինեք:

Սա, իհարկե, չի նշանակում, թե դյուրին է փոխել սովորությունները, տարանջատել հույզերը խնդրի էռթյունից կամ մյուս կողմին ներգրավել ընդհանուր հիմնախնդրի շուրջ խոհեմ լուծում մշակելու գործում: Ժամանակ առ ժամանակ, հավանաբար, անհրաժեշտ կլինի հիշեցնեք ինքներդ ձեզ, որ ձեր առաջին հաղթանակը բանակցության պատշաճ ճանապարհ գտնելն է, ճանապարհ, որը թույլ կտա ձեզ խուսափելու վաստակած արդյունքներով բավարարված զգալու և պարկեշտ մնալու միջև ընտրություն կատարելու անհրաժեշտությունից: Դուք կարող եք վայելել երկուսն էլ:

V - i² e D² ð ð ¶ ð ø A
Ø² e A E Ü

Հարցեր անաշառության և «սկզբունքային» բանակցության մասին

- Հարց 1. Երբէ իմաստ ունի արդյո՞ք սակարկել դիրքերի շուրջ:
- Հարց 2. Ինչպե՞ս վարվել, երբ անաշառ չափորոշչների շուրջ մյուս կողմի պատկերացումներն այլ են:
- Հարց 3. Պետք է արդյո՞ք անաշառ լինել, եթե չկա դրա անհրաժեշտությունը:

Մարդկանց հետ առնչվելուն վերաբերող հարցեր

- Հարց 4. Ինչպե՞ս վարվել, երբ իհմնախնդիրը հենց մարդիկ են:
- Հարց 5. Պե՞տք է բանակցել անգամ ահաբեկիչների հետ կամ, ասենք, Յիտլերի ննան ինչ-որ մեկի հետ: Ե՞րբ իմաստ ունի չբանակցել:
- Հարց 6. Ինչպե՞ս պետք է հարմարեցնեմ իմ բանակցային մոտեցումը, որպեսզի այն հաշվի առնի մարդկանց անձնական առանձնահատկությունները, սեռերի, մշակութային և այլ բնույթի տարրերությունները:

Մարտավարությանը վերաբերող հարցեր

- Հարց 7. Ինչպե՞ս գտնեն այս հարցերի պատասխանները. որտե՞ղ պետք է հանդիպենք, ո՞վ պետք է անի առաջին առաջարկը, որքա՞ն բարձրից պետք է սկսեն:
- Հարց 8. Ավելի հստակ, տարբերակներ առաջարկելուց ինչպե՞ս անցնեմ պարտավորություններ ստանձնելուն:
- Հարց 9. Ինչպե՞ս փորձարկեն այս գաղափարներն առանց մեծ ռիսկի դիմելու:

Հարցեր իշխանության մասին

- Հարց 10. Կարո՞՞ղ է, արդյոք, բանակցելու իմ եղանակը փոփոխել որևէ բան, եթե մյուս կողմն ավելի ուժեղ է: Ինչպե՞ս մեծացնեն իմ բանակցային ուժը:

Í³ë Ñ³ñó ·ñùÇ Ù³ëÇÝ

Հարցեր անաշառության և «սկզբունքային» բանակցության մասին

Đ³ñó 1. "ñμ"; ÇÙ³ëī áõÝÇ³ñ¹Ûá±ù ë³Í³ñÍ»É¹Çñù»ñÇ Báõñç:

Դիրքային սակարգություն վարելը դժվար չէ, ուստի զարմանալի չէ, որ մարդիկ հաճախ են դրան դիմում: Այն չի պահանջում որևէ նախապատրաստական աշխատանք, հասկանալի է՝ մեծամասնության համար (եթք միմյանց լեզուն չեք հասկանում, դուք, երբեմն, կարող եք սակարգել նույնիսկ ժեստերի օգնությամբ), իսկ որոշ դեպքերում այն երաշխափրված է և կանխատեսելի: Ի հակադրություն դրան՝ դիրքերի հետևում շահեր որոնելը, փոխշահավետ տարրերակներ առաջադրելը և օբյեկտիվ չափանիշներ փնտրելն ու կիրառելը ծանր աշխատանք են ենթադրում, իսկ եթք մյուս կողմն անհիմն համառություն է ցուցաբերում, պահանջվում է նաև հոգական զավածություն և հասունություն:

Սկզբունքային բանակացույթուն վարելիս, ըստ Էռյան յուրաքանչյուր դեպքում, երկու կողմերն էլ կարող են ավելի լավ արդյունք գրանցել իրենց համար: Խնդիրն այստեղ այն է, թե արդյոք այդ բանակցույթունն արժի⁶ ներդրված լրացուցիչ ջանքերին: Ներկայացնենք դիտարկման արժանի մի քանի հարցեր:

Որքա՞ն կարևոր է խուսափել կամայական արդյունքից: Եթե բանակցում եք, թե ինչ խորության վրա պետք է կառուցվի ձեր տան հիմքը (ինչպես հինգերորդ գլխում ներկայացված օրինակում), դուք անշուշտ չեք ցանկանա սակարեկել կամայական դիրքերի շուրջ՝ անկախ այն բանից, թե որքան դյուրին

կարող էր լինել համաձայնության կայացումը: Նույնիսկ երբ դուք բանակցում եք իր տեսակի մեջ եզակի հնաօն մի ծաղկաման գնելու շուրջ, որի պարագայում հազիվ թե հնարավոր լինի գտնել օրյեկտիվ չափանիշներ, հավանաբար ճիշտ կլինի, եթե փորձեք բացահայտել առևտրային գործակալի շահերը և փնտրեք ստեղծագործական տարբերակներ: Այնուամենայնիվ, բանակցային մոտեցումն ընտրելու հարցում ուշադրության արժանի գործոններից մեկն այն է, թե որքան է ճեղ հուզում հիմնախնդրի էության շուրջ լուծում գտնելու հարցը: Ուսիկը շատ ավելի բարձր կլինի, եթե բանակցեք հասարակական նշանակության մի կառույցի հիմքի խորության շուրջ, քան` գործիքների պահեստի, և առավել մեծ, եթե այս գործարքը նախադեպ է ստեղծելու ապագա գործարքների համար:

Ի՞նչ բարդություն ունեն խնդիրները: Որքան ավելի բարդ է խնդրի էությունը, այնքան ավելի պակաս խելամիտ է ներգրավվել դիրքային սակարգության մեջ: Բարդությունը պահանջում է շահերի (որոնք կարող են լինել լինիանուր, կարող են համաձայնեցվել ստեղծագործաբար) մանրազնին վերլուծություն, իսկ այնուհետև՝ մտքային գրոհների անցկացում: Այն չափով, որ կողմերն իրենց ներգրավված են զգում հիմնախնդրին լուծում առաջադրելու համատեղ գործնթացում, նույն չափով դյուրին կլինի իրավործել թե՛ մեկը, թե՛ մյուսը:

Որքա՞ն կարևոր է պահպանել պատշաճ աշխատանքային հարաբերությունները: Եթե մյուս կողմը ծեր մշտական հաճախորդն է, նրա հետ շարունակական հարաբերությունների պահպանումը կարող է ավելի կարևոր լինել ճեղ համար, քան որևէցե գործարքի արդյունքը: Սա չի նշանակում, թե դուք պետք է պակաս հաստատակամ լինեք ճեր շահերին հետամուտ լինելու գործում, այնուամենայնիվ ենթադրում է, որ պետք է խուսափեք այնպիսի մարտավարությունից, ինչպիսիք են սպառնալը կամ վերջնազրեր ներկայացնելը, որոնք պարունակում են հարաբերությունները փշացնելու մեծ վտանգ: Խնդրի էության շուրջ բանակցելը թույլ է տալիս խուսափել

ընկրկելու կամ մյուս կողմին զայրացնելու միջև ընտրություն կատարելու անհրաժեշտությունից:

Դիբքերի շուրջ պարզ սակարկությունը կարող է գերազանց աշխատել, օրինակ, անձանոքների միջև մեկ հիմնախնդրի շուրջ բանակցություններում, որոնց դեպքում շահերը բացահայտելու հետ կապված գործարքային ծախքերը կարող են շափազանց բարձր լինել, և որտեղ յուրաքանչյուր կողմնականված է մրցակցային հնարավորություններով: Սակայն, եթե քննարկումն սկսում է դոփել տեղում, պատրաստ եղեք փոխելու մեխանիզմը: Ակսեր պարզաբանել հիմքում ընկած շահերը:

Զեր ուշադրության առարկա պիտի դառնա նաև մյուսների հետ ձեր փոխհարարերությունների վրա այս բանակցության ազդեցության խսդիրը: Արդյոք հնարավո՞ր է, որ այս բանակցությունն ազդի ձեր՝ որպես բանակցողի հեղինակության վրա և, հետևաբար, ինչպիսի՞ն է մյուսների մոտեցումը ձեզ հետ բանակցելու հարցում: Այս պարագայում, ի՞նչ ազդեցություն կցանկանայիք, որ բանակցությունն ունենար:

Որո՞նք են մյուս կողմին ակնկալիքները և որքա՞ն դժվար է դրանք փոփոխել: Աշխատամքի կառավարման և շատ այլ ոլորտներում կողմերն ունեն երկարատև պայքարի և գրեթե ծիսակարգային դարձած դիբքային սակարկությունների մեծ փորձ: Յուրաքանչյուր կողմ դիտարկում է մյուս կողմին որպես «քշնամու», իսկ իրավիճակը՝ զրոյական հանրագումարով մի խաղ՝ անտեսելով հարվածների, լոկատոնների և վատ զգացողությունների երկուստեք վիթխարի ծախքերը: Այսպիսի իրավիճակում հիմնախնդրին լուծումներ առաջադրելու համատեղ գործընթաց հաստատելն այնքան էլ դյուրին չե, չնայած այն կարող է ավելի կարևոր լինել: Անգամ իրավիճակը փոփոխել ցանկացող կողմերը գտնում են, որ իրականում շափազանց դժվար է ձերբագատվել հին սովորություններից. գրոհելու փոխարեն լսել, վիճելու փոխարեն մտքային գրոհ անցկացնել և նախքան խոստումներ տալը հետազոտել շահերը: Որոշ կող-

Քանակցային գործընթացի ո՞ր փուլում եք գտնվում: Դիրքերի շուրջ սակարկությունը միտում ունի արգելակելու համատեղ օգուտների վնատրությունը: Ըստ բանակցություններում կողմերի ձեռքբերումները լինում է այն, որ «քանակարժեք նյութի մեծ մասը բողնում են անմշակ»: Դիրքային սակարկությունը նվազ վնասակար է, եթե սակարկում եք այս բանից հետո, եթե այլև ճանաչել եք միմյանց շահերը, առաջադրել եք փոխշահավետ տարրերակներ և քննարկել եք անաշառ լինելու համապատասխան չափորոշչիները:

Đ³ñó 2. AÉÝåå»±é ïñí»É, »ñµ ³Ýåå»÷áñáBÇåÝ»ñC Båõñç ÙÛáðë ïáÖÙÇ å³ï»ñ³óáðÙÝ»ñY»ñÉ ³ÛÉ »Ý:

Բանակցություններից շատերում անհնար է լինելու գտնել միակ «ճշմարիտ» կամ «ամենաանաշառ» լուծումը. անաշառությունը գնահատելու նպատակով մարդիկ առաջ են քաշելու տարրեր չափորոշիչներ: Այնուամենայնիվ, արտաքին չափորոշիչների կիրառումը կարող է բարեկավել սակարկությունը երեք եղանակներով. նոյնիսկ այն արդյունքը, որը բնորոշվում է անաշառության մասին ունեցած և հասարակական փորձից քաղված հակասական չափորոշիչներով, հավանաբար ավելի

խոհեմ է, քան որևէ կամայական արդյունք: Չափորոշիչների կիրառումը նվազեցնում է «զիջումներով» պայմանավորված ծախքերը. շատ ավելի դյուրին է համաձայնվել հետամուտ լինելու սկզբունքին կամ մի որևէ անկախ չափորշիչի, քան ընկրկելու մյուս կողմի դիրքից բխող պահանջի առջև: Եվ վերջապես, ի տարբերություն կամայական դիրքերի, չափորշիչները կարող են լինել առավել կամ նվազ համոզիչ:

Երիտասարդ իրավաբանի և Ուոլ Սթրիթի իրավաբանական գրասենյակի միջև աշխատավարձի շուրջ վարվող բանակցությունում, օրինակ, անհերեք կինչեր, եթե գործատուն ասեր. «Զեմ կարծում, թե դուք մտածում եք, որ ինձնից առավել խելացի եք: Հետևաբար, ես ձեզ կառաջարկեմ այն նույն աշխատավարձը, որ ես ստանում էի, երբ սկսեցի իմ մասնագիտական գործունեությունը 40 տարի առաջ՝ չորս հազար ԱՄՆ դրլար»: Երիտասարդն, իհարկե, մատնացույց կանի տարիների ընթացքում աշխատավարձի վրա ինֆլյացիայի ազդեցությունը և կառաջարկի կիրառել աշխատավարձի ժամանակակից դրույքաչափեր: Իսկ եթե գործատուն առաջարկի օգտագործել Դեյրոնում¹ կամ Դես Մոյնեսում² երիտասարդ իրավաբանների համար ներկայում կիրառվող աշխատավարձի միջին դրույքաչափը, երիտասարդ իրավաբանը կնշի, որ առավել համապատասխան չափորշիչը, թերևս, Մանհեթենի համանման հեղինակավոր ընկերությունների կողմից երիտասարդ իրավաբաններին վճարվող աշխատավարձի միջինն է:

Սովորաբար մի չափորշիչը մյուսից ավելի համոզիչ կարող է լինել այնքանով, որքանով այն առավել տեղին է կիրառվում, առավել ընդունված է և անմիջականորեն կապված է ժամանակի, տեղի և այլ հանգամանքների հետ:

«Լավագույն» չափորշիչի շուրջ համաձայնության գալու անհրաժեշտություն չկա: Արժեքների, մշակույթի, փորձի և

¹ Քաղաք ԱՄՆ Օհայո նահանգում (քարգ.)

² ԱՄՆ Այովա նահանգի մայրաքաղաքը (քարգ.)

ენიკალოიმანერჩ მჩგვა თავრეტრიუქისანერნ ხა, ხავანარა, որ ստիպում ხა կողմერჩნ ჯაմაձაյნվելու თავრეტ չაփոր- շჩნერჩ ხაմაպაտაսխან აռაվելორიუქისანერჩ շոრջ: Եթե ანხრამხევ ქმნერ ხამაձაյნირები კაյაցნელ, թե չაփორ- շჩნერჩից որն է «ღაվაգույնը», բանაկցորդյան կարգավորումը կդառնար ანհնար: Հետևաբար, չაփանիշնეրի շորջ ხაմა- ձაյնირები კაյაցნეլու ანხრამხევորություն չկա: Չափանիշ- նეրნ ընդամենը գործիք ხა կողմეրի ծեռքում, որոնք կարող ხե օժանդակել նրանց՝ ხაնգելու մի ხაմაձայնորդյան, որն ավելի շահավետ կլինի, քան ხაմაձայնորդյուն չկայացնելը: Արտա- քին չაփորոշչների կիրառումը հաճախ օգնում է նեղացնել տაրածայնորդյունների շրջանակը և կարող է օժանդակել՝ ընդարձակելու հնարավոր ხაմաձայնորդյան ոլորտը: Եվ երբ չაփորոշչները բարելավված ხა այնչափ, որ այլևս դժվար է ხაմոզիչ կերպով հիմնավորել, թե այս մեկն აռավել պիտանի է, քան մյուսը, կողմերը մնացած տարածայնորդյունները հար- թելու նպատակով կարող ხե ուսումնասիրել փոխսպազման հնա- րավորությունները կամ դիմել անաշառ ընթացակարգերին: Նրանք կարող ხե վիճակ գցել, միջնորդ ներգրավել կամ փոխսպազման գիշումների գնալ:

Đ³ñó 3. à»ìù ; ³ñ¹Ûá±ù ³Ý³ã³é ÉÇÝ»É, »Ã» á»³ 1ñ³ ³ÝÑñ³-
Â»ßiáõÃÛáõÝÁ:

Սույն գիրքը ճշմարիտի և սխալի շուրջ բարոյախոսական քարող չէ. սա գիրք է բանակցության ընթացքում հաջողության հասնելու մասին։ Մենք չենք առաջարկում, որ ձեզ անհրաժեշտ է բարեխիղճ լինել հանուն բարեխիղճ լինելու (և ոչ էլ փորձում ենք հետ պահել ձեզ ձեր մտադրություններից)։ Մենք

¹ Մենք կարծում ենք, որ բացի նրանից, որ ճեղ է տրամադրվում բանակցային մի բազմակիրածանի մերորդ, որի օգնությամբ դուք կարող եք հսկել այն անենին, ինչին ծառայում եք, սկզբունքային բանակցությունը կարող է օժանդակել աշխարհի առավել համելի մի վայրի վերածելու գործին: Այն նպաստում է մարդկանց միջև փոխարժենան հասաստմանը, լինեն նրանք ծնող և երեխա, աշխատող և գործատող, թե արար և հրայեցից: Ծահերի և ստեղծագործական տարրերակների

շենք ենթադրում, որ դուք պետք է տեղի տաք վիճարկելի անաշառություն պարունակող առաջին առաջարկին: Մենք շենք ենթադրում նաև, որ դուք երբեք չպետք է պահանջեք ավելին, քան այն, ինչը դատավորի կամ երդվյալների դատարանի կողմից որակվել է որպես անաշառ: Մենք պնդում ենք միայն, որ առաջարկի անաշառությունը քննարկելու համար օրյեկտիվ չափորոշիչներ կիրառելը մի մոտեցում է, որը կարող է ինչպես օժանդակել ձեզ ձեռք բերելու այն, ինչին արժանի եք, այնպես էլ պաշտպանելու ծնկի զալուց:

Եթե դուք ցանկանում եք ավելին, քան կարող եք արդարացնել անաշառության տեսանկյունից և գտնում եք, որ, որպես կանոն, ի վիճակի եք համոզելու մյուսներին տալ ձեզ ձեր ուզածի չափ, ապա այս գրքում բերված առաջարկներից ոչ բոլորը ձեզ լինովին օգտակար կրվան: Մինչդեռ մեզ հանդիպած բանակցողներից շատերը հաճախ մտավախություն ունեն, որ բանակցության ընթացքում ձեռք են բերելու *ավելի քիչ*, քան պետք է, կամ փշացնելու են հարաբերությունները, եթե շարունակեն պնդել իրենց արժանին ստանալու վրա: Այս գրքում զետեղված գաղափարները նպատակ ունեն ցոյց տալու ձեզ, թե ինչպես կարող եք ձեռք բերել այն, ինչի իրավունքը դուք վաստակել եք՝ պահպանելով պատշաճ հարաբերություններ մյուս կողմի հետ:

Այնուամենայնիվ, երբեմն ձեզ կարող է հմարավորություն ընձեռնվել ձեռք բերելու ավելին, քան, ըստ ձեզ, արդեն իսկ

վրա սեեռվելով օգնում է մեծացնել բավարարվածությունը և նվազեցնել կորուստները: Անաշառության չափորոշիչներին վստահելը և երկու կողմերի շահերը բավարարելուն ուղղված ջանքերն օգնում են ձեռք բերել համաձայնություններ, որոնք կայուն են, վերածվում են պատշաճ նախադեպի և ծեսավորում են տևական հարաբերություններ: Եթե գործ ուներ անհատների և ազգերի միջև տարած այնությունների հետ, ապա բանակցության շրջանակներում որպան ավելի է խնդրին լուծում տարու մոտեցումն վերածվում նորմի, այնքան ավելի են նվազում հականարտության ծախքերը: Նշված սոցիալական օգուտներից զատ, հավանաբար կրացանայտեք, որ կիրառելով այս մոտեցումը, սեփական անձը բավարարելու ճանապարհով, ծառայեցնում եք այն արդարության և հոգածության արժեքներին:

անաշառ էր: Արդյո՞ք պետք է վերցնեք այդ: Մեր կարծիքով՝ ո՞չ առանց մանրազնին խորհրդածելու, քանի որ այս դեպքում խաղաղույթը շատ ավելի մեծ է, քան պարզապես բարոյական ինքնորակման շուրջ ձեր ընտրությունը: (Այն հավանաբար նույնպես արժանի է հանգամանալի քննարկման, սակայն այդ ուղղությամբ խորհրդատվությունը տվյալ գրքի նպատակը չէ): Եթե ընձեռնված է հնարավորություն ձեռք բերելու ավելին, քան, ըստ ձեզ, արդեն իսկ անաշառ է, որոք պետք է կշռեք վրահաս հաջողության հնարավոր օգուտները հանդեպ հնարավոր ծախքերի:

Որքա՞ն արժեքավոր է տարրերությունը ձեզ համար: Ո՞րն է այն առավելագույնը, որ ինքներդ ձեզ համար կարող եք համարել անաշառ: Պարզապես որքա՞ն կարևոր է ձեզ համար տվյալ չափորոշիչը գերազանցելը: Կշռեք ձեր օգուտները և հնարավոր ծախքերը, (որոնցից որոշները ներկայացվում են վարը), իսկ այնուհետև խորհեք՝ արդյո՞ք չեն կարող լինել ավելի լավ տարրերակներ: (Օրինակ, կարելի է արդյո՞ք առաջարկվող գործարքն իրագործել այնպես, որ մյուս կողմն ընկալի իրեն՝ որպես ձեզ լավություն անող, ոչ թե որպես կողոպտվող):

Խոհեմ կիխներ նաև, եթե խորհեք, թե որքան մեծ է օգուտներ ունենալու հավանականությունը: Գուցե ինչ-որ քան ձեր ուշադրությունից դո՞ւրս է սպրել: Արդյո՞ք մյուս կողմն այդ աստիճան կույր է: Շատ քանակցողներ չափազանց լավատես են, եթե ենթադրում են, որ իրենք ավելի խելացի են, քան իրենց հակառակորդները:

Արդյո՞ք կայուն կիմի ոչ անաշառ արդյունքը: Եթե հետագայում մյուս կողմն որոշի, որ համաձայնությունն անաշառ չէ, նա հավանաբար չի ցանկանա իրագործել այդ: Ի՞նչ ծախքեր կարող է պարունակել համաձայնությունը պարտադրելու կամ այն մեկ այլ համաձայնագրով փոխարինելու փորձը: Եթե դատական ատյանները գտնեն, որ համաձայնությունն «անարդար» է, կարող են իրաժարվել որս իրագործումն ապահովելու նպատակով հարկադրանքի միջոց-

ներ սահմանելուց:

Ձեզ անհրաժեշտ է դիտարկել նաև, թե ինչ փուլում է քանակցային գործընթացը: Ոչ մի գերճպաստավոր փորձնական համաձայնություն իրենից արժեք չի ներկայացնի, եթե հանկարծ մյուս կողմն արքնանա և մերժի այն, նախքան համաձայնագրի վերջնականացումը: Իսկ եթե մյուս կողմը միջադեպից հետևություններ է անում, որ դուք վստահության արժանի չեք և փորձում եք օգուտ քաղել իրենցից, ծախքերը կարող են չսահմանափակվել տվյալ համաձայնության որոշակի պայմաններով:

Ի՞նչ վնաս կարող է պատճառել ոչ անաշառ արդյունքը կողմերի հարաբերություններին: Որքա՞նով է հավանական, որ դուք նոյն կողմի հետ կրկին կնատեք բանակցային սեղանի շուրջ: Այնուամենայնիվ, եթե դա տեղի ունենա, ապա ինչպիսի՞ վտանգի առջև կհայտնվեք դուք, եթե նրանք որոշեն «Վրեժինադիր լինել»: Ի՞նչ տեղի կունենա ձեր մասին մյուսների ունեցած կարծիքի և մասնավորապես անաշառ գործի ձեր հեղինակության հետ: Գուցե այդ անբարենպաստ ազդեցությունն ավելի էական կորուստներ բերի, քան ձեր անմիջական օգուտներից հրաժարվելու:

Անաշառ գործի կայուն համբավն իրենից մի յուրօրինակ արժեք կարող է ներկայացնել: Այն կարող է երևան հանել ստեղծագործական համաձայնությունների մի մեծ ոլորտ, որոնց կայացումն անհնար կլիներ, եթե մյուսները չվստահեին ձեզ: Շատ ավելի հեշտ է կորցնել այսօրինակ հեղինակությունը, քամ՝ ձեռք բերել:

Կտանշի՞ արդյոք ձեր խիղճը ձեզ: Հնարավո՞ր է արդյոք, որ դուք հետագայում զղաք կայացված համաձայնության համար՝ համարելով, որ անարդարացիորեն օգտվել եք ինչ-որ մեկի ընձեռած հնարավորությունից: Դիտարկենք զբոսաշրջիկի օրինակը, ով մի հիասքանչ քաշմիրյան գորգ էր գնել մի ընտանիքից, որը դրա վրա աշխատել էր մի ամբողջ տարի: Նա խոստացել էր, որ կվճարի գերմանական մարկով, մինչդեռ, այ-

նուինետ վճարումն իրականացրել էր Երկրորդ համաշխարհային պատերազմին նախորդող Վեյմարյան ժամանակաշրջանի արժեզրկված դրամով: Նա միայն այն պահին սկսեց գիտակցել, թե ինչպես էր վարվել այս ընտանիքի հանդեպ, եթք վերադառնալով տուն՝ պատմեց այս պատմությունն իր ցնցված ընկերներին: Ժամանակի ընթացքում իր գեղեցիկ գորգի լոկ տեսքն անգամ սրտխառնոց էր առաջացնում իր մոտ: Ինչպես այս զբոսաշրջիկը, նույնպես և շատ այլ մարդիկ հայտնաբերում են, որ կյանքում փողից և մյուս կողմին «պարտության մատնելուց» բացի իրենք արժնորում են նաև շատ այլ բաներ:

Մարդկանց հետ առնչվելուն վերաբերող հարցեր

ԾՅՈ 4. ԱԵՅԱՅԱ»± є Ի՞՞ն»Է, »՞մ ՆԿՇԱՅՅԵՇԿԱՆ» ՞ՇՇ ՌՅՇՇ »Շ:

Որոշ մարդկանց մեկնաբանությամբ «Տարանջատեք մարդկանց հիմնախնդրից» դրույթը նշանակում է պարտակել մարդկային գործոնը: Մինչդեռ մենք կցանկանայինք շեշտել, որ բացարձակորեն այդ չեն, որ ի նկատի ունենք: Մարդկային գործոնը երբեմն ավելի մեծ ուշադրություն է պահանջում, քան հիմնախնդրի էությունը: Մարդկանց բնական հակվածությունը դեպի պաշտպանական և հակագրող վարքն է պատճառներից մեկը, որ շատ բանակցություններ ծախողվում են, եթք այլ պայմաններում համաձայնություն կայացնելը ինաստ կունենար: Եթե բանակցության ընթացքում որոշում եք անտեսել մարդկային գործոնը, այսինքն՝ թե ինչպիսին է ձեր վերաբերմունքը դեպի մյուս կողմը, դուք դրանով որոշակի ոիսկի եք դիմում:

Անկախ այն բանից՝ մարդկային գործոնը ձեզ անհանգըստացնող հարցերից մեկն է, թե ձեր բանակցության հիմնառանցքը՝ մեր հիմնական խորհուրդը նույնն է:

Զնավորեք աշխատանքային հարաբերություններ՝ ան-

կախ համաձայնության կամ անհամաձայնության առկայությունից: Որքան ավելի է խորանում ճեր անհամաձայնությունը ինչ-որ մեկի հետ, այնքան ավելի կարևոր է դառնում պահպանել անհամաձայնության շուրջ պատշաճ քննարկումներ վարելու կարողությունը։ Պատշաճ աշխատանքային հարաբերությունները նրանք են, որոնց շրջանակներում հնարավոր է հաղթահարել տարածայնությունները։ Նման հարաբերություններ հնարավոր չենք բերել էական զիջումների գնով կամ ձևացնելով, թե գոյություն չունեն տարածայնություններ։ Փորձը ցույց է տալիս, որ զիջումներ անելլ հաճախ չի օգնում։ Ներկայում շարդարացված զիջումների դիմելով՝ քիչ հավանական է, որ ապագայում դժվարությունները հաղթահարելն ավելի դյուրին կրառնա։ Դուք կարող եք մտածել, թե հաջորդ անգամ զիջում կատարելու հերթը նրանցն է, նրանք էլ, հավանարար, համոզված են, որ եթե բավականաշափ համառ գտնվեն, դուք կրկին կրնկրկեք։ (Գերմանիայի կողմից Սուրբերը¹ զավելու փաստի հետ Նեվիլ Չեմբերլենի հաշտվելի, ինչպես նաև այնուհետև Հիտլերի կողմից ողջ Չեխոսլովակիայի զավթմանը ռազմական հակահարված չտալը համոզվածություն հաղորդեց նացիստներին, որ պատերազմի առիթ չի դառնա նաև ներխուժումը Լեհաստան)։

Դուք չպետք է նաև, վտանգելով հարաբերությունները, փորձեք էական զիջում պարտադրել։ («Եթե իրոք մտածեիք իմ մասին, ապա տեղի կտայիք»։ «Եթե չհամաձայնվեք ինձ հետ, մեր հարաբերությունները չեն կարող շարունակվել»)։ Անկախ այն բանից, հաջողվում է տվյալ պահին զիջում կորպելու համար նպատակին ծառայեցնել նման հնարքը, թե ոչ՝ այն վնասելու է հարաբերությունները։ Այս դեպքում արդեն երկու կողմերի համար շատ ավելի դժվար կլինի քննարկել ապագա տարածայնությունները։

Անշուշտ, էությանը վերաբերող հարցերը պետք է քակվեն

¹ Սուրբեք – տարածք Հյուսիսային Չեխիայում, Սուրբերյան լեռներում (թարգ.)

հարաբերություններից և գործընթացային խնդիրներից: Հնարավոր համաձայնության բովանդակությունը պետք է տարանցատվի այն խնդիրներից, թե ինչպես եք դուք քննարկում այն կամ ինչպես եք առնչվում մեկդ մյուսի հետ: Նշված խնդիրներից յուրաքանչյուրը վեր է հանում հարցեր, որոնց շուրջ անհրաժեշտ է բանակցել՝ ըստ յուրաքանչյուրի բովանդակության: Ներքոհիշյալ աղյուսակն արտացոլում է տարբերությունները.

¾άծԱ Ո՞՛ՌՅԱ Խ»Ռմ»ՌնԱՕ Ռ՞ՌՆՈ»Ռ

- Ժամկետներ
- Պայմաններ
- Գներ
- Ամսաբվեր
- Քանակություն
- Պարտավորություններ

Ե՞Ռ՞Մ»ՌնԱծԱ Ո՞՛ՌՅԱ Խ»Ռմ»ՌնԱՕ Ռ՞ՌՆՈ»Ռ

- Հավասարակշռություն հույզերի և բանականության միջև
- Հաղորդակցության անկաշկանողություն
- Վատահության և հուսափության աստիճան
- Ընդունելու (մերժելու) պատրաստակամ կեցվածք
- Համապատասխան շեշտադրում համոզելու (կամ հարկադրելու) վրա
- Փոխըմբռնման աստիճան

Մարդիկ հաճախ ենթադրում են, թե բարյացակամ հարաբերություններ ապահովելու և պատշաճ էական արդյունք ձեռք բերելու միջև գոյություն ունի փոխգիշման տարր: Մենք համաձայն չենք դրա հետ: Պատշաճ աշխատանքային հարաբերությունները հակված են ավելի դյուրին դարձնելու

պատշաճ էական արդյունքի ձեռք բերումը (երկու կողմերի համար): Պատշաճ էական արդյունքներն իրենց հերթին հակված են ավելի բարյացակամ դարձնելու աշխատանքային հարաբերությունները:

Երբեմն հնարավոր է, որ համաձայնություն կայացնելու համար գոյություն ունենան հիմնավոր պատճառներ, թեև դուք համոզված եք, որ անաշառության տեսանկյունից դրանք այդքան էլ պատշաճ չեն: Օրինակ, եթե արդեն իսկ ձևավորել եք գերազանց աշխատանքային հարաբերություններ, ապա հնարավոր է, որ նպատակահարմար գտնեք զիջման գնալու խնդիրներից մեկի շուրջ՝ վատահ լինելով, որ ապագայում համապատասխան անհրաժեշտության դեպքում մյուս անձը կզիտակցի, որ «պարտական է ձեզ» և կհասուցի ձեզ փոխադարձ բարեհաճությամբ: Հնարավոր է նաև, ամեն ինչ հաշվի առնելով, խելամտորեն որոշեք, որ չարժի պայքարել մեկ կամ ավելի հարցերի համար: Մեր կարծիքն այն է, որ չաետք է տեղի տաք՝ փորձելով լավացնել հարաբերությունները:

Քանակցեք հարաբերությունների շուրջ: Երբ, ի հեճուկս աշխատանքային հարաբերություններ հաստատելու և տարածայնությունների եռթյան շուրջ բանակցելու ձեր ջանքերի, մարդկային գործոնը դեռևս մնում է շիադրահարված, բանակցեք դրանց շուրջ՝ ըստ իրենց էռթյան: Ներկայացրեք մյուս կողմի գործելակերպին առնչվող ձեր մտահոգությունները և քննարկեք դրանք այնպես, ինչպես կըննարկեիք էական տարածայնությունները: Խուսափեք նրանց մեղադրանքներ ներկայացնելուց կամ նրանց շարժառիթները վիճարկելուց: Ավելի լավ է, ներկայացրեք ձեր ընկալումներն ու զգացողությունները և հետաքրքրվեք, թե ինչպիսին են նրանց ընկալումներն ու զգացողությունները: Որոշելու համար, թե ինչպես եք պատրաստվում գործ ունենալ նիմյանց հետ, առաջարկեք արտաքին շափորոշիչներ կամ անաշառ սկզբունքներ և հրաժարվեք ընկրկել ճնշման մարտավարությունների հան-

դեպ: Քննարկումը ծավալեք այնպես, որ այն ուղղված լինի դեպի ապագան, ոչ թե դեպի անցյալը և գործեք, ենթադրելով, որ այն հետևանքները, որոնք դուք այժմ կրում եք ձեզ վրա, մյուս կողմի դիտավորության արդյունքը չեն, և որ նրանք կարող են փոփոխել իրենց մոտեցումը, եթե զգան դրա անհրաժեշտությունը:

Ինչպես միշտ, բանակցության ընթացքում դուք պետք է ամենայն մանրամասնությամբ խորհեք ձեր ԲՀՀԱ-ի շուրջ: Որոշ դեպքերում մյուս կողմն սկսում է դիտարկել ձեր մտահոգությունները որպես ընդհանուր խնդիր միայն այն ժամանակ, եթե նրանք գիտակցում են, որ ձեր ԲՀՀԱ-ն, որին դուք դիմելու եք այն դեպքում, եթե չհաջողվի մեռք բերել ձեզ բավարարող լուծում, այնքան էլ ցանկալի լուծում չէ իրենց համար:

Զանազանեք «ինչպես եք դուք վերաբերվում նրանց»-ը «ինչպես են նրանք վերաբերվում մեզ»-ից: Կարիք չկա ընդորինակել ոչ կառուցղական վարքագիծը: Ընդորինակելով, ինչ խոսք, կարող ենք նրանց մի լավ «ուստιւածական» պատճեն կազմել: Չատ դեպքերում, նույն կերպ պատասխանելով, խթանում ենք մեզ համար ոչ դուրեկան վարքագիծը: Այն տպավորություն է ստեղծում մյուս կողմի մոտ, թե բոլորը նույն կերպ են վարվում, և որ դա է ինքնապաշտպանության միակ ճանապարհը: Մենք պետք է մշակենք մեզ համար մի օրինակելի վարքագիծ, որն առանց վնասելու մեր էական շահերը, կիրանի մեզ համար նախընտրելի վարքի ձևավորումը և բույլ չի տա, որ խրախուսվի մեզ համար անցանկալին:

Տրամաբանական վերաբերմունք ցուցաբերեք ակնհայտ անտրամաբանականության հանդեպ: Կյանքում մարդկանց կողմից դրսևորվող վարքագիծ մի մասը, կարելի է ասել նոյնիսկ մեծ մասը, չի տեղավորվում տրամաբանության շրջանակներում: Ինչպես ասվում է Գլուխ 2-ում, բանակցողները նախևառաջ մարդիկ են: Մենք հաճախ գործում ենք պահի ազդեցության տակ կամ հակազդում առանց խորը մտածելու՝

հատկապես, երբ մենք զայրացած ենք, վախեցած կամ վիատված: Բոլորս էլ ճանաչում ենք մարդկանց, ովքեր անկախ իրավիճակից ուղղակի անտրամարանական են թվում: Ինչպե՞ս պայքարել նման վարքագծի դեմ:

Նախ. ընդունելով հանդերձ, որ դիմացինը ոչ միշտ է տրամարանական վարքագիծ ցուցաբերում բանակցության ընթացքում, ինքներդ, այնուամենայնիվ, փորձեք մնալ տրամարանականության շրջանակներում: Հազիվ թե ցանկանայինք, որ հոգեբուժական հիվանդանոցում աշխատեին հոգեկան խանգարում ունեցող բժիշկներ: Նույն տրամարանությամբ, մյուս բանակցողների անտրամարանականության դեմ պայքարելիս դուք, հավանաբար, կնախընտրեք լինել որքան հնարավոր է նպատակալազ:

Երկրորդ. քննության առեք ձեր սեփական ենթադրությունն այն մասին, որ այլոք գործում են տրամարանական շրջանակներից դուրս: Գուցե նրանք այլ կերպ են տեսնում իրավիճակը: Ծատ կոնֆիլկտներում կողմերից յուրաքանչյուրը հավատացած է, որ իրենք պատճառաբանված կերպով են «ոչ» ասում այն ամենին, ինչ իրենք ընկալում են որպես մյուս կողմի պահանջ: Գուցե նրանք ձեր ուոճացված մեկնարկային դիրքն ընկալում են որպես անարդարացի՝ խնդրի եռթյան տեսանկյունից, գուցե նրանք իրեն այլ կերպ են գնահատում կամ էլ, թերևս, խնդիրը ծախողված հաղորդակցությունն է:

Երբեմն մարդիկ կրում են տեսակետներ, որոնք, ինչպես շատերս ենք կարծում, օրյեկտիվորեն տրամարանական չեն, օրինակ՝ մարդիկ, ովքեր վախենում են ինքնաթիռով թռչել: Սակայն ներքուստ այդ մարդիկ տրամարանորեն են արձագանքում աշխարհին՝ այնպես, ինչպես իրենք են այն ընկալում: Ինչ-որ մի մակարդակում նրանց մոտ վստահություն է ձևավորվում, թե այս ինքնաթիռը վթարի է ենթարկվելու: Եթե մենք ևս հավատայինք դրան, մենք նոյնպես երբեւ չէինք թռչի: Ըստ էռթյան, աղավաղված է ընկալումը, ոչ թե արձագանքն այդ ընկալման հանդեպ: Որքան էլ որ փորձեք նման մարդ-

կանց համոզել, որ իրենք սխալվում են (որքան էլ բազմատեսակ գիտական ուսումնասիրություններ ներկայացնեք), կամ էլ պատժեք նրանց իրենց համոզմումքների համար, հազիվ թե հնարավոր լինի փոխել այն, ինչ նրանք զգում են: Սինդեռ, եթե ըստոնումով մոտենաք նրանց՝ լուրջ ընդունելով նրանց զգացողությունները և փորձելով հետամուտ լինել նրանց փաստարկներին իրենց առաջադրած տրամարանությամբ, գուցե հնարավոր լինի փոփոխության հասնել: Աշխատելով նրանց հետ՝ դուք կարող եք պարզել, որ սխալ կա տրամարանական շղթայում, կամ տեղի է ունենում փաստացի թյուրընկալում, կամ առկա է անցյալից փոխանցված տիհած կենսափորձ, որոնք, եթե այլևս բացահայտված են, կարող են քննվել և վերափոխվել հենց իրենց կողմից: Ըստ էության, դուք հոգեբանական շահեր եք փնտրում նրանց դիրքերի հետևում՝ օգնելու նրանց առավել արդյունավետ բավարարում տալու իրենց խև շահերի մեծ մասին:

Դարց 5. ՊԵ՞Մ Է ԲԱՆԱԿցԵԼ ԱՆԳԱՄ ԱՀԱԲԵԿԻՀՅՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՄ, ԱՍԵՆՔ, ՅԻՄՈՒԵՐԻ ՆՆԱՆ ԻՆՉ-ՈՐ ԾԵԼԻ ՀԵՏ: Ե՞Ր ԻՄԱՍՄ ՌԱՇԻ ՀԲԱՆԱԿցԵԼ:

Որքան էլ որ վանող լինի մյուս կողմը, քանի դեռ դուք չունեք ավելի լավ ԲՀԱԱ, դուք կանգնած կլինեք ոչ թե բանակցել թե՝ շբանակցել, այլ, թե ինչպէ՞ս բանակցել խնդրի առջև:

Բանակցե՞լ, արդյոք, ահաբեկիհյների հետ: Այս: Փաստորեն, եթե դուք փորձում եք ազդել նրանց որոշումների վրա, խև նրանք՝ ձեր, և եթե նույնիսկ ուղղակիորեն չեք խսոսու նրանց հետ, դուք, ըստ էության, արդեն խև բանակցում եք նրանց հետ: Հարցը հետևյալն է՝ արդյոք անել դա հեռավորության վրա՝ գործողություններով և բառերով (օրինակ, «Մենք երբեք չենք բանակցի ահաբեկիհյների հետ»), թե՝ առավել անմիջականորեն: Առհասարակ, որքան ավելի հստակ է հաղորդակցությունը, այնքան ավելի մեծ է ազդեցություն գործելու

ձեր հնարավորությունը: Եթե հնարավոր է ապահովել անձնական անվտանգությունն, ուրեմն իմաստ ունի երկխոսություն հաստատել ահարեկիչների հետ, այն դեպքում անգամ, եթե նրանք պատահներ են վերցրել կամ սպառնում են բռնություն իրականացնել: Եթե դուք տիրապետում եք պատշաճ փաստերի, ապա շատ ավելի հավանական է, որ դո՛ք կներգործեք նրանց վրա, ոչ թե նրանք՝ ձեզ: (Նույն փաստարկները կիրառելի են նաև բանակցային «ահարեկիչների» նկատմամբ, ովքեր փորձում են կեղտոտ հնարքներ բանեցնել):

Բանակցել չի նշանակում տեղի տալ: Փրկագին վճարելն ու դրամաշղորթությունը բարձր ծախքեր են պարունակում: Եթե հատուցվում է երեխայի առևանգումը, դրանով խրախուսվում են հետագա առևանգումները: Հաղորդակցման շնորհիվ թերևս հնարավոր է համոզել ահարեկիչներին (և հնարավոր ապագա ահարեկիչներին), որ նրանց փրկագին չի վճարվելու: Գուցե հնարավոր է նաև տեղեկանալ նրանց որոշ ողջամտ շահերի մասին և այնպիսի մի կարգավորում առաջադրել, որ կողմերից և ոչ մեկը չընկրկի:

Թեհրանում ԱՄՆ-ի դեսպանատանը մեկ տարուց ավելի պատահ պահված դիվանագետների՝ 1981թ. հունվարին ազատ արձակման շուրջ ԱՄՆ-ի և Իրանի միջև բանակցությունը հնարավոր եղավ իրականացնել ալժիրցի միջնորդների օգնությամբ: Կարգավորման հիմք դարձավ այն, որ կողմերից յուրաքանչյուրը ձեռք բերեց ոչ ավելին, քան իրավունք ուներ. պատահներն ազատ էին արձակվելու, Իրանը վճարելու էր իր պարտքերը, իսկ երբ դրամական միջոցների խնդիրը կարգավորվեր, ԱՄՆ-ը հետ էր վերադարձնելու գոյացած ավելցուկն Իրանին, ճանաչելու էր Իրանի կառավարությունը և չըր միջամտելու Իրանի ներքին գործերին և այլն: Դժվար կլիներ, եթե ոչ անհնար, առանց բանակցությունների առաջ քաշել որևէ կարգավորում: Չնայած որ ԱՄՆ դեսպանատան զավթումը մի անօրինական ուժնագություն էր, այնուամենայնիվ երկու կողմերն էլ շահեցին բանակցությունների արդյունքում, որոնք ի վերջո

կայացան 1980 թվականի աշնանը:

Երբեմն կարծիք է հնչում, թե պաշտոնատար անձիք պետք է հրաժարվեն բանակցել քաղաքական ահարեկիչների հետ, քանզի բանակցելով՝ նրանք, կարծես, կարգավիճակ են շնորհում ահարեկիչներին և խրախուսում նրանց անօրինական գործողությունները: Ծշմարիտ է, որ ահարեկիչների հետ բարձրաստիճան պետական պաշտոնյաների ուղղակի շփումները կարող են բարձրացնել նրանց կարևորությունը, մինչև անգամ այն աստիճան, որ կգերակշռեն հնարավոր օգուտները: Մինչդեռ շփումները մասնագիտական մակարդակում բոլորովին այլ խննիք է: Քաղաքային ոստիկանության բանակցությունների գծով մասնագետները հասցրել են համոզվել, որ պատանդներ վերցրած հանցագործների հետ ուղղակի անձնական երկխոսությունը հաճախ ավարտվում է նրանով, որ պատանդներն ազատ են արձակվում, իսկ հանցագործները հայտնվում են բանտախցում:

Եթե 1988 թվականին Քուվեյթի ավիաուղիների 422 չվերթն իրականացնող ինքնարիոր բոնազավթվեց ավագակախմբի կողմից, նրանց հետ լայնածավալ բանակցություններ վարվեցին, սակայն չափազանց նեղ հարցերի շրջանակներում: Քուվեյթի կառավարությունը միջադեպի հենց սկզբից մեկընդմիշտ հայտարարեց, որ չի պատրաստվում ազատ արձակել Քուվեյթի բանտում պահվող ահարեկչական գործողություններում մեղադրվող շիֆներին և երբեք չնահանջեց որդեգրած հիմնարար սկզբունքից: Այնինչ Կիպրոսի և Ալժիրի տեղական իշխանություններն անընդմեջ բանակցում էին նրանց հետ այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք էին վայրէջքի բույլտվությունը, լրացուցիչ վառելանյութի պահանջը, մամուլի միջոցների հասանելիությունը և սմնդի մատակարարումը: Վերոհիշյալ յուրաքանչյուր գործարքի դիմաց տեղական իշխանություններին հաջողվում էր գերությունից ազատել ավելի ու ավելի մեծ թվով պատանիների: Միաժամանակ նրանք՝ որպես մուսուլմաններ, ահարեկիչներին կոչ էին անում հետամուտ լի-

նելու իսլամական գրասրտության գաղափարներին և պատասխները վերցնելու անբույատրելիության մասին Մուհամեդ մարգարեի պատվիրաններին: Ի վերջո, բոլոր պատանդներն ազատ արձակվեցին: Չնայած ավագակներին ի վերջո բույլ տրվեց լրել Ալժիրը, այն փաստը, որ իրենց կողմից հայտարարված նպատակներին հասնելու ճանապարհը ուղեկցվեց ձախողման երկարաձիգ և անպատվարեր գործընթացով, այնուամենայնիվ նպաստեց, որ ահարեկչական ավագակային գործողությունների թիվը հետագայում զգալիորեն նվազի:

Քանակցե՞լ, արդյոք, Հիտլերի նման անձնավորության հետ: Դա կախված է այլընտրանքից: Եթե որոշ շահերի համար, թերևս, արժի պայքարել և նույնիսկ մահանալ: Մեզնից շատերն են այն կարծիքին, որ աշխարհը ֆաշիզմից փրկելը, տարածքային ազրեսիային դիմակայելը և ցեղասպանության վերջը դնելը պատկանում են վերոհիշյալ կատեգորիային: Եթե նմանօրինակ շահերը վտանգված են և չեն կարող բավարարվել նվազ ծախքեր ենթադրող միջոցներով, որոք պետք է պատրաստ լինեք պայքարել, եթե դա կօգնի կամ, ինչպես ոմանք ասում են, եթե նույնիսկ չօգնի:

Մյուս կողմից, պատերազմը նողկալի գործ է և շատ հաճախ՝ իդեալականացված: Եթե դուք ոչ բռնի միջոցներով կարող եք հասնել ձեր շահերի էական բավարարման, դուք պարտավոր եք այդ տարրերակը լուրջ քննարկման առարկա դարձնել: Ոչ բոլոր պատերազմներն են այդշափ միանշանակորեն արդարացված, ինչպես Միավորված Ազգերի կողմից Քուվեյթի ազատագրումն էր: Մինչդեռ նույնիսկ այս դեպքում, բանակցությունների արդյունքում Իրաքի զորքերի դուրս բերումը բույլ կտար խուսափել նավային հրդեհներից Քուվեյթում, Պարսից ծոցի շրջակա միջավայրի վրա վճառակար ազդեցությունից և պատերազմի պատճառած մարդկային բազում տառապանքներից:

Ամենակարևորն այն է, որ պատերազմը չի երաշխավորում ավելի լավ արդյունքներ, քան հնարավոր կլիներ ձեռք բերել

այլ միջոցներով։ Խոսիֆ Ստալինը՝ որպես Խորհրդային Սիության վարչապետ, շատ դեպքերում նույնքան տհած էր աշխարհի համար, որքան Հիտլերը։ Նա զավթեց բազմաթիվ տարածքներ, իրականացրեց ցեղասպանություն և նպաստեց պետականակենտրոն գաղափարախոսության գարգացմանը, որը գործնականում չափազանց նման էր նացիոնալ-սոցիալիզմի գաղափարախոսությանը։ Սակայն, ջրածնային ռումբերի դարաշրջանում Խորհրդային Սիությունը նվաճելն այնպես, ինչպես Դաշնակիցները նվաճեցին Գերմանիան, այլևս իրատեսական տարրերակ չեր։ Եվ ոչ էլ, ըստ երևույթին, վտանգված սկզբունքներն էին արդարացնում փոխադարձ քնաջնջում։ Փոխարենը, Արևմուտքը, մնալով համբերատար և անդրդվելի խորհրդային կոռունդամբի դեմ իր բարոյական ընդդեման մեջ, սպասեց այնքան, մինչև որ այն սկսեց ինքնափլուզվել։

Նույնիսկ Հիտլերի կամ Ստալինի նման անձանց հետ անհրաժեշտ է բանակցել, եթե բանակցությունը խոստանում է այնպիսի արդյունք գրանցել, որը, հաշվի առնելով ամեն ինչ, ավելի լավ է բավարարում մեր շահերը, քան մեր ԲՀԼԱ-ն։ Ծատ դեպքերում պատերազմն, ըստ Էության, ընդամենը հերթական մի քայլ է բանակցությունների շղթայում։ Բոնության նպատակը մյուս կողմի ԲՀԼԱ-ն կամ դրա շուրջ նրանց ընկալումն այնպիս փոփոխելն է, որ նրանք առավել պատրաստակամորեն համաձայնվեն խաղաղության շուրջ մեր պայմանների հետ։ Նման դեպքերում կենսական նշանակություն է ստանում բանակցային հնարավորությունների շուրջ խորհելը, որպեսզի ուշադրությունից չսպրդեն առաջարկը հմտորեն մշակելու և տեղ հասցնելու այն եղանակները, որոնք, թերևս կարող ենք պատճառաբանված կերպով ակնկալել՝ համոզիչ կլինեն մյուս կողմի համար։

Բանակցե՞լ, արդյոք, եթք մարդիկ շահարկում են կրոնական համոզունքները։ Այո՛։ Թեև քիչ հավանական է, որ բանակցության միջոցով կփոփոխվեն մարդկանց կրոնական համոզունքները, այնուամենայնիվ նրանց գործողություն-

ները, նույնիսկ նրանք, որոնք հիմնված են իրենց համոզմունքների վրա, կարող են դառնալ ազգեցության առարկա: Դրա վառ օրինակն էր Քուվեյթի ավիաուղիների շվերթն իրականացնող ինքնարդիոի ավազակային բռնազավթման դեպքը: Կարևոր դրույթը, որ արժի կրկնել, այն է, որ բանակցել՝ չի նշանակում զիջումների գնալ սկզբունքների շուրջ: Ծատ հաճախ հաջողությունը ձեռք է բերվում բոլոր կողմերի սկզբունքների հետ համատեղելի (նույնիսկ եթե այս համատեղելիությունն ինքնին վիճարկելի է) լուծում փնտրելու ճանապարհին:

Ծատ իրավիճակներ միայն բվում է, թե իրենցից «կրոնական» բախում են ներկայացնում: Հյուսիսային Իոլանդիայում բողոքականների և կաթոլիկների միջև հակամարտությունը, ինչպես և Լիբանանում քրիստոնյաների և մահմեդականների միջև, կրոնի շուրջ չե: Յուրաքանչյուր դեպքում կրոնն ընդամենը ծառայում է որպես հարմար մի սահմանագիծ, որն օգտագործվում է մի խումբը մյուսից տարանջատելու նպատակով: Այդ պառակտումը խորանում է, քանի որ այդ սահմանագիծն օգտագործվում է մարդկանց բնակության ու աշխատանքի վայրերը սահմանազատելու նպատակով, նրանց ընկերների և քննամինների դասակարգելու և սրա կամ նրա օգտին քվեարկողների բանակները տարանջատելու նպատակով: Նման խմբերի միջև բանակցությունը չափազանց ցանկալի է, քանի որ այն մեծացնում է հնարավորությունը, որ նրանք ի վիճակի կլինեն հանգելու իրենց փոխադարձ շահերի շրջանակներում տեղափորկող գործնական համաձայնության:

Ե՞րբ իմաստ ունի քանակցել: Իմաստ ունի⁹ արդյոք բանակցել, և որքա՞ն ջանք պետք է ներդնել, կախված է այն բանից, թե որքանով է գոհացնում ձեզ ձեր ԲՀՀԱ-ն և ձեր կարծիքով, որքանով է հավանական, որ բանակցությունն ավելի լավ արդյունք կտա: Եթե ձեր ԲՀՀԱ-ն բավականաշափ լավն է, իսկ բանակցությունն անհեռանկարային է բվում, իմաստ չոնի ժամանակ վատնել բանակցելու վրա: Մյուս կողմից, եթե ձեր ԲՀՀԱ-ն զգալիորեն վատն է, ապա դուք պարտավոր եք քիչ

ավելի ժամանակ ծախսել, եթե անգամ բանակցությունն անհեռանկարային է թվում, պարզելո՛՝ արդյոք հնարավոր չէ՝ մշակել որևէ այլ՝ առավել գոհացնող մի տարրերակ:

Այդ վերլուծությունն իրականացնելու համար անհրաժեշտ է, որ մանրակրկիտ կերպով խորհեք ծեր և մյուս կողմի ԲՀՀ-ների մասին: Դուք չպետք է կրկնեք բանկերից մեկի կողմից թույլ տված սխալը, որը բանակցում էր սնանկացած էներգետիկ ընկերության հետ: Օրենքի շրջանակներում բանկն իրավունք ուներ տիրանալու ընկերության ողջ գույքին, մինչդեռ հայցը ըննող դատավորը հայտնեց, որ նա ցանկանում է, որպեսզի երկու կողմերը կարգավորեն խնդիրն իրենց միջև: Բանկը պահանջեց, որ իրեն տրվի ընկերության բաժնետոմսերի 51 տոկոսը, որի դիմաց նա պատրաստ էր նվազեցնել վարկավորման տոկոսադրույքը, մինչդեռ ընկերությունը (մասնավորեցված դեկավարության կողմից) արգելափակեց առաջարկը: Ընկճված այդ իրավիճակից բանկն ամխաներ վատնեց՝ փորձելով ընկերության մոտ բանակցության մեջ ներգրավվելու շահ առաջացնել: Ընկերության մերժումը հասկանալի էր, այն իր ԲՀՀ-ն տեսնում էր պարզապես նավթի գների աճին սպասելու մեջ: Այդ դեպքում նրանք ի վիճակի կիմեին մարել իրենց վարկը, նույնիսկ ավելին, կմնային ընկերության ողջ բաժնեմասի սեփականատերը: Բանկը ճեռքից բաց թողեց թե՛ իր և թե՛ ընկերության ԲՀՀ-ի շուրջ հստակորեն խորհելու հնարավորությունը: Բանկը պարտավոր էր բանակցել դատավորի հետ և ներկայացնել, թե ինչ անարդար և բողոքարկման ենթակա իրավիճակում էր հայտնվել: Մինչդեռ բանկին թվում էր, թե ընկերության հետ բանակցելն իր միակ այլընտրանքն էր:

Կառավարությունները հաճախ սխալքում են՝ ենթադրելով, թե իրենց ԲՀՀ-ն ավելի լավն է, քան այն, ինչ իրենք անում են, օրինակ, երբ ենթադրում են, որ եթե տվյալ իրադրությունում «քաղաքական» և «տնտեսական» միջոցներն այլևս սպառված են, ապա մշտապես առկա է «ռազմական» տարրե-

բակը»: Միշտ չէ, որ գոյություն ունի կենաւունակ ռազմական տարրերակ: (Օրինակ՝ պատաճանները վերցնելու դեպքում, երբ գոյություն չունի պատաճաններին ազատելու այնպիսի մի ռազմական տարրերակ, որը գործնականում կապահովի պատաճանների անվտանգությունը: Ինչ խոսք, կան բացառիկ դեպքեր, ինչպես օրինակ, Խորայելի ռազմուժի կողմից իրականացված գործողությունները Ուգանդայի Ենտերքը քաղաքի օդանավակայանում (օդանավակայանը կառուցվել է խորայելի ճարտարագետների կողմից), սակայն դրանք դառնում են ավելի ու ավելի դժվար, քանի որ ահարեւկիշները կատարելագործում են իրենց մարտավարությունները): Իրավիճակից է կախված, թե ունեք, արդյոք, ինքներդ ձեզ օգնելու տարրերակ. կարո՞ղ է նպատակն իրագործվել միմիայն անձնական ջանքերով, թե՞ ինչ-որ մեկը մյուս կողմում ստիպված է լինելու որոշում կայացնել: Եթե վերջինը, ապա ու՞մ որոշման կայացման վրա պետք է ներազդել, ի՞նչ որոշում է անհրաժեշտ և ինչպե՞ս (և ընդհանրապես) կարող է ռազմություն օժանդակել ներազդելու այդ որոշման ընդունման վրա:

Ենթադրություններ մի արեք, թե դուք ունեք (կամ չունեք) ավելի լավ ԲՀԱԱ, քան բանակցայինն է: Խորհեք դրա շուրջ, հետո միայն որոշեք՝ արդյոք իմաստ ունի՞ բանակցել:

Դարձ 6. Ինչպե՞ս պետք է հարմարեցնեմ իմ բանակցային նոտեցումը, որպեսզի այն հաշվի առնի մարդկանց անձնական առանձնահատկությունները, սեռերի, մշակութային և այլ բնույթի տարրերությունները:

Որոշ իմաստով մարդիկ ամենուր շատ նման են միմյանց: Սենք ցանկանում ենք սիրված լինել, իոդ ենք տանում մեր և այլոց պատվի մասին, մեզ դուք չի գալիս, երբ զգում ենք, որ անարդարացիորեն օգտվում են մեզնից: Մյուս կողմից, նույնիսկ նրանք, ում կենսագրական տվյալները չափազանց նման

Են միմյանց, խիստ տարբեր են: Մեզնից ոմանք շփվող են, մյուսներն՝ ամաշկոտ, ոմանք ճարտասան են և պատրաստ հաղորդակցման ընթացքում հանգամանալի ներկայացնել բազմակողմանի փաստարկներ, այլոք հաղորդակցման ընթացքում հակված են ֆիզիկական շփումների և ավելի զգացմունքային են, որոշները բացահայտ արտահայտվող են, մյուսները նախընտրում են ավելի անուղղակի և վայելուց վարք, ոմանք հաճույք են ստանում կոնֆիկտից, մյուսները կդիմեն գրեթե ամեն ինչի՝ խոսսափելու համար բախումից: Տարբեր մարդիկ, ինչպես բանակցողները, կարող են ունենալ տարբեր շահեր և հաղորդակցման տարբեր ոճեր: Տարբեր մարդկանց համոզելու համար անհրաժեշտ է ներկայացնել տարբեր փաստարկներ, տարբեր կարող են լինել նաև նրանց որոշումները կայացնելու եղանակները: Ինչպես պետք է հարմարեցնել այսօրինակ նմանություններն ու տարբերությունները տարբեր մարդկանց հետ բանակցելիս: Ներկայացնենք մի քանի օգտակար ցուցումներ:

Քայլեք համընթաց: Յանկացած բանակցության ընթացքում խիստ ցանկալի է, որ լինեք զգայուն այն անձանց արժեքների, ընկալումների, մտահոգությունների, վարքի նորմերի և տրամադրությունների հանդեպ, ում հետ որ առնչվում էք: Համապատասխանորեն փոփոխեք ձեր վարքը: Երբ դուք բանակցում եք որևէ մեկի հետ, ի նկատի ունեցեք, որ նա այն անձն է, ում վրա փորձում եք ազդել: Որքան ավելի լավ կարողանար քայլել այդ մարդու մտածելակերպին համընթաց, այնքան, հավանաբար, ավելի ունակ կլինեք հասնելու համաձայնության: Ներկայացնենք սովորաբար հանդիպող տարբերություններից մի քանիսը, որոնք կարող են փոխել բանակցության ընթացքը.

- Քայլք. դանդա՞ղ, թե՞ արագ:
- Պաշտոնականություն. խի՞ստ, թե՞ նվազ:

- Հաղորդակցման ընթացքում կողմերի միջև ֆիզիկական հեռավորությունը՝ մո՞տ, թե՞ հեռու:
- Բանավոր կամ գրավոր համաձայնություններ. ո՞րն է առավել պարտավորեցնող և ամբողջական:
- Հաղորդակցության բացահայտ լինելը. ուղղակի՞, թե՞ անուղղակի:
- Ժամանակային շրջանակ. կարճաժամկե՞տ, թե՞ երկարաժամկետ:
- Հարաբերությունների շրջանակ. զուտ գործնակա՞ն, թե՞ համընդգրկուն:
- Բանակցության ակնկալվող վայրը. մասնավո՞ր, թե՞ հասարակական:
- Ո՞վեր են բանակցում. հավասարագոր կարգավիճակ ունեցողնե՞րը, թե՞ խնդրին առավել տիրապետող անձիք:
- Ստանձնած պարտավորությունների կոշտությունը. քարի վրա գրվա՞ծ, թե՞ ճկունություն ենթադրող:

Տեղայնացրեք այս ընդհանուր խորհուրդներն՝ ըստ իրավիճակի առանձնահատկությունների: Սա ընդհանրական խորհուրդներ պարունակող մի գիրք է: Հետևաբար, այն չի կարելի հավասարապես կիրառել բոլոր իրավիճակներում և բոլոր անձանց նկատմամբ: Մինչդեռ հիմնարար դրույթներն ընդհանուր առմամբ կիրառելի են յուրաքանչյուր դեպքում: Եթե անգամ չկան այլ կերպ գործելու անհաղթահարելի պատճառներ, խորհուրդ ենք տալիս յուրաքանչյուր անգամ բանակցության գնալիս մշակել ձեր յուրահատուկ մոտեցումը՝ հիմնվելով այդ դրույթների վրա: Մեր առաջարկած ընդհանուր սկզբունքներն իրազործելու լավագույն ճանապարհը պայմանավորված կլինի որոշակի համատեքստով: Եթր մշակում եք իրավիճակը հարմարացնելու ձեր մոտեցումը, ի նկատի ունեցեք, թե որտեղ եք դուք գտնվում, ում հետ եք գործ բռնել, հաշվի առեք տվյալ ոլորտի առանձնահատկությունները, ձևավորված ավանդույթները, այս բանակցողի հետ ունեցած նախկին փորձը և այլն:

Ուշադրություն դարձրեք համոզմունքներում և սովորույթներում առկա տարրերությունների վրա, բայց և խուսափեք անհատների նկատմամբ կարծրատիպեք ձևավորելուց: Մարդկանց տարրերը խմբեր, տարրերը վայրերում ունեն տարրեր սովորույթներ և համոզմունքներ: Ծանաչեք և հարգանքով վերաբերվեք դրանց, սակայն զգուշացեք անհատների մասին ենթադրություններ անելուց:

Հաճախ անհատի դիրքորոշումը, շահերը և նրան բնորոշող այլ բնութագրիչները խստորեն տարրերվում այն խմբին բնորոշող բնութագրիչներից, որին նա պատկանում է: Օրինակ, «միջին» ճապոնացին հակված է գործածելու հաղորդակցման և բանակցման առավելապես անուղղակի մեթոդներ, մինչդեռ առանձին վերցված որևէ ճապոնացի կարող է ներառել բանակցային ոճերի մի ամրող երանգ: Ճապոնիայի կառավարության կազմում աչքի ընկնող նախարարներից մեկը հայտնի է իր «ամերիկյան ոճի» հանդուգն բանակցողի համբավով, մինչդեռ այդ ոճը բացարձակապես հատուկ չէ ամերիկացիներից շատերին: Համաձայն մի հետազոտության՝ կանայք առավել, քան տղամարդիկ, տեղեկատվությունը հավաքագրում են առավելապես ազատ և նվազ կանոնակարգված եղանակով, ավելի զգայուն են հարաբերությունների նկատմամբ և գործում են՝ հենվելով բարոյականության վրա, որի հիմքում համամատորեն ընկած են մեծապես մյուսների նկատմամբ հոգածությունն ու պարտավորությունները, սակավ՝ նորմերն ու անձնական իրավունքները: Մինչդեռ, համաձայն նոյն հետազոտության՝ երկու սեռերն ել ունեն բազմաթիվ ներկայացուցիչներ, որոնք հակված են գործելու այլ կերպ¹:

Ենթադրություններ անել որևէ մեկի մասին, հիմնվելով այն խմբի բնութագրիչների վրա, որին նա պատկանում է, թե՛ վիրավորական է և թե՛ վտանգավոր: Դրանով դուք ժխտում եք տվյալ անձի անհատականությունը: Մենք չենք ենթադրում, թե

¹ Տե՛ս՝ Քերոլ Զիլիգան, «Այլ ժայնով», Հարվարդի համալսարան, 1982թ.

մեր համոզմունքները և սովորությունները թելադրվում են այն խմբերի կողմից, որոնց պատկանում ենք. նման ենթադրություն անել մյուսների մասին առնվազն պատվարեր չեն: Մեզնից յուրաքանչյուրի վրա ազդում են այնպիսի անհամար գործուներ, ինչպիսիք են մեզ շրջապատող միջավայրը և մեր դաստիարակությունը, մեր մշակույթն ու խմբի ինքնությունը, սակայն այդ ազդեցության անհատական դրսնորումներն անկանխատեսելի են:

ԶՅՈՒԹ ՃԵՐ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԼՄԵՔ ԱԿՏԻՎՈՐԵԱՆ: Ինչպիսի ենթադրություններ են որ անեք մյուսների մասին, եթե անգամ կարծում եք, որ նրանք շատ բաներով նման են ձեզ, կամ՝ հակառակը, քննության առեք դրանք: Պատրաստ եղեք ընդունելու, որ նրանք բացարձակապես այնպիսին չեն, ինչպիսին որ դուք ակնկալում էք: Մշակութային լայն բազմազանությունը մեզ ուղիներ է տրամադրում բացահայտելու որոշակի տարբերությունները, մինչդեռ չպետք է մոռանալ, որ բոլոր են ունենք յուրահասուկ շահեր և որակներ, որոնք չեն տեղակրովում որևէ տիպային կաղապարի մեջ:

Մարտավարությանը վերաբերող հարցեր

ԹՅՈ 7. ԱԵՅԱԱ»±է ՚ԻՇ»՛Ա ՚ՄԵ ՚ՆՅՈ»ՌՉ ՚ՑՐԾԵ՚ՅՇ»ՌԱ. ՚ԱՌ»±Օ ՚Ա»ԻՆ ՚Ն՚ՅՇԿԱ»՚ՅՆ, ՚Ա±Ի ՚Ա»ԻՆ ՚Ն՚ՅՇԿՑ՚ԵՇՇ»՚ԱՌ, ՚ԱՆՆ՚±Յ ՚Մ՚Ն՚ՕՇԿԾՕ ՚Ա»ԻՆ ՚ԷՇ»՛Ա:

Որպեսզի քիչկը կարողանա պատասխանել, թե ինչ հարեւ անհրաժեշտ օգտագործել և ինչպիսի սննդից խուսափել, նրան անհրաժեշտ է ծանոթանալ հիվանդության ախտանիշների հետ և ախտորոշել հնարավոր պատճառները: Սիայն այդ կերպ քիչկը կարող է մշակել առողջացման ընթանուր ուղարմավարությունը: Նույնը վերաբերում է նաև բանակցության մեջ ներգրավված մասնագետներին: Մենք չունենք բազմանպատակային դեղամիջոցներ: Մարտավարության շուրջ պատշաճ խորհուրդներ տալու համար անհրաժեշտ է ծանո-

թանալ տվյալ իրավիճակին հատուկ հանգամանքների հետ:

Պարզաբանելու համար դիտարկենք հետևյալ երեք օրինակները.

Օրտե՞ղ պետք է հանդիպենք: Ի՞նչն է մեզ անհանգստացնում: Եթե կողմերը սովորաբար չափազանց գրաղված են և կա մտավախություն, որ հանդիպումն անընդհատ ընդհատվելու է, ապա կարևոր դիտարկում կարող է դառնալ մեկուսացումը: Եթե ինչ-որ մեկն անապահով է զգում իրեն կամ ունի աշխատակազմի աջակցության կարիքը, գուցե նրա համար ավելի նապատակահարմար կլիներ հանդիպել իր գրասենյակում: Դուք հնարավոր եք, նույնպես ցանկություն հայտնեք հանդիպելու մյուս կողմի գրասենյակում, որպեսզի ազատ զգաք՝ լրելու այն ցանկացած պահի: Կա՞ արդյոք սիստմաների, անհրաժեշտ նյութերի կամ հատուկ փորձագետների կարիք, որոնց հետ, հնարավորության դեպքում, կցանկանայիք խորհրդակցել հենց բանակցության ընթացքում: Եթե ձեզ անհրաժեշտ է գրատախտակ կամ տեսավերարտադրիչ, այդ դեպքում, հավանաբար, կցանկանաք հանդիպել նիստերի դահլիճում, որտեղ առկա են նման հնարավորություններ:

Ո՞վ պետք է ամի առաջին առաջարկը: Միայլ կլիներ ենթադրել, թե որևէ գնային առաջարկ բանակցություններում շրջանառության մեջ դնելու լավագույն եղանակը ինչ-որ առաջարկ ներկայացնելն է: Սովորաբար որևէ առաջարկ անելուց առաջ դուք ցանկություն կունենաք միառժամանակ ուսումնասիրել շահերը, տարբերակները և չափանիշները: Հապշտապ առաջարկ ներկայացնելով՝ դուք կսիմպեք մյուս կողմին ճնշված զգալ իրեն: Երբ այլևս երկու կողմերն ել զգում են, որ իննդիր գոյություն ունի, ապա շատ ավելի մեծ կլինի հավանականությունը, որ որևէ առաջարկ, որը միտված է համաձայնեցնելու առաջ քաշված շահերն ու չափանիշները, կընդունվի որպես մի կառուցողական քայլ դեպի առաջ:

Անում եք առաջարկ, թե ոչ, դուք ամենայն հավանականությամբ ցանկություն կունենաք հենց սկզբից «խարսխել»

Երկխոսությունը ձեզ համար նպաստավոր մոտեցման կամ չափանիշի վրա: Մյուս կողմից, եթե դուք վատ եք նախապատրաստված և գաղափար չունեք, թե ինչը կարող էր խելամիտ լինել, դուք հավանաբար կփորձեք խուսափել որևէ միտք առաջ քաշելուց կամ առաջարկ ներկայացնելուց՝ գուցե հուսալով, որ մյուս կողմը կանի առաջին քայլը և որևէ շռայլ առաջարկ կներկայացնի: Սակայն դուք չափազանց զգուշավոր պետք է լինեք: Ծայրաստիճան վտանգավոր է չափել որևէ առարկայի արժեք՝ հիմնվելով մյուս կողմի նախնական առաջարկի կամ հայտարարած գնի վրա: Եթե դուք այդշափ քիչ գիտեք անհրաժեշտ առարկայի արժեքի մասին, բանակցությունը սկսելուց առաջ, հավանաբար, պետք է քիչ ավելի հետազոտեք շուկան:

Որքան կողմերն ավելի լավ են նախապատրաստված գնի շուրջ բանակցելուն, այնքան ավելի քիչ նշանակություն ունի, թե ով առաջինը առաջարկ կներկայացնի: Փոխարենը սերտելու առաջինը առաջարկ ներկայացնելու կանոնները՝ ավելի լավ կլինի սերտել այն կանոնը, որը թույլ կտա ավելի լավ նախապատրաստվել՝ օգտվելով արժեքի գնահատման արտաքին բնութագրիներից:

Որքա՞ն բարձրից պետք է սկսեմ: Շատերը ձգտում են չափել հաջողությունը նրանով, թե որքան հեռվում են թողել մյուս կողմին: Եթե նոյնիսկ նախնական գինը միանգամայն կամայականորեն հաստատում է «գնապիտակի գինը» կամ «մանրածախ գինը», գնորդները երջանիկ կլինեն ձեռք բերել որևէ բան ավելի ցածր գնով: Նրանք չեն հետազոտել շուկան: Նրանք չգիտեն, թե որքան կարմենա իրենց լավագույն այլընտրանքը, հետևաբար նրանք հաճույքով կվճարեն ավելի քիչ գումար, քան առաջին «առաջարկված գինը»:

Նման պարագայում, եթե դուք վաճառում եք, դուք, որպես կանոն, կմեկնարկեք այն ամենաբարձր գնից, որն առանց դժվարության կարող եք արդարացնել: Նոյն այս խնդրին կարելի է մոտենալ մեկ այլ տեսանկյունից. սկսել ամենաբար-

ձր գնից և փորձել համոզել մի երրորդ չեզոք կողմի, որ այն անաշառ է: Նման թիվ առաջարկելիս նախ անհրաժեշտ կլինի ներկայացնել այն հիմնավորող փաստարկները, իետո միայն բարձրաձայնել մեծությունը: (Եթե նրանք լսեն գինը և համաձայն շինեն դրա հետ, ապա հավանաբար արդեն ուշադրություն չեն դարձնի փաստարկների վրա):

Կարիք չկա նման մեկնարկային գինն առաջ քաշել որպես հաստատուն մի դիրք: Խսկապես, որքան ավելի կոշտ եք պնդում նախնական թվի անփոփոխելիության վրա, այնքան ավելի մեծ վնաս եք հասցնում ձեր վարկին, եթե համաձայն վում եք փոփոխել այն: Չատ ավելի անվտանգ և առնվազն նույնքան արդյունավետ է ասել. «Լավ, գործոններից մեկը, որ կարելի էր քննարկման առարկա դարձնել, այն է, թե որքան են մյուսները վճարում համանան աշխատանքի դիմաց: Նյու Յորքում, օրինակ, վճարում են 18 դոլար մեկ ժամի համար: Ի՞նչ կատեր սրա մասին»: Այսպիսով դուք առաջ քաշեցիք մի չափորոշիչ և թիվ՝ առանց կառչելու դրանցից:

Մարտավարությունը կախված է պատրաստվածությունից: Մարտավարությունների շուրջ կան երկու ընդհանրացումներ, որոնք արժի դիտարկել: Նախ, գրեթե բոլոր դեպքերում մարտավարությունը ֆունկցիա է պատրաստվածությունից: Եթե դուք լավ եք պատրաստված, մարտավարությունն ինքնարտինը ի հայտ կգա: Եթե դուք լավ եք պատկերացնում ձեր բանակցությանը համապատասխանող չափորոշիչները, ակնհայտ կլինի, թե որն է անհրաժեշտ քննարկել և որն է, որ մյուս կողմը կարող էր առաջարկել: Եթե դուք լիարժեքորեն խորհել եք ձեր շահերի շուրջ, ապա պարզ կդառնա, թե որոնց մասին արժի հիշատակել վաղօրոք, իսկ որոնց մասին՝ ավելի ուշ կամ ընդհանրապես չանդրադառնալ դրանց: Եվ եթե դուք մշակել եք ձեր ԲՀՀԱ-ն նախօրոք, ապա ձեզ հայտնի է, թե երբ է պետք հեռանալ:

Երկրորդ, նոյնիսկ չափազանց հմուտ մի մարտավարություն չի կարող լրացնել պատրաստվածության պակասը: Երբ

դուք մշակում եք մանրակրկիտ մի մարտավարություն և համոզված եք, որ այն կապչեցնի մյուս կողմին, դուք փորձանքի մեջ կհայտնվեք, եթե նրանք բանակցության գան լավ պատրաստված¹: Գուցե ձեր մարտավարությունը հիմնվում է հենց սկզբից հարաբերություններին վերաբերող հարցերը քննարկելու վրա, մինչդեռ նրանք հնարավոր են, որ ցանկանան խոսել ՔՀԱ-ների մասին: Այն պարզ պատճառաբանությամբ, որ դուք երբեք ել չեք կարող վատահ լինել, թե ինչպիսին կլինի նրանց մարտավարությունը, շատ ավելի լավ է ճանաչել աշխարհագրական տեղանքը, քան նախատեսել ընթանալ առաջ՝ ողջ անտառից ընտրելով միայն մեկ մասնավոր արահետ:

ԵՅՆՈ 8. 2»ԵՇ ՆԵՐԻ, ԻՇՆՄ»ՌՅ»Ռ ՅԵՇՇ Յ»ԵԱԾՈ ՉՅԱԱ»±Ե ՅԵՐԱԿ»Ա ՅԵՇԻԱՆԱԾԱՅԱԾՅ»Ն ԵՐՅՕՅ»ԵԱԾՅ:

Սենք շատ խորհուրդներ ենք տվել, թե բանակցության շրջանակներում ինչպես մշակել խոհեմ, փոխադարձ բավարող տարրերակներ և ինչպես խուսափել կամ հաղթահարել ամենատարրեր մարդկային գործոնները: Մինչդեռ մեկ հարց դեռևս պարզաբանման կարիք ունի. ինչպես հասնել խնդրի եզրափակմանը: Մենք չենք կարծում, որ գոյություն ունի ինչ-որ միակ լավագույն գործընթաց, սակայն կան մի քանի ընդհանուր սկզբունքներ, որոնք արժի քննարկել.

Եզրափակման մասին մտածեք հենց սկզբից: Անգամ մինչև բանակցությունն սկսելը, արժի խորհել, թե ինչպիսին կարող է լինել հաջողված համաձայնությունը: Սա կօգնի ձեզ պատկերացնել կազմել այն մասին, թե բանակցության ընթացքում որ հարցերն է անհրաժեշտ քննարկել, և թե դրանց լուծումը ինչ կարող է նատել ձեզ վրա: Պատկերացրեք, թե ինչ կարող է

¹ բառախան՝ knock one's socks off արտահայտությունը նշանակում է «չափազանց զարմացնել, ապշեցնել», իսկ բառացի թարգմանությամբ՝ «մեկի գուլպաները հազից հանել»: Հեղինակը քննարկում գրում է. «Խսկ ինչ կանեք, եթե դուք համոզված եք, որ ձեր մարտավարությամբ դուք «փիանեք մյուս կողմի գուլպաները իրենց հազից», մինչդեռ պարզվում է, որ նրանք բանակցության են եկել «քոլոտն»»: (Քարգ.):

իրենից ներկայացնել համաձայնությունն իրագործելը: Ո՞ր հարցերն է անհրաժեշտ լուծել: Այնուհետև աշխատեք հակառակ ուղղությամբ: Հարց տվեք ինքներդ ձեզ՝ ինչպե՞ս կարող է մյուս կողմն արդեն իսկ կայացված համաձայնությունը հաջողությամբ ներկայացնել և արդարացնել իր վստահորդների առջև: («Մենք կհայտնվենք Օնտարիոյի Էներգետիկայի համակարգում զբաղված բոլոր բանվորների լավագույն տասը տոկոսի կազմում»: «Մենք վճարում ենք ավելի քիչ, քան այն սակագինը, որ սահմանվում է երեք ընկերություններից երկուսի կողմից»): Մտածեք, թե ինչ կնատեր ձեզ վրա, եթե նույնը անեկք: Այնուհետև հարց տվեք ինքներդ ձեզ, թե այդ ո՞ր համաձայնությունն է, որ բույլ կտար և՛ ձեզ, և՛ մյուս կողմին նաև հայտարարություններ անել: Վերջապես, խորհեք, թե ինչ կնատեր ձեզ վրա, եթե փորձեկք համոզել մյուս կողմին (նաև ինքներդ ձեզ) ընդունելու առաջարկված համաձայնությունը՝ բանակցությունը շարունակելու փոխարեն:

Մտապահեք այս հարցադրումները, քանի դեռ քանակցությունը շարունակում է զարգանալ՝ վերածնավորելով և լուացնելով ձեր տեղականը տեղեկատվության ավելի շատ չափարաժիններ հասանելի դառնալուն գուգընթաց: Այս կերպ սենովելով ձեր նպատակի վրա՝ կօժանդակեք, որ ձեր բանակցությունն ընթանա արդյունավետ հունով:

Խորիեք շրջանակային համաձայնագրի ստեղծման շուրջ: Այն քանակցություններում, որոնց արդյունքում մշակվելու է գրավոր համաձայնագիր, որպես նախապատրաստական աշխատանք, սովորաբար օգտակար է լինում ուրվագծել այն հիմնական առանցքները, որոնց շուրջ կառուցվելու է համաձայնագիրը: Նման «շրջանակային համաձայնագիրն» ինքնին համաձայնագրի տեսք ունեցող փաստաթուղթ է, սակայն պարունակում է ազատ տողեր առանձին դրույթների համար, որոնք պետք է որոշվեն բանակցության արդյունքում: Առուվաճառքի պայմանագրի տիպային ձևը, որ կարելի է ձեռք բերել անշարժ գույքի ցանկացած գործակալությունում, իրենից մաս-

բամասնորեն մշակված շրջանակային համաձայնագրի մի օրինակ է ներկայացնում: Այլ դեպքերում, բացի համաձայնագրի բաժինների վերնագրերից, որիշ ոչինչ անհրաժեշտ չէ: Շրջանակային համաձայնագրի հնարավորին չափ մանրամասն մշակումը վստահություն կիաղորդի, որ բանակցության ընթացքում աչքից չեն վրիպել կարևոր հարցերը: Նման համաձայնագիրը բանակցության շրջանակներում կարող է ծառայել որպես մի մեկնարկային կետ կամ որպես օրակարգ՝ հնարավորություն ընձեռելով ձեզ արդյունավետորեն օգտագործելու ժամանակը:

Արդյոք սկսում եք բանակցել՝ ձեռքի տակ ունենալով շրջանակային համաձայնագիր, թե ոչ, արժի մշակել այն համաձայնության հնարավոր դրույթները, որին դուք ճգնում եք: Նախագծի մշակման աշխատանքները օգնում են քննարկումները սկզբու հիմնախնդրի վրա, ուղղորդում են բացահայտելու կարևոր հիմնահարցերը, որոնք այլ պայմաններում կարող են սպրել ուշադրությունից և ձևավորում են առաջընթացի զգացողություն: Բանակցությանը զուգընթաց նախագծի մշակումը ենթադրում է նաև քննարկումների արձանագրությունների կազմում, ինչով էլ նվազեցվում է հետագա թյուրըմբունումների հնարավորությունը: Երբ աշխատում եք շրջանակային համաձայնագրի օգնությամբ, նախագծի կազմումը կարող է պահանջել ոչ ավելին, քան յուրաքանչյուր դրույթ քննարկելուն զուգընթաց լրացնել շրջանակային համաձայնագրի ազատ տողերը, իսկ երբ դեռևս փոխհամաձայնություն կայացնելու փուլում եք, այն կարող է ներառել այլնտրանքային պայմանների նախագծումը:

Ծարժվեք դեպի պարտավորություններն աստիճանաբար: Զանի դեռ բանակցությունը շարունակվում է, և յուրաքանչյուր հարցի համար քննարկվում են տարբերակներն ու չափորոշիչները, դուք պետք է փնտուեք դեպի համաձայնություն տանող մի առաջարկ, որն արտահայտում է սահմանված բոլոր դրույթներն ու հնարավորին չափ լավ բավարարում կողմե-

յից յուրաքանչյուրի շահերը տվյալ հարցի շրջանակներում: Եթե դուք առայժմ ի վիճակի չեք համաձայնության գալու տարբերակներից մեկի շուրջ, փորձեք առնվազն նեղացնել ուշադրության առարկա հանդիսացող տարբերակների ցանկը, այնուհետև անցեք մյուս հարցին: Գուցե հետագայում ի հայտ գա մի ավելի լավ տարբերակ կամ փոխգիշման հնարավորություն: («Չատ լավ: Գուցե 28 կամ 30 հազար ԱՄՆ դրամ այնքան էլ վատ չէ որպես աշխատավարձ: Իսկ ի՞նչ կասեք աշխատանքը սկսելու օրվա մասին»):

Մտքային գրոհը քաջալերելու նպատակով լավ կլինիքացահայտորեն համաձայնվել, որ բոլոր պարտավորությունները փորձնական են: Դա թույլ կտա ձեզ քննարկումների շրջանակներում առաջընթացի զգացում ունենալու և միաժամանակ խուսափելու անհանգստության այն արգելակող ազբեցությունից, թե յուրաքանչյուր քննարկված տարբերակ կարող է ընկալվել որպես պարտավորություն: Փորձնական պարտավորությունների ստանձնումը լավ միտք է, և եթե չկան դրանք փոփոխելու հիմնավոր պատճառներ, ապա պետք չէ փոփոխել դրանք, բայց դիմացինին հստակ հասկացրեք, որ չեք պարուատվում սահմանափակել ձեզ որևէ պարտավորությամբ, քանի դեռ չեք տեսել վերջնական փաթեթը: Շրջանակային համաձայնագրի էջի վերին անկյունում, օրինակ, կարող եք նշագրել. «Փորձնական նախագիծ: Ոչ մի պարտավորություն»:

Դեպի համաձայնություն գործընթացը հազվադեպ է գծային: Պատրաստ ենեք անցնելու հարցերի ցանկի վրայով մի քանի անգամ՝ հետ ու առաջ անելով նասնակոր հիմնախնդրի և ամբողջական փաթեթի միջև: Դժվարին հարցերին հավանաբար անհրաժեշտ է հաճախ անդրադառնալ կամ հետաձգել մինչև վերջին պահը՝ կախված այն բանից, թե արդյոք հնարավո՞ր է թվում առաջընթացը: Ծանապարհի ընթացքում խուսափեք պահանջներ առաջադրելուց կամ ներփակվելուց: Փոխարենը՝ տարբերակներ առաջարկեք և խնդրեք, որ քննադատեն: («Ի՞նչ կարծիքի եք համաձայ-

նության այս նախագծի մասին: Ես վստահ չեմ, որ կարող եմ ներկայացնել այն այնպես, որ արժանանա իմ կողմնակիցների հավանությանը, այնուամենայնիվ, այն կարող էր լինել հնարավոր փոխհամաձայնությունների թվում: Կարո՞՞ղ էր նման մի տարբերակ հարմար լինել ձեզ համար: Եթե ոչ, ապա ի՞նչն այն չէ դրանում):

Հաստատակամ եղեք ձեր շահերին հետամուտ լինելու գործում, սակայն ոչ անդրդիվի որևէ մասնակիր լուծման ձգտելիս: Վճռական սակայն ոչ դիրքային լինելու ճանապարհներից մեկը շահերը տարանջատելն է դրանք բավարարելու ուղիներից: Եթե առաջարկը հանդիպում է առարկությունների, մի պաշտպանեք այն, ավելի լավ է կրկին անգամ ներկայացրեք ձեր հիմնական շահերը: Հետաքրքրվեք, թե արդյոք մյուս կողմը կարո՞՞ղ է խորհել այդ, ինչպես նաև իրենց անձնական շահերն առավել լավ բավարարող ուղիների շուրջ: Եթե թվում է, թե առկա է անլուծելի հակասություն, հարցրեք՝ արդյոք կա՞ որևէ պատճառ, թե ինչու պետք է մի կողմի շահերը առավելություն ունենան մյուս կողմի շահերի նկատմամբ:

Քանի դեռ մյուս կողմը չի ներկայացնում համոզիչ փաստարկներ, թե ինչու է ձեր մտածելակերպը թերի և թե ինչու է անհրաժեշտ այն փոխել, հավատարիմ մնացեք ձեր վերլուծությանը: Այն դեպքում, եթե դուք կհամոզվեք կամ ձեզ կհամոզեն, համապատասխանաբար ձևափոխեք ձեր մտածելակերպը՝ սկզբում ներկայացնելով տրամաբանությունը: («Բարի, դա լավ տեսակետ է: Այդ գործոնը չափելու ուղիներից մեկը կարող էր լինել այն, որ...»): Եթե լավ եք նախապատրաստվել, անշուշտ դուք պետք է որ կանխատեսած լինեք այն փաստարկների մեծամասնությունը, որ մյուս կողմը կարող է ներկայացնել և խորհած, թե, ըստ ձեզ, ինչպես եմ դրանք ազրելու արդյունքների վրա:

Նպատակը, ողջ այդ ընթացքում, անարդյունք վիճաբանությունից խուսափելն է: Այն դեպքում, եթե անհամաձայնությունը շարունակվում է, փնտրեք երկրորդ կարգի համա-

ձայնություն, այսինքն համաձայնություն այն բանի շուրջ, ինչի շուրջ հենց առկա է անհամածայնությունը: Համոզվեք, որ յուրաքանչյուր կողմի շահերը և փաստարկները հստակ են: Վեր հանեք տարբերվող ենթադրությունները և մշակեք դրանք քննելու ուղիները: Ինչպես միշտ, փորձեք բախվող շահերը համաձայնեցնել արտաքին չափորոշիչների կամ ստեղծագործաբար մշակված տարբերակների օգնությամբ: Փորձեք բախվող չափորոշիչները համաձայնեցնել չափանիշների միջոցով՝ զնահատելու համար, թե դրանցից որն է ավելի համապատասխանում տվյալ իրավիճակին կամ դրան հասեք ստեղծագործաբար մշակված զիջումների միջոցով: Եղեք հստատակամ:

Առաջարկ արեք: Ինչ-որ պահի շահերի հստակեցումը, տարբերակների առաջադրումը և չափորոշիչների վերլուծությունը սպառում են իրենց որպես մարտավարություն: Երբ այլևս որևէ խնդիր կամ խնդիրների խումբ պատշաճ հետագոտված է, պետք է պատրաստ լինեք առաջարկ ներկայացնելու: Ժամանակից շուտ կատարված առաջարկը հնարավոր է, որ սահմանափակվի ընդամենը մի քանի առանցքային խնդիրների գույքակցմամբ: («Ես կիամածայնվեի փակել այն հունիսի 30-ին, եթե տարածամկետ վճարման գումարը 50 հազար դրամից չանցներ»): Ավելի ուշ նման մասնակի առաջարկները կարող են միավորվել մի առավել համապարփակ նախագծի մեջ:

Որևէ առաջարկ երրևէ չպետք է ի հայտ գա որպես անսպասելիորեն ծնված մի գաղափար: Այն պետք է լինի փարփող քննարկումների քնական արդյունք: Այն չպետք է իրենից «վերցրու կամ հեռացիր» առաջարկ ներկայացնի, բայց նաև չպետք է ներկայանա որպես մի մեկնարկային դիրք: Այն պետք է լինի մի առաջարկ, որն, կախված թե ինչ էր տեղի ունեցել մինչ այդ, ըստ ձեզ, իմաստ կունենա երկու կողմերին համար էլ: Բանակցություններից շատերի ընթացքում հնարավոր է դառնում կարգավորել իհմնախնդիրը, եթե ներկայացվում

Է մի ամբողջական առաջարկ:

Դուք պետք է լրջորեն խորհեք, թե ինչպես և որտեղ եք ինչեցնում ձեր առաջարկը: Եթե մինչ այժմ քննարկումներն անցկացվել են լայն հասարակության առջև կամ մեծ խմբերի շրջանակներում, դուք գուցե ցանկություն կունենաք գտնելու ավելի առանձնացված մի միջավայր՝ վերջնական պարտավորությունները ուսումնասիրելու համար: Համաձայնությունների մեծ մասը ձեռք են բերվում յուրաքանչյուր կողմից մեկական բարձրակարգ բանակցողների միջև դեմ առ դեմ հանդիպումների ընթացքում, մինչդեռ համաձայնության վերջնական ստորագրման պաշտոնական արարողությունը կարող է տեղի ունենալ ավելի ուշ՝ հասարակական միջոցառման շրջանակներում:

Եթե համաձայնություն կայացնելու համար կան արդեն համապատասխան պայմաններ, սակայն որոշ հարցեր դեռևս մնում են համառ վիճարանությունների առարկա, եզրափակումը դյուրին դարձնելու նպատակով փնտրեք անաշառ ընթացակարգեր: Փոխզիջումը կամայական թվերի շուրջ տալիս է անկանխատեսելի արդյունք: Մինչդեռ փոխզիջումը այնպիսի առաջարկների շուրջ, որոնցից յուրաքանչյուրը հիմնվում է ողջամիտ և համոզի անկախ չափորոշիչների վրա, անաշառ արդյունք ձեռք բերելու ուղիներից մեկն է: Եթր, այնուանայնիվ, տարածայնությունները համառորեն շարունակվում են, մյուս մոտեցումն այն է, որ կողմերից մեկը կամ երկուսը միասին հրավիրեն մի երրորդ կողմի, որը յուրաքանչյուրի հետ կը ննարկի հիմնախնդիրը և, բերևս շարունակական խորհրդատվություններից հետո, կներկայացնի վերջնական «վերջին հնարավորություն» համարվող մի առաջարկ:

Վերջում առատաձեռն ենեք: Եթր դուք զգում եք, որ վերջին վերջում մոտ եք համաձայնության կայացմանը, դիտարկեք մյուս կողմին իրենց համար արժեքավոր և նաև ձեր առաջարկի հիմնական տրամաբանության մեջ տեղափոխվող ինչ-որ բան նվիրաբերելու հնարավորությունը: Հստակ նշեք, որ դա

Վերջին ժեստն է. պետք չէ մյուս կողմի մոտ հետագա զիջումների ակնկալիք ձևավորել։ Նման բարելավված առաջարկն երբեմն կարող է հայթահարել վերջին պահի տարակուսանցները և գործը գործի բերել։

Զեզ անհրաժեշտ է, որ մյուս կրղմը լրի բանակցային սեղանը բավարարված և այնպիսի զգացումով, որ իր նկատմամբ արդար են գտնվել: Այդ զգացումը կարող է առատաձեռն փոխիատուցման երաշխիք դառնալ, եթե գա համաձայնության իրագործման պահը, ինչպես նաև՝ հետագա բանակցությունների ընթացքում:

Đ³nó 9. *AÉÝää»±ë ÷áñÓ³ñÍ»Ù ³Ûë .³Ö³÷³ñÝ»ñÝ ³é³Ýó Ù»ÍéCëÍC¹CÙ»Éáo:*

Գուցե մենք կարողացանք ձեզ համոզել, որ սա արժեքավոր մոտեցում է, սակայն դուք անհանգստանում եք, որ ի վիճակի չեք լինելու կիրառել այն այնպիս, որպեսզի բարեկավեք ձեր ներկա մոտեցման արդյունքները։ Ի՞նչ կարող եք ձեռնարկել, որպեսզի փորձարկեք այս գաղափարներն առանց մեծ ռիսկի դիմելու։

Ակտեր քից: Փորձարկումներն իրականացրեք այն բանակցությունների ընթացքում, որտեղ ռիսկերը փոքր են, որտեղ ունեք լավ ԲՀԱԱ, որտեղ առկա են բարենպաստ օբյեկտիվ չափորոշիչներ, որոնք թվում են համապատասխան, և որտեղ մյուս կողմն ավելի հավանական է՝ հակված լինի ընդունելու նման մոտեցումը: Ակտեր այն գաղափարներից, որոնք հիմնվում են ձերկա ունակությունների վրա, այնուհետև հերթով փորձարկեք նոր գաղափարները: Փորձ և կատարություն ձեռք բերելուն զուգընթաց, հետզինետե ավելացրեք ռիսկերը՝ փորձարկելով նոր մոտեցումն առավել նշանակալի և հավակնու համատեքստերում: Պետք չէ փորձարկել ամենը միանգամից:

Ներդում կատարեք: Որոշ մարդիկ թեսիս են խաղում իրենց ողջ կյանքի ընթացքում, սակայն երբեք էլ չեն դառնում

հմուտ խաղացող: Նման մարդիկ չեն կամենում նորովի նայել այն ամենին, ինչ անում են կամ դիտարկել դրանք փոփոխելու հնարավորությունը: Լավ խաղացողները ընկալում են, որ ավելի լավ խաղացող դառնալ նշանակում է ներդրում կատարել նոր մոտեցումների մեջ: Մի առ ժամանակ նրանք հնարավոր են, որ ավելի վատ խաղան, քանի դեռ մաքառում են նոր և անձանոր մերորդ յուրացնելու համար, սակայն ի վերջո նրանք գերազանցում են իրենց նախկին կարողությունները: Նոր մեթոդներն առաջարկում են առավել երկարաժամկետ ներուժ: Դուք պետք է նույն կերպ վարվեք բանակցության ընթացքում:

Վերանայեք ձեր գործողությունները: Յուրաքանչյուր նշանակալի բանակցությունից հետո որոշ ժամանակ սահմանեք ձեր գործողությունները քննելու համար: Ի՞նչն է ստացվել, ինչը՝ ոչ: Ի՞նչն է, որ հավանաբար այլ կերպ կանեփք: Խորհեք բանակցությունների մատյան կամ օրագիր վարելու շուրջ, որը դուք կարող եք պարբերաբար վերընթերցել:

Նախապատրաստվեք: Բանակցային ուժը, որը քննարկվում է ներքեւում, մի այնպիսի ռեսուրս չէ, որ հնարավոր է ունենալ ինչ-որ որոշակի քանակությամբ և կիրառել ցանկացած պահի, ցանկացած նպատակով: Պահանջվում է դժվարին նախապատրաստական աշխատանք, որպեսզի կարողանաք օգտագործել ձեր ռեսուրսները որևէ մասնավոր իրավիճակում համոզիչ երևալու նպատակով: Այլ կերպ ասած՝ այն պահանջում է նախապատրաստվածություն: Պատշաճ նախապատրաստված լինելու մեջ ոչ մի վտանգ չկա: Դա պարզապես ժամանակ է պահանջում: Որքան ավելի լավ եք դուք նախապատրաստված, այնքան ավելի է հավանական, որ դուք կգործածեք այս մտքերը և արժեքավոր կհամարեք դրանք:

Նախագծեք, թե ինչպես կառուցել և պահպանել պատշաճ աշխատանքային հարաբերություններ մյուս կողմի հետ: Կազմեք ձեր և մյուս կողմի շահերի ցանկը: Այնուհետև առաջարկեք մի շարք տարրերակներ, որոնք կարող են բավարարել այդ շահերը: Փնտրեք արտաքին ստուգանիշներ կամ չափա-

նիշներ, որոնց օգնությամբ հնարավոր կլինի համոզել երրորդ կողմին (եթե այն ողջամտ է), թե ինչ պեսք է արվի: Հարցրեք ինքներդ ձեզ, թե ինչ փաստարկներ կցանկանայիք ներկայացնել, իսկ այնուհետև փորձեք վեր հանել այն փաստերն և տեղեկատվությունը, որոնք անհրաժեշտ են այդ փաստարկները ներկայացնելու համար: Խորհեք նաև, թե որ ստուգանիշներն են, որ կարող են համոզիչ լինել հակառակ կողմի ձեր գործընկերների համար, որպեսզի նրանք կարողանան արդարացնել կայացված համաձայնությունը իրենց վստահորդների առջև: Եթե մյուս կողմի բանակցողները գտնեն, որ իրենց վստահորդների առջև հազիվ թե կարողանան արդարացնել այդ դրույթները, համաձայնությունը դրանց ներառմամբ հավանական չէ: Խորհեք նաև, թե ինչպիսի պարտավորություններ կցանկանայիք, որ կողմերից յուրաքանչյուրը ստանձներ: Ուրվագծեք հնարավոր շրջանակային համաձայնագիրը:

Որոշ դեպքերում հավանաբար անհրաժեշտ կլինի խնդրել ընկերոջը, որպեսզի նա օգնի ձեզ խաղարկել զալիք բանակցությունը՝ ստանձնելով մյուս կողմի դերը կամ ձերը (նախապատրաստվելոց հետո)՝ մինչ դուք խաղում եք նրանց դերը: (Մյուս կողմի դերն ստանձնելը և ընդունողի տեսանկյունից ձեր սեփական փաստարկումներն ունենդրելը հզոր մերող է սեփական մոտեցումը քննելու տեսանկյունից): Դուք հնարավոր է նաև ցանկանաք ստանալ ընկերների ցուցումները, դիմել առավել փորձված բանակցողների կամ արհեստավարժ բանակցային խորհրդատունների:

Շատ առումներով բանակցությունը նման է մարմնամարդությանը: Որոշ մարդիկ ունեն քննական տաղանդ, և ինչպես լավագույն մարզիկները, նրանք հնարավորություն ունեն առավելագույնը քաղելու նախապատրաստական վարժանքներից, փորձերից և մարզումներից: Մինչդեռ նրանք, ում մոտ պակասում է քննական տաղանդը, նախապատրաստվածության, փորձի և քննադատության ավելի մեծ կարիք ունեն և

կարող են դրանից շատ բան քաղել: Այնուամենայնիվ, ինչպիսին էլ որ դուք կաք, միևնույն է, սովորելու շատ բան կա, իսկ տքնածան աշխատանքը կտա իր հատույցը: Դա կախված է ձեզանից:

Հարցեր իշխանության մասին

Д³ñó 10. І³ñá±Ó ѕ, ³ñ¹Ûáù, $\mu^3\bar{Y}^3\bar{I}^3$ »Éáõ ÇÙ »Ó³Ý³ÍÁ ÷á÷áË»É
áñ” ѕ $\mu^3\bar{Y}$, »Ã» ÙÚáõë ïáÔÙÝ ³í»ÉÇ áõÅ»Ó ѕ: AEÝãå»±ë
Ù»Í³óÝ»Ù ÇÙ $\mu^3\bar{Y}^3\bar{I}^3\bar{U}^3$ ÇÝ áõÅÁ:

Էական նշանակություն ունի, քեզ ինչպես եք դուք բանակցում (և ինչպես եք նախապատրաստվում բանակցությանը՝ անկախ յուրաքանչյուր կողմի ուժից):

àñáß μ³Ý»ñ ¹áõù ã»ù Í³ñáÓ Ó»éù μ»ñ»É

Իհարկե, խնդիրը նրանում չէ, թե որքան հմուտ եք դուք, այլ նրանում, որ այն, ինչ կարող եք ձեռք բերել բանակցության միջոցով, սահմանափակ է։ Աշխարհի լավագույն բանակցողն անգամ ի վիճակի չի գնել Սպիտակ տունը։ Բանակցության ժամանակ դուք չեք կարող հաջողություն ակնկալել, քանի դեռ ի վիճակի չեք մյուս կողմին ներկայացնելու մի առաջարկ, որն, ըստ նրանց, կլինի առավել գրավիչ, քան իրենց ԲՀՀԱ-ն է։ Եթե դա անհնար է թվում, ապա իմաստ չունի բանակցել։ Դրա փոխարեն սևեռվեք ձեր ԲՀՀԱ-ն բարելավելու և գուցե նրանցը փոփոխելու վրա։

Ø»Í Ýß³Ý³ÍáõÃÛáõÝ áõÝÇ, Ä» ÇÝãå»ë »ù ¹áõù µ³Ý³ÍóáõÙ:

Այն իրավիճակում, որտեղ առկա է համաձայնություն կայացնելու հնարավորություն, եղանակը, թե ինչպես եք դուք բանակցում, կարող է կարևոր նշանակություն ունենալ, եթե դուք կանգնած եք պայմաններն ընդունելու կամ չընդունելու կամ ձեզ համար նախընտրելի արդյունքի և պարզապես ընդունելի արդյունքի միջև ընտրության առջև: Նրանից, թե

ինչպես եք դուք բանակցում, կարող է պարզ դառնավ՝ արդյոք մեծացված է փայտաժինը, թե պարզապես մասնատված, և արդյոք դուք պատշաճ աշխատանքային հարաբերությունների մեջ եք մյուս կողմի հետ, թե լարված: Եթե թվում է, թե բոլոր խաղարթերը մյուս կողմի ձեռքում են, ծայրաստիճան կարևոր է դառնում, թե ինչպես եք դուք բանակցում: Դիցուք, դուք բանակցում եք սահմանված կարգից ինչ-որ բացառության կամ որևէ աշխատանքային առաջարկի շորջ: Իրականում, եք մյուս կողմը մերժի ձեր խնդրանքը, հավանաբար դուք այլ ընտրանքի նվազ հնարավորություն կունենաք, իսկ եթե նրանք ընդունեն այն, քիչ բան կունենաք առաջարկելու: Այս դեպքում ձեր բանակցային հմտությունն ամեն ինչ է: Ուստի, որքան էլ փոքր է հաջողության հասնելու հնարավորությունը, այն, թե ինչպես եք դուք բանակցում, կորոշի՝ արդյո՞ք դուք ի վիճակի եք օգտագործելու դրանից:

§è»ëáõñëÝ»ñÁ| ÝáõÛÝÁ ã»Ý, ÇÝã §µ³Ý³Í³ÛÇÝ áõÅÁ|:

Բանակցային ուժն ինչ-որ մեկին ինչ-որ մի բան անելու մեջ համոզելու կարողությունն է: Սիացյալ Նահանգները հարուստ պետություն է և ունի շատ առողջային ռումբեր, սակայն դրանք օգտակար չեղան այն ժամանակ, եթե անհրաժեշտ էր կասեցնել ահարեկչական գործողությունների զարգացումը կամ ազատ արձակել պատանդներին, որոնք պահպում էին այնպիսի վայրերում, ինչպիսին էր Բեյրութը: Արդյո՞ք ձեր ուսուրաները կօժտեն ձեզ բանակցային ուժով՝ կախված կինը համատեքստից, թե ում եք դուք փորձում համոզել և թե ինչ եք ցանկանում, որ նրանք անեն:

ØÇ Ñ³ñóñ»ù. §à±í ¿ ³í»ÉÇ áõÅ»Ö|:

Վտանգավոր է փորձել զնահատել, թե ով է ավելի «ուժեղ»՝ դուք, թե հակառակ կողմը: Եթի հանգեք եզրակացության, որ դուք ավելի ուժեղ եք, հավանաբար այլևս չեք անհանգստանա և չեք ներդնի բավականաշափ ջանքեր՝

նախապատրաստվելու այնպես, ինչպես հարկն է: Մյուս կողմից, եթե եզրակացնեք, թե դուք ավելի քոյլ եք, քան մյուս կողմը, վտանգ կա, որ դուք հիասքափություն կապրեք և կրկին բավականաշափ ուշադրություն չեք դարձնի այն բանի վրա, թե ինչպես կարող էք համոզել նրանց: Ինչ եզրակացության էլ որ հանգեք, միևնույն է, այն չի օգնի ձեզ հասկանալու, թե որն է առաջ շարժվելու լավագույն ճանապարհը:

Իրականում շատ բան կարելի է անել, որպեսզի ձեր բանակցային ուժն ավելանա, անգամ երբ ռեսուրսների հավասարակշռությունը թերքած է դեպի կողմերից մեկը: Իհարկե կարող են լինել բանակցություններ, որոնց ընթացքում, գոնե ժամանակի ինչ-որ կարծ միջակայքում, լավագույն խաղարարտերին կտիրի մյուս կողմը: Սինչեո այս իրականության մեջ, որտեղ շարունակաբար աճում է երեսույթների փոխկապակցվածությունը, գրեթե միշտ գոյություն ունեն ռեսուրսներ և հնարավոր համախոհներ, որ հմուտ և հաստատակամ բանակցողը կարող է օգտագործել հենման կետը, եթե ոչ ուժի հավասարակշռությունը վերջնականապես դեպի իրեն շեղելու նպատակով: Ձեզ չի հաջողվի հասկանալ, թե ինչ հնարավորություններ կան, քանի դեռ չեք փորձել:

Երբեմն թվում է, թե մարդիկ նախընտրում են անօգնական զգալ իրենց և համոզված են, թե չկա այնպիսի մի բան, որ կարելի է ծեռնարկել իրավիճակի վրա ազրելու նպատակով: Այդ համոզվածությունն օգնում է նրանց խուսափել իրենց անգործության համար պատասխանատվության կամ մեղավորության զգացումից: Այն նաև հնարավորություն է տալիս խուսափել իրավիճակը փոփոխելու հետ կապված ծախքերից՝ ջանքեր գործադրելուց և անհաջողության մատնվելու վտանգից, որը կարող է մարդկանց անհարմար իրավիճակների մեջ գցել: Թեև սա հասկանալի զգացում է, սակայն այն չի կարող ազդել այն իրականության վրա, որն անձը կարող էր կատարելագործել արդյունավետ բանակցության շնորհիվ: Սա ինըն իրեն պարտության մատնելու և միայն անձնական բավարար-

Վածությունը հոգալու դիրքորոշում է:

Լավագույն կանոնն է՝ լինել լավատես. թոյլ տվեք, որ ավելիին հասնելու ձեր ձգտումները գերազանցեն հասանելի սահմանը: Գիտակցեք, որ արժի փորձել ձգտել շատ բանի, եթե անգամ հաջողության չեք հասնելու, իհարկե առանց անհոյս ձեռնարկումների վրա մեծ միջոցներ վատնելու: Որքան ավելի շատին ձգտեք, այնքան հնարավոր է ավելի շատ բան ձեռք բերեք: Բանակցային գործընթացների ուսումնասիրությունները համապատասխանորեն ցույց են տալիս, որ հստակ կորելացիա է առկա ձգտումների և արդյունքի միջև: Տրամաբանության շրջանակներում դրական մտածելակերպը ցանկալի արդյունք է տալիս:

¶ԱՌԱՋԱՌԱՋԱՌԱՅ ԱՌԱՅ»Յ մ³Յ³Իօ³ՄՑՅ ԱՌԱՑ մ³½Մ³ԱՑԻ ՅՕՄԱՌԱՅ»Ի:

Ինչպես մեծացնել բանակցային ուժը: Այս գիրքն ամբողջությամբ մի փորձ է պատասխանելու այդ հարցին: Բանակցային ուժն ունի բազմաթիվ աղբյուրներ: Դրանցից մեկը լավ ԲՀՀՍ ունենալն է: Եթե նրանք հավատում են ձեզ, ապա մյուս կողմին համար համոզիչ կարող է լինել, եթե ասեք, որ դուք ունեք ավելի լավ այլընտրանք: Սակայն Գլուխ 2-ում ներկայացված մերոյի 4 տարրերից յուրաքանչյուրը՝ մարդիկ, շահերը, տարբերակները և օրյեկտիվ չափանիշները նույնական բանակցային ուժի աղբյուր են հանդիսանում: Եթե մյուս կողմն ուժեղ է ինչոր ոլորտում, դուք կարող եք փորձել զարգացնել ձեր ուժը մյուսում: Այս հինգին այժմ մենք կավելացնենք ևս մեկը՝ պարտավորությունների ուժը:

Բանակցողների միջև պատշաճ աշխատանքային հարաբերություններ զարգացնելու ուժ է: Եթե դուք հասկանում եք մյուս կողմին, իսկ նրանք հասկանում են ձեզ, երբ հույզերը ճանաչված են, իսկ մարդկանց նկատմամբ ցուցաբերվում է հարգաից վերաբերմունք նույնիսկ այն դեպքում, եթե նրանք չեն համաձայնվում, երբ առկա է հստակ փոխադարձ հաղոր-

դակցություն՝ լսելու պատշաճ հնարավորությամբ, և երբ մարդկային գործոնների հետ առնչվում են ուղղակիորեն՝ առանց խնդրի եռթյան շուրջ զիջումներ պահանջելու կամ առաջարկելու, բանակցություններն երկու կողմերի համար էլ, հավանաբար, կլինեն ավելի հարք և ավելի հաջող: Այս իմաստով բանակցային ուժը զրոյական հանրագումարով մի երևոյթ չէ: Երբ մյուս կողմը տիրապետում է ավելի մեծ բանակցային ուժի, դրանից միանշանակորեն չի բխում, որ ձերն ավելի քիչ է: Որքան ավելի բարենպաստ են ձեր աշխատանքային հարաբերությունները, այնքան ձեզնից յուրաքանչյուրն ավելի ի վիճակի կլինի ներազբել մյուսին:

Ի հակադրություն որոշ ընդունված իմաստությունների, դուք հաճախ կշահեք, երբ մյուս կողմը փորձի ավելացնել ձեզ ներազբելու իր ունակությունը: Հուսայի անձնավորության համբավ վաստակած երկու անձանցից յուրաքանչյուրն առավել է ի վիճակի ներազբելու մյուսի վրա, քան այն երկուսը, ովքեր ունեն անազնիվ մարդու համբավ: Այն, որ դուք վատահում եք մյուս կողմին, մեծացնում է նրանց ձեզ ներազբելու հնարավորությունը: Սակայն դուք նույնական շահում եք: Դուք կարող եք բարեհաջող կերպով այնպիսի համաձայնություններ կայացնել, որոնք շահեկան կլինեն երկու կողմերիդ համար էլ:

Պատշաճ հաղորդակցությունը բանակցային ուժի հույժ կարևոր մի աղբյուր է: Զեր ասելիքը համոզիչ կերպով ձևակերպելը, մյուս կողմին լսելը և ցույց տալը, որ լսել եք ուշադրությամբ, կարող են ավելացնել ձեր համոզիչ լինելու ունակությունը: Զոն Քենեդին արդարացիորեն հակվում էր առաջինին՝ ասելիքը համոզիչ կերպով ձևակերպելուն. «Մենք երբեք չաետք է բանակցենք, քանզի վախենում ենք: Սակայն, միևնույն ժամանակ, երբեք չաետք է վախենանք բանակցելուց»¹:

Ասելիքը, որպեսզի լինի հստակ և արդյունավետ, անպայ-

¹ Նախագահի պաշտոնի ստանձնման արարողություն, 20 հունվարի 1961թ.

ման չէ, որ աներկրա լինի: Շատ դեպքերում, օժանդակելով մյուս կողմին՝ ընկալելու ձեր մտածելակերպը, երբ անգամ ինչ-որ բանի շուրջ դուք ունեք երկու կարծիք, կարող եք նվազեցնել նրանց մտավախությունները, շտկել բյուրընկալումները և խթանել խնդիրների համատեղ լուծման գրունթացը: Դիտարկենք առաքողին, որն, ինչպես ինքն է կարծում, առաքման պայմանագրի համաձայն ներկայացնում է մի մրցունակ գնային առաջարկ: Գնորդին դուք է գալիս ինչպես գնային այս առաջարկը, այնպես էլ առաջարկ ներկայացնող անձը, սակայն նրան անհանգստացնում է այն հանգամանքը, որ առաջարկ ներկայացնող կազմակերպությունը նորահայտ անուն է տվյալ շուկայում և, հավանաբար, ի վիճակի չի լինի ապահովել այն ծավալը, որն անհրաժեշտ է բավարարելու իր առավելագույն պահանջմունքները: Եթե գնորդն ասում է պարզապես. «ոչ, շնորհակալ եմ», իսկ այնուհետև մեկ այլ կազմակերպություն վարձելու համար վճարում է ավելին, գնային առաջարկ ներկայացնողին կարող է թվալ, թե գնորդին դուք չի եկել իր ներկայացրած առաջարկը: Ուստի, գնային առաջարկ ներկայացնողը հնարավորություն չի ունենա համոզելու գնորդին, որ նա կարող էր ապահովել անհրաժեշտ ծավալը: Փոխարենը, երկուսի համար էլ շատ ավելի լավ կլիներ, եթե գնորդը կիսեր նրա հետ թե՛ իր հետաքրքրվածությունը գնային առաջարկով և թե՛ իր մտավախությունները:

Լավ լսելը, ձեր տեղեկացվածությունը մյուս կողմի շահերի կամ համաձայնության հնարավոր տարրերակների մասին ավելացնելով հանդերձ, կարող է մեծացնել ձեր բանակցային ուժը: Եթե այլևս հասկացել եք մյուս կողմի զգացողություններն ու մտավախությունները, դուք կարող եք ձեռնամուխ լինել դրանք քննարկելու և փարատելու գործին, ուսումնասիրել համաձայնության և անհամաձայնության ոլորտները և մշակել պիտանի ուղիներ ապագա զարգացումների համար: Դիտարկենք տարեց տղամարդու օրինակը, որին բժիշկները ցանկանում էին տեղափոխել մի հիվանդանոցից, որտեղ նա

տվյալ պահին գտնվում էր, մեկ այլ՝ անհրաժեշտ հարմարություններ ունեցող հիվանդանոց: Բժիշկները բազմից բացատրել էին նրան, թե մասնագիտացված հիվանդանոցում որքան ավելի լավ կլինիներ իր համար, այնինչ ծերունին հրաժարվում էր տեղափոխվել: Գիտակցելով, որ ծերունին գործում էր իր սեփական շահերի դեմ, բժիշկները անտրամարանական էին համարում նրա պատճառաբանությունները: Մինչդեռ նրանցից մեկը լուրջ ընդունելով ծերունուն՝ հոգատարությամբ լսեց, թե ինչու նա չէր ցանկանում տեղափոխվել: Հիվանդը պատմեց նրան, թե իր կյանքի ընթացքում որքան է տառապել պարբերաբար լրված լինելու զգացումից և ներկայացրեց իր մտավախությունները, որ տեղափողության արդյունքում կրկին անգամ լրված է զգալու իրեն: Բժիշկն անմիջապես միջոցներ ձեռք առավ այդ մտահոգությունը փարատելու ուղղությամբ, և ծերունին ուրախությամբ համաձայնվեց տեղափոխվել:

Երբ ցույց եք տալիս, որ լսել եք մյուս կողմին, դա նույնպես մեծացնում է նրանց համոզելու ձեր ունակությունը: Երբ մյուս կողմը զգում է, որ դուք լսել եք իրեն, նրանք ավելի են հակվում լսելու ժեղ: Համեմատաբար դյուրին է լսել, երբ մյուս կողմը ասում է այնպիսի մի բան, որի հետ դուք համաձայն եք: Շատ ավելի դժվար է լսել այնպիսի բաներ, որոնց հետ դուք համաձայն չեք, սակայն հենց այս դեպքում է, որ ուշադիր լսելը ամենաարդյունավետն է: Լսեք, մինչ ձեռնամուխ կլինինեք հակահարված տալու: Հարց ու փորձ արեք: Համոզվեք, որ հասկանում եք նրանց տեսակետը և համոզվեք, որ նրանք գիտեն, որ դուք հասկանում եք իրենց: Երբ մյուս կողմն այլևս գիտի, որ դուք հասկանում եք, թե ինչ են նրանք ասել, նրանք չեն կարող վերագրել ձեր անհամաձայնությունը հասկացվածության պակասին:

Ուժ է նաև շահերը հասկանալը: Որքան ավելի հստակորեն եք հասկանում մյուս կողմի մտահոգությունները, այնքան առավել ի վիճակի կլինինեք նվազագույն ծախքերով բավարարելու նրանց շահերը: Փնտրեք աննշմարելի կամ թաքնված

շահերը, որոնք կարող են կարևորություն ներկայացնել: Օրինակ, այնպիսի հստակ շահի դեպքում, ինչպիսին փողի է, հարցրեք, թե ինչ է ընկած դրա հիմքում: («Ի՞նչ նպատակով է օգտագործվելու դրամը»): Երբեմն անգամ ամենակոշտ և անընդունելի դիրքն արտացոլում է իր հիմքում ընկած այնպիսի մի շահ, որը համատեղելի է ձեր շահի հետ:

Դիտարկենք գործարարին, որը փորձում էր գնել մի ռադիոլայաճ: Բաժնեմասի մեծամասնության սեփականատերը ցանկանում էր վաճառել իր երկու երրորդ բաժնեմասը խելամիտ գնով, մինչդեռ մեկ երրորդի սեփականատերը (որը նաև կայանի ներկա տնօրենն էր) պահանջում էր մեղմ ասած մի չափազանց մեծ գումար իր մեկ երրորդ բաժնեմասի համար: Գործարարը մի քանի անգամ մեծացրել էր առաջարկվող գումարը, սակայն՝ անօգուտ, և սկսել էր խորիել գործարքից ձեռք քաշելու մասին: Վերջ ի վերջոն գործարարն ավելի խորությամբ սկսեց ուսումնասիրել երկրորդ սեփականատիրոջ շահերը և պարզեց, որ վերջինս շատ ավելի քիչ է հետաքրքրված գումարով, քան նրանով, թե արդյոք ինքը կարող էր շարունակել կառավարել ռադիոլայաճը, որի մասնակի սեփականատերն էր: Գործարարն առաջարկեց գնել փայաբաժնի միայն այն մասը, որն անհրաժեշտ էր իրեն հարկային խնդիրները հարթելու համար և համաձայնվեց, որ երկրորդ սեփականատերը շարունակի կառավարել ռադիոլայաճը: Երկրորդ սեփականատերն ընդունեց այս առաջարկը և համաձայնվեց մի գնի շուրջ, որը բույլ տվեց գործարարին խնայել շուրջ մեկ միլիոն դրամ: Վաճառողի հիմնական շահերը հասկանալը նշանակալիորեն մեծացրեց գնորդի բանակցային ուժը:

Ուժ է յուրօրինակ տարրերակ առաջադրելը: Հաջողված մտքային գրոհն ավելացնում է այլոց ներազդելու ձեր ունակությունը: Երբ այլևս հասկանում եք կողմերից յուրաքանչյուրի շահը, շատ հաճախ հնարավոր է, ինչպես վերը բերված ռադիոլայաճի օրինակում, առաջադրել մի հմուտ եղանակ այդ

շահերը համաձայնեցնելու համար: Սա երբեմն կարելի է անել՝ հնարամիտ գործընթացի տարրերակ մշակելով:

Դիտարկենք դրոշմանիշների աճուրդի օրինակը, եթիւ առաջարկները ներկայացվում են կնքված ծրարներով: Աճուրդավարը կցանկանար, որ զնային հայտ ներկայացնողները առաջարկեին այն առավելագույնը, որ հավանաբար կցանկանային վճարել դրոշմանիշների համար: Մինչդեռ յուրաքանչյուր հավանական գնորդ չի ցանկանում վճարել ավելին, քան անհրաժեշտ է: Կնքված ծրարներով սովորական աճուրդի դեպքում յուրաքանչյուր զնային հայտ ներկայացնող փորձում է առաջարկել փոքր-ինչ ավելին, քան ըստ իրենց կանխատեսումների, կարող են առաջարկել մյուսները, և որը հաճախ ավելի քիչ է, քան հայտ ներկայացնողը կցանկանար վճարել: Մինչդեռ դրոշմանիշների աճուրդի կանոնները սահմանում են՝ դրոշմանիշները ձեռք բերելու իրավունք և ստանում ամենաբարձր զնային առաջարկ ներկայացնողը, սակայն երկրորդ ամենաբարձր զնային առաջարկում նշված գնով: Գնորդները վստահորեն կարող են առաջարկել հենց այն զինը, որ իրենք կցանկանային վճարել դրոշմանիշների դիմաց, քանի որ աճուրդավարը երաշխավորում է, որ նրանք չեն վճարելու իրենց ներկայացրած զինը: Այսպիսով, արդյունքում զնային առաջարկ ներկայացնողներից և ոչ մեկը չի ափսոսում, թե ինչու ինքն ավելի բարձր զին չի առաջարկել, միևնույն ժամանակ ամենաբարձր զնային առաջարկ ներկայացնողը երջանիկ է վճարել պակաս, քան ինքն առաջարկել էր: Աճուրդավարն էլ ուրախ է իմանալով, որ ամենաբարձր և երկրորդ ամենաբարձր զնային առաջարկների տարրերությունը սովորաբար ավելի փոքր է, քան զնային առաջարկների մակարդակների ամբողջական աճն այս համակարգում, ի հակադ-

բություն սովորական փակ ծրարներով աճուրդների¹:

Ուժ է ողջամտություն ապահովելու նպատակով արտաքին չափորոշիչներ կիրառելը: «Դոք կարող եք կիրառել ողջամտության չափորոշիչները և՝ որպես սուր մյուսներին համոզելու համար, և՝ որպես փահան, որը կօգնի ծեզ դիմակայելու կամայական զիջումների դրդող ճնշմանը: (Ես կցանկանայի զեղչ տրամադրել ծեզ, սակայն նշված գինը փոփոխության ենթակա չէ: Դա այնքան է, որքան անցյալ շաբաթ վճարեց Զեներալ Մոթորսը նույն ապրանքի համար: Ահա վճարման անդրբագիրը»): Ծիշտ այնպես, ինչպես իրավաբանն ավելացնում է դատավորին համոզելու իր կարողությունը՝ գտնելով համապատասխան նախադեպ և սկզբունքներ, նույնպես և որևէ բանակցող կարող է մեծացնել իր բանակցային ուժը՝ գտնելով նախադեպեր, սկզբունքներ և անաշառության այլ արտաքին չափանիշներ և խորհելով, թե դրանք ինչպես կարելի է ներկայացնել համոզիչ և ազդեցիկ կերպով. «Ես խնդրում եմ ոչ ավել և ոչ պակաս, քան դոք վճարում եք մյուսներին նման աշխատանքի դիմաց»: «Մենք կվճարենք այնքան, որքան տան արժեքն է, եթե ի վիճակի լինենք: Մենք առաջարկում ենք նույն այն գինը, որով վաճառվեց մոտակայքում գտնվող համանման տունն անցյալ ամիս: Քանի դեռ դոք մեզ չեք ներկայացրել պատշաճ պատճառաբանություններ, թե ինչու ձեր տունն ավելին արժի, մեր առաջարկը մնում է հաստատուն և անփոփոխ»: Մյուս կողմին համոզելը, որ դոք պահանջում եք անաշառ պայմաններից ոչ ավելին, ամենահզոր փաստարկներից մեկն է:

Ուժ է լավ ԲՀԼԱ մշակելը: Ինչպես ապացուցում ենք

¹ Համանման գործընթաց կարելի է կիրառել տեղայնացումների վերաբերյալ բոլոր տեսակի որոշումների կայացման դեպքում, անզամ երբ հարցն այնքան պայթունավտանգ է, ինչպես, օրինակ, վտանգավոր արտադրական բափոնի ծագման կառույցի տեղակայման խնդիրը: Տես՝ Հովարդ Ռեյֆա, Հիսորենտիկ ճառ ուղղված անիրական լարանին չափազանց իրական հիմնախնդրի մասին, Հարվարդի իրավունքի դպրոց, Բանակցային ծրագիր, հոդվածների ժողովածու, թիվ 85-5

Գլուխ 6-ում, ձեր բանակցային ուժն ավելացնելու հիմնարար ուղիներից մեկը խաղից դուրս գալու ձեր այլնտրանքը բարելավելն է: Գրավիչ ԲՀՀԱ-ն ուժեղ փաստարկ է, որի օգնությամբ կարելի է համոզել մյուս կողմին ավելին առաջարկելու անհրաժեշտության մեջ: («Փողոցի մյուս կողմում գտնվող գրասենյակն առաջարկել է 20%-ով ավելի, քան ներկայում ստանում եմ: Ես կցանկանայի այստեղ մնալ: Սակայն կյանքի պայմանների թանկության պայմաններում, եթե ես շուտափույթ կերպով չստանամ աշխատավարձի զգալի ավելացում, ապա ստիպված կլինեմ մտածել տեղափոխվելու մասին: Զեր կարծիքով, ի՞նչ է հնարավոր ձեռնարկել»):

Ի հավելումն ձեր ամբողջական ԲՀՀԱ-ի բարելավմանը (ինչ եք անելու, եթե բանակցությունների արդյունքում համաձայնություն չկայացվի), դուք պետք է նախապատրաստեք նաև ձեր «միկրո-ԲՀՀԱ-ն»՝ եթե ոչ մի համաձայնության շհասներ այս հանդիպման ընթացքում, ո՞րն է որեմն լավագույն արդյունքը: Դա օգնում է նախապես մշակել պատշաճ մի արտահայտություն որը կարելի է օգտագործել բանակցությունը լրելու դեպքում, եթե հանդիպումն անարդյունք է: («Ծնորհիակալություն ձեր տեսակետները կիսելու և իմ տեսակետներին ունկնդիր լինելու համար: Եթե ես որոշեմ շարունակել, կվերադառնամ ձեր մոտ՝ գուցե ինչ-որ մի նոր առաջարկով»):

Երբեմն հնարավոր է վատքարացնել մյուս կողմի ԲՀՀԱ-ն՝ զուտ օրինականության սահմաններում: Օրինակ, մեզ ծանոթ մի հայր փորձում էր համոզել իր որդուն հնձել սիզամարգը: Նա աշխատանքի դիմաց առաջարկում էր զգալի մի գումար, սակայն՝ անօգուտ: Ի վերջո որդին անզգուշորեն բացահայտում է իր ԲՀՀԱ-ն. «Այսր հայրիկ, փող ունենալու համար ինձ անհրաժեշտ չէ հնձել սիզամարգը: Չէ որ հանգստյան օրերին դու քողնում ես քո դրամապանակը պահարանի վրա...»: Հայրն անմիջապես փոխեց որդու ԲՀՀԱ-ն՝ այլևս չքողնելով իր դրամապանակը դրսում և հստակեցնելով, որ դատապարտում

Է առանց հարցնելու փող վերցնելու արարքը, որից հետո տղան սկսեց հճել սիզամարգը: Մյուս կողմի ԲՀՀԱ-ն վատքարացնելու մարտավարությունը կարող է գործածվել հարկադրելու կամ շահագործելու նպատակով, սակայն այն կարող է օգնել նաև անաչար արդյունք ապահովելու գործում: Մեր սեփական այլընտրանքը բարելավելու և մյուս կողմի՝ իրենց այլընտրանքի գնահատականը նվազեցնելու ջանքերը մեր բանակցային ուժը մեծացնելու երկու կարևորագույն եղանակներ են:

Քարեխսդորեն մշակված պարտավորություններ ստանձնելը ևս ուժ է: Համոզիչ ուժի արդյուրներից ևս մեկը, որն արժանի է ուշադրության՝ պարտավորություններ ստանձնելու ուժն է: Դուք կարող եք օգտագործել պարտավորությունն ուժեղացնելու ձեր բանակցային ուժը երեք եղանակներով: Կարող եք պարտավորություն ստանձնել, թե ինչ եք անելու, օրինակ՝ ներկայացնելով մի անփոփոխ առաջարկ: Կարող եք զգուշորեն ստանձնել մի բացասական պարտավորություն, որը վերաբերվում է նրան, ինչ չեք անելու: Կարող եք նաև որոշակիորեն հատակեցնել, թե ինչ պարտավորություններ կցանկանայիք, որ մյուս կողմն ստանձներ:

Որոշակիացրեք, թե ինչ եք անելու: Ձեր բանակցային ուժը մեծացնելու ուղիներից մեկը կայուն և տեղին առաջարկ ներկայացնելն է: Եթե դուք ներկայացնում եք որևէ կայուն առաջարկ, այդպիսով դուք առաջ եք քաշում մի տարբերակ, որ պատրաստ եք ընդունել: Միաժամանակ պարզաբանում եք, որ չեք հրաժարվում քննարկել մյուս տարբերակները: Եթե դուք ցանկանում եք համոզել ինչ-որ մեկին ընդունելու աշխատանքի առաջարկը, ոչ թե պարզապես խոսեք դրա մասին, այլ առաջարկ արեք: Առաջարկ անելով՝ դուք կորցնում եք ձեր հնարավորությունը սակարգելու ավելի լավ պայմանների շուրջ, սակայն շահում եք՝ պարզեցնելով մյուս կողմի ընտրությունը և նրանց համար դյուրին դարձնելով պարտավորություն ստանձնելը: Համաձայնության հասնելու համար նրանցից ընդամենը

պահանջվում է ասել «այս»:

Ներկայացնելով, թե ինչ եք անելու, եթե մյուս կողմը համաձայնվի ձեր առաջարկած պայմանների հետ դուք մի ուղի եք նախանշում՝ հարթելու մյուս կողմի մտավախորհրդական առ այն, թե իրենք սկսում են վայրէջքը անհաջողության ճանապարհով: Առանց պարզորոշ առաջարկի անգամ դժվարին իրավիճակն ավելի նախընտրելի է քում, քան «աչքը խոսի գնում կատարելը», հատկապես եթե մյուս կողմը մտավախորհրդական ունի, որ իրենց կողմից բարեհաճորդյան դրսերումը կրաջալերի ձեզ պահանջելու ավելին: 1990 թվականին Միացյալ Ազգերի Անվտանգության Խորհուրդը պատժամիջոցների կիրառմամբ ջանում էր ազդել Իրաքի վրա, որպեսզի վերջինս դուրս բերի զորքերը Քուվեյթից: Խորհրդի որոշումները հստակորեն սահմանում էին, որ Իրաքը պետք է նահանջի, սակայն չէին նշում, որ միայն այդ դեպքում պատժամիջոցների կիրառումը կդադարեցվի: Ենթադրենք, Սադամ Հուսեյնը կարծում էր, որ պատժամիջոցները շարունակվելու են, անգամ եթե Իրաքը դուրս բերի իր զորքերը Քուվեյթից: Այս դեպքում այդ պատժամիջոցները թեև տիած էին, սակայն խթան չէին համփսանում Իրաքի համար լրելու Քուվեյթը:

Որքան ավելի հստակ է առաջարկը, այնքան այն ավելի համոզիչ է: Այսպես, գրավոր առաջարկը կարող է առավել վստահելի լինել, քան բանավորը: (Անշարժ գույքի մեզ ծանոթ գործակալին դուր է գալիս հաճախորդին դրդել առաջարկ ներկայացնելու՝ հարյուր դոլարանոց թղթադրամների կապոցները սեղանի վրա նետելու եղանակով): Դուք թերևս կցանկանաք ձեր առաջարկը ներկայացնել որպես «մարող հնարավորություն»՝ նշելով, թե երբ և ինչպես այն կդադարի լինել իրական հնարավորություն: Օրինակ, Թեհրանում պատանի վերցված ամերիկացի դիվանագետների ազատ արձակման շուրջ բանակցությունների շրջանակներում 1981 թվականին Ռեյգանի կողմից նախագահի պաշտոնի ստանձնման արարողությունը ստեղծեց մարող մի հնարավորություն: Իրանցիները չէին ցան-

կանում ստիպված նոր բանակցություններ սկսել ԱՄՆ նոր վարչակազմի հետ:

Որոշ դեպքերում դուք նաև կցանկանաք պարզաբանել, թե ինչ եք անելու, եթե մյուս կողմը չընդունի ձեր առաջարկը: Նրանք թերևս չեն գիտակցում ձեր ԲՀՀԱ-ի հետևանքներն իրենց վրա: (Եթե չենք կարող վերականգնել ջեռուցումը մեր բնակարանում այս երեկո, ես ստիպված կլինեմ զանգահարել առողջապահության վարչության արտակարգ իրադրությունների բաժին: Տեղյա՞կ եք, արդյոք, որ նրանք տան սեփականատերերից գանձում են 250 դոլար տուգանք, երբ արձագանքում են և հայտնաբերում կանոնադրության խախտում»):

Դիտարկեք պարտավորությունը, թե ինչ չեք անելու: Երբեմն դուք կարող եք համոզել մյուս կողմին ընդունելու մի ավելի լավ առաջարկ, քան իրենց ԲՀՀԱ-ն է՝ հավաստիացնելով նրանց, որ չեք կարող կամ չեք առաջարկի ավելին («Վերցրեք կամ հեռացեք»): Դուք ոչ միայն առաջարկ եք անում, այլ նաև կապում եք ձեր ձեռքերը, որպեսզի չփոփոխեք այն: Ինչպես քննարկվում էր Գլուխ 1-ում, ինչ-որ դիրքի մեջ ներփակվելը զգալի ծախսեր է պարունակում. սկզբնական փուլերի ընթացքում դիրքի մեջ ներփակվելը սահմանափակում է հաղորդակցությունը և երևան է գալիս հարաբերությունները վճասելու վտանգը՝ ստիպելով մյուս կողմին անտեսված կամ ճնշված զգալ: Նվազ վտանգ է պարունակում ներփակվելն այն ժամանակ, երբ դուք արդեն հասկացել եք մյուս կողմի շահերը և հետազոտել եք համատեղ օգուտներ քաղելու տարրերակները: Այս դեպքում դա ավելի քիչ կվնասի մյուս կողմի հետ ձեր հարաբերությունները, մանավանդ եթե առկա են ձեր կամքից անկախ համոզիչ պատճառներ, որոնք բացատրում և արդարացնում են ձեր համառությունը:

Բանակցության ինչ-որ փուլում լավագույն մարտավարությունը, թերևս, սեղանին մի վերջնական առաջարկ դնելն է և պնդելը, որ դա վերջնական է: Այսկերպ մյուս կողմի վրա ազդելու փորձ է արվում՝ վատքարացնելով նրանց միկրո-ԲՀՀԱ-ն:

Այս դեպքում, եթե նրանք ասեն «ոչ», ձեզ հետ ավելի լավ համաձայնության գալու հնարավորությունն այլև կորսված է:

Պարզաբանեք, թե ինչ եք ցանկանում, որ մրանք անեն: Արժի քննել այն պարտավորությունների առանձին դրույթները, որ կցանկայիք մյուս կողմը ստանձնի: Սա երաշխավորում է, որ ձեր պահանջը պատճառաբանված է: «Սյուզա՛ն, խոստացիր, որ այլս երբեք չես ընդիափակ ինձ, եթե ես խոսում եմ հեռախոսվ»: Նման պահանջը կարող է կործանարար լինել արտակարգ իրավիճակներում, եթե Սյուզա՛նը իրեն ասվածն ընկալի տառացիորեն: Անհրաժեշտ է խոսափել անփութորեն շարադրված պարտավորություններից, նրանցից, որոնք չափազանց ընդգրկուն սահմանում ունեն, որոնք չեն խրախուսում մյուս կողմին գործելու, որոնք չեն ներառում կարևոր տեղեկություններ կամ գործնականում կիրառելի չեն:

Եթե դուք ցանկանում եք, որ մյուս կողմն ինչ-որ քան անի, պետք է նրանց հստակ ասել, թե հատկապես ինչ եք ցանկանում, որ նրանք անեն: Հակառակ դեպքում նրանք թերևս ոչինչ էլ չձեռնարկեն՝ չցանկանալով անել ավելին, քան ստիպված են: 1990 թվականի աշնանն, օրինակ, Սադամ Հուսեյնի վրա ազրելու ԱՄՆ-ի կարողությունը նվազեց առկա անորոշության պատճառով. Իրաքի համար պարզ չէր, թե ինչը կարող էր բավարարել ԱՄՆ-ին: Իրաքյան զորքերի դուրս բերումը Քուվեյթից, Իրաքի միջուկային հնարավորությունների ոչնչացումը, Իրաքի ռազմումի զինաթափումը և Սադամ Հուսեյնին զահընկեց անելը, այս բոլորը տարբեր ժամանակներում ԱՄՆ-ի համար հնարավոր նպատակներ էին թվում:

ԹՅՈ»Ն ՅԵՇ»ԷՅՀ-ԱԾՈՒՅԱ Օ»Ն ՆՅՅՆՅԱՆ ԱԾԱԾՈ:

Զեր հնարավոր բանակցային ուժից առավելագույնը քաղելու համար դուք պետք է օգտվեք ուժի յուրաքանչյուր աղբյուրից՝ ներդաշնակորեն համադրելով այն մյուս աղբյուրների հետ: Բանակցողները երեմն վնասրում են իրենց ուժի ամենահզոր աղբյուրը և փորձում օգտագործել միայն դա: Օրինակ,

Եթք բանակցողն ունի հզոր ԲՀԼԱ, նա կարող է մյուս կողմին ներկայանալ այդ այլբնտրանքով՝ սպառնալով հեռանալ, եթե վերջնական առաջարկը չընդունվի: Սա հնարավոր է, որ նվազեցնի առաջարկի անշառության մասին բանակցողի փաստարկների համոզիչ լինելու ուժը: Եթե դուք պատրաստվում եք ներկայացնել ձեր ԲՀԼԱ-ն, ավելի լավ կլինի դա անեք այնպես, որ հարգվեն փոխհարաբերությունները, հնարավորություն ընձեռնվի երկկողմանի հաղորդակցության համար, ընդգծվի ձեր վերջնական առաջարկի ողջամտությունը, պարզաբանվի, թե ինչպես այդ առաջարկը կարող է բավարարել մյուս կողմի շահերը և այլն: Նման բանակցային ուժի ամբողջական ազդեցությունն ավելի մեծ կլինի, եթե յուրաքանչյուր աղբյուր գործածվի այնպես, որ այն ավելացնի մյուսների ներուժը:

Դուք առավել արդյունավետ կլինեք որպես բանակցող, եթե հավատաք այն ամենին, ինչ ասում և անում եք: Ինչպիսի օգուտ էլ որ կարողանաք քաղել այս գրքում արտահայտված գաղափարներից, դրանք մի օգտագործեք այնպես, կարծես կրում եք մեկ ուրիշի զգեստները: Ձևափոխեք և հարմարեցրեք այն, ինչ մենք ասում ենք այնքան, մինչև գտնեք մի մոտեցում, որը ձեզ համար կբառնա և իմաստալից, և հարմար: Սա թերևս կպահանջի փորձարկումներ և որոշակի ժամանակ՝ հարմարացնելու համար, ինչն այնքան էլ հաճելի չէ, սակայն, ի վերջո, դուք ամենայն հավանականությամբ առավելագույնի կիացնեք ձեր բանակցային ուժը, եթե հավատում եք նրան, ինչ ասում եք և ասում եք այն, ինչին հավատում եք:

Ո-ղեր Ֆիշեր, Ուիլյամ Ուրի, Բրյուս Փաքքըն

Համաձայնության հասնելու ուղին
Բանակցություններ առանց պարտվողների

Խմբագիր՝
Սրբագրիչ՝
Էջաղբող՝
Մուտքագրող՝

Ա. Գալստյան
Ս. Կարապետյան
Պ. Ամիրջանյան
Շ. Բաղալյան

Թարգմանվել է ավելի քան 20 լեզուներով, վաճառվել է ավելի քան 2,000,000 օրինակ

Սա չափազանց պարզ, ցանկացած իրավիճակում կիրառելի մի մեթոդ է, որը հնարավորություն է տալիս բանակցել թե՛ անձնական, թե՛ մասնագիտական խնդիրների շուրջ՝ առանց պարտվելու և զայրանալու:

«Համաձայնության հասնելու ուղին» գրքույկն առաջարկում է հակիրճ, քայլ առ քայլ մշակված և փորձված մի ռազմավարություն, որը հնարավոր է դարձնում ցանկացած տիպի կոնֆլիկտների դեպքում հասնել փոխահավետ համաձայնության՝ լինեն դրանք ծնողների ու երեխաների, հարևանների, վերադասների և նրանց աշխատակիցների, հաճախորդների, կորպորացիաների, կենվորների, թե դիվանագետների միջև։ Հիմնված լինելով Յարվարդի բանակցային ծրագրում ներգրավված խնդիր աշխատանքների վրա, (խոսք, որի ուշադրության կենտրոնում են ամենասարբեր մակարդակների բանակցություններն ու կոնֆլիկտները՝ տեղայինից մինչև գործարար, անգամ միջազգային բնույթի)՝ «Համաձայնության հասնելու ուղին» ցույց է տալիս, թե ինչպես կարելի է.

- տարանջատել մարդկանց հիմնախնդրից,
- կենտրոնանալ շահերի, ոչ թե դիրքերի վրա,
- աշխատել համատեղ և մշակել տարրերակներ, որոնք կրավարարեն բանակցող բոլոր կողմերին,
- հաջողությամբ բանակցել այն անձանց հետ, ովքեր ավելի ուժեղ են, հրաժարվում են ենթարկվել խաղի կանոններին կամ ապավինում են «կեղտոտ հնարքներին»։

«Սա բանակցությունների մասին երրևէ կարդացած լավագույն գիրքն է։ Այն հավասարապես նախատեսված է և մասնավոր անձանց համար, ովքեր ցանկանում են պահպանել իրենց ընկերներին, ունեցվածքն ու եկամուտները, և պետական այրերի համար, ովքեր մտահոգ են խաղաղության պահպանման խնդիրներով։»

Զոն Քենեթ Գելբերյ

«Եղինակներին հաջողվել է փորրածավալ, հստակ շարադրված մի գրքույկում ամբողջացնել առողջ մտքերի և խելամիտ խորհուրդների մի մեծ փաթեթ»։

Business Week ամսագիր

«Յաղթել-հաղթել» բանակցային ռազմավարության հետևողական մի համառոտագիր, որի դրույթներին հետևելու դեպքում, թերևս, կարելի կլիմի «Ես»-ի վրա հիմնված ժամանակաշրջանը վերափոխել «Մենք»-ի դարաշրջանի»։

Newsweek ամսագիր